

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

58 2019 59



«Ալմաստ» օպերայի ձևավորման էսքիզ (1939)

թուղթ ջրանշանով, գուաշ, մատիտ

31x49 սմ

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

գրական - գեղարվեսական հանդես

58²⁰¹⁹ 59

ՊԻԵՍՆԵՐ

Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ	2	ՄՌԱՎ ԼԵՌԱՆ ԼՈՒՍԱԲԱՑՔ
Գավիթ ԽԱՉԻՅԱՆ	27	ՍԵՐ, ՀԱՅ ԵՎ ՓԾԱԼԱՐԵՐ
Համաստեղ	39	ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍԵ
Մարգարիտ ԽԱՉԱՏՐՅԱՆ	115	ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍԵ
ՎԻԿՏՈՐ ԼԵԳԵՆՏՈՎ	120	ԷՊԻՏ ՊԻԱՖ

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ

Անկախացած Հայաստանի բանակը դիցավես ծնվեց՝ երկրի ու երկնքի դղրդյուններով, հուր ու բռցերի մեջ: Ժամանակ է պետք անցնի, որ նրա դյուցազնարարումն ու անսախաղեաւ սիրագործությունները, ըստ արժանվույն, պատմական և գրական ասքի վերածվեն: Եթե այս ամենը 1000 տարի առաջ տեղի ունենար, ապա մեր էպոսը հինգ ճյուղով կավանդվեր: Այսօր էլ դեռ շարունակվում են նրա սիրանքները, և ամեն անցնող օր մի նոր հերոսական պատում է ավելացնում: Ահա այդպիսի մի օրվա մասին է այս պիեսը:

ՄՈԱՎ ԼԵՌԱՆ ԼՈՒՍԱԲԱՑՔ

Դրամա մեկ գործողությամբ

Գործող անձինք

**ԿԱՄՈ ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - դասակի հրամանատար,
ավագ լեյտենանտ**

ԱՐԾԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ - սերժանտ

Շարքայիններ՝

ՆԱԲԵԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՀՐԱՊՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՇՈՒԹ ՊԵՏՐՈՎ

ԹԵՄՈՒԹ ԽՈՒԴՈՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ՎԱԶԻԿ ԳԱՅՐԻԵԼՅԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Արշակի հայրը

ԽԱԹՈՒՆ - Թեմուրի սիրած աղջիկը

ՍԱՐՈ - Ռուբենի հայրը

ԼՈՒՍԻԿ - Ռուբենի մայրը

ԶՈՒՐԻԱ - Աշուրի մայրը

ԱԼԵՔՍԱՆ - Վաչիկի պապը

Պատանի ՎԱԶԻԿ

ՍԱԹԵՆԻԿ - Սուրենի մայրը

ԱՆԱՀԻՏ - դիպուկահար

ԶՈՒԴԻԹ - դիպուկահար (ձայնը)

ՍՐԲԱԶԱՆ

ԶԱԲԻԼ ԳՈՒՄԲԱՏՈՎ - քալիշ զինվոր

Էպիզոդում՝

ԱՇՈՏ - Սուրենի հայրը

Պատանի ՍՈՒՐԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍ (ձայնը)

ԶԱԼՀԱ

Հոծախմբում՝ սևազգեստ կանայք, երկու ենթասպա

Մռավ լեռան պահակակետի փշալարով պատված տեղանք, որի ճախսակողմում՝ խորքում թումբ կա: Դիմահայաց հեռվում բարձրաբերձ լեռներ են: Բակի աջակողմում բլինդաժնի է՝ երկիրկանի թախտերով, աքոռներով, սեղանիկով, պահարանիկով: Թախտերից խորքում՝ աջակողմում, դասակի հրամանատարի հարկարաժինն է, որի մուտքը չի երևում:

Բակը կամ բլինդաժնը լուսավորվում են՝ ըստ գործողության:

Բակը դանդաղ լուսավորվում է: Առավոտ է: Առժամանակ ոչ ոք չկա:

ՈՈՒԲԵՆ - (Ճայնը): Կանգնիր: Ո՞վ է գալիս... Կանգնիր, ասում եմ, կկրակեմ... (Հսկում է փակաղակի շրիկոցը:)

Ստում է սևազգեստ կիճը, հայացքն անորոշ կետի՝ դանդաղ առաջանում է: Ուուրենը գենքը մարտական դիրքով պարզած՝ փորձում է կանգնեցնել երան:

ՈՈՒԲԵՆ - Ո՞ւմ եմ ասում... այստեղ մուտքն արգելված է: Ետ դարձեք, շնուր:

Կիճը լուս առաջանում է: Բլինդաժից դուրս է գալիս Արգումանյանը:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (Չուրջն արագ զննելով): Ինչ ձայներ են... (Ռուրենին.) Ո՞ւմ իետ ես խոսում:

ՈՈՒԲԵՆ - Պարոն ավագ լեյտենանտ, ահա, այս կիճը...

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Ինչ կին:

ՈՈՒԲԵՆ - Սա: Հենց նոր իմ կողքով անցավ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (Ժպտում է): Լավ է, որ զգոն ես, զինվոր, բայց այստեղ ոչ մի կին էլ չկա:

ՈՈՒԲԵՆ - Ո՞նց թե՝ չկա... Հրեն, գնում է... Անցած անգամ էլ ականապատված տեղանքով անցավ:

Գոռացի, ասում եմ՝ մի արի, ականապատված է, բայց նրա հեշ վեցն էլ չէր...

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Զկա, Ոուրեն, չկա... ուրվական է: Այս վայրերում այդպիսիք շատ կան:

ՈՈՒԲԵՆ - (Երկյուղած): Ուրվական... Ո՞նց՝ ուրվական...

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Նրանք մեր զոհված զինվորների մայրերի հոգիներն են: Հին պատմություն կա՝ նահատակված զորավար Սուրբ Սարգիսի ու նրա Մարտիրոս որդու մասունքներով, Մոռավի լեռների բարձրաբերձ 20 գագաթներից մեկի վրա, այս կողմերում, ուխտատեղի է եղել: Նահատակված քաջերի մայրերը եկել են այդ ուխտատեղին, աղոթել ու հանդիպել իրենց որդիների լոյս դարձած հոգիներին: Երբ մայրերն աղոթել են՝ իրաշք է կատարվել, քաջերը վերածնվել են, համալրել բանակն ու ավելի զորեղացած կովել են թշնամու դեմ: Տեղեկանալով այդ իրաշքի մասին, թշնամին դավադրաբար հիմնահատակ կործանել է ուխտատեղին: Այդ օրվանից որդիներուց մայրերի հոգիները թափառում են Մոռավի բարձունքներում, փնտրում են Սուրբ Սարգիսի ուխտատեղին,

որ հանդիպեն իրենց որդիներին, վերածնեն նրանց, բայց... չեն գտնում:

ՈՈՒՐԵՆ - (ակամա խաչակնքում է):
Հրամանատար, տես, խաչակնքեցի ու նա անհետացավ...

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Նա չանհետացավ: Քո խաչակնքելը ընդունեց մաղթանք ու տեղափոխվեց լեռան մյուս գագաթների վրա: Մեր մայրերն էլ մաղթանքի կարիք ունեն: (Ծրջվելով հեռացած կնող ուղղությամբ՝ խաչակնքում է:)

Մքնացում:

Կեսօր: Քիմնդաժում ջոկատի զինվորներն եմ՝ իրենց առօրյա գործերով:

ՍՈՒՐԵՆ - (տեսրի էջը բարձր պահած՝ պաթետիկ կարդում է).

Զեմ մոռանա կյանքում ես քեզ,
Կարոտում եմ քո համրույրին,
Իմ զինվորի սիրտը հրկեզ,
Այրվում, տանջվում է... տանջվում է...
Այ, էստեղ հանգը չեմ գտնում...

ՎԱԶԻԿ - (համազգեստի օճիքը կարելով՝ սափրվող Նարեկին):
Վեհափառ, մի հանգ հուշիր մալադոյին...

ՍԱՐԵԿ - Ոչ թե մալադոյ, այլ՝ երիտասարդ, իսկ տվյալ դեպքում՝ նորակոչիկ:

ՎԱԶԻԿ - Ներեցեք, պարոն խաչատրյան, արոյոք բարի չճք լինի հանգ հուշել տվյալ դեպքում նորակոչիկ երիտասարդին:

ԹԵՄՈՒՐ - (փոքր հայելին պահած՝ մատիտով բեղերն է ներկում):
Հանգն ինչ ա:

ՎԱԶԻԿ - Էղ էն ա, որ եզդիներդ «լոլո, լո-լո» եք երգում՝ երկրորդ «լոլոն» առաջինի հանգն է: (Բոլորը ծիծաղում են:) Վեհափառ, հանգ ասա, է, էս տղեն ձեռքից գնաց:

ՆԱՐԵԿ - (Վաչկիկին): Սկզբից կարդա:

ՍՈՒՐԵՆ - Զեմ մոռանա

կյանքում ես քեզ,
Կարոտում եմ քո համրույրին,
Իմ զինվորի սիրտը հրկեզ
Այրվում, տանջվում է...

ՎԱԶԻԿ - (պաթետիկ): Այրում, տանջում է Սուրոյին: (Կրկին ծիծաղ:)

ՆԱՐԵԿ - Գրիր... (Հայացքը վեր հառած՝ հորինում է:): Քո հայացքի շողը հրկեզ... Քո հայացքի շողը հրկեզ... այրում, տանջում է զինվորին:

ՎԱԶԻԿ - Մալադեց, Վեհափառ, իգուր չէ, որ քեզ ձեմարանից վոնդել են:

ՆԱՐԵԿ - Զեն վոնդել, էս դուրս եկա:

ՍՈՒՐԵՆ - Դե լսեք՝

Զեմ մոռանա կյանքում ես քեզ,
Կարոտում եմ քո համրույրին,
Քո հայացքի շողը հրկեզ,
Այրում, տանջում է զինվորին:
Հրաշք է, կկարդա ու կհալվի:

ԹԵՄՈՒՐ - Սուրիկ ջան, որ գրես, պրծնես, կտան իմ անունից խաթունիս ուղարկեմ:

ՎԱԶԻԿ - Թեմուր, քո խաթունը գլխի կընկնի, որ սա եզդու գրած չի, ավելի լավ է, դու Նարեկին մաղարիչ արա, թող քո անունից մի գրաբար ոտանավոր գրի:

Ծիծաղում են:

ՌՈՒԲԵՆ - (Դոնից գլուխը ներս մտցնելով): Տղերք, ձեզ հավթեք, վաշտի հրամանատարն է գալիս: «Գաղիկն» արդեն Մոշի տափ է հասել, ուր որ Է՝ տեղ կհասնի:

ՎԱԶԻԿ - Թեմուր, թոի, կամանդի-րին տեղեկացրու:

Թեմուրը դուրս է գնում, մյուսնե-րը շտապում են կարգի բերել ի-րենց ու տարածքը:

ՆԱՐԵԿ - Երևի շրջայց է:

ՍՈՒՐԵՆ - Ծրջայց թե ստուգայց՝ կերևա թիչ անց, համբերությամբ կաց...

ՆԱՐԵԿ - Բա ասում ես՝ հանգ չեմ գտնո՞ւմ:

ՍՈՒՐԵՆ - Հրամկազմի համար՝ հանգ կա անհամար:

ՎԱԶԻԿ - Հերիք է խոսես, պահն է անհարմար:

ՍՈՒՐԵՆ - Միթե լոելն է նպատակա-հարմար:

Ծիծաղում են: Մտնում են Կամն Արզումանյանը, Թեմուրը:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Լրջացնեք: (*Սուու-գողական զննում է շուրջը: Արշա-կին:*) Բլինդաժը կարգի բերեք, սեղանին ավելորդ իրեր չլինեն: (*Սուրենին.*) Օձիքդ կոճկիր, զին-վոր: (*Ծտապում է դուրս:*)

ՍՈՒՐԵՆ - (հոգոցով կոճկվում է): Է-լի իմ յախեն հավաքեց:

ՎԱԶԻԿ - Բա էլ ո՞մը, վեչնի քո դո-շերն են բաց:

ՆԱՐԵԿ - Ոչ թե վեչնի, այլ հավերժ:

ԱՐԾԱԿ - Լավ, տղերք, դրա ժամա-նակը չի: (*Մուտքին մոտենալով՝ սպասողական կանգնում է:*)

Դրաից լսվում է արգելակող մեքե-նայի ձայն, խոսակցություններ: Դուռը բացվելուն պես՝ Արշակը ճգվում է:

ԱՐԾԱԿ - (պատվի առնելով): Զնի, զգանատ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (Ներս մտնելով): Թողնել:

ԱՐԾԱԿ - Թողնել:

Մտնում են քաղաքացիական հազուստով Մելքոնյանը, երկու ենթասպա:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - (առաջանալով՝ ու-շաղիր զննում է զինվորներին, ա-պա շրջվում է իրեն հետևող Արզումանյանին): Բա ինքն ո՞ւր է:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Դուք ո՞ւմ եք փնտրում:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Գեներալի հրամա-նում գրած չէր:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Դուք իենց նոր տվեցիք, չհասցեցի կարդալ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - (անշտապ աթոռի մաքրությունն է ստուգում, նստում է): Կարդա: (*Արզումանյանը բա-ցում է ձեռքի ծրարը, կարդում է, զսպելով շփոթմունքը՝ շփում է ծակատը:*) Բա ինքն ո՞ւր է: (*Ար-զումանյանը չի պատասխանում:*) Ես քեզ եմ հարցնում, որտե՞ղ է տղաս:

ԱՐԾԱԿ - Այստեղ եմ: (Գլխահակ ա-ռաջանում է:)

ՄԵԼՔՈՆՅԱՆ - (զննում է Արշակին): Հայա քո տեսքին նայի... Ես ինչ բանի ես, տղես: Ձեզ չէ՞ ասել՝ կմոտենաս հրամանատարին, կասես, որ Մելքոնյանի տղան ես, որ քեզ չբարձրացնի էս չոլերը:

(Արշակը, հայացքը գետնին՝ լուռ է:) Իրերդ հավաքիր: Կորպուսի շտաբում գրագիր կծառայես: Հրամանը բերել եմ: (Արշակը տեղից չի շարժվում:) Արագացրու: (Ենթասպաներին.) Ախաբեր, բանակ ես ուղարկում՝ չի լինում, չես ուղարկում՝ վաղը-մյուս օրը բարձր պաշտոնի չեն նշանակի, կասեն՝ բանակում ծառայած չի... (Արշակին.) Ի՞նչ ես կանգնել, արագացրու, քեզ ենք սպասում:

ԱՐԾԱԿ - (գլուխը չբարձրացնելով):

Ես ոչ մի տեղ չեմ գնա:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Ո՞նց թե՝ չես գնա: Հորդ չես ենթարկվո՞ւմ: Մնում ես էս չոլոների մոտ, որ ինչ անես...

ԱՐԾԱԿ - Պայպ, նրանք իմ ընկերներն են...

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Ընկերներդ են... Երբ բարով-խերով տուն կգաս, գործի կանցնես ու նրանք քո դեմ միտինգ կանեն, էն ժամանակ կիասկանաս՝ ընկերներդ են, թե հակառակորդներդ... Մորդ աչքին քուն չի գալիս, գիշեր-ցերեկ մղկտում է: Բա որ քեզ մի բան պատահի, ի՞նչ ենք անելու... (Ենթասպաներին.) Ամեն ինչով պահովել եմ, է, մի բանի պակաս չեմ թողել... (Արշակին.) Մինուն տղես ես, էղքան արածորածս շան ու գելի բաժին դառնա՞... «Մերսեղեսն» էլ, յուղը վրեն, գարաժում կանգնած է, որ ետ գաս՝ կյանք վայելես: Արագացրու, սա քո տեղը չի:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Ներեցեք, բայց...

Մարտական հերթապահությունից զինվոր հանելու իրավունք չունեմ, նրան ովք է փոխարինելու:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Դա քո պյորթեմն է:

Գեներալի կարգադրությունն է՝ սերժանտ Արշակ Մելքոնյանին, հետագա ծառայությունն անցկացնելու համար, գործուղել կորպուսի շտաբի տրամադրության տակ: Զո՞ իրավունքն ու պարտականությունը բեզպեկալովնի կատարելն է:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Հերթապահության ժամկետը կլրանա, կիշնենք զորամաս, այն ժամանակ թող գործուղեն:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Այ տղա, ես Երևանից հասել եմ էս սարի կատարը, որ քո հեքիաթները լսեմ: Էդպես եք կատարում վերադասի հրամանը, էս կարգապահությամբ եք հսկում հայրենիքի սահմանը: (Արշակին.) Մի ցցվիր, գնա իրերդ վերցրու:

ԱՐԾԱԿ - Ես ոչ մի տեղ չեմ գնա:

Ենթասպաները լուռ դուրս են գնում, նրանց հետևում են ջոկի գինվորները:

Արշակը քայլ է անում դեպի հայրը, բայց կտրուկ շրջկում, դուրս է վագում:

Մնում են Արգումանյանն ու հապաղող, սրբին աննպատճ ծալդ-բացող Կարենը:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - (Արգումանյանին):

Դո՞ւ ես անմիջական դեկավարը:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (Մոայլ): Ես եմ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Էս է ձեր դաստիարակած զինվորը... Էդ ի՞նչ մեթոդներով եք դաստիարակել, որ հորն էլ չի լսում... Գնա, կարգադրի, որ նստի մեքենան, իսկ

ձեր ստեղծած բարոյահոգեբանական մթնոլորտի մասին առանձին խոսակցություն կլինի: Գնա, ազատ ես:

Արզումանյանը տեղից չի շարժվում:

ԿԱՐԵՆ - Կներեք, պարոն Մելքոնյան, կարելի է իմանալ, դուք ինչ պաշտոն եք զբաղեցնում:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - (արհամարհական): Կարելի է: Ես, տղա ջան, սննդարդյունաբերության հիմնարկներից բանակին մթերք մատակարարող մենեջերական վարչության պետն եմ: Քաղաքացիական պաշտոն է, բայց առանց ինձ բանակը չի գոյատևի: Որ հետաքրքրվես՝ կիմանաս:

ԿԱՐԵՆ - Առանց հետաքրքրվելու է գիտեմ: Հայրս ձեր համակարգում է աշխատում, լավ գիտեմ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - (հայացքը լարելով): Հայրդ... Ո՞ւմ տղան ես: Ոչ մեկին նմանություն չեմ տալիս:

ԿԱՐԵՆ - Սահրադյանի տղան եմ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Ցոլակ Օգանեսիչի:

ԿԱՐԵՆ - Այո:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Վայ, տղա ջան... Իսկը՝ Օգանեսիչի քթից թռած: Ո՞նց տեղը չբերի... Վայ, քո ցավը տանեմ: (Ուզում է գրկել, Կարենը խոսում է տալիս:) Պապադ իմ անմիջական շեֆն է, մեռնեմ քեզ, մենք ին օտար չենք... Բա էստեղ ինչ ես անում...

ԿԱՐԵՆ - Ծառայում եմ, ինչպես բոլորը:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Օգանեսիչը տեղյակ է, որտեղ ես ծառայում:

ԿԱՐԵՆ - Իհարկե տեղյակ է:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Տեղյակ է, որ պոստի ես կանգնում:

ԿԱՐԵՆ - Տեղյակ է:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Երևում է, լավ չի պատկերացրել, Ցոլակիչ ջան, սա ձեր տեղը չի: Հավաքվի, դու էլ արի, ում որ պետք է՝ կասեմ, երկուսիդ էլ կորպուսում կտեղավորնեն: Հենց իմա զանգեմ... (Գրպանից հանում է բջջային հեռախոսը:)

ԿԱՐԵՆ - Պետք չի: Ես ինձ այստեղ լավ եմ զգում:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Ես բնո՞ւմ, կրակոցների տակ...

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - (զգաստ դիրք ընդունելով, ազդու): Պարոն Մելքոնյան, խնդրում եմ ազատել պահակակետը: Կողմնակի անձանց մուտքն այստեղ արգելված է:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Եղ եմ կողմնակի անձ...

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Դո՞ք: Անմիջապես ետ գնացեք, հակառակ դեպքում ստիպված կլինեմ ձերբակալել ձեզ:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Ո՞ւմ, այ խրամատի կոհս, Մելքոնյանին ձերբակալեմս... Դու գիտե՞ս, ես ով եմ, ինչ մարդ եմ, ինչ դիրք եմ զբաղեցնո՞ւմ...

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Այստեղ միայն մի դիրք կա՝ սահմանը:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Ես չի՞ քո սահմանն ու դիրքը՝ մի քստտ բուն, ծիտն էլ ներս չէր մտնի:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Խնդրում եմ լքել պահակակետը:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Նախ՝ ասած արա, Արշակին հրամայիր՝ մեքենան նստի:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - (ձեռքն ատրճանակի պատյանին դնելով): Դուրս եկեք:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - Կ-յա... դու իմ վրա պիստալետ քաշնես.... ես քեզ դիրք ցոյց կտամ... (Բարձրացնում է աթոռակն ու նոյն պահին, ինքնածիգը ձեռքին, նրա դեմք կտրում է Կարենը:)

ԿԱՐԵՆ - Հանգիստ: (Մելքոնյանն, ընկրկելով, աթոռը ցած է դնում:) Դուրս եկեք բլինդաժից:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - (աղջակն ուղեկելով, զայրույթը՝ զսպած): Լավ չես անում, Ցոլակիչ... հորդ հետ մի փութ աղ ու հաց ենք կերել... հեչ լավ չես անում... Ես... էս մասին կպատմեմ հորդ... (Ուղղվում է դեպի ելքը:)

ԿԱՐԵՆ - (զենքով նրան ուղեկցելով): Զմոռանաք, նրա մոտ գնալիս աշխատանքից ազատվելու դիմումն էլ կտանեք:

ՄԵԼՔՈՆՅԱՆ - (դուան մոտ շրջվում է: Թունոտ): Լակո՞տ:

Բորբոքվելով՝ Կարենը լիցքավորում է զենքը:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Թողնել: (Կարենը քարանում է:) Շարքային Սահրադյան, իշեցրեք զենքը: Երեք քայլ՝ նտ, մարշ:

Կարենը ենթարկվում է: Մքնեցում:

Բակը: Արևամուտ է: Զախսակողմյան թմրին, կողք-կողքի, պառկած են Անահիտը և Աշուրը:

ԱՆԱՀԻՏ - (հրացանի դիտակով դիմացի սարերը զննելով): Դանդաղ, շատ դանդաղ վեր բարձրացրու: (Աշուրը դանդաղ բարձրացնում է զինվորի սաղավարտով խրտվիլակը: Սպասում են:) Էս ուր է էղ ձպուռ... (Աշուրին.) Ծարժիր: (Աշուրն աջ ու ձախ է թեքում խրտվիլակը և նոյն վայրկյանին՝ կրակոցի որոտ, սուրացող գնդակի սուլոց:) Ահա, հայտնվեց խանումը... (Զննելոց չկտրվելով՝ Աշուրին:) Ցած իշեցրու, ինչ ես սառել:

ԱՃՈՒՐ - (խրտվիլակը պառկեցնելով): Խփեց որ...

ԱՆԱՀԻՏ - Նա փըստ եկողներից չի: **ԱՃՈՒՐ** - Ինչ գիտես:

ԱՆԱՀԻՏ - Գիտեմ: Ֆինլանդիայում դիպուկահարների միջազգային մրցումներում ենք հանդիպել:

ԱՃՈՒՐ - Բա որ փըստ եկողը չի, ոնց Աշուտին չխփեց, ուսն էր վիրավորել:

ԱՆԱՀԻՏ - Որովհետև տեղանքը լավ չէր ուսումնասիրել ու չգիտեր, որ իրիկնադեմին էս տեղանքում քամու է:

ԱՃՈՒՐ - Քամին ազդո՞ւմ է...

ԱՆԱՀԻՏ - Են էլ ոնց: Բարձրացրու: (Աշուրը կրկին բարձրացնում է խրտվիլակն ու կրակոցի որոտի հետ վայր է գցում ձեռքից:) Տեսանի, որ խփեց: Ետ քաշվիր: Հանգիստ, առանց վեր ցցվելու:

Երկուտվ զգուշավոր ետսող են տալիս ներքև ու թմրով պաշտպանված՝ նստում են: Համբաքայլ հայտնվում է սևազգեստ կինը:

ԱՃՈՒՐ - Որդեկորոյս մայր է: Խաչակնքիր: (Արագ խաչակնքում է:)
ԱՆԱՀԻՏ - (խաչակնքելով): Աստվածած աղոթքդ լսի, մայր:

Կինը մոտենում, կանգ է առնում, ակնքետ նայում է նրանց: Անահիտն ու Աշուրը կրկին խաչակնք վում են: Կինը չի հեռանում:

ԱՆԱՀԻՏ - Դու ուզում ես բան ասել, մայր...

Կինը շրջվում, հեռանում է:

ԱՆԱՀԻՏ - (հայացքը հեռացող կնոջից չկտրելով): Նրանք ամենուր են: Ես շատ եմ տեսել նրանց:

ԱՃՈՒՐ - Բոլոր պահակակետերում եղանակ ես:

ԱՆԱՀԻՏ - Ո՞նց ասեմ... Որտեղ հարկ է եղել:

ԱՃՈՒՐ - Դո՞ւ ես լավ սնայպեր, թե՞ էդ ձպուռը:

ԱՆԱՀԻՏ - (ծիծաղում է): Մի քիչ համբերի՝ պարզ կդառնա:

ԱՃՈՒՐ - Երկրորդ դասակի Արթուրին նա էր խփել:

ԱՆԱՀԻՏ - (հղոցով): Մենակ Արթուրի՞ն...

ԱՃՈՒՐ - Սրանց իրադար պահպանելը դիվերսանտի ու սնայպերի կոհիվն է: Մարտի դաշտում նապաստակից արագ են փախչում:

ԱՆԱՀԻՏ - Գիտնս, Կոմանդոսն ինչ է ասել:

ԱՃՈՒՐ - Ինչ է ասել:

ԱՆԱՀԻՏ - Ասել է՝ թուրքին վազել սովորեցրինք, բայց որ համը հանեն՝ լրողալ էլ կսովորեցնենք:

ԱՃՈՒՐ - (կողքին ինչ-որ բան նկա-

տելով՝ ծեռքերով հողը ետ է տալիս): Անահիտ... այ քեզ բան... Անահիտ, արի, արի տես, ինչ գտա:

ԱՆԱՀԻՏ - Զգույշ, ական կլինի: (Կորացած մոտենում է:)

ԱՃՈՒՐ - Չէ, ինչ ական, հալա տես...

ԱՆԱՀԻՏ - (զարմացած): Խաչքար է:

Երկուսով հողից ազատում են խոյակը:

ԱՃՈՒՐ - Տեսնես ով է բերել, էս սարի ծերին թաղել:

ԱՆԱՀԻՏ - Խելոք, չեն բերել-թաղել: Ուրեմն, շատ հնում էստեղ՝ սարի կատարին, սրբատեղի է եղել:

ԱՃՈՒՐ - Հա, էլի... Բեր կանգնեցնենք:

ԱՆԱՀԻՏ - Վատ միտք չի:

Քարն ազատելով հողից, սկսում են հրել քումբն ի վեր:

ԱՆԱՀԻՏ - Ով գիտի, քանի դար առաջ են քանդակել:

ԱՃՈՒՐ - Բա քանի-քանիսն են ուխտի եկել, մոմ վառել:

Հակառակորդի նշանառուից գգուշանալով, պառկած դիրքից ճիգ գործադրելով՝ խաչքարը կանգնեցնում են՝ երեսով դեպի լեռնագագարները:

ԱՃՈՒՐ - Ազերիներն ասում են՝ սամեր պապենական հողերն են: Բա էս խաչքարի սերմը ծիտն է՝ բերել, սարի կատարին գցել, որ բուսնել է:

ԱՆԱՀԻՏ - Աջ կողմի տակը մի քար դիր, որ չօրորվի: (Աշուրն ամ-

րացնում է:) Պրծար... Դե ետ սո-
ղա: (*Աշուրը ետ է սահում:*)

Պատապարվելով խաջարի ետևում՝
Անահիտը իրացանի դիտակով
վերսկսում է լեռնալանջերը զննելը:
Քջային հեռախոսի անսպասելի
զանգից ցնցվում է:

ԱՆԱՀԻՏ - Էս ով է... (*Գրպանից հա-
նում, նայում է էկրանին:*) Անձա-
նոթ համար է... (*Հեռախոսը
շարունակում է զանգել:*)

ԱՃՈՒՐ - Միացրու, կարող է շտապ
պետք ես, որ զանգում են:

ԱՆԱՀԻՏ - Մարտական դիրքում հե-
ռախոսվ խոսելն արգելված է:
(*Մեղավոր:*) Մոռացել էի անջա-
տել...

ԱՃՈՒՐ - Բարձրախոսն էլ միացրու,
որ պատժելու լինեն, կասես՝ Ա-
շուրը ինձ կասկածեց, ստիպված
միացրի, որ իմանա՝ թշնամի չի
զանգողը:

ԱՆԱՀԻՏ - (*տատանվելով՝ միաց-
նում է:*) Լսում եմ:

ԶՈՒԴԻԹ - (*հեռախոսից:*) Արմանակ,
этօ տի?

ԱՆԱՀԻՏ - (*հապաղելով:*) Ես եմ,
ճպուռ... Իմ հեռախոսի համարը
քեզ որտեղից...

ԶՈՒԴԻԹ - Վաս հետախոյզ ես:
Ֆինլանդիայում մրցումների մաս-
նակիցների ցուցակից վերցրի:
Ես գիտեի, որ ուշ թե շուտ՝ դու ես
ցցվելու դեմս: Կտակդ գրել ես,
քած, հեռախոսդ ինձ հիշատակ
կթողնե՞ս:

ԱՆԱՀԻՏ - Դեռ հարց է, ով՝ ում...
Խփիր, թե կարող ես:

ԶՈՒԴԻԹ - Հերոս ես ձևանում: Էդ-

քան դուխով ես՝ խաչքարի տակ
կուչ մի արի, տեղդ փոխի, ես
խաչքարի վրա կրակողը չեմ:

ԱՆԱՀԻՏ - Էդ ո՞ր օրվանից բարե-
պաշտ դարձար, թուրք:

ԶՈՒԴԻԹ - Ես ասորի եմ:

ԱՃՈՒՐ - (անակնկալի եկած): Ասո-
րի... ո՞նց թե... Չի կարող պատա-
հել: (Անահիտից ծանկում է
հեռախոսը, գոռում:) Մանիկե,
կախպա... («Ո՞վ ես դու, աղ-
ջի...»):

ԶՈՒԴԻԹ - Բա դո՞ւ ով ես:

ԱՃՈՒՐ - Ես Աշուրն եմ, ասորի, քիչ
առաջ կրակում էիր ինձ վրա:

ԶՈՒԴԻԹ - Աշո՞ւր, ասորի... կրա-
կո՞ւմ էի... Դա խի թուխ, ախունի:
(«Հո չեմ վիրավորել, եղ-
բայրս...»):

ԱՃՈՒՐ - Չէ, չես վիրավորել...
(Կարծ դադար:): Սպանել ես:

ԶՈՒԴԻԹ - (թախանձանքով): Էդ-
պես մի ասա, եղբայրս...

ԱՃՈՒՐ - Ես եմ քո եղբայրը... Գի-
տե՞ս, քանի եղբայր, քոյր, հայր ու
մայր ունես Հայաստանում, որոնց
վրա կրակում ես:

ԶՈՒԴԻԹ - Ախր, դու ինչ ես անում
այդտեղ:

ԱՃՈՒՐ - Անհավատներից իմ եր-
կիրն եմ պաշտպանում... իսկ դո՞ւ
ինչ ես անում այդտեղ, հայ, ասո-
րի, եզրի, հոյս սպանելով՝ ավտո
առար, սեփական դղյակ ունե՞ս...

ԶՈՒԴԻԹ - (ձչում է): Աշուր, մի ա-
սա... Սա պատերազմ է, ռազմա-
ծակատ է... Այստեղ կրակում են
իրար...

ԱՃՈՒՐ - Ճիշտ ես ասում: Սա պա-
տերազմ է, կրակում են իրար...

Դեմք, կրակիր, կրակիր... (Հեռախոսն անջատելով՝ շպրտում է մի կողմ և ողջ հասակով կանգնելով՝ գոչում:) Կրակիր...

ԱՆԱՀԻՏ - (նրա փեշից կախ ընկնելով՝ ծչում է): Էս ինչ ես անում...

ԱՃՈՒՐ - Թո՞ղ, Անահիտ, թո՞ղ...

Անահիտը սայթաքելով ոտքի է կանգնում, թիկունքով պատսպարում է նրան: Լարված, քարացած կանգնում են:

Կրակոց: Մընող երկնքում կամարվում է լուսածիր հրթիռի հետքը:

Հայացքները հառած հրթիռին՝ բուլացած նստում են:

Անահիտը կծկվում, հեկեկում է:

ԱՃՈՒՐ - (թմրից իջնելով, իրեն վերագուած): Ցած իջիր, վտանգավոր է:

ԱՆԱՀԻՏ - (աչքերը սրբելով ոտքի է ելնում): Նա գնաց... Էլ չի գա... (Գոտևածեղից հանելով հրթիռանետ ատրճանակը՝ կրակում է:)

Երկինքը կրկին լուսավորվում է հրթիռով:

Մընեցում:

Ուշ երեկո: Թույլ լուսավորված քինդաժում Նարեկը, Կարենը, Սուրենը քնած են: Բարձին թեք ընկած Արշակը մտքերի մեջ է: Առույգության հերթափոխի զինվորները՝ Աշուրը, Թեմուրը, Ռուբենը, Վաշիկը սեղանի շուրջ քուրք են խաղում:

ՎԱԶԻԿ - (քարտը դնելով): Բլոտ: (Կրած քարտերն իրեն քաշելով՝

նոր խաղաքարտ է դնում:) Ոերբերուտ:

ՌՈՒԲԵՆ - (Արշակին): Պառկի, այ ախատեր, ինչչ ես նստել: Մի ժամից հերթափոխվում ենք:

ԱՐԾԱԿ - Քուն չի տանում:

ԱՃՈՒՐ - Քեզ մի տանջի: Կյանքում ամեն ինչ լինում է:

ԱՐԾԱԿ - (հոգոցով): Ասում ես, էի...

ՌՈՒԲԵՆ - Կողը ո՞րն էր:

ԹԵՄՈՒՐ - (խաղաթղթով քայլ անելով): Սիրտը:

ԱՃՈՒՐ - Փոքր էի, հորաքույրս հորս անընդհատ ասում էր՝ Հայաստանում պատերազմի վտանգ կա, մենք ասորի ենք, սա մեր հայրենիքը չի, Աշուրին ուղարկենք մեր եղբոր մոտ՝ Կրասնոդար, Ռուսաստանի քաղաքացիություն դասավորենք... (Խաղընկերներին.) Թերզ... Լուսահոգի պատմաբան մայրս դեմ կանգնեց՝ Ասորական պետության վերացումից հետո, ասաց, արդեն 2500 տարի մենք հայերի հետ եղայր ենք: Թուրքերը մեզ էլ կոտորեցին, իսկ հայերը իրենց հայրենիքում մեզ տեղ տվին: Հայաստանն է մեր հայրենիքը:

Մեր պապերի հոգիները մեզ չեն ների, որ Հայաստանից փախչենք: (Խաղաթղթերը ընկերներին ցույց տալով:) Էս իմ թերզը... Էնապես, որ... Սիրտդ շուռ մի բեր, Արշակ ջան, ծնող են, ամեն մեկն իր ծնով անհանգստանում է, սիրտները ցավում է, ամեն օր Աստծուն աղոթում են մեզ համար: Նրանց էլ հասկանալ է պետք:

ԹԵՄՈՒՐ - Աշուր ջան, ասորիներդ մահմեղական եք:

ԱՇՈՒՐ - (վիրավորված): Մահմեղականը դու ես, մենք քրիստոնյա ենք:

ԹԵՄՈՒՐ - Եդ ինչի՞ նեղացար որ...
Համ էլ եզրին քուրդ չի, եզրին թուրք չի, եզրին մուսուլման չի, եզրին արևապաշտ ա:

ԱՇՈՒՐ - (զարմացած): Լո՞րջ:

ԹԵՄՈՒՐ - Մալաքե Տառօքը վկա:

ԱՇՈՒՐ - Տառիզն ով է:

ԹԵՄՈՒՐ - Էնի մեծ Աստված ա:

ԱՇՈՒՐ - (նկատելով, որ Արշակը քնել է, կիսաձայն): Լավ, հետո կխոսենք, թող քնի, մեղք է:

Դանդաղ մքնեցում:

Հովկերգական մեղմ երաժշտության մերքը լուսարձակի լույսը սահում է բլինդաժում, ցուցադրում քնած զինվորներին, ապա՝ նստած Խաթունին, նրա ուսերը գլկած թեմուրին:

ԽԱԹՈՒՆ - Երբ բանակից ետ գաս, ես արդեն 9-րդ դասարանում կսովորեմ:

ԹԵՄՈՒՐ - Զէ, 8-ից բուժքույրական գնա: Գյուղը բուժքույր չունի, առանց դեղ-դարմանի մնանք:

ԽԱԹՈՒՆ - (*hngnqgnv*): Մեր գյուղում թեկուզ գիտնական ըլնես, էլի ոչխար կթելն ու բուրդ գգելն է գործդ:

ԹԵՄՈՒՐ - Դրանից լավ էլ ինչ կա:

ԽԱԹՈՒՆ - Բա որ գնաս բանակ ու ինձ մարդի տան:

ԹԵՄՈՒՐ - Չեմ թողնի, կգամ ու կփախցնեմ:

ԽԱԹՈՒՆ - (զվարքանում է):

Ճիշտ... ինձ էլ կտանես բանակ: (Թեմուրը լուր է:) Ինձ քեզ հետ բանակ կտանես... Թեմուր, արի փախչենք Թիֆլիս:

ԹԵՄՈՒՐ - Գնանք, ինչ անենք:

ԽԱԹՈՒՆ - Դու բանվորությոն կանես, ես հավաքարար կաշխատեմ: (Երազկոտ:) Իրիկունները կգնանք սադ, մարոժնի կուտենք, կարուսել կնստենք:

ԹԵՄՈՒՐ - Գնամ բանակ, ետ գամ՝ կմտածենք:

ԽԱԹՈՒՆ - Փախչենք Թիֆլիս, որ քեզ բանակ չտանեն:

ԹԵՄՈՒՐ - Եդ ինչնիր ես ասում...
Հորս պապը Մովսես Սիլիկյանի բանակում, հայի հետ Սարդարապատում կրիվ ա տվել: Մեր պապերի հոգիները մեզ չեն ների, որ Հայաստանից փախչենք:

ԽԱԹՈՒՆ - Ես ինչքան շատ բան գիտես, Թեմուր ջան...

Դանդաղ մքնեցում:

Լուսարձակի լույսը սահում է բլինդաժում, ցուցադրում քնած զինվորներին, ասես փնտրում, գտնում է ներս մտած Սրբազնին:

ՆԱՐԵԿ - (ընդառաջ վազելով): Սրբազն հայր... (Խոնարհվում, համբուրում է աջը.) Աստված օգնական, Սրբազն հայր:

ՄՐԲԱԶԱՆ - (ափը դնելով նրա գլխին): Աստված պահապան, զավակս:

ՆԱՐԵԿ - Սրբազն հայր, դուք ինչո՞ւ եք այստեղ: Սա մարտական պարեկություն է:

ՄՐԲԱԶԱՆ - Սուրբ խաչի հետ ավելի զորավոր է, տղաս:

ՆԱՐԵԿ - Ճեմարանում ինչպես են:

ՄՐԲԱԶԱՆ - Փառք Աստծո, ամենն էլ ողջ, առողջ են, աղոթում ենք հայոց բանակի համար: Նարեկ, տղաս, դու ինչո՞ւ թողեցիր Ճեմարանը, չ՞որ երազում էիր կուսակրոն դառնալ:

ՆԱՐԵԿ - Սրբազան հայր, ես երազում էի նմանվել Ղևոնդ երեցին, բայց Մոնթեն ավելի մոտ եղավ իմ հոգուն:

ՄՐԲԱԶԱՆ - Աստված օրինի քեզ, տղաս:

ՆԱՐԵԿ - Սրբազան հայր, այստեղից ոչ հեռու մեր զինվորները հողի մեջ խաչքար գտան և կրկին խոյացրին այն:

ՄՐԲԱԶԱՆ - Տեղյակ եմ, տղաս: Որդեկորույս մայրերն ինձ լուր տվին այդ մասին: Ես նրանց խնդրանքով եկա:

ՆԱՐԵԿ - Նրանք Մայր Աթոռ էին եկել:

ՄՐԲԱԶԱՆ - Նրանք ինձ երազ եկան, տղաս: Այդ խաչքարը Ատենահաս Սուրբ Սարգիսի և նրա Մարտիրոս որդու մասունքների վրա կառուցված հինավորց սրբավայրի մի բեկորն է: Խաչքարը կրկին օճելու եկա:

ՆԱՐԵԿ - Այս կեսգիշերին:

ՄՐԲԱԶԱՆ - Միջեւ օրինության կամ աղոթքի համար ժամ է սահմանված, տղաս:

ՆԱՐԵԿ - (Ճնկի իշնելով): Հաղորդություն տուր ինձ, Սրբազան...

Մքնեցում:

Լուսարձակի լույսը սահում է բլինդաժում, ցուցադրում քնած զինվորներին, ապա՝ գլխահակ նստած, մնքերի մեջ խորասուգված տղամարդուն: Նրա առջև Կարենն է կանգնած:

ՏՂԱՄԱՐԴ - (իսիստ): Ձեզ չէ՞ ասել, որ կմոտենաս իրամանատարին ու կասես, որ Ցոլակ Օգանեսիչի տղան ես, քեզ չբարձրացնի էս չոլերը:

ԿԱՐԵԼ - (շվարած): Հայրիկ... Հայրիկ, բայց դու...

ՏՂԱՄԱՐԴ - Հարցիս պատասխանիր:

ԿԱՐԵԼ - Հայրիկ, դու այդպիսի բան չես ասել, ընդհակառակը...

ՏՂԱՄԱՐԴ - Հնչ՝ ընդհակառակը:

ԿԱՐԵԼ - Դա Արշակ Մելքոնյանի հայրն է նրան ասել... Մելքոնյանին դու լավ գիտես, քո Ենթակայությամբ է աշխատում: Եկել էր, ուզում էր Արշակին տանել ու հենց այդ խոսքերն էր ասում: Իսկ դու ինձ պատմել ես, որ քո հայրը՝ մշեցի Հովհաննեսը, ֆիդայի է եղել: Պատմել ես, որ ինքդ էլ ազատամարտիկ էիր, ընկերներիդ հետ, Կոմանդոսի իրամանատարությամբ գրավել եք Շուշին... Դու ասում էիր, որ ամեն մի հայ տղամարդ պարտավոր է զինվոր լինել...

ՏՂԱՄԱՐԴ - (ցաւկոտ ոտքի է ելնում՝ Մելքոնյանն է): Լակնտ, էդ հեքիաթներով ես իմ տղուն խելքից հանել... (Ատրճանակը հանելով:) Բոլորիդ կսատկացնեմ...

Ակնթարքորեն հայտնված Արշակը մարմնով պատսպարում է Կարենին:

ԱՐԾԱԿ - Պապ, նրանք իմ ընկերներն են...

Կրակոց: Մահացու վիրավորված Արշակը բուլացած ցած է սահման:

ՄԵԼՔՈՆՅԱՆԻ անձարդկային բռափողով ցած է զցում ատրճանակն ու վիլկում ծնկներին:

Մքնեցում:

Լուսարձակի լույսը սահում է բինդաժում, ցուցադրում քնած զինվորներին, ապա լուսավորում երկարածիւքները հազնող Սարդին, նրա դիմաց կանգնած Ռութենին, ամուսնու պիջակն ու վերնաշապիկը սպասողական բռնած Լուսիկին:

ՍԱՐՈ - (վրդովմունքով, նյարդային):

Ասում են՝ Արջասարում ոսկի ենք հայտնաբերել, ուզում ենք հանք բացել... Եղ ոսկու տեղը մեր պապերն էլ գիտեին, բայց Արջասարի վրա ձեռք չբարձրացրին։ Ձեռք չտվին, որովհետև Արջասարը մենակ սար չի, տասներկու աղբյուրի ակունք ա, տանձուտի ու խնձորուտի, սերկակիի, մասուրի, մոշի ու հոնի, բլղրդանի ու իծկոտի, սրոհոնդի, դաղձի, ուրցի շտեմարան ա... Եղնիկի, արջի, նապաստակի, հազար ու մի թևավորի բնակալ ա... Դրանք ոսկի չեն, անհատնում, իրանցով բազմացող բուռ-բուռ ոսկի... (Կնոքից վերցնելով վերնաշապիկը, հազնում է):

ՌՈՒԲԵՆ - Իզուր ես տաքացել։ Կոմբինատ կկառուցեն, աշխատատեղեր կբացվեն, մեր գյուղացիք գործազորուկ չեն մնա, չեն արտագոյթի, կաշխատեն հանքում ու կոմբինատում։

ՍԱՐՈ - Դու էլ ես էդ խելքին, հա՞...

Այ բալա ջան, գյուղացին ինչո՞ւ պիտի գործազորուկ լինի։ Գյուղացու գործատեղն իր դաշտն ու հանդն է, գործը՝ վար ու ցանքը։ Աշխարհն էլ որ գործազորուկ դառնա, գյուղացին իրավունք չունի ասի՝ ես գործազորուկ եմ։ Ուրեմն՝ ծովյ է ու անբան։ Արտագաղթեցին, դրա համար էլ մեր շեն արտերը խոպան են դարձել, հանդերը փուշ ու տատասկով են պատվել։ Հայրենիքը կարոտելու համար չի, անտառը անխնա ոչնչացնելու, սարերն ավերակելու, հողն ամայացնելու համար չի... Գյուղացուն բանվոր կդարձնես ու վաղը, մյուս օրը հանքը կփակվի, գյուղն էլ կվերանա։ Եղ մասին մտածիմ եք... Սրանց տես, Արջասարում հանք են բացում... Հանք են բացում ու ինձ՝ Արջասարի անտառապահիս, որ էդ անտառի զավակն եմ ու տերը, հաթաթա են տալիս՝ էլ էս կողմերում չերևաս։ Չդիմացա ու դրանց ինժեներին մի չափալաղ տվի... ՌՈՒԲԵՆ - Հետո...»

ՍԱՐՈ - Ել ի՞նչ՝ հետո... Դրան նստացրին ավտոն, Ալավերդու հիվանդանոցը տարան։ Չանեն դուրս ա ընկել։ (Տնքոցով) Ընենց դուրս ընկնի, որ ես իմանամ...»

ԼՈՒՄԻԿ - Սարո, մեղալներդ հետդ
տար... Մեղալներդ էլ կախի, որ
իմանան՝ ում հետ գործ ունեն:

ՍԱՐՈ - (պիշակը նրա ձեռքից վերց-
նում, հագնում է): Նոր պիտի ի-
մանան... Ծատ լավ էլ գիտեն:
Գիտեն, որ հողին կպած, խեղճ ու
անձար իսան ենք: Գլխներիս էլ
որ աղուն աղան՝ մեր հախն է:
Մեղալ... էտ մեղալը եթե ոսկոց
չի, նրանց համար երկարի կտոր
ա... (Ծրջվում է գնալու:)

ԼՈՒՄԻԿ - Սար ջան, կոշտ չխոսես,
ներողություն խնդրի, աղաչանք
արա՝ բաց թողան... (Ամուսնու
խիստ հայացքից ընկրկելով:)
Ախր, էրեխեն... Ռուբենս վաղը
բանակ ա գնում...

ՍԱՐՈ - (հիշելով՝ ‘անակնկալի է գա-
լիս: Մոտենում, համրուրում է
Ռուբենի ձակատը): Դու գնա,
տղաս, գնա՝ հայրենիքը պաշտ-
պանի, Արջասարը ես կպաշտ-
պանեմ: (Դուրս է գնում:)

Մքնեցում:

Լուսարձակի լույսը սահում է
քինդաժում, ցուցադրում քնած
զինվորներին:

Թույլ լուսավորվում է բակը:
Փշալարերի վրա՝ լվացած զինվո-
րական համազգեստներ:
Զուրիհան, արռոակի վրա դրված
տաշտակին հակված, կիսաճայն
երգելով լվացք է անում:

ԶՈՒՐԻԱ - Խա սուրթա գյամի,
(Հողում է մի նավակ,),

Ալ փաթթ յամա,
(Փրփրադեգ ջրերում,)

Թուլ թուն ուռխի,
(Պայքարում է նա,),
Մու օդուն աննա...
(Ալիքների դեմ...):

Քինդաժից դուրս եկած Աշուրը
մորք տեսնելով՝ տեղում մեխսվում
է:

ԱՃՈՒՐ - Մամ... Մամ ջան...

ԶՈՒՐԻԱ - (Չրջվում, բաց ձեռքերը
կողերին քսելով՝ շտապում է ըն-
դառաջ): Աշուր, բալես... (Գրկա-
խառնվում են:)

ԱՃՈՒՐ - Մամ ջան... մամ, արդեն
քանի անգամ գալիս ես... Գալիս
ես ու չես խոսում: Ես քո ծայնին
կարոտել եմ... Ես գիտեմ, որ երբ
մահացած հարազատն է երազ
գալիս, ուրեմն նրա շիրմին այցե-
լել է պետք: Առավոտյան հերթա-
պահությունը հանձնելու ենք ու
իշնենք զորամաս: Ես արձակուրդ
եմ գալու: Քեզ այցի կգամ, հաց
կդնեմ տապանաքարիդ...

ԶՈՒՐԻԱ - Կսպասեմ, տղաս...

ԱՃՈՒՐ - Մամ, բա էս ի՞նչ ես անում...
Թող, մի չարչարվի, իմ շորերը ես
կլվամ:

ԶՈՒՐԻԱ - Սրանք քո շորերը չեն,
տղաս:

ԱՃՈՒՐ - Իմը չեն... բա ո՞ւմն են...

ԶՈՒՐԻԱ - Սրանք սահմանին զոհ-
ված քո ընկերների շորերն են: Ե-
րեկ բերեցին: Այ քոռանա նրանց
մոր աչքերը՝ չտեսնեն էս արյու-
նուս շորերը... (Գրկելով որդու
գլուխը, օրորվելով՝ շարունակում
է երգել:)

- Թի լե խափոխա,
(Կորցրել է ձանապարհը,)

*Ուարա խելանա,
(Իր ափն է փնտրում,)
Ուու փըզ լգյամի,
(Հնդկում է նավակը,)
Ալ փաթթ յամա...
(Փրփրադեզ ջրերում...):*

ԱՃՈՒՐ - Ինչ անուշ երգ է:

ԶՈՒՐԻԱ - Օրորոցային է, տղաս,
քեզ համար շատ եմ երգել՝ լողում
է մի նավակ փրփրադեզ ջրե-
րում, պայքարում է նա ալիքնե-
րի դեմ...

ԱՃՈՒՐ - Ինձ համար սա երգել ես...
Բա ինչու չեմ իիշում:

ԶՈՒՐԻԱ - Դու շատ փոքր էիր,
տղաս, չես կարող իիշել: (*Ծոցից
նորածնի շապիկ է հանում:*) Այս,
էսքան բալիկ էիր:

ԱՃՈՒՐ - (*հմայված նայում է*): Դա
ի՞մն է, ես եմ հագել:

ԶՈՒՐԻԱ - Չէ, տղաս, սա քո որդու
շորն է, որ նոր պիտի ծնվի:
Կծնվի, խաղաղություն կիշնի այս
երկրի վրա, տղայիդ կտանենք ու
նրա մկրտությունը կանենք Մառ
Թումայում... (*Ետ-ետ գնալով,
ձայնն իշեցնելով:*) Նրա Սուրբ
կնունքը կանենք Մառ Թումա-
յում... (*Ավելի ցածր:*) Նրա Սուրբ
կնունքը կանենք Մառ Թումա-
յում...

ԱՃՈՒՐ - Մա... Մամ ջան, մի գնա,
իննդրում եմ, մի քիչ, մի քիչ էլ
մնա ինձ հետ...

*Անձայն շուրթերը շարժելով, Զու-
րիան հեռանում, ճուլվում է Խա-
վարին:*

Մընեցում:

Լուսարձակի լույսը սահում է
բլինդաժում, ցուցադրում քնած
զինվորներին:

Լուսավորվում է բակը, որը Վաշի-
լի երազում՝ իրենց տնամերձ այ-
գին է:

Ալեքսանդ քահով ծառատունկի
փոս է փորում, պատաճի Վաշիկը
կանգնած է նրա մոտ:

ԱԼԵՔՍԱՆ - Ալեքսան ապան ձղոպ-
րին տնկի, Վաշիկը ծառը ծիրի,
ծղոպրին մեծանա, ծաղկի, բերք
տա ու Վաշիկը ուտի, ուժը դանա:

ՎԱԶԻԿ - Ապա, պա տյու ուտլական
չես:

ԱԼԵՔՍԱՆ - Ա՛ խոխա, ես էլ իմ պա-
պան տնկած ծառի բերքն եմ ու-
տում, լի:

ՎԱԶԻԿ - Ապա, պա ես հե՞տ եմ ծառ
տնկական:

ԱԼԵՔՍԱՆ - Հեպը՝ մեծանաս, տյու էլ
խոխեք ունենաս:

ՎԱԶԻԿ - Պա ի՞նչ հանգի իլավ,
վար տյու ըրեխեք ունեցար՝ ծառ
չտնկեցիր, թռոներ ունեցար՝ նոր
ես տնկում:

ԱԼԵՔՍԱՆ - Է, Վաչո ջան, քու հոր
ծնվելա վախտը ըստեղ կողվներ
էր, ծառի տնկելու տեղը խրամատ
էինք փորում, բալա:

ՎԱԶԻԿ - Ապա, ինձ ծառ տնկիլը
կսովորցընես:

ԱԼԵՔՍԱՆ - Պա իհարկե կսովորցը-
նեմ: Յաշի, տես՝ սե սըհենց փո-
սը քանդում ես... (*Ծիվը Վաշիկից
վերցնելով՝ ցոյց է տալիս:*)...
փոսին տակին տափլակ քար ես
տինում:

ՎԱԶԻԿ - Ապա, պա քարը տըկըո-

կին խնգալական չի... Տակոհիկը հինգ ա հողը մտնալական:

ԱԼԵՔՍԱՆ - Տես... (Ծիվը բարձրացնում, ցոյց է տալիս սուր արմատը:) Ճղոպրին տակոհիկը դյուզ աքինում, սա որ հողի ու ծիրի համն առավ, հա քիննական ա: Էղ քարը տնում ենք, վար տակոհիկը փարթամ ինի, ծառն էլ ավելի ուժեղ ինի, ծնները՝ շատ, ու շատ բերք տա: Հըսկացար:

ՎԱԶԻԿ - Հըսկացա, իո դանգլա չեմ...

ԱԼԵՔՍԱՆ - Դե վազ տու, քյնա ձյուր բեր, վար տնկիլան եղը ծառը ծրենք: (Ծիվը կողմ դնելով՝ ծնկում, ափերով հող է դուրս բերում փոսից:)

ՎԱԶԻԿ - (գնում է, ճամփին ինչ-որ բան նկատելով՝ կռանում, մատներով հողը հեռացնում, գտած նոնակը բարձրացնում է): Ապա, յաշի տես՝ մեր հողան էս ինչ մեծ ճղոպուր քիթա:

ԱԼԵՔՍԱՆ - (Չրջում, նայում է ու սարսափով նետվում տղայի կողմը): Զգոյշ, բալա... (Նոնակը նրա ձեռքից խլելով սեղմում է կրծքին, ցատկում մի կողմ ու բերանքսի վայր պառկում է:) Վաշիկ, փախի... փախի, բալես...

Պայքյուն:

Մքություն:

Լուսարձակի լույսը սահուս է բիշնաժում, ցուցադրում քնած զինվորներին, ապա լուսավորում զիսակ նստած Աշոտին, ամուսնուն թիկունք արած, հեծկտացող Սարենիկին: Պատաճի Սուրենը կպած է մոր փեշից:

ՍԱԹԵՍԻԿ - (կտրուկ շրջվելով՝ ծչում է): Գնա... Իբր ինչի՞ եկար... Եկար, որ աշխարհքով մեկ մեզ խայտառակ անես, խելքդ տաս էն լրբին...

ԱՇՈՏ - Սաթենիկ...

ՍԱԹԵՍԻԿ - (նյարդային լացով):

Չեմ ուզո՞ւմ, ոչ մի բառ լսել չեմ ուզո՞ւմ... Երկու տարի աչքիս քուն չի եկել, օրը հազար անգամ աղոթել եմ, որ քեզ մի բան չպատահի... Ել սրբի դուռ չմնաց, որ զօնամ, մոմ չվառեմ, որ էսօրվան օրը կովից ետ դառնաս ու քեզ ուրիշով տան: Գնա, Աշոտ, գնա, դու էստեր ոչ կին ունես, ոչ երեխա... (Սուրենը, փարվելով մորը, բարձրածայն լալիս է: Սուրենին.) Դու էլ ձենդ կտրի, քո գլուխը չունեմ...

Մքնեցում:

Լուսավորվում են դեմ-դիմաց կանգնած, համազգգեստով, ինքնաճիկն ուսած Սուրենը և Սարենիկը:

ՍԱԹԵՍԻԿ - (ընկծված, տխուր):

Սուրեն, տղես, հերդ որ տնից հեռացավ, էլի ուազմածակատ գնաց: Մի շարաթ անց զինկումը մեր տուն եկավ, հայտնեց, որ զոհվել է... Ախր, կոնտուզիա տարած էր խեղճը, երկու տեղից վիրավորված, մահն իր աչքով տեսած... Ինքն էլ չգիտեր, թե ինչ է անում... (Ողբածայն:) Գլուխս մեռնի, էն ո՞ւր դուրս արի տնից... Էղ կողմերում հորդ գերեզմանը գտիր, տղես... Անպայման գտիր ու ասա, որ Սաթենիկը քեզ սի-

րում է... որ Սաթենիկը քեզ ներել է, թող տոն գա...

Մքնեցում:

Լսկում է Մարտիրոսի երգը.

*Սիրուն թիթեռ ինձ ասա,
Թե ինչով ես դու ապրում,
Ամբողջ օրը թոշում ես,
Ինչպես է որ չես հոգնում:*

Լուսարձակի լույսը սահում է
քիմնդաժում, ցուցադրում քնած
զինվորներին:
Արշակը նստում է անկողնում:
Մարտիրոսի երգը շարունակվում
է.

*Սիրուն, կանաչ դաշտերում
Ես ապրում եմ համարձակ,
Ծաղիկների բույրն անուշ,
Իմ կերակուրն է միակ...
ԱՐՃԱԿ - (կիսաձայն): Հեյ... Ո՞վ է
երգում...*

ՄԱՐՏԻՐՈՍԻ ձայնը - Ես եմ, Մարտիրոսը:

ԱՐՃԱԿ - Ինչ Մարտիրոս:

ՄԱՐՏԻՐՈՍԻ ձայնը - Մարտիրոսը՝
Սարգիս զորավարի որդին:

ԱՐՃԱԿ - Սուրբ Սարգիս զորավարի...
ՄԱՐՏԻՐՈՍԻ ձայնը - Հայ:

ԱՐՃԱԿ - Երանի քեզ... Հայրդ էլ, դու¹
էլ հերոսացաք... Իսկ իմ հայրը...
Մարտիրոս, օգնիր ինձ, խնդրում
եմ, օգնիր, որ այս ամենը երազ
դառնա, որ հորս գալը ոչ ոք չիիշի,
դառնա իմ տեսած վատ երազը...

Կարճ դադար:

ՄԱՐՏԻՐՈՍԻ ձայնը - Ներիր քո հո-

ռը, Արշակ, նա չգիտի, թե ինչ է
անում:

ԱՐՃԱԿ - (*հոգոցով*): Ասում ես, էի...
Ամաչում եմ տղերքի աչքերին
նայել: Մարտիրոս... Մարտիրոս,
ինչ եղար... (Գոռում է:) Մարտի-
րոն...

ՈՈՒԲԵԼ - (*կողքի շրջվելով*): Արա,
ոե թողեք քնենք, էլի...

Արշակը ես է ընկնում քարձին:
Դադար:

Դրսից՝ ժամապահի ձայնը.
«Կանգնիր, ո՞վ է գալիս... Տագ-
նաշապ... Տղերք, հասե՞ք...»:
Հնչում է «Տագնապ» ազդան-
շանն ու քարքվում՝ կարմիր լոյ-
սը:

ԱՐՃԱԿ - (*թախտից ցած թոշելով՝
ծանկում է ինքնածիզը*): Զո՞կ,
տագնապ...

Խուտներամ իրարանցում: Ինք-
նածիզը ձեռքին իր սենյակից
ներս է խուժում Արգումանյանը:

ԱՐՉՈՒՄԱՆՑԱՆ - Առանց խուժա-
պի... արագ, արագ... (Ձինված
մարտիկներին դուրս թողնելով՝
հետևում է նրանց:)

Բակից՝ աղմուկ, հրահանգներ.

- Դիրքավորվեք, արագ...
- Զախ թել՝ ուշադիր...
- Պարոն ավագ լեյտենանտ, այս-
տեղ, այստեղ եկեք...
- Էրմանիլար, օլդուրմերին... օլդուր-
մերին... չսպանեք, ես ձեր մոտ եմ
եկել... ես ձեր մոտ եմ եկել...
- Զկրակես: Ստուգիր՝ զենք չկա՞ մո-
տը... Պայթուցիկներ չունի...

- Էս ո՞վ ա, արա... Հալա առաջ ընկի...

Մտնում են ձեռքերը ծոծրակին պահած, թիկունքից իրվող Զարիլը, զենքը նրան հառած զինվորները:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (Սուրենին, Լարեկին): Սրան իմ սենյակը տարեք ու աշալուրը հսկեք: (Գերուն տանում են: Արշակին.) Սերժանտ Մելքոնյան, անմիջապես ուժեղացված վերակարգ կազմեք:

ԱՐԾԱԿ - (ձգվելով): Լսում եմ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (առանձնանալով՝ հեռախոսվ): «Լազուր»... «Լազուր», ես «Արծիվն» եմ... ես «Արծիվն» եմ... մենք անկոչ իյոր ունենք, մեկ հոգի... նվեր չունի... (Շարունակում է զեկուցել:)

ԱՐԾԱԿ - Ուժեղացված պարեկային ծառայության համար շարքայիններ՝ Վաչիկ Գաբրիելյան, Ռուբեն Անտոնյան, Թեմուր Խուդոյան, Աշուր Պետրով: Արագ, շարվել:

Ծարվում են:

Արզումանյանը մոտենում է:

ԱՐԾԱԿ - Հավսար, զգանտ: (Պատվի առնելով:) Պարոն ավագ լեյտենանտ, ձեր հրամանով...

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Թողոնել:

ԱՐԾԱԿ - Թողոնել:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (ստուգում է նրանց սպառագինությունը, դիմում շարքին): Տղերք, գիտեմ, իոգնած եք, տրամադրված, որ առավոտյան հերթափոխը հանձնելու, զորամաս էինք իշնելու:

Բայց իրադրությունը կարծես թե փոխվում է: Մենք դեռ չգիտենք՝ իս ազերին մոլորվել է, թե՛ հետախոյզ է, խայծ է, թե՛ մեր զգոնությունը ստուգելու միջոց...

Տարածքի ամեն մի մետրը ուշադիր հսկողության տակ առեք, սա մենակ չի կարող լինել: (Կարծ դադար:) Ես հրամանատարությանը գեկուցեցի իրավիճակը: Վերակարգ է գալիս: Ծուտով այստեղ կլինեն: Մեր խնդիրն է՝ աչքներս չորս արած հսկել սահմանը, հարկ եղած դեպքում հակահարված տալ, չեզոքացնել դիվերսիան, դիմագրավել հակառակորդի հնարավոր առաջնադաշտմանը՝ մինչև օգնական ուժերի տեղ հասնելը: Կատարել :

ԱՐԾԱԿ - Վերակարգ, աշ, դարձ: Քայլիվ, մարդ: (Ուղեկցում, դուրս են գնում:)

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (նստում է սեղանի մոտ, Կարենին): Ներս բերեք:

Կարենը գնում է մյուս հարկաբաժին և Սուրենի, Նարեկի հետ, զենքի տակ, բերում ձեռքերը ծոծրակին պահած գերում: Սուրենը ելքի մոտ հսկող դիրք է գրավում:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (գերուն): Անոնդ: ԶԱԲԻԼ - Զարիլ:

Տղաները փոթկացնում են:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (հայացքով սատում է նրանց: Գերուն): Ձեռքերդ իջեցրու, հանգստացի ու հիշի անոնդ:

ԶԱԲԻԼ - (ձեռքերն իշեցնում է): Զարիլ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Գոնե ազգանունդ հիշո՞ւմ ես: Ազգանունդ ի՞նչ է, քեզ ինչպիս են կոչում:

ԶԱԲԻԼ - Իմ անունը Զարիլ է, ազգանուն՝ Գումբատով: Ես թալիշ եմ, ազերի չեմ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Հայերեն որտեղից գիտես:

ԶԱԲԻԼ - Զավենից եմ սովորել:

ՍՈՒՐԵՆ - Պահ, քո... ազերիների բանակում հայ կա՞...

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (սաստում է): Չխոսե՛: (Զարիլին.) Զավենն ո՞վ է:

ԶԱԲԻԼ - Մեր հարևանը: Ես Լյանքյարանից եմ: Մեր թաղում երկու հայ ընտանիք կար, Զավեններ մեր հարևանն էին: Ազերիները նրանց տունը վառեցին, Զավեննենք պարունով Թուրքմենիստան փախան... Բայց թալիշը հային թշնամի չի: Թալիշին ազերիներն են ստիպում կրակել: Մենք նրանց չենք սիրում, նրանք էլ՝ մեզ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Երբվանից ես բանակում:

ԶԱԲԻԼ - Վեց ամիս: Առաջին գծի մեծ մասը լեզգիներ են, թալիշներ, ավարներ... թաթեր էլ կան: Ազերիները քիչ են: Կամանդիրներն են ազերի: Բնիկներիս կովացնում են, իրանք՝ շահում, որ մեզ վերացնեն, մեր երկրի տերը դառնան:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Էդ դասը քեզ ո՞վ է սովորեցրել:

ԶԱԲԻԼ - Նազիմը:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Հետախուզության պետը:

ԶԱԲԻԼ - Չէ, Նազիմը սերժանտ ա: Նա լեզգի ա: Նրա հայրը «Ազատ Լեզգիստան» կազմակերպության գաղտնի անդամ ա: Նազիմն ինձ օգնեց, որ փախչեմ: Նազիմն ասում էր, որ հազար տարի առաջ քոչվոր թաթար-թյուրքերը գրավեցին մեր երկիրն ու բնիկներին ոչնչացնում են, թշնամացնում, որ իրանք երկրի տերը դառնան: Նազիմն ասում էր՝ հայերի հետ մենք կոիվ չունենք: Նազիմն ասում էր...

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Լավ, բավական է:

ԶԱԲԻԼ - Չէ, բավական չի: Բա չեք հարցաքննիմ, թե ինչու եմ փախել ձեր մոտ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Ինչո՞ւ ես փախել մեր մոտ:

ԶԱԲԻԼ - Նազիմն ասում էր...

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Էլի՛ Նազիմ...

ԶԱԲԻԼ - Մինչև վերջ լսի, է, կամանդիր... Նազիմն ասում էր՝ հայեր, զգոյշ եղեք, էս գիշեր Զալիան գալու է: Զալիա մարզ զյալըվ... մարզ ա եկել՝ ուշ... երեք հատ հայի գլուխ բերի, ամեն գլուխը՝ հինգ հարյուր դոլար, բա՞...

Զինվորները միմյանց են նայում:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Զալիա... Զալիան ո՞վ է:

ԶԱԲԻԼ - Նազիմն ասում էր՝ Թուրքիայից ա եկել, «Գորշ գայլերից» ա...

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Ուրիշ:

ԶԱԲԻԼ - Ինձի գենք կտա՞ք:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Զննք... Քնզ...
ԶԱԲԻԼ - Հա: Մինչև Զաքիրովին
 չխփեմ, չեմ հանգստանա:
ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Խփող էիր՝ ձեր
 մոտ կխփեիր: Եկել ես՝ էստեղ
 խփե՞ս:

ԶԱԲԻԼ - Զաքիրովն էստեղ կգա՞...
ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Դու էիր ասում,
 որ գիշերով գալու է, ինձ ես
 հարցնում:

ԶԱԲԻԼ - Զէ, կամանդիր, գիշերը
 Զալիան ա գալու: Զաքիրովը մեր
 չաստի կամանդիրն ա... (Դուն
 բացվելուն պես վախեցած
 կծկում է, բայց տեսնելով, որ
 մտնողն Արշակն է՝ ուղղվում է:)
 Զաքիրովն ինձ ծեծում ա... պոս-
 տին ինձ պատրոն չի տալի, ա-
 սում ա՝ հայերը թող քեզ խփե՞ն՝
 կորիսան թալիշներդ հերոս կունե-
 նաք:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Կորիսանն ի՞նչ է:
ԶԱԲԻԼ - (փորձում է հիշել): Կոր-
 իսան... կորիսան... ցոան, էլի...

ԱՐԾԱԿ - Վախսկո՞տ:

ԶԱԲԻԼ - Հա, վախսկոտ: Նազիմն ա-
 սում էր՝ ազերին մեզ ա առաջ
 գցում, որ հայը լեզգի խփի, թալիշ
 խփի, թշնամություն ընկնի մեր
 մեց:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - «Գորշ գայլը»
 հենց այս գիշե՞ր է գալու:

ԶԱԲԻԼ - Հա, էս:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Հենց այս
 պահակակետի վրա:

ԶԱԲԻԼ - Հա, Նազիմն ասավ՝ էստեղ
 ա գալու:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Ո՞ր կողմով է
 բարձրանալու:

ԶԱԲԻԼ - Զգիտեմ:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Քանի՞ հոգով են
 գալու:

ԶԱԲԻԼ - Մենակ... Զալիան բլինդած
 ա մտնում ու պայթացնում ա... Է-
 լի ա արել: Նազիմն ասավ՝ չորս
 անգամ արել ա...

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Ուրիշ:

ԶԱԲԻԼ - (ուսերը թոթվելով): Էղքան:
ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - Լավ հիշիր, ուրիշ
 բան չունես ասելու:

ԶԱԲԻԼ - Զէ, էղքան... Ուրիշ բան
 չգիտեմ:

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - (գրպանից բա-
 նալին հանում, մեկնում է Արշա-
 կին): Իմ սենյակում սրան
 փակեք:

ԱՐԾԱԿ - Լսում եմ: (Զարիլին.) Վեր
 կաց, գնացինք: (Գնում են:)

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ - (հեռախոսը հա-
 նելով՝ առանձնանում է): «Լա-
 զուր»... «Լազուր», ես «Արծիվն»
 եմ... ես «Արծիվն» եմ... (Հեռա-
 նալով շարունակում է խոսել:)

ՍՈՒՐԵՆ - Զահլյ... (Նարեկին.) Վե-
 հափառ, զահլեն «գլուխ» չի նշա-
 նակում, ին որ ասում ենք՝ զահլես
 մի տար, զահլեդ չունեմ...

ՏԱՐԵԿ - Զէ, «զահլան» բարբառով
 համբերություն է նշանակում:
 Բայց էդ թուրքի անունը ոչ թե
 Զահլա է, այլ Զալի-հա: Նշանա-
 կում է էգ գայլ: Թյուրքախոսները
 առասպել ունեն՝ իր հարազատ ե-
 րեխաներին հոշոտած, մարդա-
 կեր կնոջ մասին է: Նրա անունը
 Զալիա է:

ԿԱՐԵՆ - Թուրքերի առասպելը հենց
 մարդակերության մասին պիտի
 լինի, ուրիշ էլ ի՞նչ...

Մքնեցում:

Քակը:

Ուշ գիշեր է:

Մեղմ հնչում է «Ախպերս ու նա» երգը:

Լուսնի աղոտ շողով լուսավորված կիսամոռք բակում ստվերմներ են երևում, ապան՝ տարբեր տեղից մուտք գործող սևազգեստ կանայք: Նրանք համբաքայլ առաջանում, ուղվարձ են դեպի ճախսակողմի թմբի խաչքարը:

Խաչքարի մոտ ծնկի գալով՝ կանայք մոմեր են վառում:

Վերևից հզոր լույս է ծորում խաչքարի վրա:

Մքննեցում:

Լուսավորվում է բլինդաժը: Նոյն պահն է, ինչ քիչ առաջ:

ԿԱՐԵՆ - Թուրքերի առասպելը հենց մարդակերության մասին պիտի լինի, որիշ էլ ինչ...

ՍՈՒՐԵՆ - Հիմա էս եկողը կի՞ն է:

ՆԱՐԵԿ - Զեմ կարծում: Երևի որպես դաժան ու արյունարբու՝ իր համար մականուն է ընտրել:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (Մտախոհ, ինքն իրեն): Կօա՝ հախից կգանք, կիմանանք՝ է՞զ է, թե՞ որձ... (Իրեն նայող զինվորներին, մտերմիկ:)

Տղերք, իրավիճակի լրջությունը բոլորին է պարզ: Զեմ ուզում ավելորդ ձառեր ասել: Զգոն եղեք: Զգոն եղեք ու... պահպանեք ծեզ: (Հատու:) Մեկ գծով՝ շարվել: (Հրամանն անմիջապես կատարվում է: Ներքին տագնապն ու զգացմունքները զսպելով, դանդաղաքայլ անցնում է շարքի

առջևով՝ իրքև ստուգում է մարտիկների սպառազինությունը: Տպավորություն է՝ ուզում է ինչ-որ բան ասել, բայց զսպում է իրեն: Մի պահ զիսահակ մտորելուց հետո՝ հրամայական:) Պարոն սերժանտ:

ԱՐԾԱԿ - (Ճգվում է): Լսում եմ, պարոն ավագ լեյտենանտ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Անմիջապես համալրել պահակակետերը: Դու առաջին պահակակետում կինեն՝ հեռախոսի մոտ: (Զինվորները երկմտանքով միմյանց են նայում:) Պատասխանդ չլսեցի, սերժանտ:

ԱՐԾԱԿ - (Երկմտած, կիսաճայն): Լսում եմ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (պատվի առնելով, ազդու:) Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պաշտպանության դիրքերում մարտական ուժեղացված պարեկություն իրականացնելու համար՝ ջրկ, աջ, դարձ: (Հրամանը կատարվում է:) Քայլնվ, մարշ: (Ոչ ոք տեղից չի շարժվում:) Կատարել հրամանը: (Զգաստ դիրքը թողնելով՝ զինվորները շրջվում են հրամանատարին:)

ԱՐԾԱԿ - Իսկ դո՞ւք:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Ավելորդ հարցեր մի տվեք: Կատարել հրամանը:

ՆԱՐԵԿ - Կներեք, պարոն ավագ լեյտենանտ, բայց... ախր, պահակակետերն արդեն ուժեղացված են...

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (հայացքը նրանց փախցնելով): Հրամանները չեն քննարկվում:

ԱՐԾԱԿ - (Մտերիմ տոնով): Պարոն Արգումանյան, մենք լսեցինք, որ «Գորշ գայլը» ուղիղ բինդած է գալու... Դուք մեզ դիտմամբ եք ցրում, որ... որ վտանգից հեռացնեք: Ձեզ ՞նոց մենակ թողնենք: Մենք միասին կդիմավորենք նրան:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (Նրան չնայելով): Սահրադյան, դու գիտես, չէ, թե ինչ հետևանքներ է ունենում մարտական հրամանին չենթարկվելը:

ԱՐԾԱԿ - Գիտեմ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Հստ կանոնակարգի պատասխանեք, սերժանտ:

ԱՐԾԱԿ - Ճիշտ այդպես, պարոն ավագ լեյտենանտ, գիտեմ, բայց... մենք միասին կդիմավորենք «Գորշ գայլին»:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Ո՞չ մի դեպքում:

ՆԱՐԵԿ - (հաստատակամ): Մենք չենք գնա, հրամանատար, չենք գնա:

ՍՈՒՐԵՆ - Ախր, պարոն լեյտենանտ, դիվերսանտը էստեղ ա գալու, մենք ՞որ գնանք:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - Ոչ մի դեպքում, լսո՞ւմ եք, ոչ մի դեպքում... Դուրս ելեք բինդածից, կատարեք հրամանը, այլապես պատասխան կտաք դրա համար:

ՆԱՐԵԿ - Կներեք, պարոն ավագ լեյտենանտ, իսկ մտածել եք, թե ինչ պատասխան կտանք մենք մեր խղճին, եթե, Աստված չանի, Զալիան գլխատի ձեզ:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (նյարդերը տեղի են տալիս, փլվում է աթողին,

գլուխն առնում ափերի մեջ): Տղերք... տղերք ջան, բայց... բայց ես որբանցում եմ մեծացել, ինձ սպասող չկա: Ես ոչ մի հարազատ չունեմ: Ես ոչ մի հարազատ չունեմ՝ ձեզնից բացի... Գնացեք այստեղից, խնդրում եմ... գնացեք...

Լարված լուրջուն:

ԱՐԾԱԿ - Լուսաբացին քիչ մնաց:

ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ - (վծովական ոտքի ելնելով): Դիրքավորվեք, տղերք:

Ձենքերը կարգի բերելով՝ քախտերի, պահարանիկի ետևում դիրքավորվում են:

Համբաքայլ մտնում են բոլոր հերոսները, կանգնում հարազատների կողքին ու նրանց պես հավում մուտքին:

Լարված սպասում:

Դրսում որոսում է երկու կրակոց: Զինվորները լիցքավորում են զենքերը, նշանառության տակ վերցնում մուտքը:

Դանդաղ բացվում է դուռը: Մտնում է Ամահիտը:

ԱՐԾԱԿ - Անահիտ...

ԱՆԱՀԻՏ - (փլվում է աթողին: Ուսից հանելով հրացանը՝ մի կողմէ է դնում): «Գորշ գայլը» չհասավ որսին: Ինքը որս դարձավ...

Հնչում է «Հայաստան» երգը*):

Պահի մեջ արձանացած ներկաների վրա դանդաղ բափառում է լուսարձակը, բակում լուսաբացի շողերից հորիզում է խաչքարը:

*) «Հայաստան». խոսք՝ Սամվել Խալաթյանի, երաժշտությունը՝ Ինգրիդ Կուպի (Հատ «Ես չեմ մեռնի» երգի երաժշտության):

ՀԱՅԱՍՏԱՆ

Մայր, իմ սուրբ,
Հայրենիք իմ, հարազատ,
Իմ որդին քո համար,
Քո բախտի համար՝ քոնն է ահա:

Կրկներգ

Գեթ միայն դու ապրիր անպարտ,
Գեթ միայն դու շնչիր ազատ,
Ու թող երկինքդ լինի միշտ անամա,/
Ու թող արևոտ լինի միշտ պայծառ,
Հայաստան,
Հա-յաս-տան...
Մայր, իմ մայր,
Հայրենիք իմ սրբանուն,
Քեզ համար, հանուն քեզ
Ընկավ նա մարտում՝ հերոսի պես խիզախ:

Կրկներգ

Գեթ միայն դու ապրիր անպարտ,
Գեթ միայն դու շնչիր ազատ,
Ու թող երկինքդ լինի միշտ անամա,/
Ու թող արևոտ լինի միշտ պայծառ,
Հայաստան,
Հա-յաս-տան...

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Դավիթ
ԽԱՉԻՅԱՆ

Քանի դեռ աշխարհում պատեր և փշալարեր կան՝ ոչ ոք ազատ չի կարող լինել: Անգամ էական չէ, թե դու ոք կողմում ես: Եթե անգամ քո փշալարերը ուկուց են, իսկ քո ուոքերի տակ թանկարժեք գործ է փոփած, դու չես կարող ազատ լինել: Եթե անգամ հակառակ կողմ քայլես, ապա մի օր քայլերդ քեզ կրկին փշալարի մոտ են քերելու: Եթե անգամ աչքերդ փակես՝ մատներդ դիմացելու են փշերին ու արյունակալեն: Եթե անգամ փակես աչքերդ ու նատես մի տեղ՝ քեզ է հասնելու տառապողների հառաջը: Եթե անգամ իցանես ականջներդ ու փակես քիթդ... Քանի հոգիդ կենդանի է, դու անկարող ես չառնչվել փշալարերին, որովհետև դրանք ավելի հաճախ հենց քո մեջ են: Եվ ինչը կարող է մեղմել այդ անհատում ցավը:

ՍԵՐ, ՀԱՅ ԵՎ ՓՇԱԼԱՐԵՐ

Դրամա երեք արարուկ

Գործող անձինք՝

ԶԻՆՎՈՐ- նույն ինքը՝ ԿԱՅԵՆ

ԿԱԼԱՆԱՎՈՐ - նույն ինքը՝ ԱԲԵԼ

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

Մթնշաղ է: Լսվում է ամայրոպի ճայնը: Բեմի խորքից ներս են մտնում շորայակապ կալանավորն ու նրան հսկող զինվորը: Երկուսն էլ հոգնած են ու անտարբեր ամեն ինչին: Գրեթե նույն հագուստով են: Միակ տարբերությունը զինվորի ձեռքի հրացանն է: Մոտենում են բեմը կիսող պատին, որն իրականում փշալարերով իրար միացած երկու սյուն է: Պատի աջ և ձախ կողմերում պարզունակ քնատախտակներ են: Ավտոմատիզմի հասած շարժումներով կալանավորը մեկնում է ձեռքերը, զինվորն բացում է ձեռնաշղան, կալանավորն անցնում է իր բանտախտուցը, զինվորը կողպում է դուռը, և գրեթե միաժամանակ նստում են՝ ամեն մեկն իր քնատախտակին: Կայծակի փայլատակումը լուսավորում է բեմը, և կրկին ամայրոպի ճայնն է ողողում դահիճը: Զինվորը գլանակ է հանում գրպանից, վառում ու փողում է քնատախտակին: Կալանավորը գրեթե անտարբեր նրա շարժումներին է հետևում:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ինձ էլ չե՞ս հյուրասիրի:

Զինվորն, ասես անակմկալի զալով ու հիշելով դրացու մասին, դանդաղ վեր է կենում, մոտենում կալանավորի ճաղարժնակին, մի անգամ էլ է ներքաշում իր գլանակից, մնացորդը մեկնելով կալանավորին՝ վերադառնում է իր տեղը:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - (ագահորեն ներքաշելով ծովիսը): Ծնորհակալ եմ, եղբայր:

ԶԻՆՎՈՐ - (կրկին մեկնվելով քնատախտակին ու իր համար նոր

գլանակ կպցնելով): Ինչո՞ւ ես ինձ եղբայր անվանում:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - (թեթև ծիծաղով): Եթե չեմ սխալվում, անունդ Կայեն է, չէ՞:

ԶԻՆՎՈՐ - Այո, բայց դա քեզ իրավունք չի տալիս ինձ «եղբայր» կոչել: Գիտես՝ կանոնակարգով արգելված է:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Իհարկե, գիտեմ: Բայց զավեշտն այն է, որ իմ անունն էլ Աբել է:

ԶԻՆՎՈՐ - Հետո ինչ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Երեկի չես լսել Կայենի և Աբելի պատմությունը:

ԶԻՆՎՈՐ - Երբեք չեմ լսել: Պատմի՞ր:

Միևնույն է, քունս չի տանում: Դուք՝ կալանավորներդ, հետաքրքիր պատմություններ գիտեք:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Դեմ, դա պատմություն էլ չէ, այլ մի իին զրոյց կամ, գուցե, առասպել: Ո՞վ գիտե... Ժամանակին երկու եղբայր կային՝ Կայեն և Աբել: Կայենը ռանչպար էր, իսկ Աբելը՝ խաշնարած: Նրանք մի հորից ու մի մորից էին: Ու մի օր էլ որոշեցին իրենց ունեցածից ընծաներ մատուցել Աստծուն:

ԶԻՆՎՈՐ - Իսկ դա ո՞վ է: Նրանց հյորը:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Դեմ... Մոտավորապես՝ այս:

ԶԻՆՎՈՐ - Հետո՞

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Կայենն ընտրեց երկրի տված լավագոյն պտուղները՝ մրգեր, բանջարեղեն, հատապտուղներ: Իսկ Աբելն իր հոտի լավագոյն ոչխարներից առանձնացրեց: Ու նրանք առանձին-առանձին ընծաներ մատուցեցին Աստծուն: Բայց Աստված Աբելի ընծաները հավանեց, իսկ Կայենինը մերժեց: Կայենը դրանից շատ ազդվեց ու կախեց երեսը: Աստված, տեսնելով Կայենի վիճակը, հարցրեց՝ ինչն ես բարկացել ու կախել երեսդ: Չէ՞ որ եթե բարի լինես, այն կրածրանա, ու չես խուսափի աչքերիս նայել: Բայց եթե բարի չլինես, իմացիր, որ մեղքը քեզ մոտ է ու փափա-

գում է քեզ: Բայց դն իշխիր նրա վրա ու մի թող, որ նա տիրանա քեզ: Կայենը լսեց խրատը, բայց ոչինչ չպատասխանեց, այլ գնաց իր գործին: Մի օր էլ այնպես ստացվեց, որ նա եղբոր հետ դաշտում էր: Այդ պահին նախանձն ու ամբարտավան սիրտը կրկին գլուխ բարձրացրին նրա մեջ, ու նա սպանեց եղբորը: Այդ տեսնելով՝ Աստված հարցրեց նրան՝ ո՞ր է քո եղբայր Աբելը: Կայենը, տակավին ներքուստ եռալով, կամ էլ, ո՞վ գիտե, ցանկանալով մի կերպ խոյս տալ անխուսափելի պատժից, պատասխանեց՝ չգիտեմ, մի՞թե ես եղբորս պահապանն եմ: Եվ Աստված ասաց՝ ինչ ես արել, քո եղբոր արյան ծայնը երկրից բողոքում է ինձ: Ուրեմն՝ անիջալ լինես երկրի վրա, որ իր բերանը բացեց՝ եղբորդ արյունը քո ծեռքից ընդունելու: Երբ երկրի վրա գործ անես՝ նա այլևս արդյունք չտա քեզ, այլ նրա վրա աստանդական ու թափառական լինես: Կայենը՝ լիովին հուսահատ ու մոլոր, դիմեց Աստծուն ու ասաց՝ իմ մեղքն ավելին է, քան թողությունը: Այսօր դու արտաքսեցիր ինձ երկրի վրայից, ու ես այսուհետև պիտի թաքնվեմ քեզանից, անտուն ու թափառական դառնամ, և ինձ գտնող յուրաքանչյուր ոք կցանկանա սպանել ինձ: Այս լսելով՝ Աստված ասաց. ով որ Կայենին սպանի՝ նրանից յոթնա-

պատիկ վրեժ կառնվի: Եվ Աստված նշան դրեց Կայենի վրա, որ բոլորը ձանաչեն նրան, ու ոչ ոք չսպանի նրան, եթե ինչ-որ տեղ հանդիպի: Իսկ Կայենը լքեց այդ տեղերը ու տեղափոխվեց արևելքում գտնվող ինչ-որ երկիր: Ասում են՝ դրանից հետո նա ամուսնացել է, զավակ ունեցել ու մի քաղաք է կառուցել: Բայց դա արդեն էական չէ: Սա է այդ իին պատմությունը, որ լսել եմ մորիցս:

Միատժամանակ լուրջում է տիրում: Միայն ամպրոպի որոտն ու անձրևի ձայնն են լավում:

ԶԻՆՎՈՐ - Իսկ ինչո՞ւ հայրը չընդունեց Կայեն որդու նվերները: Նա անկեղծ սրտով չէր մատուցում:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Զգիտեմ: Դրա մասին մայրս ինձ ոչինչ չի ասել: Ես պարզապես հիշեցի այս իին պատմությունը, քանի որ ինչ-որ խորիրդավոր բան կար մեր հանդիպման մեջ: Ընդունիր, որ ամեն օր չեն Աբել և Կայեն անունով մարդիկ հանդիպում, այն է՝ այսպիսի պայմաններում:

ԶԻՆՎՈՐ - Թերևս: (Վեր է կենում պառկած տեղից, մոտենում ձաղավանդակին:) Վերցրու այս կիսատ տուփն ու լուցկին: Հոյս ունեմ, պատժախուցը չես հրկիզի:

Կալանավորն աճապարանքով վերցնում է զինվորի մեկնած նվերները՝ կարծես վախենալով,

որ վերջինս կարող է հանկարծ փոշմանել ու ետ վերցնել:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ծնորհակալ եմ, շնորհակալ... Դու չես ուզում, որ քեզ «Եղբայր» անվանեմ, բայց քո արածն, հիրավի, եղբայրական արարք էր: Իսկ դու ունե՞ս:

ԶԻՆՎՈՐ - Ունեմ, մի անհանգստացիր: Եվ խնդրում եմ՝ առանց բարոյախոսության: Զգվում եմ դրանից: Հատկապես, որ վերջին ունեցածս չէր, որ տվեցի քեզ: Իհարկե, էլի ունեմ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Կեցցե՞ս, Կայեն: Չի կարելի վերջին ունեցածը տալ: Դրանով ինքնըստինքյան կղողեիր ինձ վերցնել քո վերջին ունեցածը: Իսկ ես դա չեմ ուզում: Դա իմ կողմից տմարդություն կիխեր:

ԶԻՆՎՈՐ - (Կրկին մեկնվելով քնատախտակին): Իսկ ինչո՞ւ չի կարելի վերջին ունեցածը վերցնել: Դա ի՞նչ է, բարոյախոսությո՞ւն: Խնդրեցի, չէ...

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ոչ մի բարոյախոսություն: Ո՞չ մի դեպքում: Ծան բաժին թող դառնա բարոյախոսությունը: Իմ ասածը կյանքի ծշմարտություններից է: Լավ չէ մարդուց վերցնել նրա վերջին կտորը:

ԶԻՆՎՈՐ - Թող չտա: Չէ՞ որ կարող էի և չտալ...

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Իհարկե: Բայց ընդունիր, որ շատ ավելի դժվար է վերջին ունեցածը տալը: Ունեցածից բաժին հանել, ըստ էության,

բոլորն էլ կարող են: Սակայն վերջինը տալը քչերին է հատուկ: Դրա համար ուրիշ մարդկային հատկանիշներ են պետք, ուրիշ մոտեցում:

ԶԻՆՎՈՐ - Հիմարություն չէ՝ վերջին ունեցածն ուրիշին տալը:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Հիմարություն չէ: Դրանից դու ավելի ես հարստանում: Ընդով, իհարկե:

ԶԻՆՎՈՐ - (քմծիծաղով): Իրոք: Դու տարօրինակ բաներ ես ասում:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ես: Օրինակ...

ԶԻՆՎՈՐ - Դե, օրինակ, քո այդ մտացածին պատմությունը եղբայրների մասին: Զգիտեմ, ով է մոգոնել այն, բայց մի բան ակնհայտ է՝ հայրն անհրավացի վարվեց Կայենի հետ: Կարծես հենց ինքը, անուղղակիորեն, իհարկե, դրդեց նրան սպանել եղբորը, իսկ հետո դաժանորեն պատժեց նրան: Հայրը չպետք է այդպես վարվեր:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Դա փորձություն էր:

ԶԻՆՎՈՐ - Փորձություն: Ինչի՞ համար: Ինչ է, Կայենը առիթ էր տվել կասկածելու հոր հանդեպ իր սիրոն: Ո՞վ շահեց այդ ամենից: Արթլը: Ո՞չ, նա սպանվեց: Կայնը: Կրկին՝ ոչ: Նա դատապարտվեց հավերժական դեգերումների ու մեղքի ծանրության տակ մաքառելու: Նույնիսկ փրկության ու մեղքը քավելու հոլու էլ չստացավ: Հայրը շահեց: Կասկածում եմ: Եղբայրները երևի հաշտ ու խաղաղ ապրում

էին կողք-կողքի մինչև այդ չարբաստիկ օրը, երբ խոռվվեց նրանց անվրդով կյանքն ու աշխատանքը: Բնչ ուզում ես ասա՝ մի բան շինծու ու կեղծ է այս պատմության մեջ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Զգիտեմ, չգիտեմ...

Մի բան էլ էր ասում մայրս՝ մի չարախոսիր քո հորը:

ԶԻՆՎՈՐ - (տարակուսանքով): Հըմ...

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Եվ մի դատիր, որ ինքդ չդատվես:

ԶԻՆՎՈՐ - Հանգստացիր: Ես ոչ դատում եմ, ոչ էլ չարախոսում: Պարզապես ցանկանում եմ հասկանալ պատմածդ: Եվ որքան էլ մտածում եմ, չեմ հասկանում՝ ո՞րն էր Կայենի մեղքը:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Նրա սրտում չարություն կար, որը նա չկարողացավ վանել իրենից: Նախանձ և չարություն:

ԶԻՆՎՈՐ - Մի բան խառնում ես: Նախանձն ու չարությունը արդեն հետո ի հայտ եկան, երբ նրա հայրը (Աստված, հայ) մերժեց իր տղայի ընծաները: Ուրեմն՝ կատարվածի պատճառը հոր մեջ է պետք փնտրել: Եթե Արելի ընծաները մերժվեին, նա էլ, թերևս, նոյն իրավիճակում կհայտնվեր և հենց ինքը եղբայրասպան կդառնար: Համաձայն չն:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - (կարծ լուսությունից հետո): Միգուցե: Դժվար է գլուխ հանել: Հնարավոր է, դու ծիշտ ես մեկնաբանում: Ամեն դեպքում

մեզ հայտնի չէ Աստծո մտադրությունը:

ԶԻՆՎՈՐ - Ես կասեի՝ դիտավորությունը: Ծնողները հաճախ տարօրինակ բաներ են անում:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Կարելի է և այդպես ասել:

Կրկին լուրջուն է տիրում: Զինվորի շնչառությունը խորանում ու խոնֆոնի է վերածվում: Կալանավորն էլ կուչ է գալիս քնատախտակի ծայրին, գրկում ծնկներն ու հայացքն ուղղում է պատուհամից դուրս: Քենում աստիճանաբար մարում են լույսերը:

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Դարձյալ մթնշաղ է: Եվ դարձյալ լսվում է ամպրոպի ձայնը: Կրկնվում է նույն պատկերը՝ բեմի խորքից ներս են մտնում շորայակապ կալանավորն ու նրան հսկող զինվորը: Երկուսն էլ դարձյալ հոգնած են ու անտարքեր ամեն ինչին: Մոտենում են բեմը կիսող պատին: Զինվորը քացում է կալանավորի ձեռնաշղթաները: Վերջինս անցնում է իր քանտախուցը, զինվորը կողպում է դուռը, և գրեթե միաժամանակ նստում են՝ ամեն մեկն իր քնատախտակին: Կայծակի փայլատակումը լուսավորում է քենը, և կրկին ամպրոպի ձայնն է ողողում դահլիճը: Զինվորը գլանակ

է հանում գրպանից, վառում ու փոփում է քնատախտակին:

ԶԻՆՎՈՐ - (ծուխը ներս քաշելով): Ծխելու բան ունե՞ս:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - (գողունակությամբ):

Իհարկե: Թաքցրել էի տախտակների տակ: Այս գիշեր հաստատ կիերիթի ինձ: Ինչ չ' քունդ չի տանում:

ԶԻՆՎՈՐ - Ոչ, թեև շան պես թրջված ու հոգնած եմ: Տեսնես մի օր այս նզովյալ անձրևը վերջանալի է:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Իհարկե, վերջանալու է: Ինչն ունի սկիզբ, ունի նաև վերջ:

ԶԻՆՎՈՐ - (թեթև հեգնանքով): Դա էլ է մայրդ ասել:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - (ծիծաղելով): Իսկ գիտե՞ս, անձրևն ինչով է վերջանալու:

ԶԻՆՎՈՐ - Ուժ չունեմ կոահելու: Ինչո՞վ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Զնով: Աշնանը միշտ էլ ձմեռն է հաջորդում: Գոնե՝ այս լայնությունների վրա:

ԶԻՆՎՈՐ - Դա ծիշտ է... (Կարծատև դադար տալով): Լսիր, իսկ դու ինչի՞ համար ես այստեղ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - (զարմացած): Այսինքն:

ԶԻՆՎՈՐ - Ասում եմ՝ ինչպես հայտնվեցիր ձաղերի ետևում:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ախր, ինքոդ բերեցիր ինձ այստեղ...

ԶԻՆՎՈՐ - Դե, դա չեմ ասում... Ինչպես հայտնվեցիր այստեղ՝ ձամքարում:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Դա քեզ իրո՞ք հետաքրքիր է:

ԶԻՆՎՈՐ - Այս, այլապես չէի հարցնի: Թեև կարող ես և չպատասխանել:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ոչ: Ինչո՞ւ: Պարզապես մտածեցի, թե իմիշիայլոց ես հարցնում:

ԶԻՆՎՈՐ - Դրա հավեսը չունեմ: Ոչ է՝ անձնական գործի կարդալու:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Բայց ամեն օր լսում ես իմ հոդվածների համարները:

ԶԻՆՎՈՐ - Հոդվածը՝ հոդված... Ու ոչ էլ լսում եմ... Դու ինձ իրական պատմությունն արա:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Դե, կարծ ասած՝ զանազան մեղքերի կամ, ինչպես իրավաբաններն են ասում, մարդկության և մարդկայնության դեմ կատարած հանցավոր ոտնձգությունների համար:

ԶԻՆՎՈՐ - Եվ որինք են դրանք՝ այդ ոտնձգությունները...

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Օրինակ՝ գողությունը...

ԶԻՆՎՈՐ - Իսկ ի՞նչ էիր գողացել: Ոսկի՞:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Չէ հա, ոսկի... Հո չասացիր... Ոսկին ինչի՞ն է պետք:

ԶԻՆՎՈՐ - Ինչպե՞ս թե: Ոսկին ոսկի է...

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Եթե հիմա այս վանդակիս ծաղերը ոսկուց լինեին, ես դրանից ավելի հարժաստ կլինեի: Չէ, դա փուչ բան է: Ես ավելի կարևոր բան էի գողացել՝ մի փոր հաց:

ԶԻՆՎՈՐ - Հա՞ց: Մի փոր հա՞ց: Եվ

դրա համար քեզ ուղարկել են այստեղ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Այս, ինչ դրա համար:

ԶԻՆՎՈՐ - (*քահ-քահ ծիծաղելով*): Բայց ինչո՞ւ էիր գողացել:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Իսկապես չգիտե՞ս, թե՞ ծաղրում ես ինձ:

ԶԻՆՎՈՐ - Գաղափար չունեմ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ես քաղցած էի:

ԶԻՆՎՈՐ - Քաղցած... Եվ դրա համար քեզ բանտարկեցի՞ն...

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Այս: Չնայած, ես այլ կերպ կարտահայտվեի՝ ինձ պատերի ու փշալարերի մի կողմից պարզ տեղափոխությամբ մյուս կողմն են փոխադրել: Պատկերացնում ես՝ Քրիստոսից քսան դար անց ես քաղցած էի: Բայց ոչ ոք ինձ հաց չտվեց, իսկ խնդրել ամաչում էի: Ինչքնն կարելի է խնդրել:

ԶԻՆՎՈՐ - Կարող էիր հորիցդ խնդրել:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ի՞նչ հայր, Կայեն: Ես հայր չեմ տեսել: Դեռ չէի ծնվել, երբ նա թողել-հեռացել է ինձանից: Կամ, գուցե, սպանել են... Զգիտեմ: Ամեն դեպքում նա չկար իմ կողքին: Այլապես՝ երսի թե կիսնդրելի: Ինչևէ, հաց չկար, ուստի ես որոշեցի այն գաղտնի վերցնել: Իսկ դա քրեագիտության մեջ «գողություն» է կոչվում՝ դրանից բխող տխուր հետևանքներով: Մինչդեռ ես գայլի պես քաղցած էի: Հայացքս մթագնել էր, ուղեղս եռում էր, իսկ գիտակ-

ցությունս խամրել էր: Սակայն մի բան, այնուամենայնիվ, հասկանում էի՝ եթե այդ պահին սովից մահանայի, դա ոչնչով արդարացված չէր լինելու: Միթե մի փոր հացը համադրելի է մարդու կյանքի հետ...

ԶԻՆՎՈՐ - Զգիտեմ... Հաճախ հազարավոր մարդկանց փուչ կյանքը մի կտոր քարթու հաց էլ չարժի:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Դե իհարկե... Ինչ մարդու կյանք, ինչ բան... Այսօր կա, վաղը չկա... Բայց եթե լուրջ խոսենք, ավելի շուտ հացն է մարդու համար, քան մարդը՝ հացի: Երևի պետք էր, որ ես գողանայի այդ հացը, ուտեի, որ չսատկեի սովից, այլ կենդանի մնայի ու ապրեի այս օրերը, այս անգամ՝ փշալարերի հակադիր կողմում: Մինչդեռ մի ժամանակ (երևի չես հավատա) ես էլ քո կողմում էի: Արևոտ մի օր, ցորենի ոսկե անծայրածիր մի արտում վազվում էի ու հորս փնտրում... Բայց նա չկար ու չկար... Ինչո՞ւ իմ հայրը լքեց ինձ... Ես այնքան կուզեի, որ նա խոսեր ինձ հետ: Ես այնքան եմ զգացել նրա պակասը...

ԶԻՆՎՈՐ - (որոշ դադարից հետո): Իսկ հիմա դժբախտ ես երևի... Տանջվում ես...

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Զգիտեմ... Ի վերջո, ինչ տարբերություն, թե փշալարերի ու պատերի որ կողմում ես

գտնվում: Չէ՞ որ այդ պարզագույն փոխատեղումից նրանք չեն վերանա: Ղժբախստությունը փշալարերի այս կամ այն կողմում գտնվելը չէ, այլ ընդհանրապես դրանց գոյությունն այս աշխարհում:

ԶԻՆՎՈՐ - (*հեզնանքով*): Իսկ դու առանց փշալարերի աշխարի էլ գիտես:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Զգիտեմ: Դրանք միշտ եղել են ու, կարծում եմ, միշտ էլ լինելու են: Դրանք արդարացնում են մեր խղճուկ գոյությունը:

Լռում են: Ականջ դրած անձրեկի բարակ ձայնին՝ ամեն մեկն իր մտքերի հետ է: Հետո, կարծես մի անձայն հրամանով, միաժամանակ գլանակ են վառում:

ԶԻՆՎՈՐ - Իսկ հիմա քաղցած չե՞ս: Մոտս բան-ման կա...

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Չէ, շնորհակալություն, կերել եմ: Հենց դա է ասածս: Փշալարերի հովանու տակ քեզ ավելի ապահով ես զգում: Ամեն դեպքում՝ սովից հաստատ չես մեռնի: Դա փրկություն է: Կատարելության հասնող մի քավություն:

ԶԻՆՎՈՐ - Փաստորեն, դու սիրո՞ւմ ես փշալարերը:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Կարող ես այդպես էլ ասել, թեև, իմ կարծիքով, դրանք մեր զգացմունքներից ու իմացությունից վեր են: Դրանք աստվածների պես հավերժական են,

անկախ նրանից՝ սիրում ենք, թե ատում:

ԶԻՆՎՈՐ - Կարծես սկսում եմ հասկանալ քեզ: Ասում ես՝ ինչ է անունդ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Աբել: Մայրս է կնքել ինձ այդ անունով:

ԶԻՆՎՈՐ - Աբել... Հետաքրքիր անուն է... (Կարծատև դադարից հետո:) Գիտե՞ս, Աբել, մի անգամ էլ ես եմ գողություն արել:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - (թեթև ծիծաղով): Դու էլ էիր քաղցած:

ԶԻՆՎՈՐ - Մի հեգնիր: Չէ որ ես անկեղծ եմ քեզ հետ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Կներես: Ծարունակիր, խնդրում եմ:

ԶԻՆՎՈՐ - Իմ գողացածը հաց չէր, և ոչ էլ փող կամ ուսկի: Կարծում եմ, դա շատ ավելի թանկ բան էր: Չնայած՝ ով կարող է համեմատել ու ասել, թե ինչն է ավելի թանկ ու կարսոր:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Միայն դու ինքի:

ԶԻՆՎՈՐ - Ինչպես թե, ես էլ կարծում էի, թե դա դատավորների գործն է:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ո՞ր դատավորների, Կայեն, ո՞ր... Փշալարերի այս, թե այդ կողմի: Ես բազում դատավորների եմ ծանաչում: Լրանք արտաքնապես շատ տարբեր են՝ մաշկի գոյնով, սեռով, տարիքով, և այլն: Իսկ հիմնականում երկու տեսակ են՝ մի կեսի անունը Կայեն է, իսկ մյուսինը՝ Աբել: Ուրիշ տարբերություն ես չեմ նկատել: Ի

դեպ, դատավորների գոյությունն էլ միայն փշալարերով է արդարացված: Չինեին փշալարերը՝ չէին լինի և այդ անհաշիվ դատավորները: Առանց փշալարերի նրանց գոյությունն անհմաստ ու անհեթեթ է: Լրանց կյանքն ու գործունեությունը լոկ մի իմաստ ունի՝ մարդկանց խայտարդետ բազմությունը երկու մասի տրոհել ու համամասնորեն բաշխել պատերի այս ու այդ կողմում: Այլապես պատերն ու փշալարերը չէին հանդուրժի ու կոչնչացնեին «դատավոր» կոչվող այդ ստահակներին:

ԶԻՆՎՈՐ - Դու կտրեցիր մտքիս թելլ...

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Քո գողության մասին էիր պատմում:

ԶԻՆՎՈՐ - Այո... Լեզուս էլ չի պտտվում ասել... Ես գողացել եմ եղբօրս անունը: Նա քաջ էր ու հաջողակ ու քեզ պես հետաքրքիր պատմություններ գիտեր: Ես միշտ հիացմունքով էի նայում նրան ու մի քիչ նախանձում: Ուզում էի նմանվել նրան, սակայն նրա տաղանդը բնատուր էր, և ես անկարող էի թեկուզ նրա հարյուրորդ մասի պես լինել: Նա մեռավ կալանավայրում: Մարմինն այդպես էլ չգտանք... Եվ քանի որ որևէ նյութական հարստություն չուներ, որոշեցի նրա անունը ժառանգել: Այսինքն՝ գողացա կամ էլ յուրացրեցի:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ուզում ես ասել, որ
Կայենը եղբ՞րդ անունն է:

ԶԻՆՎՈՐ - Արդեն իմն է: Կայենը ես
եմ: Այդ գողությունից հետո սկսեցի
նմանվել իմ նոր անվանը: Մո-
ռացա մահացած եղբորս ու
տարիների ընթացքում ինքս Կա-
յեն դարձա: Եվ իհմա միայն հիշեցի
նրան ու իմ մեղքը:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Բայց մի բան, կար-
ծես, տակավին մորմոքում է
քեզ...

ԶԻՆՎՈՐ - Այո, ճիշտ նկատեցիր:
Մեղքի զգացումը չի լքում ինձ:
Լնջում է իմ մեջ, բայց երբեմն էլ
զարթնում է ու կեղեքում խիղճս:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Դե լավ, հանգստա-
ցիր: Ոչ ոք չի կարող դատապար-
տել քեզ դրա համար: Մնում է՝
ինքը հաշտվես քեզ հետ: Ինչ-որ
իմաստով դա գողություն էլ չէ, այլ
մի պարզ անվանափոխություն:

ԶԻՆՎՈՐ - (*բորբոքվելով*): Մի փոր-
ձիր միսիթարել ինձ: Ես վերցրել
եմ մի բան, որն իմը չէր: Ընդ ո-
րում, վերցրել եմ առանց թույլտ-
վության: Միշտ դա գողություն չէ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ամեն դեպքում, դու
ինքդ ես քո դատավորը: Եթե ու-
զում ես ինքդ քեզ գող հոչակել,
ապա ժամանակ մի՛ կորցրու: Գո-
նոնե կլսես դատավճիռ ու կխա-
ղաղվես: Բայց և կարող ես
արդարացնող դատավճիռ կա-
յացնել ու գործն ավարտել ինք-
նահաշտեցմամբ: Թե՛ հոյս ունես
ավելի արդարացի դատավոր

գտնել, քան ինքդ ես քեզ համար:
Դա վախկոտ հոգու մոլորություն
է: Բայց չէ՞ որ դու վախկոտ չես,
Կայեն: Դու քաջ զինվոր ես: Ու-
ժե՞ն եղիր:

Լոռություն: Զինվորը իր կողմի
պատուհանիկից դուրս է նայում:
Կալանավորը մատներով ան-
շտապ համրում է տուփի մեջ
մնացած գլանակները, ապա հա-
յացքը շրջում դեալի իր պատու-
հանը: Բեմի լույսը կամաց
խունանում է՝ որոտի և հորդա-
ռատ անձրևի հնչյունների ներքո:

ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

Դարձյալ նոյն պատկերն է՝
անձրևի ու որոտի հնչյունների
ներքո քեմի խորքից ներս են
մտնում շղթայակապ կալանա-
վորն ու նրան հսկող զինվորը:
Երկուսն էլ դարձյալ հոգնած են
ու անտարբեր ամեն ինչին: Մո-
տենում են քեմը կիսող պատին:
Զինվորը բացում է կալանավորի
ձեռնաշղթանը: Վերջինս անց-
նում է իր բանտախուցը: Գրեթե
միաժամանակ նստում են՝ ամեն
մեկն իր քնատախտակին: Կայ-
ծակի փայլատակումը լուսավո-
րում է քեմը, և կրկին ամպրոպի
ձայնն է որորում դահլիճը: Զին-
վորը հանկարծ հիշում է, որ չի
կողպել կալանավորի դրնակը: Ծու-
լորն վեր է կենում նստած տե-
ղից, մոտենում ճաղադրնակին ու

ՄԵԾ ԵՐԼԱՔԵ բանալին պտտեցնում կողպեքի մեջ: Ապա ճադերի արանքից ծխախոտի կիսատ տուիք ու լուցկի է նետում կալանավորի սեղանիկին, նույն ծուլությամբ վերադառնում իր հատկածն ու փռվում քնատախտակին:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ծնորհակալություն, եղբայր: Վերջին գիշերն է: Ծահրազարեն քեզ այլս հեքիաթներ չի պատմելու:

ԶԻՆՎՈՐ - Վերջին գիշերը:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Վերջին: Չէ՞ որ ինձ ընդամենը երեք օրով են պատժախուց ուղարկել:

ԶԻՆՎՈՐ - Ես կասեի՞ մեզ են ուղարկել:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Այո, վաղվանից կվերադառնամ կալանավորների բարաքը, դու է՝ զինվորների բարաքը:

ԶԻՆՎՈՐ - Իսկ այդ Ծահ... Ծահ...

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ծահրազարեն:

ԶԻՆՎՈՐ - Այո: Դա ո՞վ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Հին պատմություն է: Մի կին, անոնը՝ Ծահրազարեն, Արևելքի հզոր տիրակալին քնելուց առաջ հետաքրքիր հեքիաթներ էր պատմում:

ԶԻՆՎՈՐ - Ինչի՞ մասին:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Հիմնականում՝ սիրո: Բոլոր հեքիաթներն էլ սիրո մասին են: Ուրիշ թեմա չկա:

ԶԻՆՎՈՐ - Իսկ սերն ինչ է:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Զգիտեմ: Մայրս ա-

սում էր՝ երբ տղամարդու ու կնոջ միջև ինչ-որ կապ է առաջանում:

ԶԻՆՎՈՐ - (*ոգևորվելով*): Իմացա: Ես ունեցել եմ նման մի կապ սրանից մի քանի տարի առաջ: Պիտի ասեմ, որ շատ հածելի կապ է, բայց ընդամենը մի քանի րոպե է տևում, ավելի ճիշտ՝ վայրկյան:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - (*հետաքրքրված*): Իսկ հետո ինչ եղավ:

ԶԻՆՎՈՐ - Ինչ պիտի լիներ: Նա գնաց իր ծանապարհով, ես է՝ իմ: Ու վերջ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Երևի դու խառնում ես: Ասում են՝ դա սկսվում է մի օր կայծակի հարվածի պես ու շարունակվում մինչև կյանքի վերջը:

ԶԻՆՎՈՐ - Հնարավոր չէ: Ինչպես կարող է այդքան երկար տևել: Ասում եմ քեզ՝ մի քանի վայրկյան, ու վերջ: Իհարկե, հետո կարելի է կրկին հանդիպել:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Զգիտեմ, ես երեք կին չեմ ունեցել:

ԶԻՆՎՈՐ - Կուգեի՞ր ունենալ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ինչ իմանամ: Կցանկանայի փորձել: Գոնե կիմանայի, թե դա ինչ է: Ասում ես՝ հածելի է:

ԶԻՆՎՈՐ - Ծանտ: Կնոջ մարմինն ինքնին հածովք է, իսկ այդ մարմնին տիրանալը՝ դրա կատարյալ դրսնորումն է:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Կարծեմ դու ուրիշ բանի մասին ես պատմում, Կայյեն: Եթե չեմ սխալվում, դա շնորհյուն է կոչվում:

ԶԻՆՎՈՐ - Ծնություն: Ինչո՞ւ իենց շնություն:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Դե, եթե միայն մարմնական կապ է, ապա դա շներն էլ են անում:

ԶԻՆՎՈՐ - Իսկ դու ինչ գիտես՝ շների մոտ ինչ կապ է: Եվ ո՞վ է դա ասում:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Մի մեծ մտածող, որը նաև դատավոր է եղել:

ԶԻՆՎՈՐ - Բայց էլ ինչպես կարելի է հարաբերվել կնոջը, եթե ոչ մարմնով:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Պիտի նաև սրտով սիրես նրան:

ԶԻՆՎՈՐ - Այո, պիտի սրտով հավանես ու սիրես նրան, որ հետո կարողանաս մարմնով հարաբերվել:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ես լավ չեմ պատկերացնում: Ախր, կին չեմ ունեցել...

ԶԻՆՎՈՐ - Հոյս ունեմ, կնոջ հետ հարաբերվելը քրեորեն պատժելի չէ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - (*(Ճիծաղելով)*: Մի վախեցիր, իմ տեղում չես հայտնվի:

ԶԻՆՎՈՐ - Չեմ վախենում: Ինչ տարբերություն՝ այս խցում, թե՞քո: Նոյն խուցն է, նոյն քնատախտակը, նոյն տեսարանը պատուհանից: Նոյն ուտելիքը, ծխախոտն ու ջուրը: Օդն էլ նոյնն է: Վախենալու բան չկա: Ել ինչ է ասում այդ դատավորը:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ասում է՝ գողություն միարա: Սիրիր Աստծուն...

ԶԻՆՎՈՐ - Այսինքն՝ հ՞րդ: Լավ է ասված:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Զգիտեմ: Ինչպե՞ս սիրեմ, եթե երբեք չեմ տեսել նրան:

ԶԻՆՎՈՐ - Ուրիշ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Սիրիր ընկերոջդ ու եղբորդ:

ԶԻՆՎՈՐ - Դա էլ լավ է: Էլ:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Սիրիր թշնամիներիդ:

ԶԻՆՎՈՐ - Ես թշնամի չունեմ: Ել ինչ է ասում:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ասում է՝ մի դատիր, որ չդատվես:

ԶԻՆՎՈՐ - Բնավ ցանկություն չունեմ: (*(Ջայնն իջեցնելով)*: Չնայած ինքս ինձ եմ դատում ու դատապարտում ամեն օր:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Դա լավ է, Կայեն: Մինչև ինքդ մաքուր չլինես, ինչպես կարող ես ուրիշների մաքրության մասին կարծիք կազմել: Մարդ ուրիշ բանով չի չափում, քան ինքն իրենով:

ԶԻՆՎՈՐ - (*(Մի քիչ բարկացած)*: Լսիր, Աբել, դու Շահրազադեն չես, ոչ էլ ես եմ Արևելքի տիրակալը: Ավելի լավ է հեքիաթների փոխարեն ինձ իրական պատմություններ անես: Դու այդպես էլ չասացիր, թե ինչու ես հայտնվել փշալարերի այդ կողմում:

ԿԱԼԱՆԱՎՈՐ - Ասացի, որ գողության...

ԶԻՆՎՈՐ - Դա հասկացա, բայց էլի մի բան կա, որ չես ասում:

Լռություն: Կալանավորի խցում չըթում է լուցկին: Զինվորն ինքն էլ նոր գլանակ է կպցնում:

ԶԻՆՎՈՐ - Դե ասա, Արել: Ի՞նչ կա թաքցնելու:

ԿԱԼԱՍԱՎՈՐ - Թաքցնելու բան չկա: Պարզապես չեմ սիրում հիշել ու պատմել ուրիշներին:

ԶԻՆՎՈՐ - Ես արդեն ուրիշ չեմ: Չէ՞ որ ինձ «Եղբայր» ես անվանում:

ԿԱԼԱՍԱՎՈՐ - Դու ուզում ես լսել իմ բերանից: Լայ, ես կասեմ քեզ: Ես մարդ եմ սպանել, Կայեն: Մարդ եմ սպանել...

Լոռություն: Ամեն մեկն իր մտքերի հետ է:

ԶԻՆՎՈՐ - (ինչ-որ բան հիշելով): Իսկ դու երգել գիտե՞ս: Կարո՞ղ ես երգել: Ասում են՝ երգը շատ ցավեր է բուժում: Երկուսս էլ ցավեր ունենք մեր մեջ ամփոփած:

ԿԱԼԱՍԱՎՈՐ - Ես միայն մի երգ գիտեմ, Կայեն: Մայրս էր ժամանակին երգում ինձ համար: Երգը երկու Եղբայրների մասին է: Հիմա բառերն արդեն մոռացել եմ, բայց, եթե ուզում ես, կարող եմ մեղեղին երգել:

ԶԻՆՎՈՐ - Իհարկե, երգիր:

ԿԱԼԱՍԱՎՈՐ - Հիմա, հիմա... Բայց կարո՞ղ եմ նախ քեզ մի հարց տալ:

ԶԻՆՎՈՐ - Հարցրու:

ԿԱԼԱՍԱՎՈՐ - Ի՞նչ էր քո անունը մինչև այն օրը, երբ յուրացրիր եղբորդ անունը:

Լոռություն: Կալանավորը կիսաձայն ու դանդաղ երգում է՝ առանց բառերի: Զինվորը սրբում է դանդաղ հոսող արցումքները: Երգն ավարտվում է, ու կրկին լոռություն է տիրում: Զինվորը վեր է կենում, մոտենում կալանավորի դրնակին, մի քանի վայրկյան նայում նրան, բանախով բացում է ճաղադրմակն ու կրկին վերադառնում իր հատվածը: Պատկում է մեջքի վրա ու ձեռքերով ծածկում աչքերը: Լսվում է նրա հեծկլտոցը, որն այնուհետև լուս է և լսվում է միայն նրա խոր շնչառությունը:

Քիչ անց կալանավորը դանդաղ ու անձայն վեր է կենում իր տեղից, լուսնոտի պես բացում ճաղադրմակը: Մի այս նայում է քնած զինվորին, ապա կամացուկ կռանում է ու համբուրում նրա ճակատը:

ԿԱԼԱՍԱՎՈՐ - Եղբայր իմ Կայեն, իմ սիրելի Եղբայր...

Կալանավորը սեղանիկի վրայից վերցնում է զինվորի դաշույնը, սուր ծայրը դնում նրա սրտին ու կտրուկ շարժումով խրում մինչև վերջ: Զինվորը մի ճիշ է արձակում ու հավերժ լուս:

Լսվում են որոտի ու անձրևի սաստկացող ձայնը: Բեմը կամաց-կամաց բաղվում է խավարի մեջ:

Համաստեղ



ՔՐԻՍՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՅԵ

Տեսարանն է Լինքըն աղքատիկ հրապարակը: Առաւօտ շատ կանուխ: Տեղ-
տեղ կը բացուին պատուհաններու լոյսերը, կը լսուին զարքուցիչ ժամացոյց-
ներու ձայներ: Մուր անկիւն՝ մը կ'անցնի մարդու ուրուային կերպարանը
մը՝ օքոմնավիկի անիւ մը ուսին առած: Դուքս կ'ելլեն աշխատանքի գնացող-
ներ՝ Good morning, nice morning ձայներ տալով իրարու: Հրապարակին մէկ
անկիւնը պառկած են երկու վակապոններ. կ'երեին անոնց խոշոր կօշիկնե-
րը դուքս ինկած մատներով: Փողոց կը մտնեն ու կը քաղեն երկու գործաւոր-
ներ իրենց ճաշի տուփերով եւ կը խօսակցին ծխամործերը բերաններուն:

- Ա. ԳՈՐԾԱԿՈՐ** - Ճիշդ էդակս, անհծուած գործաւորներուն մեջ ինկաւ իրարանցում:
- Բ. ԳՈՐԾԱԿՈՐ** - Նոր Քրիստոսին պատճառով, կ'ենթադրեմ:
- Ա. ԳՈՐԾԱԿՈՐ** - Ճիշդ էդակս: Ճաշամիջոցին էր բոլորս ալ գործարանին հրապարակը, ծաշերս կերած, սկսած էինք ծխելու, երբ երեւաւ նիկրօ քարոզիչը ու սկսաւ խօսիլ նոր Քրիստոսի մասին: Գործաւորներս հաւաքեցանք էնոր շուրջ: Ոմանք կը ծաղրէին եւ կ'ուզէին խանգարել, իսկ ոմանք ալ կ'ուզէին պաշտպանել եւ մտիկ ընել նիկրօն: Կը հաւատային, որ ճիշդ են նիկրօյի խօսաճները, եւ, իրաւ, նորէն այս անհծեալ աշխարհը եկած է իսկական Քրիստոսը՝ փրկելու այս անհծեալ մարդկութիւնը: (Ա. Գործաւորը խօսած պահուն կը կենայ իր ծխամործը վառելու՝ միեւնյն ատեն շարունակելով իր խօսակցութիւնը:) Յետոյ չհասկցայ, թէ ինչպէս եղաւ, որ այս անհծուած խանգարողներն ու պաշտպանողները իրար ինկան: Կրնար կոհիւլ մեծնալ, եթէ ոստիկանները վրայ չհասնէին: Այդ ատենն էր, որ զգիտցայ, թէ ինչպէս եղաւ, կոտրեցաւ իմ ծխամործը: Ուղիղ տասնինգ տարի էր՝ կը գործածէի:
- Բ. ԳՈՐԾԱԿՈՐ** - Քեզ բան մը ըսնմ, բարեկամ, եթէ եկած չէ այդ Քրիստոսը, կարծեմ ճիշդ ատենն է, որ գայ: Եթէ իհմա չզայ, ալ ո՞ր անհծուած օրին պիտի գայ: Ինձ

- կը թուի, որ այս անհծուած աշխարհը խախտած է իր տեղէն:
- Ա. ԳՈՐԾԱԿՈՐ** - Ճիշդ էդակս, ճիշդ էդակս. ալ ո՞ր անհծուած օրին կը սպասէ: (Նորէն ծխամործը կը վառէ:)
- Բ. ԳՈՐԾԱԿՈՐ** - Ալ ո՞ր անհծուած օրին: Տեսնես անհծուած փերեզակ մը յանկարծ զինուորական կը դառնայ, եւ կամ ծարպիկ վաճառորդ մը՝ նախարար: Տեսնես, անհծուած թուղթ ծեփող մը կը դառնայ ամբողջ երկրի մը տէրը: Որո՞ւ հոգ, բարեկամ, եթէ այդ անհծուած թուղթ ծեփողը մնայ իր երկրին մէջ, բայց եկուր տես, որ կ'ուզէ տէր դառնալ ամբողջ աշխարհին:
- Ա. ԳՈՐԾԱԿՈՐ** - Ճիշդ էդակս, ճիշդ էդակս: Ամէն մէկը կ'ուզէ տէր դառնալ էս անհծուած աշխարհին: Եթէ ձեռքերուն գայ, տէր պիտի դառնան նաեւ լուսնկային:
- Երկու գործաւորները կը սկսին քալել:
- Բ. ԳՈՐԾԱԿՈՐ** - Այ բարեկամ, շատ է ատէր էս աշխարհի: Էս անհծուած աշխարհի գլխին դեռ կրնան շատ բաներ գալ, եթէ Ամենակալ Աստուածը զգրկէ իր զաւակը եւ տէր չդառնայ իր ստեղծած աշխարհին:
- Ա. ԳՈՐԾԱԿՈՐ** - Ճիշդ էդակս, ճիշդ էդակս, էս անհծուած աշխարհը առտուն կանուխ ելլողինն է:
- Բ. ԳՈՐԾԱԿՈՐ** - Չըլլայ՝ կարգը օր մըն ալ մեզի գայ, մանաւանդ բոլորէն կանուխ դուրս կուգանք էդ անհծուած ձուլարանը երթալու

համար: (Երկուքը միասին կը խնդան:) Էխ, Էխ, Էխ...

Ծամրուն վրայ կը հանդիպիմ ոստիկանի մը, որ նեղ փողոցէ մը հրապարակ կուգայ:

Ա. ԳՈՐԾԱԽՈՐ - (Ոստիկանին): Բարի լոյս, *Մէք:* Այս գիշեր Քօլօրատօ գնացող անիծուածու ուստաւորները նորէն կայան դրած են ծամրուն վրայ: Գիշերը աքորտիղնի ծէն կուգար:

ՈՍՏԻԿԱՆ - Ուեկ մէկը տեսանք փողոցներուն մէջ: Վերջերս բաւական գողութիւններ կը պատահին:

Բ. ԳՈՐԾԱԽՈՐ - Ուեկ մէկին չհանդիպեցանք տակալին: Եղէկ գիշեր մեր բակէն լուացքի կապը գողցեր էին:

Ոստիկանը կը մտնէ փոքրիկ հրապարակ:

Ա. ԳՈՐԾԱԽՈՐ - (Չարունակելով խօսակցութիւնը): Ճիշդ էդպէս, բարեկամ, ճիշդ էդպէս...

Երկու գործատորները կը հեռանան: Ոստիկանը, երք հրապարակ կուգայ, կը տեսնէ, երկու քնացողներու չորս ոտքերը: Կը մոտենայ ու ոտքով ուժզին հարուած կուտայ:

Վակապոնները իրենց ոտքերը կը հաւաքեն, ոտքի կ'ելլեն, անակնկալի եկած, եւ կ'ուզեն հեռանալ ունէ ուղղութեամբ:

ՈՍՏԻԿԱՆ - Կորսուեցէք եւ դժոխք գացէք այս տեղէն:

Վակապոններէն մէկը ծեր, իսկ միւսը երիտասարդ է:

Ծրաբները ուսերուն նետած՝ կը քալեն, երք ոստիկանը կը կեցնէ յանկարծ:

ՈՍՏԻԿԱՆ - Հչյ, կեցէք, բան մը ըսիք:

ԾԵՐ ՎԱԿԱՊՈՆԸ - Պարոն ոստիկան, վակապոնը ոչինչ ունի ըսելիք: Բան մը կ'ունենան ըսելիք անոնք, որոնք իրաւունք ունին: Վակապոնը ոչ մէկ իրաւունք ունի աշխարհի վրայ:

ՈՍՏԻԿԱՆ - Հա, կը տեսնեմ, որ բաւական ըսելիք ունիք: (Կը մօսենայ, կը հրէ ծեր վակապոնը վար ծգելու աստիծան:) Անմիջապես կորսուեցէք այս տեղէն: (Վակապոնները նորէն քանի մը քայլ կ'առնեն: Ոստիկանը կեցած կը դիտէ ու յանկարծ նորէն կը կանգնեցնէ:) Հչյ, կանգնեցէք, բան մը ըսիք:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱԿԱՊՈՆԸ - Մենք ոչինչ ըսինք, պարոն ոստիկան:

ՈՍՏԻԿԱՆ - Էդ պատասխանը լաւ էր, ոէի լաւ, հեռացեք:

Ոստիկանը կը մրտնէ մօտի փողոցը: Երկու վակապոնները, երք կը տեսնեն ոստիկանին հեռանալը, նորէն կը վերադառնան ու կը պառկին միեւնոյն տեղը, միեւնոյն դիրքով: Մէջտեղ կուգայ պատամի մը՝ կօշկաններկի տուփով, ու կը նստի ճամրուն եգերքը: Քումը գլուխ է, կրնակն ու կողերը կքերէ ու պարաքին մէջ քանի մը անգամ «Shine», «Shine» կը ձայնէ: Կը նկատէ վակապոններու խոշոր ու հինգած կօշկինե-

բը՝ դուրս իմկած մատներով: Տուփը ուսին կը մօտենայ ու կը ճայնի: «Shine, shine, shine mister»: Զայն չկայ: Պատանին կը վերադառնայ՝ ինքնիրեն համար կրկնելով միևնույն բառերը, ու նատելով ճամբուն եղերը՝ կը քնանայ տուփին վրայ ծռած: Նպարավաճառին տան դուռը կը բացուի, վար կ'իջնէ Թօնին՝ տումար մը անութին տակ. Թօնին գիրուկ է՝ միջին տարիքը անցած: Տան դուրսի աստիճաններէն վար իջած պահուն քին տակէն դժգոհ բան մը կը մրբմրքայ: Երբ կը հասնի խանութի դրան՝ ճայնը կը բարձրացնի յանկարը: Երկու խոշոր փոշիներու տակառներ իր խանութին առջեւ շարած են: Թօնին խանութը ճիշդ տանը տակն է:

ԹՕՆԻ - (աղմկոտ ծայնով): Նորէն, նորէն: Այս անիծուածներուն հազար անգամ ըսած եմ, որ բաց ձգեցէք խանութիս առջեւ: Տարէք, տարէք Տէնին խանութին առջեւ շարեցէք այս անիծուած տակառները: (Թօնին դժվարութինով տակառները մէկ կողմ կը հրէ՝ միեւնոյն ատեն խօսելով:) Չպիտի զարմանամ, եթէ էդ անիծուած Տէնը գայ եւ այդ տակառները խանութիս առջեւ շարէ:

Թօնին փողոցէն երեք սանդխամատ վար կ'իջնէ ու կը բանայ խանութը. նախ՝ կը վառէ լոյսը: Խանութի պատուհանին վերի մասէն կախուած կ'երեւի շարքը ֆրէնքֆրդներուն եւ ալօնիներուն: Թօնին կը կախնէ փետուած երկու հաւեր. խոզի գլուխ մը: Խանութի ցուցատախտակը

աւելի որոշ կ'երեւի «Սիր Մարքեք Թօնիին»: Խանութէն կը լսուի միս կտրելու ճայն: Հեռուէն կուգայ եւ հետզհետու կը մօտենայ կաթնավաճառի կառքին աղմուկը: Կառքը չերեւիք: «Հօ՛օ՛օ՛» ճայն կուտայ կաթնավաճառը ձիուն եւ խոշոր կարի տուփը ուսին՝ կը մտնէ փողոց ու կ'իջնէ Թօնիին խանութը:

ԿԱԹՆԱՎԱՃԱՌՈ - (ձայնը խանութէն կը լսուի): Բարի լոյս, Թօնի:

ԹՕՆԻ - Բարի լոյս, բարի լոյս:

ԿԱԹՆԱՎԱՃԱՌՈ - Այս մէկը նոր է, Թօնի, Քրիստոսի մասին է:

ԹՕՆԻ - (բարկացու ծայնով): Էդ Քրիստոսի մասին չեմ ուզեր լսել:

ԿԱԹՆԱՎԱՃԱՌՈ - Անգամ մը էս նոր Քրիստոսը, Քօլօրատօյի փողոցներէն մէկին մէջ գինով մը կը բռնէ ու կը խօսի. «Մի խմեր, ով գինով, խմիչքը քու մեծագոյն թշնամին է»: «Այդ գիտեմ, Տէր,- կ'ըսէ գինովը,- բայց դուք ըսիք, որ սիրեցէք ձեր թշնամին ձեր անձին ալէս»:

Թօնին եւ կաթնավաճառը կը խնդրան: Կաթնավաճառը կը շտապէ դուրս ելլել: Փողոց հազի ելած՝ երկու աստիճան վար կ'երեւի Թօնիի ճաղատ գլուխը, ու ան կը խօսի բարկացած:

ԹՕՆԻ - Այո, այո, պէտք է ծով թափել Քօլօրատօ գնացող այդ բոլոր ուխտաւորները: Ասկէ վերջ դրան մօտ մի ձգեր կաթը: Երեք օր առաջ այդ անիծուածները կաթը ամբողջ տուփով գողցան:

ԿԱԹՆԱՎԱՃԱՌՈ - Այս կողմերը հիմա ուշ կը ցրուեմ կաթերը: Բոլո-

րը կը գանգատին, որ առտուան կաթ չեն գտներ իրենց դրան առջեւ:

Կաքնավաճառը կը հեռանայ: **Թօնին քիմ** տակէն հայիոյելով ներս կը մտնէ, եւ կը լսուի կաքին հեռանալուն ձայնը: Այս անգամ երկու կիներ կը խօսակցին իրարուն հետ մօտիկ պատուհաններէն: **ԱԵԿԸ Թօնիի կինն է, տիկին Սուլան,** որ զբաղած է լուացրի քանի մը լաքերը ներս առնելով, իսկ միւսը տիկին Էմման է, ամբողջ գիշեր դուրս դրուած կաքի շիշը ձեռքին:

ԷՄՄԱ - Էս իմ երազը ուրիշ էր, Սուլան: Երազիս մէջ տեսայ էս նոր Ջրիստոսը, վիան գլուխը կարծես նոփ-նոր ներկուած նկար ըլլար: Մազերը ոսկիի գոյն էին, իսկ աչքերը շատ բաց, ապակիի նման մաքուր կապտութին մ'ունէին:

ՍՈՒԼԱՆ - Էմմա, իրա՞ կը հաւատաս, որ Յիսուսն է եկողը: Թօնին կ' ըսէ, որ Թէքսասի խոռվարար մըն է, քիչ մըն ալ խելքէ պակաս, որ ինքանք Աստուծոյ որդի կ'անուանէ: Կ'ըսեն, որ այս մարդուն երեւան գալէն ի վեր հանքագործներուն մէջ խոռվութինը անպակաս է:

ԷՄՄԱ - Իմ ամուսինս չի հաւատար եւ, սակայն, իմացեր է, թէ նոր Ջրիստոսն ինչպէս Աւետարանի Յիսուսի նման ջուրը գինիի կը փոխէ եւ քանի մը զամբիլ ուտելիքով կերակրած է 500 բանուորներ:

ՍՈՒԼԱՆ - Ամուսինդ, կ'երեւի, այն նիկո քարոզիչը լսած է: Գիտնս,

Էմմա, ով էր նոր Յիսուսի աշակերտներէն մէկը: Պիտի զարմանաս, երբ ըսեմ:

ԷՄՄԱ - Ո՞վ է, կը ձամչնամ:

ՍՈՒԼԱՆ - Անշուշտ կը ձանչնաս, Գասպար Սմիթի:

ԷՄՄԱ - Ինչ կ'ըսես, Սուլան:

ՍՈՒԼԱՆ - Ան է, ան. ամիս մը առաջ իր մօրը նամակ գրած էր եւ ըսած, որ Ջրիստոսը՝ Աստուծոյ որդին, իր աչքերով տեսած է եւ, անոր մէկ քարոզը լսելէ յետոյ, դարձած է անոր աշակերտը:

ԷՄՄԱ - Եթէ ոստիկանները իմանան տեղը...

ՍՈՒԼԱՆ - Մայրը արդէն բոլորին ցոյց կուտայ նամակը եւ այնպէս կը խօսի, որ կարծես ինքն է Մարիամ Աստուածածինը: Գլխէն կը պակսի լոյսէ շրջանակ մը միայն:

Պատշզամէն կը լսուին երկու կատուներու ձայները:

ԷՄՄԱ - Վերջին անգամ կարծեմ մեծ գողութեան մը յանցանքով կը փնտողուէր:

ՍՈՒԼԱՆ - Արդէն երեք ամիս հազի կար, որ բանտէն ելած էր: Անգամ մըն ալ Թօնին երաշխաւոր եղաւ բանտէն հանելու համար: Մայրը խնդրեց, լացաւ. Թօնիին ալ սիրտը չդիմացաւ... Ուտելիքներու հաշուէն բաւական ալ դրամ տալիք է մեզի: Առ քեզի Ջրիստոս, առ քեզի աշակերտ: Այդ է պատճառը, որ Քօլորատօ գնացող ուխտաւորներուն մէջ շատցած է գողութիւնը:

ԷՄՄԱ - Իմացա՞ր, Սուլան, տիկին Մարթինն ալ ձամբայ պիտի ելլէ

ձեռակառքով՝ ուխտաւորներուն միանալու համար: Կը հայատայ, որ էս նոր Քրիստոսը պիտի թժկէ իր զաւակը: Այս գիշեր ալ ուշ ատեն երաժշտութեան ձայն կուգար ծամբայէն:

ՍՈՒՇԱՆ - Չըսեն, այս գիշեր ալ բաւական գողութիւններ ըլլալու են:

ԷՄՄԱ - Երեք օր առաջ սաւան մը փուած էի դուրսը: Առտուն ելայ՝ չկար:

Կատուներու ձայները աւելի քարձը կը լսիմն: Շամբուն վրայ քնացող պատանին, երբ կ'իմանայ կատուներու ձայները, ոսքերուն քով կղմինտրի կտոր մը կը գտնէ ու կատուներուն կը նետէ: Կը կոտրի պատուհանի մը պապակին: Պատանին կը պահուի անկիւն մը փախչելու համար:

ԿԱՌԱ ՄԸ ՍՈՒՐ ՁԱՅՆԸ - Հէյ, ՞վ էր, Աստուած իմ, քարը երախային ծիշտ օրօրոցին քով ինկաւ: (Իր ամուսինին): Հէյ, մարդ, ել, հէ...

Երախայի լալու ձայնը ատեն ատեն կը լսուի մինչեւ առաջին արարուածի վարագոյրին իջնալը:

ՍՈՒՇԱՆ - Ո՞վ պիտի ըլլայ, տիկին Մարթա, թերեւս ուխտաւորներու փոքրիկներն են:

ԿԱՌԱ ՄԸ ՍՈՒՐ ՁԱՅՆԸ - (չ'երեւիր, միայն ձայնը կը լսուի): Դժոխվ թող երթան ուխտաւորները, դժոխվ թող երթայ նոր Քրիստոսն ալ. քիչ մնաց երախայիս գլուխը կոտրէր:

ՈՒՐԻՇ ԿԻՆ ՄԸ - (նոյնպես չ'երեւիր): Մի հայիոյեր, տիկին Մարթա, մենք վստահ չենք, որ այդ

նոր Քրիստոսը չէ: Չէ որ Քրիստոս խոստացաւ երկրորդ անգամ գալ այս աշխարհը: Կ'ըսեն, որ նոյնիսկ հրաշքներ կը գործէ:

ՄԱՐԹԱ - Դուն ալ դժոխվ գնա Քրիստոսին հետ: Այո, այո, կ'ըսեն նաև, որ հօրը ՞վ ըլլալն իսկ յայտնի չէ: Քեզ նման կիներ կրնան հայատալ միայն:

Այդ պահուն իր խանութը կը բանայ կարճահասակ կօշկակարը, որ միայն կ'աշխատի արագ ամբողջ առաջին արարուածի ընթացքին: Կը տեսնրի խանութի ցուցատախտակը, որուն վրայ գրուած է՝ «Կօշկներու հիւանդանոց»:

ՈՒՐԻՇ ԿԻՆ ՄԸ - Ի՞նչ ըսել կ'ուզես, Մարթա: Ես ամուսին ունիմ, եւ զաւակներուս հայրն ալ յայտնի է: Քու ամուսինիդ տուն գալն անգամ որոշ չէ, եւ գիշերները գինետուները կը լուսցնէ:

Տիկին Մարթա Ժիր կը գոցէ իր պատուհանը եւ լացող երախային ձայնին կ'երթայ:

ԸՈՒՇԱՆ - Նորեն ինչ ունիք իրարու հետ, Հելէն:

ՃԵԼԵՆ - (ուրիշ կինը): Ոչինչ, ոչինչ: Դուք իմացաք, որ ես բան մը չըսի: Հետը խօսիլ չ'ըլլար. կատահած շունի կը նմանի:

ԷՄՄԱ - Կ'երեւի, ամուսինը նորէն գինով տուն եկած է:

ՃԵԼԵՆ - Եթէ ինծի կը հարցնես, պէտք ալ չունի ամուսինին: Տունը ելլող մտնողը ուրիշ մեկն է:

ԷՄՄԱ - (ձայնը ցածցնելով): Ծիմա

նորէն շատ կ'երթայ կուգայ այդ մարդը, Հելէն:

Ներսէն տղամարդու ձայն մը կուգայ: Էմմայի ամուսինն է:

ԱՄՈՒՍԻՆԸ - (Ներսէն): Ես գործի պիտի երթամ, թէ ոչ: Վառարանին վրայ ինչ որ դրիր, այրեցաւ արդէն:

ԷՄՄԱ - Բա, կերակուրս...

Արագ կը քաշուի պատուհանէն, իսկ Սուզան ցած ձայնով քանի մը անգամ «Հելէն» կը կանչէ՝ քանի մը հասկնալու համար: Երբ ձայն չ'առներ, ներս կը քաշուի՝ իրեն հետ առնելով դուրսը փոռուած լաթերը: Վարը ուրիշ պատաճի մը՝ Փօլ, փախչող պատաճի ետևէն կը ձայնէ:

ՓՕԼ - ՀԵՅ, ՍՄԻԹԻ: (*Սմիթի կը կենայ:* Երկու պատաճները իրարու մօտ կուգան եւ խօսակցելով կը քալեն միասին:) Ես հարաւային կայարանը կ'երթամ, դուն ալ կուգաս: Երէկ ամբողջ օրը 50 սէնթ շահեցայ: Երեւակայէ, Սմիթի, 50 սէնթ:

ՍՄԻԹԸ - ԻՆՉԱԲԵՆ, Փօլ:

ՓՕԼ - Կը կանգնիմ կայարանին դրան մօտ. Երբ կիներ եւ աղջիկներ դուրս կ'ելլեն, կ'օգնեմ անոնց պայուսակը տանելով: Անոնք ինձի կուտան իրենց պայուսակները, եւ ես կը հետեւիմ անոնց: Երէկ շատ գեղեցիկ, շատ շատ հարուստ կնոջ մը պայուսակը կայարան տարի: Տեսնելու էիր, Փօլ, մատներուն, վզին ամբողջ խոշոր ադամանդներ էին: Որ սուտ եմ, անիծուած ըլլամ: Եթէ

այդ ադամանդներէն մէկը իմս ըլլար, միչեւ Զինաստան կը ձամբորդէի: Կասկած չկայ, որ միլիոնատէրի մը կին էր: Ինծի 25 սէնթ տուաւ:

ՍՄԻԹԸ - Երթանք, Փօլ, ես միլիոնատէրի կին բնաւ տեսած չեմ: Կինը խօսեցա՞ւ քեզի հետ:

ՓՕԼ - Իհարկէ. ան ոչ միայն խօսեցաւ, նոյնիսկ իմ անոնք հարցուց:

ՍՄԻԹԸ - Դուն ալ հարցուցի՞ր, թէ նիր կ'երթաս:

ՓՕԼ - Այդ ալ հարցնելի՞ք բան է: Բոլորն ալ նոր Քրիստոսին, Քօլօրատո կ'երթան:

Փօլ կը քալէ, կոնակը շտկած, 50 սէնթ վաստկողի հապատ ձեւով մը. կը տեսնէ, որ գիրուկ տիկին Էմման՝ Թօնիկի խանութին կը մօտենայ. ինքնիրեն հով մը տուած՝ վար կ'առնէ քեփը ու կը բարենէ:

ՓՕԼ - Բարի լոյս, տիկին Էմմա:

ԷՄՄԱ - Բարի լոյս, Փօլ: (*Էմմա Թօնիկի խանութէն վար կ'իջնէ:*)

ՓՕԼ - (Սմիթին, ցած ձայնով): Հաւատա, Սմիթի, այն միլիոնատէրի կինը տիկին Էմմայէն ալ գեղեցիկ էր:

Կը հեռանան պատուհանէն: Ուրիշ կին մը, տիկին Սէյրի, անկողին եւ բարձեր դուրսը պատշաճամը կը տեղատրէ՝ միեւնոյն ատեն շարունակելով վեճը ամուսինին հետ:

ՄԵՅՐԻ - Այն, այն, եթէ գործ չկայ, գնա աւազակութիւն ըրէ: Ես այն ատեն կ'երթամ՝ կ'աշխատիմ, ինքինքս կը ծախեմ ու քեզ կը հանեմ բանտէն:

ԿԻՆ ՄԸ - (ուրիշ պատուհանէ մը):
Սորէն ինչ կայ, Մէյրի:

ՄԷՅՐԻ - Ինչ պիտի ըլլայ, անպէտ ամուսինս իմացեր է, որ Քրիստոսը եկած է, երկու շաբաթ է՝ տունէն դուրս չ'ելլեր եւ օրերը քնանալով կ'անցնէ. կը սպասէ, որ Քրիստոս իր ոտքը գայ ու զինքը կերակրէ:

ԱՄՈՒՍԻՆԸ - (ներսէն): Ո՛չ, սուտ է, անիծուած ստախոս մըն է: Ես չեմ սպասեր, որ Քրիստոս իմ ոտքը գայ: Այ, անիծուած կին, տան խօսք է որ կ'ընենք, ինչ է, լեզուով փողոցին պատերը կը փարտես: Որպէս տան մեծը, ես իմ կարծիքը յայտնեցի: Ես ըսի, որ ծախսենք մեր կարասիները, էտ դրամով օթոմօպիլ մը առնենք ու ծամբայ իյնանք դէպի Քօլօրատօ: Թերթերը ամէն օր կը գրեն, որ ծամբաները ուխտաւորներով լեցուած են, եւ ամէն օր ալ մեր մօտի ծամբայէն կ'անցնին: Այսքան ժողովուրդ որ կ'երթայ, անշուշտ, բան մը գիտէ: Անոնք ինչ եղան, մենք ալ այդ:

Այդ պահուն տիկին Մարքին զլամներու վրայ փողոց կը հանէ: իր հաշմադամ զաւակը՝ Զալին: Զալին փոքր մարմին ունի և խորշումած դէմք, 16 տարեկան: Տիկին Մարքին, իր զաւակը փողոց հանելէ յետոյ, նորէն տուն կը վերադառնայ: Նոյն ատեն գրնէ մը դուրս կ'ելլէ մաքուր հազուած սիրուն գծերով աղջնակ մը՝ շրբերն ու եղունգները ներկած շատ կարմիր: Այնպէս հազուած է, որ կ'երեւին մարմնին գծերը ձեռքին բռնած է ծամբորդական փոքրիկ

արկդ մը: Անոր ետեւէն դուրս կ'ելլէ պառաւ մը, դէմքին շատ ներկ, ոտքերը ցաւ ունի, սանդիշամատէ մը դժուարութեամբ վար կ'իջնէ:

ՊԱՌԱՒԻԾ - Դեռ շատ կանուխ է, Լորա, աճապարելու պէտք չունիս: Բաւական ժամանակ կ'առնէ, մինչեւ որ ովստատորներու կարաւանը ինքզինքը հաւաքէ: Վայ ծնկներս...

Կօշկակարը՝ առաջին անգամ ըլլալով, դուրս կը նայի ուշադիր՝ տեսնելու Լօրան եւ պառաւը:

ԼՕՐԱ - Կ'ուզեմ շուտ հեռանալ: Տեսնես այդ անիծուածը յանկարծ դուրս կ'ելլէ խանութէն: (Ժօնիի ակնարկելով:)

ՊԱՌԱՒԻԾ - Ան ոչինչ պիտի հասկնայ, եթէ նոյնիսկ տեսնելու ըլլայ: Նայէ, աղջիկս, զիս մի մոռնար, երբեմն գրէ: Եթէ նամակդ առնեմ, կրնայ ըլլալ, որ ես ալ ծամբայ իյնամ իմ այս ծնկներուս համար: Ալ չեմ կրնար դիմանալ, գիշերները սաստիկ ցաւեր կ'ունենամ: Կը հաւատամ, Լօրա, որ Քրիստոս պիտի բժշկէ իմ ցաւերս: (Երեսը կը խաչակնքէ:) Նայէ, աղջիկս, նայէ, որ վաստկած դրամիդ յարգը գիտնաս: Ամէն անգամ էսպէս գենեցկութիւն եւ երիտասարդութիւն չի մնար: Երբ օր մը իմ տարիքը հասնիս, երեսդ նայող չի ըլլար, կը մնաս մինակ, միս-մինակ: (Արցունքը կը սրբէ:) Ատենօք ես շատ դրամ շինեցի, երբ ուսկի փնտողու կարաւանի մը իետ ծամբորդեցի: Միայն թէ՝ չգիտցայ

յարգը իմ շինած դրամիս: Եհ, արցունքներուս ուշադրութիւն միտար, աղջիկս: Դժուար է այս տարիքիս մէջ մինակ մնալ. դուրս չեմ կրնար ելլել, որ ուրիշ մէկը գտնեմ:

ԼՕՐԱ - Ինչո՞ւ Ալիսը չես կանչեր քովդ:

ՊԱՌԱՒԾ - Եդ լաւ ըսիր, Լօրա. Ալիսը գեղեցիկ աղջիկ է: (*Ինքզինքը շտկելով:*) Միայն թէ շատ է յիմար: Եթէ ես անոր տարիքն ու գեղեցկութիւնն ունենայի, մատներս ադամանդով կրնայի զարդարել: Եթէ իմ մօտ մնայ ատեն մը, ես կը սորվեցնեմ շատ դրամ շինելու գաղտնիքը: Կրնան երեւակայել, որ այդ աղջիկը դրամի հաշիւն անգամ չի կրնար հանել: Շատ կը խաբեն:

ԼՕՐԱ - Ես հեռանամ, քանի դուրս չէ ելած այդ անպիտանը:

ՊԱՌԱՒԾ - (*Լօրայի ծեռքը բռնելով:*) Գինովներէն զգուշացիր, աղջիկս, թէեւ անոնք են որ դրամ կը մսխեն: Հա, եթէ Մայքը այսօր ալ գալու ըլլայ, ըսեմ, որ կը վերադառնաս շուտով: Ոչինչ, ոչինչ, Ալիսը որ բերելու ըլլամ, լաւ պիտի ըլլայ: Եդ երիտասարդ պտղավաճառը իսկապէս սիրահարուած է քեզի: Աստենօք իմ մօտ ալ մէկը կուգար, որ ամուսնացած էր եւ շատ քչախօս: (*Խոսակցութիւնը կը դադրեցնեն, երբ կը լսեն Թօնիի ձայնը:*)

ԹՕՍԻ - (*Խանութին մէջէն:*) Այն, այն, որ էսպէս երթայ, շուտով պիտի գոցեմ խանութս: Երբ քիչ մը պարտքերը շատցնեն, կը սկսին

Տէնէն առուտուր ընել: Հիմա ալ տուն տեղ կը ձգեն՝ Թօլորատօ կ'երթան: Անշուշտ, անշուշտ, հիմա կարգը տիկին Մարթինին է:

ՊԱՌԱՒԾ ու **ԼՕՐԱՆ** կը համբուր-իմ բաժնուելու համար: Էմնադուրս կուզայ Խանութէն եւ գնումներու ծրարները բռնած՝ կ'անցնի հաշմանդամ Չալիի մօտէն:

ԷՄՄԱ - Հելօ, Չալի:

Չալին կ'ուզէ խօսիլ եւ, սակայն, դժուարութեամբ քառ մը կը շինէ «հելօ» ըսելու համար: Չալիի ձայնը հաստ է: Խանութի սանդուխներէն արագ վեր կ'ելլէ Թօնին ու կը կանչէ. «Տիկին Էմնա, տիկին Էմնա»....

ԹՕՍԻ - Տիկին Էմնա, վաղը լաւ հա- ներ պիտի ունենամ: Եթէ կ'ուզես, մէկ հատ կը պահեմ քեզ համար:

ԷՄՄԱ - Շատ լաւ, Թօնի, նայէ որ շատ իդուտ չըլլայ:

ԹՕՍԻ - Այս ինձի ծգէ եւ անհոգ եղիր: (*Սանդուխէն վար իջած պահուն յանկարծ կը տեսնէ Լօրան, որ կը քալէ, փոքրիկ արկղ մը ծեռքին. կը կանչէ ետեւէն. «Մեմ, մեմ»... Լօրան կը շարունակէ իր ծամբան, որպէս թէ չի լսեր:)* Մեմ, մեմ, օրիորդ Լօրա, օրիորդ Լօրա...

ՊԱՌԱՒԾ կը դիտէ անհամբեր:

ԼՕՐԱ - (*Ետեւ դառնալով:*) Ինչ կ'ուզես:

ԹՕՍԻ - Երկար ատեն է, որ այլեւս խանութս չես մտներ:

ԼՕՐԱ - Կ'երենի, շատ կարօտն ունիս զիս տեսնելու: (*Թօնին կը մօտե-*

նայ:) Այլեւս ծերացեր ես, Թօնի:

ԹՕՆԻ - Ե՞ս, ծեր: Ի հարկէ, ի հարկէ:
Միայն թէ՝ տալիք ունիս: Հաւատա,
մեմ, եթէ այսպէս երթայ, պիտի գոցեմ խանութս:

ԼՈՐԱ - Եթէ գոցես, կարծեմ ես ալ
կ'ազատիմ: Ինչ ետեւէս ինկած,
շունչդ հատցուցած կը պոռաս:
Կարծեմ, քեզմէ ապրանք գոյցած
չեմ եւ ոչ ալ միտք ունիմ քաղաքէն
հեռանալու:

ՊԱՌԱՒԾ - Այդ ճիշդ է, ճիշդ, քաղա-
քէն չէ, որ կը հեռանայ:

ԹՕՆԻ - Ես ոչինչ ըսի, օրիորդ Լորա,
միայն թէ՝ առնելիքս յիշեցուցի:

ԼՈՐԱ - Այնպէս յիշեցուցիր, որ քիչ
մնաց դրացիները բոլորն ալ փո-
ղոց թափուէին: Ես ինքս ալ առ-
նելիք ունիմ, Թօնի. միայն թէ՝
դրամ ստանալու համար, փողոցը
մարդոց ետեւէն չեմ վազեր քեզի
պէս:

ԹՕՆԻ - Դէ, լաւ, դէ, լաւ, մոռցիր, օ-
րիորդ Լորա: Միայն թէ՝ եթէ դուն
ալ առնելիքներուդ ետեւէն չըլլաս,
չես կրնար գանձել, մանաւանդ որ
հիմա շատեր սկսած են Քօլորա-
տո երթալ:

Լորա կը շարունակէ ճամբան,
պառաւը ներս կը մտնէ ու դուռը
կը գոցէ: Թօնին քքին տակէն
հայեցելով դէպի խանութ կը
շակուի. կը տեսնէ հաշմանդամ
Չալին:

ԹՕՆԻ - Հէյ, Չալի, մայրո ո՞ւր է: (Չա-
լին կ'ուզէ խօսիլ եւ, սակայն, չի
կրնար կազմել բառերը:) Հա ի-
մացայ, որ մայրո ալ այսօր ճամ-
բայ կ'ելլէ Քօլորատո երթալու

համար: (Կը պոռայ:) Հէյ, տիկին
Մարթին: (Տիկին Մարթին դոնէն
դուրս կ'ելլէ ու իր զակին կուտայ
սէնտուիչ մը:) Բարի լոյս, տիկին
Մարթին, իմացայ, որ այսօր
ճամբայ կ'ելլես: Իրաւ, դժուար
ճամբորդութին է Չալին մինչեւ
Քօլորատո տանիլ...

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Ինչ կրնամ ընել,
Թօնի: Եթէ դրամ ունենայի, աւելի
հանգիստ կ'երթայի:

ԹՕՆԻ - (Ճայնին լրջութիւն տալով):
Տիկին Մարթին, չն՞ս ըսեր, որ
տալիք ունիս, երկու ամիս է՝ սէնթ
վճարած չես:

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Ես պարտքիս տէրն
եմ, Թօնի, կը վճարեմ, երբ վերա-
դառնամ: Կը հաւատամ, որ Չա-
լին պիտի բժշկուի: Ամէն օր
կ'իմանանք, որ կը բժշկուին կա-
ղեր, կոյրեր ու հաշմանդամներ: Հաւատա,
Թօնի, երբ բժշկուի
Չալին, այն ատեն գործի կ'ըլլայ,
ու կը վճարենք մեր պարտքը: Հի-
մա չունիմ, Թօնի. զաւակս այս
գլաններով պիտի տանիմ մինչեւ
Քօլորատո: Ճամբաները մուրա-
լով պիտի տանիմ, միայն թէ Չա-
լին ազատի այս գլաններէն:

ԹՕՆԻ - Տիկին Մարթին, եթէ գիտ-
նամ, որ կը բժշկուի զաւակդ, հա-
ւատա, մէկ սէնթ չեմ առներ.
միայն թէ՝ սուտ են, տիկին Մար-
թին: Անցեալ կիրակի եկեղեցի ե-
կած չէիր: Քահանան իր քարոզին
մէջ ըսաւ, թէ այս օրերուն շատ-
ցեր է հեթանոսութիւնն, ու ժողո-
վուրդը սկսած է սուտ Քրիստոսի
հաւատալ: Քահանան ըսաւ, թէ
այդ թէքսասցի խոռվարարը, որ

ինքզինք Աստուծոյ որդի
կ'անուանէ, կատարեալ առեւան-
գիչ մըն է:

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Զգիտեմ, Թօնի,
չգիտեմ: Իմ միակ զակիս համար
շատ աղօթեցի, շատ մոմեր վա-
ռեցի, սակայն, օգուտ չըրաւ: Ով
բժշկէ զաւակս, ան է իմ Քրիստո-
սը: Պարտատէր չեմ մեռնիր, Թօ-
նի: Բաւական գործ ունիմ դեռ,
վախնամ ուշ պիտի մնամ ուխ-
տաւորներուն միանալու համար:

ԹՕՆԻ - Էհ, Զալի, քեզի մնաց վճա-
րել մօրդ պարտքը: (Զալին կը
փորձէ խօսիլ, չի կրնար:) Ի հար-
կէ, երբ բժշկուիս, երբ վերադառ-
նաս, երբ գործ ունենաս, երբ
աշխատիս... (Զայնը հետզհետէ
բարձրացնելով եւ արդէն բարկա-
ցած կը մօտենայ կօշկակարին:) Դէ,
եկուր ասկէ վերջ մարդոց
բարիք ըրէ: Մարդն ինչ է, որ
մարդոց բարիք ընէ: Զարծէ մար-
դոց բարիք ընել: Այդպես են,
կ'առնեն, կ'ուտեն, յետոյ իրենց
հաշմանդամ զակին կը ծգեն, որ
վճարէ դրամը: Ապրանք տուած
ատենս «սիրելի Թօնի, անուշիկ
Թօնի» շաքարի պէս անուշ խօս-
քեր կ'ընեն: Եթէ դրամ ուզես, էն
ատեն գէշ մարդ կ'ըլլաս: (Կօշկա-
կարը կը շարունակէ աշխատիլ,
առանց խօսելու:) Դէ, եկուր ասկէ
վերջ մարդոց բարիք ըրէ: Երեւա-
կայէ, հիմա ժողովորդին վստա-
հիլ չ'ըլլար: Տեսնես, յանկարծ կը
ծգէ տունն ու տեղը եւ ուխտաւոր-
ներու կարաւանին կը միանայ:
Ո՞վ է սա Քրիստոսը, կատարեալ
աւազակապետ մը, որ կը վախ-

նայ շէնք շնորհք քաղաքներու մէջ
մտնել եւ իր քարոզները կը խօսի
բլուրներու վրայ ու ժամբաներուն
մէջ: Սուտ են, այ մարդ, սուտ. բո-
լորն ալ իրենց ապրանքին գինը
կը պոռան: Կ'ըսեն, որ ուխտա-
տրոները իրենց բոլոր դրամները
անոր կը նետեն: Հիմա արդէն
խոչոր հարստութեան տէր է դար-
ձեր: Վերջապէս, ո՞վ է այս մարդը,
որուն ով ըլլալը յայտնի չէ: Այս
մարդը ինքզինքը Աստուծոյ որդի
կ'անուանէ, եւ առաջին անգամ
հաւատացողները նիկրօները
կ'ըլլան: Այդ ինչ տեսակ Քրիստոս
է, որ իր շուրջը գողեր, աւազակ-
ներ կը հաւաքէ: Այն, այն, կա-
տարեալ աւազակապետ մը:
Երեւակայէ, Գասպար Սմիթին ալ
անոր աշակերտն է: Մայրը ինձ
կարդաց նամակը: Էն Գասպար
Սմիթիը, որ տեսրակներուն մէջ
իին հաշիւ ունի, եւ երեւակայէ, որ
երաշխաւոր եղած եմ բանտէն ա-
զատելու համար: Դէ, եկուր մար-
դոց բարիք ըրէ: Երեւակայէ, ով
որ ինձ պարտք ունի, Քօլօրատո-
յի ժամբան կը բռնէ: Ես ինչո պի-
տի առնեմ տիկին Մարթինէն:
Եթէ այսպէս երթայ, ես կորսուած
եմ, կորսուած: (Եւ գլուխը կը
բռնէ, մինչ կօշկակարը կը շարու-
նակէ աշխատիլ արագ:) Ես
կորսնցնելուս չեմ ցալիր, միայն
կը ցալիմ, որ այդ անիծուած Տէնը
ուրախ պիտի ըլլայ: Չէ, չէ, ինձի
Թօնի կ'ըսեն, 40 ձեւ կը գտնեմ,
նորէն թշնամիներս չեմ խնդաց-
ներ իմ վրայ: (Թօնի իր այդ բար-
կացոտ խօսքերուն մէջ յանկարծ

կը տեսնէ կին յածախորդ մը, որ կաթի պարապ շիշը բռնած՝ խանութին կը մօտենայ: Թօնին դեմքը կը կակուղցնէ եւ լայն ժպիտ մը բռնած՝ կ'ածապարէ խանութ:) Այս, մեմ, այն, մեմ, աղուոր օր է, տիկին Վուտմէն:

Օքք աւելի կը լուսնայ, արեւի կտոր մը կ'իջնայ կտորներուն վրայ: Փողոց կը մտնէ պտուղ ծախող երիտասարդ փերեզակը՝ Մայքը՝ իր պտուղին գները պոռարվ: Ուխտաւորներուն ճամբուն կողմէն հրապարակ կը մտնեն երեք պատահները, մէկը հարմօնիքա կը նուազէ, միւսը կը պարէ, իսկ երրորդը քէփը բռնած պատուհանները կը դիտէ: Քօլօրատո զացող ուխտաւորներուն փոքրիկներն են: Պատուհաններն կը տեսնուին գլուխներ:

ԽԾԱՔԵՐ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻՆ.

- Անոնք են...
- Ուխտաւորներուն քիտերն են...
- Բաւական գողութիւններ պատահած ըլլալու են այս գիշեր:

Երածշոտութեան ձայնէն կ'արքնան երկու վակապնները: Քներեն արքնցած կը յօրանցն: Սօտակայ փողոցէն ծերունին նը փայտը ձեռքին կը մօտենայ պատի արեւին ու շատ դանդաղ իր ծխամործը կը լնցնէ: Փերեզակը կը շարունակէ պռոալ՝ «փնճոր, նարինջ, պանանէս», միւնյոյն ատեն կը դիտէ պատուհանը այն տունին, ուրկէ շէկ աղջիկը՝ Լորան, դուրս եկած էր: Պատահներուն երածշոտութիւնը կը շարունակուի: Կը հաւաքուին փողոցի փոքրիկները ու կը պարեն:

Փերեզակը պանանէսի մեծ ողկոյզ մը կը կտրէ ու պառափ տան սանդուխտէն վեր զանկը կը հնչեցնէ: Բաւական սպասել յետոյ, դուռը կը բացուի, պառաւը ներս կ'առնէ պանանէսի ողկոյզը:

ՊԱՌԱՒԻԾ - Որ գալու ըլլայ, պիտի ըսեմ որ Մայքը բերաւ:

ՄԱՅՔ - Որ գալու ըլլայ, ըսէ որ Մայքը բերաւ:

Պառաւը դուռը կը գոցէ շուտով: Փերեզակը լաւ բան մը բրած ըլլալու գոհունակութիւնով իր ձեռնասայլ խաղաղ անկիւն մը կը տանի, վակապններուն մօտ ու թուղթէ տոպրակի մը վրայ կը սկսի գրել նամակ մը Լորային: Կը սկսի դանդաղ ու քրտնաջան աշխատանքի: Մատիս մը գտնելու համար, կը նայի բոլոր գրախնները: Երկար փնտուտուք յետոյ, վերջապէս, կը գտնէ մատիսի փոքրիկ կտոր մը ճաքերի աստատին մէջ:

ԾԵՐ ՎԱԿԱՊՈՒԾ - Հըմ, լաւ քնացանք, կարծես, ուշ ենք մնացեր: Ինչպէս կ'երեւի, ուխտաւորները տակաւին ծամբայ ելած չեն, պատահները դեռ այս կողմերն են: Հըմ, կը յուսամ լաւ գիշեր մը անցուցիր, Մարկոս: Այսօր դգորելու պէտք չունիս: Վակապոն մը քիչ անգամ այսքան ուշ կ'արթնայ: Իսկապէս շատ իինք յոգնած եւ պէտք ունէինք երկար քունի. Միայն թէ՝ այս անիծուած ոստիկանը պահ մը կտրեց մեր քունը: Ոչինչ, ոչինչ, ամենափարթամ անկողիններուն մէջ իսկ երբեմն կօշմարները կը խանգարեն քու-

նր: Ես անգամ մը միայն կատուներու ձայնէն արթնցայ, յետոյ կնոջ մը ձայն առի, որ կարծես կոհի կ'ըներ իր ամուսինին հետ:

ՄԱՐԿՈՍ - Ես ալ հեղ մը արթնցայ, երբ նպարավաճառը երկար քարոզ կը կարդար: Ես քեզի բան մը ըսնմ, ընկեր. Էստեղ լաւ տեղ կ'երեւի: Դուն գնա՞ Ես էստեղ կը մնամ:

ՄԻԶԸԼ - Հա, կը տեսնեմ, որ դուն նորէն յուսահատեցար: Այդպէս եղած է, որ կեանքիդ մէջ կրցած չես յաջողիլ: Յարատենութիւն եւ յամառ աշխատանք, - ահա յաջողութեան գլխաւոր պայմանները: Դուն շատ ես երիտասարդ, դժուար թէ կարենաս ըմբռնել կեանքի յաջողութեան այդ երկու գաղտնիքները:

ՄԱՐԿՈՍ - Կը տեսնեմ, որ կեանքի այդ երկու կարեւոր գաղտնիքները՝ յարատենութիւն եւ յամառ աշխատանք՝ ի գործ դրած ես վակապոն մը ըլլալու համար:

ՄԻԶԸԼ - Ի հարկէ, իմ սիրելի բարեկամ Մարկոս, իմ այս վիծակը ծիշդ եւ ծիշդ արդինք է յարատել եւ յամառ աշխատանքի: Կը տեսնեմ, որ դուն իսկական վակապոն չես կրնար ըլլալ:

ՓԵՐԵԳՎԱԿՐ իր գրած նամակին քանի մը տողերը կը կարդայ այնքան յափշտակուած, որ բարձրածայն կ'ելլեն խօսքերը.

«**Իմ սիրելիս, իմ հոգիս,**
 իմ սիրականս,
Գիշեր-ցորեկ քու վրայ կը մտածեմ,
 գիշեր-ցորեկ:

Գիշեր-ցորեկ մոոցած եմ
 իմ բոլոր հաշիւներ:

Գիշեր-ցորեկ, իմ սիրելիս,
 իմ հոգիս, իմ սիրականս»:
(Յետոյ կը շարունակէ գրել.)

ՄԻԶԸԼ - (շարունակելով իր խոսքերը): Կեանքին մէջ երկչունները միայն վակապոն չեն կրնար ըլլալ, որովհետեւ անոնք կը վախնան անօրի մնալէ: Այդ վախը, իմ սիրելի Մարկոս, մարդս կը դարձնէ նենգ, չար, խարդախ: Իսկական վակապոնը, իմ սիրելի Մարկոս, իր հոգեկան կատարելութիւնով կը սնանի: Մարդկային իսկական արժէքը այդ կատարելութիւնն է: Անկատար են մարդիկ, անկատար են ազգեր: Մենք կը տեսնենք, որ այսօր անհատներ ու ազգեր ամենամեծ յիմարութիւնով ի զուր կ'ուզեն դառնալ կատարեալ: Այդ մեծ յիմարութիւնը պատերազմիլն է: Պատերազմով անոնք կը դառնան աւելի անկատար, եւ հոգեկան արժեքները կը սկսին նորէն շատ նախնական աստիճանէն: Ես դրամ ունէի, երբ որոշեցի վակապոն ըլլալ: Բոլոր դրամներս այն հին օրերուն յանձնեցի ծնողքիս ու ինկայ ձամբարները: Կեղծ է ան, որ դրամ ունի եւ կ'ուզէ վակապոն ըլլալ: Ես յամառ յարատենութիւնով ինք-զինքիս վարժեցուցի պատուած վերարկու հագնիլ: Այդ պահուն միայն զգացի, որ իմ մէջ հոգեկան արժէք մը կը հասուննար: Չեմ ամչնար այս կօշիկներով պտտիլ, բարեկամս, եւ սակայն կ'ամչնամ, երբ ընկերիս չար կը

կամենամ: Պէտք է աշխատին մարդիկ եւ յամառ աշխատին բարի ըլլալու համար, որովհետեւ մարդուն մէջ դեմք, աշխարհայինը միշտ ուժեղն է: Հիմա, իմ սիրելի Մարկոս, ինծի այնպէս կը թուի, որ մաքուր հագուած, ոսկից կամ աղամանդէ գնդասեղ կամ մատնի կրող մարդիկ ցուցափեղկերուն մէջ դրուած մեղրամոմէ մարդու ձեւերուն կը նմանին: Յարատեւ եւ յամառ աշխատեցայ իին աւետարանական ձգնաւորներուն պէս իմ հոգին գտնելու:

ՄԱՐԿՈՍ - Եղ բոլորը լաւ, բայց չէ՞ որ անօթութինը մեր մէջ յաճախ կը պոռայ դեի մը պէս, եւ մենք ծամբայ ինկած ենք Քօլօրատո երթալու, որովհետեւ Քրիստոս կը պաշտպանէ զրկուածները, կը կերակրէ ժողովուրդը: Ան ոչ միայն կերակուր կուտայ ժողովուրդին, այլ եւ ջուրը գինիի կը փոխէ:

ՄԻՉԱԼ - Կը սխալիս, իմ սիրելի բարեկամ, Քրիստոս 2000 տարի յետոյ նորէն եկած չէ աշխարհ՝ ջուրը գինիի փոխելու կամ քանի մը կողով ուտելիքով 500 մարդ կերակրելու: Ան նորէն եկած է մարդոց հոգիին մէջ երկինք մը ստեղծելու: Եկած է, որովհետեւ պատերազմը միլիոններ կը սպաննէ վասն յիմարութեան, և վասն յիմարութեան միլիոնաւոր ծահիլ կեանքեր, դեռ կեանքին հետ չշերմացած, կ'այրին գածի մէջ: Եկած է, որովհետեւ մարդոց հոգիները դարձած են տեսակ մը ածխահանքեր: Եւ այսօր մեր

կարդինալները, դպիրներն ու վարդապետները իրար կ'անցնին եւ չեն ուզեր ծանչնալ այն Քրիստոսը, որուն կ'երկրպագեն, որուն համար հսկայական եկեղեցիներ շինեցին ամբողջ երկու հազար տարի: Զէ, սիրելի բարեկամ, ես չեմ երթար այնտեղ սեղանի նստելու եւ գինի խմելու: Ես կ'երթամ մանանեխի հատի չափ ըմբռնելու Աստծոյ իմաստութիւնը: Ես կ'երթամ միանալու անոր աշակերտներուն՝ տարածելու համար երկրի վրայ իմաստութիւնը երկնքին, ինչպէս ըրին առաքեալները:

ՄԱՐԿՈՍ - Այդ բոլորը լաւ, իմ սիրելի բարեկամ, միայն թէ՝ անօթի եմ, կը զգամ, որ իմ մէջ կենդանի մը պոռայ: Այստեղ բաւական լաւ տեղ կ'երեի: Երբ արթնցայ, իմացայ որ նպարավածառը իր գանգատները կը յայտնէր կօշկակարին, թէ շատեր ապրանք առած են եւ դրամը վճարած չեն: Ոչինչ, ոչինչ, ես պարտք շատ չեմ բարդեր, երբ բաւական եղաւ, ես ալ ուրիշներու նման Քօլօրատոյի ծամբան կը բռնեմ ու քեզ կը գտնեմ այնտեղ:

ՄԻՉԱԼ - Եհ, յաջողութիւն, բարեկամ:

Միշը կ'նվէ իր տեղէն ու դեպի փերեզակը կը քայլ. քալուածքը ծանը: Ուխտաւորներու երեք պատանիները, երբ հեռուէն կը տեսնեն ոստիկանի մը նօտենալը, կը կորսուին իրենց մտած ուղղութիւնով: Ցորեկի ոստիկանն է.

**տակալին հրապարակ շմտած՝
մէկը կը մօտենայ անոր:**

ՄԵԿ - Մինչեւ ճրբ այսի շարունակուին ուխտաւորներուն ըրածները: Այս գիշեր օթոմօպիլիս անհիները տարած են եւ կէզը ամբողջ պարպած:

ՈՍՏԻԿԱՆ - Նորէն: Այ մարդ, ձեզի ըսուած է, որ այս օրերուն զգոյշ ըլլաք: Այս գլխաւոր ժամբայէն ամէն օր եւ ամէն գիշեր ուխտաւորներ կ'անցնին: Այս գիշեր ալ մօտ 200 հոգի կայան դրած են: Եկուր, տեսնեմ, թէ ինչպէս ըրած են: (*Ոստիկանը կը հետեւի մէկին, եւ կը հեռանան:*)

ՄԻՉԸԼ - (փերեզակին): Հա, կը տեսնեմ, որ սիրահարուած ես: Լաւ բան է սիրահարուիլը: Սէրը լաւագոյն ծշմարտութիւններէն մէկն է: Հըմ, կը յուսամ, գեղեցիկ աղջիկ է:

ՄԱՅՔ - (երկու ծեռքերը կուրծքին տանելով): Էնպէս սիրուն, էնպէս գեղեցիկ...

ՄԻՉԸԼ - Դէ, լաւ, լաւ, կը տեսնեմ, որ նամակդ տակալին չես լրացուցած: Հեղ մը կարդա, տեսնեմ:

ՄԱՅՔ - (կը կարդայ ներշնչումով).

իմ սիրելիս, իմ հոգիս,
իմ սիրականս,

գիշեր-ցորեկ քու վրայ կը մտածեմ,
գիշեր-ցորեկ:

գիշեր-ցորեկ մոռցած եմ
իմ հաշիները, գիշեր-ցորեկ,
իմ սիրելիս, իմ հոգիս,
իմ սիրականս, գիշեր-ցորեկ...

ՄԻՉԸԼ - Կը տեսնեմ, որ «գիշեր-ցորեկ» էն զատ տակալին բան մըն ալ աւելցուցած չես: Էղ նամակով

ոեւէ աղջիկ չի սիրահարուիր: Աղջիկ ըսածդ թանկագին քարերու նման գեղեցիկ բառեր կը սիրէ: Ան կ'ուզէ, որ էն առաջ գովես իր գեղեցկութիւնը: Օրինակ, եթէ աղջկան հասակը կարծ է, ըսես, որ շատ սիրուն հասակ ունի: Չէ, այդ սուտ չէ, այդ թեթեւ սիսալը առաքինութիւն է, երբ կիներուն համար է:

ՄԱՅՔ - (աչքերը բանալով): Հասակը կարծ, անշուշտ ոչ, անշուշտ ոչ:

ՄԻՉԸԼ - (մատիտն ու թուղթը առնելով): Չէ, էս չեղաւ, գրածներդ սխալներով լեցուն են: Ես քեզի համար գրեմ էն տեսակ նամակ մը, որ երբ կարդայ, փողոցներն ելլէ քեզ փնտռելու:

ՄԱՅՔ - Զի՞ս փնտռէ: Օհ, այն ատեն աշխարհի ամենաերջանիկ մարդը կ'ըլլավ:

ՄԻՉԸԼ - Դէ, հիմա ըսէ՛ ինչ է անունը:

ՄԱՅՔ - Տանտիրուիին ըսաւ, որ անունը Լօրա է:

ՄԻՉԸԼ - Հա, լաւ անուն է: Ուրեմն, տանտիրուիին ըսաւ: Կը յուսամ, տեսած ես աղջիկը:

ՄԱՅՔ - Անշուշտ, անշուշտ, ինչպէս չէ, գլխաւոր Մարքէթէն հետեւած եմ անոր քանի մը անգամ եւ այս ծեռնասայլով: Ան նոյնիսկ ժպտաց ինձի: Բայց սիրտս արագ արագ կը զարնէր, չկրցի խօսիլ հետը: Երկու շաբաթ է՝ այս փողոցէն դուրս չեմ գար: Երբեմն ուրախ եմ, որ տանտիրուիին կը բանայ դուրս: Եթէ Լօրան բանայ,

հաւատա, բարեկամս, պիտի կորսնցնեմ ըսելիքներս: Օհ, գեղեցիկ է, շատ է գեղեցիկ Լօրան:

ՄԻՉԸՆ - Ուրեմն, էն առաջ աչքերէն սկսինք: Հիմա ըսէ, ինչ գոյն ունին աչքերը:

ՄԱՅՔ - (ոգեւորուած): Աչքերը կապոյտ են:

ՄԻՉԸՆ - Ուրեմն, վարսերն ալ շէկ: Հիմա, էսպէս. «Իմ սիրելի, շատ սիրելի Լօրա»... (Գրելով կամաց). «Արշալոյսը գեղեցիկ է, եւ, սակայն, արշալոյսէն աւելի գեղեցիկ են քու վարսերը: Կ'ուզէի թեթեւ հովն ըլլալ եւ վարսերուու հետ խաղալ»:

ՄԱՅՔ - Օհ, այդ հրաշալի է: (Քիչ մը մտածելով:) Բայց ես ինչպես հով կրնամ ըլլալ:

ՄԻՉԸՆ - Բան մըն ալ չես ըլլար: Այս տեսակ մը խաղ է, որուն բանաստեղծութիւն կ'ըսեն: Ամենէն շատ աղջիկները կը հասկնան այս խաղէն: Հիմա... (Կը գրէ:) «Աչքերդ ծով են կապուտակ, ով իմ գեղեցիկս, եւ ես ինկած եմ այդ ծովուն մէջ, վախնամ, թէ խեղդուիմ մի օր»...

ՄԱՅՔ - Ինչպես թէ խեղդուիմ, ես էնպէս գիտեմ լողալ:

ՄԻՉԸՆ - Սպասէ, սպասէ, դուն չես խեղդուիր եւ ոչ ալ կը լողաս: Ասոր ալ բանաստեղծութիւն կ'ըսեն: Կան մարդիկ, որ միմիայն այս տեսակ խաղեր կը կազմեն եւ կը դառան համբաւատոր: Ծէյքս-փիրը մէկն է անոնցմէ: Հիմա քանի որ չես ուզեր խեղդուիլ, աւելցնենք. (Կը գրէ:) «Բայց ես գիտեմ լողալ եւ կուրծք տալ քու

ծով աչքերու էն կապուտակ ալիքներուն»...

ՄԱՅՔ - Լաւ է: (Խանդավառուած:) Եղ շատ լաւ է, շատ լաւ:

ՄԻՉԸՆ - Հիմա... (Կը գրէ:) «Երբ կը քալես, կը հետեւիմ քեզի եւ ինձի այնպէս կը թուի, որ ամէն մէկ քայլիդ անտեսանելի թեւ մը պիտի բանաս ու պիտի թռչսի երկնքի հրեշտակներուն միանալու համար: Ես կը սիրեմ քեզ, ով իմ հրեշտակս»...

ՄԱՅՔ - (Խանդավառ կը կրկնէ քանի մը անգամ).

«Ես կը սիրեմ քեզ, ով իմ հրեշտակս, Ես կը սիրեմ քեզ, ով իմ հրեշտակս»...

ՄԻՉԸՆ - (Երկարելով թուղթը): Հա, տես, այս նամակը կը գրես մաքուր թուղթի վրայ: Նամակը կը յանձնես փոստին կամ պառախին: Պառաւը կը յանձնէ Լօրային, իսկ Լօրան իր սիրտը կը յանձնէ քեզի:

ՄԱՅՔ - Ուրեմն, Լօրա պիտի սիրէ զիս:

ՄԻՉԸՆ - Անշուշտ, անշուշտ, երբ սիրտը յանձնէ քեզի, մնացած մասը այլեւս դիւրին է: Սիրտ ըսածդ երկարէ ծանր դուռ է, հեղ մը որ բացուի՝ մտնելը դիւրին է:

ՄԱՅՔ - Հսէ, այ բարեկամ, ինչո՞վ փոխարինեմ քու այդ աշխատանքը: Դրամ չունիմ: Օրը դեռ շատ կանուխ է: Առաւօտ ձեռնասայլս այստեղ քշած եմ: Ես կրնամ պանանէսի ողկոյզին կէսը տալ քեզի:

ՄԻՉԸՆ - Պանանէսներդ լաւ կ'երեւին: Ինձ կը բաւէ երկու հատ: Այնտեղ իմ բարեկամը շատ է անօթի.

անոր մէջ պոռացող կենդանի մը կայ: (*Մայք ողկոյզին կէսը կը տանի երիտասարդ վակապոնին, որ տակաւին նստած է էնտեղ:* Մարկոս անյագօրէն կը սկսի ուտելոյ) Եհ, յաջողութիւն, իմ բարեկամ Մարկոս... եթէ զիս փնտոելու ըլլաս, Քրիստոսին եկուր: Ես անոր կ'երթամ, էնտեղ, Քոլօրատօ:

Միշրլ ողկոյզէն պանանէս մը կ'առնէ եւ կերուելով կը հեռանայ դանդաղ քայլերով: Կօշկակարը առաջին անգամ ըլլալով կ'ելլէ իր տեղէն, կը մօտենայ փերեզակին, պանանէս մը կը վերցնէ ու կը սկսի ուտել, առանց ձայն հանելու:

ՄԱՅՔ - (կօշկակարին): Ինչքան կ'ուզես, մէկ տրդըն:

ԿՕԾԿԱԿԱՐ - (ձեռքը երկրորդ պանանէսի մըն ալ երկարելով առանց փերազակին երեսը նայելու): Աս գնաց, ան գնաց:

ՄԱՅՔ - Ո՞վ գնաց:

ԿՕԾԿԱԿԱՐ - Էս առաւօտ կանուխ գնաց: (*Պանանէսներէն քանի մը հատ ալ վերցնելով:*)

ՄԱՅՔ - Այ մարդ, ո՞վ գնաց:

ԿՕԾԿԱԿԱՐ - Լօրան գնաց:

ՄԱՅՔ - Լօրան ո՞ւր գնաց:

ԿՕԾԿԱԿԱՐ - Այս առաւօտ ծամբայ ինկաւ, որ ուխտաւորներուն միանայ:

ՄԱՅՔ - (այս որ կը լսէ, անմիջապէս կը քշէ սայլը ու կը պոռայ Միշրլին ետեւէն): Հէյ, հէյ, կեցիր, կեցիր, միասին երթանք:

Մայք հեռանայ նոյն ճամբով: Կօշկակարը, առանց իր դէմքին գծերը փոխելու, կը մտնէ խանուր եւ նորէն կը սկսի աշխատանքը: Երիտասարդ վակապոնը մնացած պանանէսները տոպրակին մէջ կը տեղատրէ, ծրարը փայտի ծայրին կը կապէ եւ ուսին նետած՝ կ'երթայ Թօնիին դրան առջև, կը կենայ: Նորէն կը լսուի Թօնիին բարձր ձայնը:

Թ-Օ-ՍԻ - Ո՞վ է այս Քրիստոսը: Թէքսասցի խոռվարար մը: Ան նոյնիսկ նախատած է մեր կարդինալը:

Այդ պահուն իրապարակը կը մտնէ ցորեկի ոստիկանը՝ խօսելով այն մէկին հետ, որուն օքոմօպիլի գլանները գրղցած էին:

ՄԵԿԸ - Կը գողնան լուացքի կապեր, կաթի շիշեր, կը տանին՝ ինչ որ գտնեն տան բակին մէջ:

ՈՍՏԻԿԱՆ - Մեզի իրահանգ տրուած է խիստ ըլլալ ուխտաւորներուն հետ, մանաւանդ գլխաւոր ճամբաներուն վրայ գտնուող քաղաքներուն մէջ շատցած են գողութիւնները: (*Յանկարծ տեսնելով երիտասարդ վակապոնը, որ կեցած է Թօնիի խանուրին առջեւ:*) Ահա անոնցմէ մէկը: (Իր քովի մարդուն:) Դուն տեսար, երբ քու օքոմօպիլի անհինները տարին, այնպես չէ:

ՄԵԿԸ - Այն, այն, տեսայ մէկը, որ անհինները ուսին կորսուեցաւ մութին մէջ: Բայց չգիտցայ, որ իմ օքոմօպիլի անհիններն էին անոնք:

ՈՍՏԻԿԱՆ - Այս մարդուն կը նմա-

նէր: (*Մակոսին.*) Հեյ, քեզի կ'ուսեմ:

ՄԱՐԿՈՍ - (մօտենալով երկշուռ): Այն, տէր իմ:

ՈՍՏԻԿԱՆ - Մէկոյի ծգէ այդ անմեղ ձեւերդ, ըսէ, տեսնեմ, ինչ ըրիր օթոմօպիլի անհիները:

ՄԱՐԿՈՍ - Ես ոչինչ գիտեմ, պարոն ոստիկան:

ՈՍՏԻԿԱՆ - Ո՞ւր անցուցիր գիշերը:

ՄԱՐԿՈՍ - Այս տեղ, էս պատի տակ քնացեր էինք ընկերոջս հետ:

ՈՍՏԻԿԱՆ - Ո՞ւր է ընկերդ:

ՄԱՐԿՈՍ - Ան ճամբայ ինկաւ Քօլորատո երթալոր համար:

ՈՍՏԻԿԱՆ - Ըսել կ'ուզես, թէ անհիները տարաւ, որ ուխտաւորներուն ծախէ:

ՄԱՐԿՈՍ - Ընկերս անհիներ չունէր իր հետ:

ՈՍՏԻԿԱՆ - (*Դառնալով այն մէկին, որուն օթոմօպիլի անհիները գողցուած էին*): Այս մարդուն կը նմանէր քու տեսածի:

ՄԵԿ - Շատ մութ էր, հաստատ ոչինչ կրնամ ըսել:

ՈՍՏԻԿԱՆ - Ի հարկէ, մութին մէջ անոր քթին ձեւը չէիր կրնար տեսնալ: (*Գրապանէն մատիտ ու տետրակ հանելով*): Ինչ է անունդ:

ՄԱՐԿՈՍ - Մարկոս Թրէյսի:

ՈՍՏԻԿԱՆ - Ինչ գործով կը զբաղիս:

ՄԱՐԿՈՍ - Գործ չունիմ:

ՈՍՏԻԿԱՆ - Հըմ, ինչո՞ւ գործ ունենաս, քանի որ գողութիւն կայ: Ո՞ր տեղէն կուգաս:

ՄԱՐԿՈՍ - Նիւ Եղորքէն:

ՈՍՏԻԿԱՆ - Ո՞ւր կերթաս:

ՄԱՐԿՈՍ - Քօլօրատո կ'երթայի եւ,

սակայն, ուզեցի այստեղ մնալ. շատ էի յոգնած:

ՈՍՏԻԿԱՆ - Անշուշտ, անշուշտ, տեսար, որ գողութիւնը այստեղ աւելի յաջող կ'երթայ:

ՄԱՐԿՈՍ - Բայց, տէր...

ՈՍՏԻԿԱՆ - (*հանդարտ*): Կրնաս լոել, եթէ չես ուզեր խնդիրը աւելի ծանրացնել: Ըսէ, տեսնեմ, ինչ գործով զբաղած ես:

ՄԱՐԿՈՍ - Չեմ յիշեր:

ՈՍՏԻԿԱՆ - Բաւական է, դու ձերբակալուած ես: (*Թեւէն կը բռնէ ժիր:*)

ՄԱՐԿՈՍ - Բայց ես գող չեմ:

ԶԱՅՏԵՐ - (*պատուհաններէն*):

- Գողը բռնուած է:

- Այո, այն, օթոմօպիլի անհիները գողցողն է...

- Տիկին Մարթինին լուացքի կապերը գողցողն ալ թերեւս նոյն մարդն է:

Կը հավաքուին կիմեր, փոքր տղաքներ: Թօնին դուրս կ'ելլէ աղմուկով:

ԹՕՆԻ - Հա, բռնեցիք, վերջապէս:

Ես ալ հաշիր ունիմ հետը, պարոն ոստիկան: (*Թօնին երր կը տեսնէ երիտասարդ վակապոնը, դէմքի խիստ արտայայտութիւնը կը փոխէ յանկարծ:*) Վախնամ, սխալ մէկը բռնած էք, պարոն ոստիկան: Ժամը հինգին ես տեսայ, որ այս մարդը իր ընկերոջ հետ կը քնանար այդ անկիւնը:

ՈՍՏԻԿԱՆ - (*Խիստ*): Ո՞վ է այդպէս կը խօսի եւ կ'ուզէ սմարթ ըլլալ:

Թօնին կը լու: Ոստիկանը մարդուն թեւէն բռնած կը տանի: Հաւաքուողներէն մաս մը կը հետեւի:

Երբ գնացողները բաւական կը հեռանան, Թօնին կը խօսի պատին քով կեցող ծերուկին:

ԹՕՍԻ - Գողը այդ չէ, Աստուած վկայ: Խանութ շատ կանուխ կը բանամ: Ես տեսայ այս երիտասարդը, որ իր ընկերոջ հետ կը քննանար այստեղ, էդ պատի տակ: Անիւներու գորութիւնը պատահած է գիշերուայ ժամը 5-ին, իսկ ժամը 5-ին ես տեսայ այս երկու քնացողները: Այդ մարդը երազին մէջ չէր կրնար անիւներու գորութիւն ընել:

ԾԵՐՈՒՆԻ - Այ մարդ, գործիդ անցիր ու մի պոռար. տեսնես, քեզ ալ կը ձերբակալեն որպէս գող:

ԹՕՍԻ - (պոռալով): Ի՞նչպէս թէ...

ԾԵՐՈՒՆԻ - (հանդարտ): Չէ՞ որ դուն ալ այդ ժամին փողոց ելած ես: Այս մէկը մտիկ ըրէ: (*Ծխափողը պարպելով ու նորէն լեցնելով:*) Ատենօթ նապաստակ մը կը բռնեն ու կ'լսեն, թէ՝ «դուն էշ ես, ականջներդ շատ կը նմանին, քեզ պետք է պայտենք»: Նապաստակը աղաչելով ի զուր կ'լսէ, թէ՝ ինք էշ չէ, նապաստակ է: «Դե, լաւ, մենք պայտերը կը զարնենք, անկէ յետոյ դուն փաստէ, որ էշ չես»: Հիմա, սիրելի Թօնի, ոստիկաններուն եւ դատաւորներուն առջեւ շիտակ ըսելն ու իրաւունք պաշտպանելը յանցանք է: Այն, այն, եթէ շիտակ խօսիս, տուգանքը ալելի շատ է: Հիմա էդ երիտասարդը եթէ դատարանին մէջ ընդունի յանցանքը, ըսենք մէկ տարի բանտարկութիւն կայ. իսկ եթէ չընդունի եւ «անմեղ եմ»

ըսէ, տեսնես երկու տարիի կը բեղոցնեն: Այդպէս է Թօնի, որ հիմա մարդիկ սկսած են նոր Քրիստոս մը փնտոել ու ճամբաները ուստաւորներով կը լեցուին:

ԹՕՍԻ - My God, ձիշդ ես, ծերուկ, գործի տէր մարդ եմ, ոստիկաններուն նէմ երթալ չ'ըլլար: Բայց նորէն կ'ըսեմ՝ զուր տեղը տարին այդ երիտասարդը:

Թօնին խանութ կը շտկուի, մինչ ծերումնին կը խօսի ինքնիրեն՝ ծխախտը ափին մէջ փշրելով:

ԾԵՐՈՒՆԻ - Այո, այն, ժամանակն է, որ գայ Քրիստոսը. միայն թէ ալ ծերացայ, շատ ծերացայ, հաշիւներս փակեցի աշխարհէն: Աշխատեցայ ու միշտ զրկուած մնացի, զրկուեցայ Աստուծոյ ստեղծած արեւէն, եւ ահա օր մըն ալ ոսկորներուս մէջ ցաւ ինկաւ ու աւելի տառապեցայ:

Թօնին աճապարանքով նորէն սանդրւխներեն վեր կ'ելլէ:

ԹՕՍԻ - My God, ձիշդ ես, ծերուկ, այդպէս է, որ մարդիկ նոր Քրիստոսը կը փնտոեն, քարուաններով ծամբայ կ'իյնան Քօլօրատօ երթալու համար:

ԾԵՐՈՒՆԻ - Այդպէս է, Թօնի, շատուր են կեանքին մէջ զրկուածները եւ կը հաւատան, որ Քրիստոս երկրորդ անգամ եկած է աշխարհէն վերցնելու անարդարութիւնը: Երկու օր առաջ ճամբուն եզերքը կեցած՝ դիտեցի անցնողները: Եթէ ծեր չըլլայի, կը միանայ անոնց: Անոնք ուրախ էին, կ'երթա-

յին «Ովսաննա» ու «Ալելուեա» երգելով: Ռումբերու այս սարսափելի աշխարհին մէջ կը փնտռեն Քրիստոսը, որ իրենց խաղաղութեան եւ ծշմարտութեան խօսքեր ըսէ:

ԹօՆԻ - (կը խօսի հանդարտ): Ըսէ, ծերուկ, դուն կը հաւատա՞ս, որ ան իսկական Քրիստոսն է:

ԾԵՐՈՒՆԻ - Անշուշտ, անշուշտ կը հաւատամ, որ պէտք է զայ Քրիստոսը եւ պէտք է հիմա գայ: Եթէ կը հաւատաս եկեղեցիիդ, Ս. Գրքին, պէտք է հաւատաս Անոր Երկրորդ գալստեան: Ըսէ, Թօնի, եթէ այս շրջանին չգայ, ալ ե՞րբ պիտի գայ: Եվ որովհետեւ, Թօնի, խոզ ու հաւ ծախել գիտես, գործդլաւ է, փորդ կուշտ է, չես հաւատար Անոր: Այո, այո, քիչ առաջ ականջներովս լսեցի, որ կը հայ-հեյէիր Քրիստոսին: Եթէկ ալ կը հայհեյէիր Պիլ Քօրնէին, որ ձամբայ ինկած է Քօլորատո Երթալու համար, առանց քու դրամդ վճարելու: Պիլը ես լաւ կը ծանչնամ, Թօնի. Եթէ հաց մ'ունենայ, իր ընկերոջ հետ կը բաժնէ: Զաւակներու տէր է, Երկար ատեն հիւանդանոց մնաց, հատցուց՝ ինչ որ ունէր: Վերջին օրը ինձի ըսաւ, որ քեզի դրամ տալիք է: Թօնի, ինչքան որ գիտեմ, Պիլը կը վճարէ այդ դրամը:

ԹօՆԻ - (զղոսմ իր ծայնին մէջ): Անշուշտ, անշուշտ, Պիլին վրայ թող դրամս ըլլայ, տարիներով ինձի հետ առեւտուր ըրած է: Էհ, մարդ ես, նեղ օրեր կը պատահին: Եթէ վերջին օրը Պիլը տեսնէի, պիտի

ըսէի. «Պիլ, հոգ մի՛ ըներ, այնպէս հաշուէ, որ տալիք չունիս»:

Այդ պահուն փողոցէն իրապարակ կը մտնէ խոշոր գլուխով, լայն ուսերով, բարձրահասակ նիկրօ մը:

ԾԵՐՈՒՆԻ - Ան է, Թօնի, Քօլօրատօյէն կուգայ, Քրիստոսը իր աչքերով տեսած է: Երկու շաբաթէ աւելի է, որ այդ քաղաքին մէջն է ու կը քարոզէ: Առաջին անգամն է, որ այս փողոցը կուգայ:

ԹօՆԻ - Ես ալ առաջին անգամն է կը տեսնեմ մէկը, որ իր աչքերով տեսած է Քրիստոսը:

ՆԻԿՐՈ ՔԱՐՈՉԻՉ - Բարի լոյս, Եղբայրներ:

ԹօՆԻ Եւ ԾԵՐՈՒՆԻ - Բարի լոյս, բարի լոյս:

ՆԻԿՐՈ ՔԱՐՈՉԻՉ - (լայն եզրերով զիսարկը կը դնէ գետնին վրայ, կը կենայ իրապարակին մէջտեղ, Ս. Գիրքը կը բանայ ու կը սկսի կարդալ բարձրաձայն Մատթէոսի 24 Գլ. 42 Համարէն): «Ուրեմն, արթուն կացէք, զի չգիտէք, թէ ո՞ր ժամուն ծեր Տէրը կուգայ: Պատրաստ կացէք, վասնզի որդի մարդոյ կուգայ այն տեսակ ժամուն, որ դուք չէք սպասեր: Եթէ չար ծառան իր սրտի խորքին մէջ ըսէ, որ Տէրը ուշ պիտի գայ եւ սկսի գինովներու հետ հարթել, այն ատեն կրնայ Տէրը յանկարծ ներս մտնել, այն տեսակ օր մը, երբ ինք բնաւ չէր ակնկալեր»:

Մօտի քնակիչները, իրարու ծայն տալով կը հաւաքուին նիկրօ քարոզիչին շուրջ:

ՁԱՅՆԵՐ - Քօլորատոյէն եկած է...
ՁԱՅՆԵՐ - Քրիստոսը իր աչքերով տեսած է...

ՆԻԿՐՈ ՔԱՐՈՉԻՉ - (իր ընթերցումը լրացնելէ յետոյ, կը սկսի քարոզել ծանր ու բամբ ձայնով): Երկրորդ անգամն է, որ Աստուած կը դրկէ իր սիրելի զաւակը մարդու կերպարանքով։ Ան այստեղ, աշխարհի մէջն է, որովհետեւ շատցեր են մարդկային չարութիւնները։ Ան եկաւ, երբ ազգեր ազգերու վրայ ելած են, երբ չի մնար քարը քարի վրայ։ Ան եկաւ իր բոլոր նշաններով։ Դուն, անհիւած մաքսաւոր եւ այս օրերու անհծուած փարիսեցի, (մատը իր մօս կեցող Թօնիին ուղղելով) ի՞նչ կ'ընես անոր համար։ Քրիստոս այստեղ է, նորէն եկած է մեզի համար, եւ մենք չենք ձանչնար զայն ու կը հայինենք անոր։ Չենք ձանչնար մեր Աստուածը, զոր պաշտեցինք եւ որուն համար տաճարներ կառուցինք։ Դուն, այս օրերու անհծուած փարիսեցի, (նորէն մատը շեշտելով Թօնիին, որ զգածուած նպարավածառի լայն գոգնոցին ծայրը կամաց մը աչքերուն կը տանի) ի՞նչ ըրիր անոր համար։

Հաւաքուած ժողովուրդին մէջ զիրուկ կնոջ մը մօս նիշար հասակով մէկը զբաղած է կնոջ դրամապանակը բանալու կամաց ու զգոյշ. վերջ ի վերջոյ կը յաջողի գողնալ դրամը ու փոխել իր տեղը։ Տիկին Մարթին դուրս կ'ելլէ իր տունէն՝ ծրար մը կապած կոնակին. արդէն պատ-

րաստ է ճամբայ ելլելու։ Քարոզի ընթացքին մարդ մը, որ կարճատես է, մօս 50 տարեկան, տուներուն թիերք կը ճշդէ՝ իր ուզած թիերք գտնելու համար։ Կոշկակարը այս որ կը տեսնէ՝ կը հասկնայ եւ, առանց բառ մը խօսելու հետը, ցոյց կուտայ այն դրուր, որիկէ դրուս ելած էր Լորան։ Թիւ փնտռողը վեր կ'ելլէ։ Պառաւը ներս կ'առնէ կարճատես նարդը եւ զգուշութեամբ կը գոցէ դրուր։ Թօնին, զգածուած նիկրօյի քարոզեն, յանկարծ կը նշմարէ տիկին Մարթինը, որ ճամբայ ինկած է հաշմանդամ Չալիին կառքը քշելով։

ԹՕՆԻ - (պոռալով): Տիկին Մարթին, տիկին Մարթին... (Կը մօտենայ։)

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Երբ վերադառնամ, թօնի, երբ դրամ ունենամ, երբ լաւանայ Չալին։

ԹՕՆԻ - Սպասէ, տիկին Մարթին...»

Թօնի արտորանքով խանուր կը մտնէ եւ խոշոր հեմ մը առած՝ վեր կ'ելլ՝ գոհ ժախտ մը քռնած դէմքին։

ԹՕՆԻ - Տիկին Մարթին, այս հէմը հետդ առ, ճամբան պէտք կ'ըլլայ։ (Թօնին հէմը կը տեղաւորէ Չալիի կառքին մէջ։)

ՆԻԿՐՈ ՔԱՐՈՉԻՉ - (այս գործողութիւններու ընթացքին կը քարոզէ ան)։ Դուն, այս օրերու անհծուած փարիսեցի, (ուրիշ մը ցոյց տալով) որ պաշտեցիր, դուն որ սպասեցիր երկրորդ գալստեան...»

Տիկին Մարթին, զգածուած, շնորհակալութիւն կը յայտնէ Թօնիին։

ԹՕՆԻ - (գոհ եւ ժպտուն): Good by,
Չալի... (Չալին երկար ձայն մը կը
ծգէ:)

Տիկին Մարքին սայլը քշելով կը
հեռանայ: Թօնին նիկրօյին քա-
րոզին կը դառնայ: Գիրուկ կինը,
նոյնպէս զգածուած նիկրօյի քա-

րոզէն, կը թաշկիմակն առնելու
համար դրամապանակին մէջ կը
նայի ու յանկարծ կը տեսնէ դրա-
մապանակը բաց ու դրամը գող-
ցուած:

ԿԻՆ - (ձչալով): Դրամս, դրամս,
դրամս գողցան...

ԱՐԱՐՈՒԱԾ Բ

Վարագոյրը դեռ չբացուած՝ կը լսուի կարդինալին քարոզը եկեղեցին մէջ:
Ծանր ձայնին մէջ կայ կամարներու արձագանքը:

ՔԱՐՈՉԸ - Տէրն մեր Յիսուս Քրիս-
տոս կ'ըսէ Մատթէոսի Աւետարա-
նին մէջ. «Յայնժամ երբ մէկը
ձեզի ըսէ, թէ հոս է Քրիստոսը
կամ հոն, մի հաւատաք, վասնզի
սուտ մարգարէներ եւ քրիստոս-
ներ պիտի ելլեն ու մեծ նշաններ
ու հրաշքներ ցոյց պիտի տան եւ
ընտրեալները պիտի մոլորեց-
նեն»: Բարեկամներս, ան ոչ
միայն սուտ մարգարէ եւ սուտ
Քրիստոս է իր ամէն նշաններով
եւ հրաշքներով, այլև աւազակա-
պէտ մը, որուն կողքին պոռնիկ-
ներ կը քալեն:

Ժողովորդին մէջ աղմուկ, որ
հետզհետէ կը հասնի ու կը լսու
մեքենաներու ժխոր գործարանի
մեջէն: Գործաւորները կը խօ-
սակին մեքենաներու աղմուկին
մէջ:

Ա. ԳՈՐԾԱԽՈՐ - Ան կուգայ, այսօր
քաղաք կը մտնէ:

Բ. ԳՈՐԾԱԽՈՐ - Կուգայ, կուգայ: Դի-
տի երթան տեսնելու:

Գ. ԳՈՐԾԱԽՈՐ - Մեզի չպիտի ծգեն,
որ դիմաւորելու երթանք:

Դ. ԳՈՐԾԱԽՈՐ - Ան կուգայ ինձի
համար, քեզի համար, աշխար-
հին համար:

Հետզհետէ կը դադրի մեքենանե-
րուն աղմուկը: Այս անգամ կը
լսուի կիներու, տղամարդերու եւ
փոքրիկներու աններդաշնակ
ձայներու խմբերզը քմբուկի հետ:

Կլորի, Կլորի, Ալէլուեա...

Կարճ լոութենէ մը յետոյ կը բա-
ցուի վարագոյրը:

Տեսարանն է քաղաքի ոստիկա-
նասունը: Պաշտօնեան՝ Շէք, իր
աշխատանքով զբաղած է եւ
միեւնոյն ատեն մտիկ կ'ընէ: Ձեփի-
քընին, որ կը խօսի ձայնին մէջ
կիրք դնելով: Անկիւն մը նստած է
մէկ աչքը կապուցած, նիհար,
խեղճուկ արտայայտութիւնով
քաղաքացի մը: Գիրուկ ոստիկան
մը, գլխարկը սեղանին վրայ, տե-
ղեկագրութիւն մը գրելու քրտնա-
ջան աշխատանքին մէջ: Դուն
մօտ տարիքաւոր ոստիկան մը իր

նոր գնած կօշիկները հազմելու դանդաղ շարժումին մէջ է, առանց ուշադրութիւն դարձնելու շուրջը: Դուքսը կայ եղերափողերու արմուկ եւ քազութեան ժխրը: Ժողովորդը քաղաք լեցուած է դիմատրելու համար «Քրիստոսը»:

ՔԵՓԹԸՆ - (ուորի վրայ): Եթէ Զիֆին մնայ, այս քաղաքի ոստիկանատունը Փրկութեան Բանակի պաշտօնատուն կը դառնայ: Գասպար Սմիթի չորս ամիսէն աւելի է, որ այս քաղաքին մէջ է եւ տակաւին ձերբակալուած չէ: Կարծես բաւական չէին գործած ոճիրները, վերջին անգամ ոստիկան Ղուկասի ականջը կտրեց: Քանի մը անգամ դիտել տուի Զիֆին, որ այդ Քրիստոս ըսուած աւազակապետը պէտք չէ պահել մեր նահանգի սահմաններուն մէջ: Էքսպորոյի պատուելին աւելի շուտ հասկցաւ վտանգը, երբ ուզեց իր ժողովուրդով «Քրիստոս»ի քէմփին յարձակիլ: Երեք շաբաթ առաջ եթէ այդ Քրիստոս ըսուածը քշուեր մեր նահանգի սահմաններէն, այսօր այս փառաւոր մուտքը չէր ունենար այս քաղաքին մէջ: Երեւակայել որ ամբողջ Ամերիկայի մէջ միակ քաղաքն է, որ այսքան մեծ ընդունելութիւն կ'ընէ պարզ աւազակապետի մը:

Հեռախոսի զանգ:

ՃԵԶ - (կը պատասխանէ հեռախոսին): Այո, այո, այստեղ է: (Քէփթընին երկարելով թէլէֆոնը:) Զիֆն է, Քէփթըն:

ՔԵՓԹԸՆ - (մեղմ ձայնով): Հէլօ, Զիֆ, ի հարկէ, ամէն բան կարգին է: Կարծեմ, ժամը 4-ին պիտի մտնէ քաղաք: Այժմ 20 ձիաւոր ոստիկաններ կան դուրսը: Կարծեմ բաւական է կարգը պահելու համար: Ինչպէս, անշուշտ, անշուշտ: Ուրեմն, տակաւին ժողովի մէջ էք: Անմիջապէս, Զիֆ: (Կը գոցէ հեռախոսը:)

ՃԵԶ - Ինչպէս կ'երեւի, երկար ժողով կ'ունենան:

ՔԵՓԹԸՆ - (հապարտանքով): Կ'երեւի, բարեկամս՝ Սենաթօր Ճանսըն, ուզած է, որ ես ալ ներկայ ըլլամ ժողովին: Այո, այո, տակաւին ուշ չէ գործի անցնելու: (Կը մեկնի:)

ՊԻԼ-ԾԵՐՈՒԿ ՈՍՏԻԿԱՆ - (Քէփթընին): Նայէ, Քէփթըն, որ Ղուկասին նման չ'կտրեն ականջներդ:

Քէփթընին դուրս ելած պահուն ներս կը մտնէ լաւ հազուած, 60-ի մօտ, մազերու համելի ճերմկութիւնով քաղաքացի մը:

ՔԵՓԹԸՆ - (մուտքին մօտ): Ի՞նչ կ'ուզէք, պարոն:

ՔԱՂԱՔԱՑԻՆ - Կ'ուզեմ ոստիկանապետը տեսնել:

ՃԵԶ - Նստեցէք, խնդրեմ: (Քէփթընը դուրս կ'ելլէ:) Զիֆը կուգայ շուտով:

Քաղաքացին կը նստի: Անհամբեր է, յաճախ ժամացոյցին կը նայի: Ամէն անգամ ոք ժամացոյցին կը նայի, խեղճուկ Քաղաքացին կը ծոփ ժամը հասկնալու համար:

ՃԵԶ - ՀԵյ, Պիլ... Հիմա ինչպէս է Ղուկասը:

ՊԻԼ - (Միշտ կօշիկով գրաղած): Ինչպէս պիտի ըլլայ, կտրուած ականջ մը այլեւս տեղը չի դրուիր: Ջեզի բան մը ըսեմ, ՃԵԶ, մէկ գլուխին մէկ ականջ ալ կը բաւէ, մանաւանդ Ղուկասի գլխին: Ան արդէն շատ մտիկ ընել չէր սիրեր: Երէկ հիւանդանոց գացի: Երեւակյէ, մէկ փոքր ականջի համար ամբողջ գլուխը փաթթած էին:

ՃԵԶ - Ինչպէս եղած է, Պիլ, ականջը ամբողջութեամբ կտրուած է:

ՊԻԼ - Էնպէս շիտակ կտրուած է, որ մնացած է մեղուի չափ փոքրիկ ծակ մը: Ղուկասը շատ բախտաւոր ելաւ: Ուրիշներ կեանքերնին տալով հերոս կ'ըլլան, իսկ ան իր մէկ փոքրիկ ականջը վրայ տալով հերոսացաւ:

ՃԵԶ - Ինչ ալ ըսեն, Պիլ, քաջութիւն է «Քրիստոս»ի քէմփը մտնել, ձերբակալելու համար Գասպար Սմիթիը:

ՊԻԼ - Իրեն ըսուեցաւ, որ մինակը չերթայ, վտանգաւոր է: Ղուկասը մտիկ ընողներէն չէ, ահա թէ ինչու մէկ ականջն ալ կը բաւէ:

Ներս կը մտնէ ուրիշ պաշտօնեայ մը, Ֆրէնք, լուսարգելը ճակատին, թերեւ ճաղատով, առանց ճարերի:

ՖՐԵՆՔ - ՀԵՅ, Պիլ, նորէն կօշիկ:

ՊԻԼ - Այս անգամ լաւ կօշիկ մը գնեցի, Ֆրէնք: (Կօշիկին մէկը երկարելով Ֆրէնքին:) Նայէ, նայէ, ամէն մէկ կուրք ձեռքով կարուած է:

ՃՐԵՆՔ - Հըմ, լաւ կօշիկ կ'երեւի, թէեւ կօշիկէ լաւ չեմ հասկնար: Այ մարդ, դուն ալ աշխարհ եկար կօշիկներու մէջ տանջուելու համար:

ՊԻԼ - Ճիշդ ըսիր, Ֆրէնք, My God, Ճիշդ ըսիր. Ես արդէն ծերացայ եւ միշտ ալ լաւ կօշիկ մը փնտոեցի: Ինչ հոգ, որ աշխարհը լայն է, երբ կը նեղեն կօշիկներս:

ԳԻՐՈՒԿ ՈՍՏԻԿԱՆ - (Խօսելով քթին տակէն): Բայց Լորան ձանչընալու համար բնաւ ծեր չես:

ՃՐԵՆՔ - Ինչ, չըլլայ որ դուն ալ կը ձանչնաս Լորան, Պիլ:

ԳԻՐՈՒԿ ՈՍՏԻԿԱՆ - Էնպէս կը ձանչնայ, կարծես կնքահայրը եղած է:

ՊԻԼ - Կը հածիս գոցել այդ անիծուած բերանդ: Ականջ մի տար, Ֆրէնք, այդ յիմարին: (Ինքնիրեն:) Իսկապէս որ, լաւ կօշիկ մը ունեցայ:

ԳԻՐՈՒԿ ՈՍՏԻԿԱՆ - ՀԵյ, Ֆրէնք, ինչպէս կը հեգեն Մքնամերա:

ՊԻԼ - Չըսի՞, որ անիծուած յիմար մըն է. ան իր հօր անունն անգամ պիտի չկրնայ հեգել:

ՃՐԵՆՔ - Իսկապէս, կամուրջ մը շինելէ աւելի դժուար է հեգել այդ անունը: Աստենօք ուզած եմ ձարտարապետ ըլլալ: Փորձեմ: (Ֆրէնք կը հեգէ անունը ու կը մօտենայ իր աշխատանքի սեղանին՝ խօսքը ձերին ուղղելով:) Ինչպէս կ'երեւի, Չիֆը եկած չէ տակաւին: Հարցը բաւական ծանր ըլլալու է, ըսել կ'ուզեմ սենաթօրին չափ ծանր: Կարծեմ, 250 փառնտ կը կշռէ մեր սիրելի սենաթօրը: Հա, քիչ առաջ քէփ-

թընին ծայնը առի, բաւական ըստելիքներ ունէր:

ՃԵԶ - Ե, գիտես, ան առիթը չի փախցներ ծայնը բարձր զգելու, երբ Չիֆին դէմ բան մը ունի ըսելիք: Անոր ներկայութեան, ըսելիք շատ բան չ'ունենար:

ՖՐԵՆՔ - Այդ նոր բան չէ, ճէք, բոլորն ալ ըսելիքներ կ'ունենան, երբ ընտրութիւնները մօտենան: Հինքընի եւ ճէֆըրսընի ծառերը կը սերտեն յանուն դեմոկրասիի եւ յանուն դեմոկրասիի իրարու կը հայիոյեն: Անցեալ ընտրութեան միայն իմացայ, որ բարեկամն՝ նախկին քաղաքապետը, իր կինը կը ծեծէ եղեր: Քէփթընին միտքը ուրիշ է, ճէք, ան շատ լաւ գիտէ, թէ հովը ՞րտեղէն կուգայ: Ան շատ սիրալիր կ'ուզէ ըլլալ կառավարիչին, մանաւանդ սիրելի սենաթօրին հետ, այլ խօսքով՝ ինքզինքը բարձրագոյն քաղաքականութեան կ'ուզէ յարմարցնել, մանաւանդ որ իհմա տեսակ մը օրէնք դարձուծած են սա «Քրիստոս»ի դէմ եղած հայածանքը: Ինչո՞ւ չէ, քաղաքական եւ տնտեսական օրէնք: Նկատած եմ, որ ամէն Զատիկին մեր Քէփթընն ալ իր կարգին կառավարիչին պէս իր զաւակները կը շարէ իրարու ետեւէ հաւագերու նման եւ եկեղեցի կը մտնէ, միայն այն տարբերութեամբ, որ կառավարիչին տողանքը կը իրատարակուի Սընին մէջ, իսկ Քէփթընինը՝ ոչ: Մենք գիտենք նաեւ, որ կառավարիչը դդումէ փայ շատ կը սիրէ, եւ կինը աշխարհի առաջ-

նակարգ դդումէ փայ պատրաստողն է:

ՃԵԶ - Դուն չգիտես, որ քիչ առաջ Քէփթընն ալ կանչուեցաւ ժողովին:

ՖՐԵՆՔ - Well, well, ուրեմն, մինչեւ Քէփթընին հասած է խնդիրը:

Աճապարանքով ճակատի քրտինքը սրբելով ներս կը մտնէ նպարավաճառ Թօնին, լաւ հագուած նոր հարտացողի պէս:

ԳԻՐՈՒԿ ՈՍՏԻԿԱՆ - (Թօնիին): ՀԵ, ո՞ւր կ'երթաս այդպէս:

ԹՕՍԻ - Կ'ուզեմ Չիֆը տեսնել:

ԳԻՐՈՒԿ ՈՍՏԻԿԱՆ - Սպասէ, սպասէ: (Դառնալով Ֆրէնքին եւ ճէքին:) Այս այն մարդն է, որ գաղտնի տեսակցութիւն ունեցեր է Գասպար Սմիթի հետ:

ԹՕՍԻ - Գասպար Սմիթի իմ լաւ բարեկամն է: Իմ բարեկամն է նաեւ «Քրիստոսը»:

Մաքուր հագուած քաղաքացին զարմանքով Թօնին կը նայի:

ԳԻՐՈՒԿ ՈՍՏԻԿԱՆ - Հսի որ վտանգաւոր մէկն է:

ԹՕՍԻ - Դուք կը սխալիք, պարոն ոստիկան, թերևս ուրիշի հետ կը շփոթէք զիս: Ես Հինքըն հրապարակի նպարավաճառն եմ: Զիս շատերը կը ծանչնան:

ՃԵԶ - Թերեւս կարեւոր յայտնութիւն մը ունի ընելիք:

ԹՕՍԻ - Ես ոչինչ ունիմ յայտնելու: Եկած եմ ոստիկանապետը տեսնելու:

ՃԵԶ - Չիֆը այստեղ չէ այժմ:

ՄԱԶՈՒՐ ՀԱԳՈՒԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆ -

(շատ անհամբեր): Պարոններ, կրնայիք ըսել, թէ նրբ պիտի գայ Չիֆը:

ՃԵՔ - (գրպանի ժամացոյցը նայելով): Մինչեւ հիմա պէտք է եկած ըլլար:

ԹՕՍԻ - Բայց ինձ ըսուած էր, որ այս ժամուն զինքը տեսնեմ: (Թուղթը կը փնտոէ գրպանին մէջ:)

ՖՐԵՆՔ - (Թօնիին): Ուրեմն, ոստիկանապետն է, որ կ'ուզէ տեսնել քեզ;

ԹՕՍԻ - Զգիտեմ, չգիտեմ: (Վերջապէս, գտնելով թուղթը կ'երկարէ ֆրէնքին:)

ԳԻՐՈՒԿ ՈՍՏԻԿԱՆ - Կը տեսնէք, թէ ինչքան կասկածելի խօսքեր կ'ունէ:

ՖՐԵՆՔ - (թուղթը կարդալէ ետքը): Այստեղ կասկածելի ոչինչ կայ: Ընդհակառակը, Չիֆին դրկած մէկ նամակն է, կ'ուզէ տեսնել Անթօնի Սըլէրին:

ԹՕՍԻ - (հպարտանքով): Այդ ես եմ, Անթօնի Սըլէրի, Լինքըն հրապարակի նպարավաճառ:

ԳԻՐՈՒԿ ՈՍՏԻԿԱՆ - Օհ, այդպէս, ներողութիւն: (Ոստիկանը կը շարունակէ իր աշխատանքը:)

ՖՐԵՆՔ - Ուրեմն, դուք այն նպարավաճառն էք, որ Main փողոցին վրայ նոր խանութ մը շինել կուտաք:

ՃԵՔ - (հեռախոսին կպատասխանէ): Ըէլօ, թի 8-ը, անմիջապէս: (Կը սեղմէ զանգին կոծակը. կ'երեւան երկու ոստիկաններ դրան վրայ:) Վակոն, թի 8-ը, ձերբակալութիւն կայ:

Ոստիկանները կը մեկնին:

ԹՕՍԻ - (պատասխանելով ֆրէնքին լայն ժպիտով): Անշուշտ, անշուշտ քաղաքի էն լաւ նպարավաճառին խանութը պիտի ըլլայ:

ՖՐԵՆՔ - Ձեր խանութը հիմա Լինքըն հրապարակի վրայ է, որ կ'աշխատի տիկին Մարթինին տղան: Ի՞նչ է անունը:

ԹՕՍԻ - Չալի, Չալի:

ՃԵՔ - (ֆրէնքին): Այդ այն տղան է, որ «Քրիստոս» բժշկեց հրաշքով:

ԹՕՍԻ - Ճիշդ ան է, Ճիշդ ան:

Ոստիկանատան վակոնին զանգը հետզհետևէ կը հեռանայ:

ՖՐԵՆՔ - Եւ երեւակայել, որ հաշմանդամ ծնած ու գլաններու վրայ մեծցած է: Անցեալ օր կինս եկեղեցին մէջ տեսած էր այդ տղան իր մօրը հետ միասին:

ԼԱԽ ՀԱԳՈՒԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆ - (ծանր շեշտով): Ինչ ալ ըլլայ, պարոններ, պէտք է առաջքն առնել այդ անպիտան շարժումին: Այո, այո, խումբ մը աւազակներ եւ պոռնիկներ իրարու մօտ եկած՝ այս երկիրը քանդելու ելած են:

ԹՕՍԻ - (բարկացած. յանկարծ մոտենալով լաւ հագուած քաղաքացին): Դուն, դուն չհամարձակիս վարկաբեկել Քրիստոսը, որ Աստուծոյ որդին է: Եթէ համարձակիս վարկաբեկել Քրիստոսը, որ Աստուծոյ որդին է, դուն անհծուած յիմար մըն ես:

ԼԱԽ ՀԱԳՈՒԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆ - (յանկարծ ոտքի ելլելով): Դուն չհամարձակիս ինծի անիծուած յիմար ըսել:

ՃԵԶ - Մի մոռնաք, պարոններ, որ ոստիկանատան մէջ էք:

ՀԱԽ ՀԱԳՈՒԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆ - Բայց դուք թոյլ կուտաք, որ ոստիկանատան մէջ այդ աղտոտ օտարականը ինծի անհծուած յիմար կոչէ: Իմ անունը Ճան Ուայթ է, Ճօրտըն վաճառատան տնօրին:

ԹՕՍԻ - (Նախկին բարկութիւնով): Դուն ինձ աղտոտ օտարական ըստես...

Գիրուկ ոստիկանը, երբ կ'իմանայ Ուայթի անունը, ոտքի կ'ելլէ եւ Թօնիին վզէն ժիր բռնելով կը նստեցնէ: Թօնին կը նստի հլու, քեւս բարկացած. քրին տակէն բաներ մը բաելով, եւ կը նկատէ, որ փրթած է շապիկին կոճակը:

ՃԵԶ - (մօտենալով Ուայթին): Ներողութիւն, պարոն Ուայթ, որ այս անհածոյ խօսքերը եղան: Ներեցէք, որ նախապէս չծանչցայ Ձեզ: (Ֆրէնք ակնոցին վրայէն կը նայի կամաց:) Նկատեցի, որ կ'ածապարէք: Ինչո՞վ կրնամ օգտակար ըլլայ:

ՃԱՆ ՈՒԱՅԹ - Այլեւս չեմ կրնար սպասել, եկած եմ ըսելու... (Ոստիկան մը դոնէն օթոմօպիլի մը թիւը կը կանչէ տէրը գտնելու համար:) Եկած եմ ըսելու, որ կինս յիմարացեր է...

ԹՕՍԻ - (քիչ մը ուշ մտաբերելով): Այդ իմ օթոմօպիլին թիւն է: (Տեղէն կ'ելլէ ածապարանքով եւ դուրս կը քալէ:)

ՈՍՏԻԿԱՆ - (դոնէն): Ոստիկանատան վակոնին շատ մօտ կեցուցած էք Ձեր օթոմօպիլը:

ԹՕՍԻ - Իրաւ, տեղ չկար. փողոցն ամբողջ օթոմօպիլներով լեցուած էր: (Կը մեկնի:)

ՃԱՆ ՈՒԱՅԹ - Այո, այո, ուրիշ բառ չեմ կրնար գործածել, իսկ եւ իսկ յիմարացեր է:

ՖՐԵՆՔ - Վախնամ սխալ տեղ եկած էք պարոն Ուայթ. բժիշկները թերեւս աւելի օգտակար ըլլան նման պարագայի մը:

ՃԱՆ ՈՒԱՅԹ - Ոչ պարոն, մտածեցի որ ոստիկանութիւնը աւելի օգտակար կ'ըլլայ: Կինս այն յիմարներէն է, որ կը հաւատայ, թէ եկած է Քրիստոսը եւ այսօր քաղաք պիտի մտնէ: Երբ պաշտօնատունին վերադարձայ, տեսայ, որ տունս լեցուած էր մուրացկաններով: Կինս այդ բոլորին համար խնձոյք սարքած էր: Միակ այդ չէ բոլորը: Ան իր աղամանիները եւ զարդեղինները ծախեր է եւ դրամը բաշխեր աղքատներուն: Քաղաքը լեցուն է վաշխառուներով: Նախ, կ'ուզեմ, որ ոստիկանութիւնը հետապնդէ ու գտնէ աղամանիները, որ շատ աժան գնով ծախուած են:

ՃԵԶ - Դուք առաջինը չէք, պարոն Ուայթ, եւ ոչ ալ վերջինը պիտի ըլլաք: Ոստիկանութիւնը ետեւէլ է արդէն եւ վերջին երեք օրուան ընթացքին այդ վաշխառուներէն ծերբակալած է չորս հոգի:

ՃԱՆ ՈՒԱՅԹ - Ոծիր է մարդկային տկարութենէն օգտուիլ եւ այնքան աժան գնել աղամանիները, որոնց մեծ գին վծարուած է: Եւ այդ գնողներն ու այդ տկարութիւնը քաջալերողները հրէաներն են:

Անոնք են, որ չեն հաւատար եւ աւելի շատ կը տարածեն այս Քրիստոս ըսուածին քարոզները:

ՃԵԶ - Արդէն երկու օր է՝ քաղաք թափուած են գրանահատներ, կաղեր, կոյրեր, մուրացիկներ, նիկրօներ, որոնք Քրիստոսի ճամբուն վրայ կը փռուին եւ իրենց երեսները կ'արինեն: Քիչ առաջ ձերբակալուեցաւ մէկը, որ Քրիստոսի լուսանկարը ծախուի հանած էր, որպէս թէ Քրիստոսի կողմէն ստորագրուած: Մինչեռ իրականութիւնը այն է, որ մինչեւ հիմա ոչ մէկ օրաթերթ կրցած է լուսանկարել զայն: Լուսանկարին մէջ կան աշակերտները, ժողովուրդը, ծառեր, բլուր, բայց ոչ Քրիստոսը: Ծատեր այդ ձեռով կ'ուզեն բացատրել, թէ այդ մարդը իրականին մէջ հոգի է:

ՃԱՆ ՈՒԱՅԹ - Իրականին մէջ, պարոն ոստիկան, ան շատ հմուտ կախարդ մըն է: Նոյնիսկ քանի մը կախարդներ երեւան եկան՝ մերկացնելու անոր իրաշքները: Ծիքակօյի մէջ կախարդներ եղան ջուրը գինիի փոխող: Ես կարդացի բժիշկի մը յոդուածը բժշկուած հաշմանդամ տղուն մասին: Ան կը փաստէ, թէ այդ հաշմանդամ տղան ճամբորդութիւնով բժշկուած է: Ինչ ալ ըլլայ, ըլլայ նոյնիսկ անհծուած ոգի, պէտք է այս շարժումին առաջըն առնել: Երկար ատեն է, որ մեր վաճառատան գործերը դադրած են: Ծիքակօյի սպանդանցներու նման այս երկիրը հետզհետէ սնանկութեան կ'եր-

թայ: Ժողովուրդը կը դադրի միս ուտելէ:

ԽԵՂՃՈՒԿ ՔԱՂԱՔԱՑԻՆ - (կ'ուզէ խօսիլ, սակայն, երկշոտութիւն մը կայ մէջը): Ներողութիւն, պարոններ... (Բառերը կը կորսուին Ուայրի խօսքերուն մէջ:)

ՃԱՆ ՈՒԱՅԹ - Կարելի՞ է երեւակայել մէկը, որ հակառակ ըլլայ քաղաքակրթութեան եւ ազգային ծգոտումներուն...

ԽԵՂՃՈՒԿ ՔԱՂԱՔԱՑԻՆ - Ներողութիւն, պարոններ, ես ալ ծիշդ ատոր համար եկած եմ ոստիկանատուն: Այսինքն, այսինքն, մսի խնդրի համար: Երկու շաբաթ է՝ մեր տան մէջ կոիւ կայ: Կինս այլևս կը մերժէ միսով կերակուր պատրաստել՝ ըսելով թէ մեր կեանքին մէջ ոժիր գործած ենք կենդանիները մորթելով եւ անոնց միսը ուտելով: Ես չգիտեմ, պարոններ, որտեղէն ձեռք ծգած են Քրիստոսի այն քարոզը, որ կը խօսի կենդանիներու մասին: Ես մսի պէտք ունիմ, պարոններ, բժիշկը ինձ յանձնարարած է մսի ուտել: Բժիշկը կ'ըսէ, որ քալորիի պակաս ունիմ: Վերջին շաբաթը կնոցս միացաւ նաեւ զոքանչս:

ԳՐԵՍԸ - Հա, հիմա հասկցայ: Կ'երեկի թէ այդ սեւցած աչքդ զոքանչիդ գործն է: Իսկապէս բաւական լաւ գործ ըրած է:

ԽԵՂՃՈՒԿ ՔԱՂԱՔԱՑԻՆ - Ծատ ծիշդ ըսիք, պարոն, Աստուած ձեզի օգնէ, եթէ դուք ալ զոքանչ ունիք: Այսօր ըսի, որ եթէ կինս իմ ուզած կերակուրները չպատրաստէ, այդ հիման վրայ կրնամ ա-

պահարզան ստանալ: Այս ըսելս գիտցայ. Էհ, բան մըն էր ըսի, տեսնեմ այս զոքանչս յարձակեցաւ իմ վրայ եւ սեւցուց աչքս: Եթէ քաջութիւնը չունենայի ինքզինքս դուրս ծգելու, Աստուած վկայ, գլուխս ալ վրայ տուած էի: Միայն կ'ուզեմ, որ ոստիկան մը ընկերանայ ինծի, մինչեւ տան սանդուխէն վեր ելլեմ: Տունէն իմ գործիս վերաբերեալ կարեւոր թուղթեր ունիմ առնելիք:

ՃԵԶ - Ներողութիւն, պարոն Ուայթ, այս խեղճ մարդուն հարցը իրաւ ծանրակշիռ է: (*Ծերուկ ոստիկանին, որ կը շարունակէ նոր առած կօշիկով զրադիլ:*) Հեյ, Պիլ...

ՊԻԼ - Ի՞նչ, զոքանչի՞ դէմ: Եւ երեւակայել, որ կեանքիս մէջ առաջին անգամն է, որ լաւ կօշիկ մը գնեցի: (*Ոտքի կ'ելլէ ու քանի մը անգամ կը քալէ կօշիկները փորձելու համար:*) Երթանք, երթանք: (*Միասին կը քալեն. աչքերը միշտ կօշիկներուն, կը խօսի, երբ դրան ելքին կը մօտենան:*) ՀԵյ, Ճէք, Եթէ ուշանամ, հիւանդանոցին կառքը շուտ դրկէ, չմոռնաս: (*Դուրս ելլելու պահուն:*) Քանի՞ տարեկան է զոքանչդ:

ԳԻՐՈՒԿ ՈՍՏԻԿԱՆ - Լսեցիք, թէ այդ անպիտան ծերուկը ի՞նչ հարցուց: Զարմանալի պիտի ըլլար, որ չձանչնար Լորան: (*Ոտքի կ'ելլէ տեղեկագիրը ծալելով ու ոստիկանապետի սեղանին վրայ կը դնէ, յետոյ թուղթի կտոր մըն ալ գլխարկին մէջ կը տեղաւորէ եւ գլխարկը դնելով դուրս կ'ելլէ:*)

ՃԱՆ ՈՒԱՅԹ - Եւ ինչո՞ւ զարմանալ,

որ սնանկացեր են Ծիբակօյի միս արտադրող ընկերութիւնները: Միշտ ալ ըսած եմ, որ եթէ այս շարժման առաջքը չառնուի, վտանգի տակ են նաեւ դրամատունները: Զքաւորութիւնն ու նիկոն փողոց իջած են: Կրնաք երեւակայել, թէ իմ կինը այնքան յիմարացեր է, որ աղտոտ մուրացիկներու համար վարձեր է նիկոններու երաժշտախումբ մը: Երբ ներս մտայ յանկարծ, տեսայ երգ ու պար, իրար անցած են եւ կոչնականները գինի կը խմեն: Տեսայ, որ կինս մետաքս հագած՝ կը պարէր աղտոտ մուրացիկի մը հետ: Երբ բարկացած տունէն դուրս ելայ, սանդուխին վերեւ տեսայ կաղ մը, որ ճիտրապրէ կը պարէր: Երբ բարկացած դոնէն դուրս կ'ելլէի, հաշմանդամ մըն ալ քթին թիգ չափեց ինծի:

ՖՐԵՆԶ - Ինչպէս կ'երէեւի, պարոն Ուայթ, ձեր հարցը շատ ալ պարզ չէ, եւ ոստիկանապետի ուժերէն շատ է վեր: Կարելի չէ իշխել իրար խառնուած այդ տարրերուն վրայ: Կարելի՞ է իշխել կայծոռիկի լոյսին վրայ, թէեւ ծանծ մըն է փոքրիկ: Միայն թէ, պարոն Ուայթ, ի՞նչ պիտի կրնաք ընել, եթէ ձեր կինը միանայ այդ նոր Քրիստոսի խումբին:

ՃԱՆ ՈՒԱՅԹ - (*Ճայնը բարձրացնելով*): Ի՞նչ, այն խումբին, ուր լեցուն են պոռնիկներ ու աւազակներ: Այդ պարագային ես կրնամ սպաննել իմ կինը: Չէ, չէ, ես միշտ ալ աշխատած եմ Ուայթի տան պատիւը բարձր պահել:

Ինչպէս կը տեսնեմ, ոստիկանապետը շատ ուշացաւ: (*Ժամացոյցին նայելով:*) Ես այլեւս չեմ կրնար սպասել: (*Ոտքի կ'ելլէ:*)

ՃԵՔ - Հանդարտեցէք, պարոն Ուայթ, կը կարծէք, թէ ձեր կինը պիտի ուզէ պատասխանել կարգ մը հարցումներու, եթէ գաղտնի ոստիկան մը դրկուի: Այն ատեն աղամանդները գտնել թերեւս դժուար չըլլայ:

ՈՒԱՅԹ - Զգիտեմ, չգիտեմ. միայն այն գիտեմ, որ կինս յիմարացեր է: (*Դառնալով Ֆրէնքին:*) Ճիշտ, կրնայ ըլլալ, պարոն. իմ մտքս անցած չէր, որ կինս օր մը կրնայ միանալ այդ ասազակախումբին: Բայց ես հիմա պէտք է փաստաբանիս մօտ երթամ: Ցտեսութիւն, պարոններ, պիտի ջանամ անձամբ տեսնել ոստիկանապետը: (*Կը մեկնի:*)

ՖՐԵՆՔ - (*Ղամաց մը մօտենալով Ճէքին:*) Ճէք, քեզի բան մը ըսնեմ. Ես լաւ հոտ չեմ առներ. Քրիստոսի գլխին բան մը կը կատարուի: Ես Չիֆը լաւ կը ճանչնամ. ինչ որ ինք չ'ուզեր ընել, կը յանձնէ Քէփթընին: Այլապէս Քէփթընը ինչո՞ւ պիտի կանչուէր ժողովին. անոր խելքին բնաւ պէտք չունէին: Զգիտեմ, չգիտեմ, ենթադրութիւն է ըրածս: Եւ երեւակայել, որ այս քաղաքին մէջ միայն 4000 նիկրօներ լեցուած են:

ՃԵՔ - Ես ինքս ալ շատ բան չգիտեմ, սակայն, կը զգամ, որ բաներ մը կը դառնան: Բացառիկ երեւոյթ է, որ սենաթօր եւ կարտինալ ժողովի նստին կառավարիչին եւ ոս-

տիկանապետին հետ: *Էքսպորոյի* պատուելիին շարժումը յարձակիլ Քրիստոսի քէմփին վրայ՝ մտածուած բան էր, եթէ Չիֆը անմիջապէս առաջքը չառնէր: Միայն Քէփթընը չէ. նկատեր եմ, որ առհասարակ լուս դժգոհութիւն կայ Չիֆին դէմ: Քրիստոսի շարժման դէմ կը շատնան հրապարակային ժողովները: Անցեալ կիրակնօրեայ ժողովին մէջ, ուր խօսեցան կառավարիչն ու Դստերք Ամերիկեան Յեղափոխութեան, 40 հոգի ձերբակալուցան:

ՖՐԵՆՔ - Այդ կը հասկնամ, Ճէք, եւ աւելին կը հասկնամ, երբ մանաւանդ սա Դստերք Ամերիկեան Յեղափոխութեան մէջտեղ կ'իյնան իրենց բադային ձեւերով: Երբ այս կիները մէջտեղ կ'իյնան, վստահ եղիր, որ համաձարակ կայ եւ կամ վտանգաւոր բան մը պիտի կատարուի: Ճէք, մեզ համար բախտաւոր մասը այն է, որ Քրիստոս իր աշակերտներուն եւ հետեւորդներուն զգուշացուցած է սուր վերցնել: Այլապէս Ղուկասի կտրուած ականջը կրնար պատճառ ըլլալ խոշոր իրարանցումի: Պիտի չզարմանամ, Ճէք, որ փոքրիկ ականջ մը յանկարծ աշխարհը քառոսի վերածէ եւ այդ ականջէն կախուին մարդկային բոլոր օրէնքներն ու փիլիսոփայութիւնները: Աշխարհը տակնուվրայ ըլլալէ յետոյ, պատմութեան համար ամենամեծ ողբերգութիւնը պիտի մնայ մեր Ղուկասի

փոքրիկ ականջը: Եհ, այդպէս ալ գրուած է պատմութիւնը:

Ներս կը մտնէ Թօնին՝ նորեն քրտինքը սրբելով:

ՖՐԵՆՔ - Նստէ, Թօնի, միայն թէ ոստիկանապետը տակաւին եկած չէ: Եհ, ինչպէս կը տեսնեմ, Թօնի, գործդ շատ լաւ է: Կը տեսնեմ, ձէք, Քրիստոսի աշխարհ գալէն միայն Թօնին փրկուեցաւ:

ԹՕՆԻ - Անշուշտ ոչ, անշուշտ ոչ. ան եկած է աշխարհը փրկելու:

ՖՐԵՆՔ - Ըստ կ'ուզեմ, Թօնի, քու գործդ հիմա լաւ է, խանութիդ փոքրիկ հրապարակը հիմա բազմութիւնով լեցուած է, առեւտուրդ լաւ, բոլորն ալ կ'երթան Քրիստոսի հրաշքով բժշկուած Զալին տեսնելու:

ԹՕՆԻ - (լայն ժախտով): Գործս լաւ է, փառք Աստծոյ. միայն թէ միս չեմ ծախսեր՝ Յիսուսի պատուերները պահելու համար: Եթէ միս ալ պահելու ըլլամ, այն ատեն Տէնին խանութը կրնամ սարդի առէջներով լեցնել. ան հիմա միայն միս կը ծախսէ հեթանոսներուն: Եւ երեւակայել, որ այդ անիծեալ առնետը շատ աշխատեցաւ Զալին իմ քովէն հանելու:

ԹԵՒՔՆԱԿ ԱՆԳՐԻՆ ՄԵԶ: Ներս կը մտնէ ոստիկանապետը շատ լուրջ ու մտահոգ: Կը տեղաւորովի սեղանին մօտ: Պահ մը լուր սեղանի քուղթերուն կը նայի: Ծէք եւ Ֆրէնք իրարու կը նային, թէ իրենցմէ ո՞րք պիտի խսկ լուրին:

ՖՐԵՆՔ - Ինչպէս կը տեսնեմ, Զիֆ, ժողովը շատ յաջող ելք ունեցած է:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Անշուշտ շատ յաջող եւ սիրաբանութիւնը կատարեալ: (Յանկարծ տեսնելով Թօնին:) Ո՞վ է այս մարդը եւ ինչ կ'ուզէ:

ՁԵԶ - Այս մարդը Ձեզի կը սպասէ, Զիֆ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - (թեթեւ խստութեամբ): Ինչ ունիս:

ԹՕՆԻ - (ոտքի ելլելով): Ոչինչ, ոչինչ, Զիֆ: (Գրպանին մէջ նամակի մը երկար փնտուտուք յետոյ, կը գտնէ ու կը յանձնէ Զիֆին: Թօնիին վրայ թեթեւ շփոթ մը կայ:)

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Հա, հասկցայ, դուք էք Անթռնի Սըլէրի:

ԹՕՆԻ - (բռնի ժպիտով): Այո, Զիֆ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Վշտանգաւոր ոչինչ կայ, Թօնի. ուզեցի անձամբ քանի մը բաներ ստուգել: Նախ՝ ծիշշէ է, որ մէկ շաբաթ առաջ եղած կարգադրութեան համաձայն, Քրիստոս այս երեկոյ իր քարոզէն վերջ Ձեզի հիւր պիտի ըլլայ:

ԹՕՆԻ - Ճիշդ է, Զիֆ: Ան, նախ որբեւայրի տիկին Մարթինին պիտի այցելէ: Այդ այն կինն է, Զիֆ, որուն հաշմանդամ զաւակը բժշկեց Քրիստոս: Յետոյ մեր տունը պիտի գայ ու ճաշէ քանի մը աշակերտներով:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Այդ աշակերտներուն հետ պիտի ըլլայ՝ Գասպար Սմիթի:

ԹՕՆԻ - Զգիտեմ, Զիֆ. շաբաթէ մը աւելի է, որ տեսած չեմ զայն:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ըսել կ'ուզես, Ղուկասին ականջը կտրուելէն ի վեր:

ԹՕՍԻ - Զգիտեմ, Զիֆ, ես ալ միայն թերթերէն իմացայ, որ ոստիկան Ղուկասի ականջը կտրած են Քրիստոսի քէմփին մէջ: Այդքան, այդքան: Իրաւ որ, մեղք եղած է: Բայց կ'ըսեն, թէ յանցանքը ոստիկան Ղուկասինն է... Կ'ըսեն...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Կ'ենթադրեմ, թէ Քրիստոսի ձեր տունը գալուն խնդիրը կարգադրած է ձեր բարեկամ Գասպար Սմիթիը:

ԹՕՍԻ - Այո՛, Զիֆ, ան կարգադրած է: Ինքը՝ Գասպար ծանօթացուց զիս Քրիստոսին, երբ ան խօսեցաւ ինձի հետ, ըսաւ, թէ 1942 տարի առաջ իր տեսած Բեթանիացի Սիմոնին կը նմանիմ: Ըսաւ, թէ Բեթանիոյ մէջ Սիմոնը լաւգոյն սանդալներ կը շինէր եւ քնաշրջիկ էր: Ըսաւ թէ...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - (կտրելով թօնիին շարունակելի խօսքերը): Ուրիշ որո՞նք կը ծանչնաս Քրիստոսի աշակերտներէն:

ԹՕՍԻ - Բայց, Զիֆ, արդեօք բան մը կայ ինձի դէմ: Ես իմ առեւտորով զբաղած նպարավածառ մըն եմ միայն: (Յուզուած:) Ես, ես...

Անցքին մէջ կը լսուի գինովի մը երգին ճայնը՝ «Ովսաննա, Ովսաննա»... Դրան մօտէն անցած ատեն գինովը ներս կը մտնէ, հակառակ ոստիկանի հսկողութեան:

ԳԻՆՈՎԸ - Ծէլօ, Զիֆ: Ան կուգայ, Ան կուգայ, հաւատայ, Զիֆ: Ես ոչ ոքի վնաս ըրի, ես գինով էի ու կ'եր-

գէի: Մեղք չէ երգելը, մենք բոլորս ալ պէտք է երգենք, քանի որ Ան կուգայ: Անիրաւութիւն է զիս բանտարկել այս գիշեր: Կ'ուզէի տեսնել զայն: Ես այսօր չաշխատեցայ Քրիստոսը տեսնելու համար: Ես գինով էի ու կ'երգէի: (Ոստիկանը կը բռնէ ուժեղ կերպով եւ դուրս կը հանէ գինովը:) Բոլորս ալ պէտք է երգենք: (Կը սկսի նորէն երգել «Ովսաննա, Ովսաննա...»:)

ԹՕՍԻ - Բայց ես անմեղ եմ, բոլորովին անմեղ... Ես, ես...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Բան չկայ, Թօնի, միայն թէ՝ այս քաղաքի ոստիկանութիւնը կ'ուզէր կարգ մը բաներ ստուգել, եւ քու անունը տուին ինձ:

ԹՕՍԻ - Քրիստոսի աշակերտներէն կը ծանչնամ Լորան:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Պտղավաճառ Մայքն ալ կը ծանչնա՞ս:

ԹՕՍԻ - Կը ծանչնամ, Զիֆ. մէկ շաբաթ առաջ Յիսուսի քէմփին մէջ տեսայ: Նորէն ձեռնասայլով պտուղ կը ծախէր: Գասպարն ըսաւ, որ ան աւելի շատ Լորային կը հետեւի, քան Քրիստոսին:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ըսել կ'ուզես, թէ ան սիրահարած է Լորային:

ԹՕՍԻ - Ճիշդ այդպէս, Զիֆ: Կը տեսնեմ, որ գիտէք այդ բոլորը: Լինքըն իրապարակին վրայ ապրողներս գիտէինք այդ, երբ Լորան ծամբայ ինկած չէր Քօլորատո երթալու համար: Մայքի պտուղներէն աւելի պառաւ Թէրէզը օգտուեցաւ: (Ժպտալով:) Մեր փողոցի կօշկակար Սէմը աւելի լաւ գիտէ այդ պատմութիւնը:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Լօրան ալ տեսա՞ր վերջերս:

ԹՕԸԻ - Վերջին անգամ, երբ քէմփ գացի, ինձ ըսին, որ ան զբաղած է: Բոլորին կը հասնի, ըլլայ աղքատին, ըլլայ իհանդին: Այնտեղ բոլորն ալ կը սիրեն Լօրան:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Թօնի, այս քաղաքին մէջ յաճախ կը տեսնես Գասպար Սմիթիը:

ԹՕԸԻ - Տեսայ քանի մը անգամ, Զիֆ: Իմ խանութը եկաւ ու խօսեցաւ Քրիստոսի մասին: Ան իհմաշատ լաւ մէկն է: Զիֆ: Ան...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Մօտաւորապէս մէկ շաբաթ առաջ, ըսել կ'ուզեմ անցեալ իինգշաբթի, ժամը 3-ի ատենները, տեսնուած ես Գասպար Սմիթի հետ:

ԹՕԸԻ - Այո. այո. ան եկած էր իր իին պարտքը վճարելու:

ՃԷՔ - (պատասխանելով հեռախօսին): Հէլօ: Թիւ տասնվեց, անմիջապէս: (Զանգին կոճակը կը սեղմէ: Դրան վրայ կ'երեւան երկու ոստիկաններ:) Թիւ 16-ը ծերակալութիւն կայ:

Ոստիկանները կը մեկնին: Կը լսուի վակոնին զանգին ճայնը, որ հետզինուն կը հեռանայ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Թօնի դուն գիտեիր, որ Գասպար Սմիթի ամբողջ երեք ամիս այս քաղաքին մէջ է եւ ծպտուած է որպէս նիկրօքարողիչ:

ԹՕԸԻ - (զարմանքով): Ինչ կ'ըսես, Զիֆ: Միթէ այն նիկը քարողիչը Գասպար Սմիթին է: Ան երկու անգամ խօսած է մեր փոքրիկ

հրապարակը: Բայց Գասպար Սմիթի ըլլալը սատանան անգամ չէր գիտեր: Այդ մասին ան ինձի ոչինչ խօսեցաւ: Բա, սատանան անգամ...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ուրեմն, ան ծպտուած չէր, երբ Դուք տեսաք:

ԹՕԸԻ - Անշուշտ ոչ, անշուշտ ոչ, իին Գասպար Սմիթիը: Գլխէս անգամ չէր կրնար անցնիլ, որ նիկրօքարողիչը Գասպար Սմիթին է: Սատանան անգամ...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Եղքան միայն, թօնի, շնորհակալութիւն: (Թօնին գլխարկին կը հասնի մեկնելու համար:) Հա, թօնի, Քրիստոս այս գիշեր Ձեր տան մէջ պիտի քնանայ, թէ Թովմասի ազարակը պիտի մեկնի:

ԹՕԸԻ - Զգիտեմ, չգիտեմ. կ'ենթադրեմ, թէ ուշ ատեն պիտի մեկնի քաղաքէն: Կ'ըսեն, որ ան քաղաքներուն մէջ չի գիշերեր:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Եղքան միայն, թօնի, շնորհակալութիւն: (Թօնին կը մեկնի ածապարանքով:) Ճէք, հեռ մը նայէ ցանկին մէջ, նայէ, ինչ կրնաս գտնել Լօրա Հէյտընի մասին: Խօսք եղաւ, որ ան քանի մը անգամ ծերբակալուած է այս քաղաքին մէջ:

ՃԷՔ ցանկերուն կը նայի:

ՖՐԵՍՔ - Ինչպէս կ'երեւի, Զիֆ, քաղաքի ոստիկանները շատ լաւ կը ծանչնան այդ կինը: Քիչ առաջ նոյնիսկ կատակ կ'ընէին Պիլ Քէլիին հետ, որ ան իսկ կը ծանչնայ Լօրան:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Զարմանալին այն

է, Ֆրէնք, որ այդ վտանգաւոր պոռնիկը հիմա դարձած է Քրիստոսի շարժման էն կարեւոր ուժը: Անտարակոյս, բան մը կայ այս շարժման մէջ եւ դժուարութեամբ պիտի հասկցովի:

ՃԵԶ - (քարտ մը հանելով ցանկէն՝ կը կարդայ): Լօրա Ըէյտըն, տարիք 26. ծնած Սփրինկֆիլտ, գոյնը՝ շէկ, կշիռը 130. ձերբակալուած 1938-ին, յունուար եւ օգոստոս, անբարոյական արարքի համար: Ձերբակալուած 1939 մայիսին, անբարոյական արարքի համար: Ձերբակալուած...

ՖՐԵՆՔ - Լեգէնսականներու Պատգմ. Ժողովի ամիսն է այդ:

ՃԵԶ - (շարունակելով ընթերցումը): Ձերբակալուած 1939 փետրուարին, աղամանդեայ մատանի մը գորցած ըլլալուն համար կաշիի վաճառական Աբրահամովիչէն:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Այդ այն պոռնիկն է, որ կարտինալը կը սիրէ յիշել Քրիստոսի դէմ խօսած քարոզներուն մէջ:

ՖՐԵՆՔ - Ինչպէս կ'երեւի, կարտինալին համար հաձելի է յիշել այդ անունը, տեսակ մը սիրաբանութիւն: Հա, մոռցայ ըսելու, Զիֆ, որ քիչ առաջ Ճորտըն տան վաճառատան տնօրեն ձան Ուայթը այստեղ էր եւ կ'ուզէր Ձեզ տեսնել:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ինչ ունէր ըսելիք:

ՖՐԵՆՔ - Ծատ բան: Կը հաւատայ, որ կինը յիմարացեր է, որովհետեւ խնձոյք սարքած է մուրացիկներուն հետ:

ՃԵԶ - Ի հարկէ, ատոր համար եկած չէր: Եկած էր ըսելու, որ ոստիկա-

նութիւնը հետապնդէ էժան ծախուած աղամանդները...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - (յուզուած): Զէ, այս բոլորին մէջ բնաւ ֆըն չկայ: Բան մը խախտուած է ամէն տեղ: Զուր տեղը սենաթօր եւ կարտինալ իրար են անցեր: Ժողովն դողովէն դուրս ելլելս յետոյ, կեանքիս մէջ առաջին անգամն է, որ կը փորձուիմ հասկնալ, թէ ո՞րն է ծշմարտութիւնը: Եւ ես տակաւին կը կասկածիմ, որ հասկցած եմ այն ծշմարտութիւն ըսուած անձանօթ թոշունը:

ՖՐԵՆՔ - Բայց, Զիֆ, ինչ պատահեցաւ Զեզի, որ այդպէս կը խօսիք. կարծես թէ շատ սիրելի բարեկամի մը թաղումէն վերադարձեր էք:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ծատ ձիշդ ըսիր, Ֆրէնք: Պէտք չէ ներկայ ըլլայի այդ տեսակ ժողովի մը: Ժողովն դարձիս տեսայ հսկայ բազմութիւն մը, լեցուած քաղաքին մէջ, որ կը սպասէր Քրիստոսի մուտքին: Ինչպէս կը տեսնեմ, ժողովուրդը կը հաւատայ, որ այդ է ծշմարտութիւնը: Ես տեսայ, թէ ինչպէս ծամբաներուն վրայ լեցուած էին կաղեր, կոյրեր, հաշմանդամներ՝ ամէն գոյնէ եւ ցեղէ, եւ կը սպասէին Քրիստոսի անցքին: Ինձ այնպէս թուեցաւ, որ համր մը ինձի կը հայինէր, այո՛, համր մը: Եւ ինչ մեղքս պահեմ, պահ մը վախցայ այդ համրէն:

ՃԵԶ - Բայց Դուք յոգնած կ'երեւիք, Զիֆ. լաւ է որ հանգիստ ընէք այսօր:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Այսօր, երբ արդէն որոշուած է Քրիստոսի ձերբակա-

լութինը այս քաղաքին մէջ եւ այս գիշեր...

ՃԵԶ ԵՎ ՖՐԵՆՔ - (անակնկալի եկած):
Ձերբակալել:

ՖՐԵՆՔ - Բայց ո՞ր յանցանքին համար:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Շատ մը յանցանքներուն համար: Առաջին, որ յայտնի չէ, թէ ան ո՞վ է եւ ո՞ր տեղին եկած է: Երկրորդ, որ քարոզչութիւն կ'ընէ առանց արտօնագրի, բժշկութիւն կ'ընէ նոյնպէս առանց արտօնագրի: Երրորդ, որ ժողովուրդին մէջ խոռվութիւն կը ձգէ եւ կը խանգարէ խաղաղութիւնը: Կը քայքայէ երկրի տնտեսութիւնը, պատերազմներու դէմ կը խօսի վտանգաւոր ձառեր: Եւ, վերջապէս, ուժեղ կասկած կայ, որ թշնամի երկիրներէ դրկուած շատ վտանգաւոր գործակալ մըն է եւ կը սպառնայ այս երկրի գոյութեան:

ՖՐԵՆՔ - Հիմա, Չիֆ, ես ինքս ալ համոզուեցայ, որ այս երկիրն ալ կը պատրաստուի պատերազմի մէջ մտնելու:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Զգիտեմ, չգիտեմ, միայն թէ՝ եթէ ան չձերբակալուի, եւ այս շարժման առաջը չառնուի, երկիրը ոչ միայն պիտի քայքայուի, այլեւ պիտի քանդուի բարոյականը Ուաշինգթոնի, Լինքընի եւ Անտրի Ճէքսընի:

ՖՐԵՆՔ - Անտարակոյս, սենաթօրի ճաղին վերջին մասն է, որ Ձեր միտքը կը նեղէ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Նեղել: Անշուշտ ոչ. մենք, որպէս ամերիկեան պատուաւոր քաղաքացիներ, մեր

պարտականութիւնը պիտի կատարենք, մանաւանդ որ, որպէս ոստիկան, մենք կանչուած ենք այս երկրի շահերը պաշտպանելու եւ խաղաղութեան հսկելու:

ՖՐԵՆՔ - Ըսել կ'ուզէք, այս քաղաքի ոստիկանութեան ձգուեցաւ կատարել այդ սրբազան պարտականութիւնը, երբ զայն կարելի էր հլւնոյց նահանգին մէջ ձերբակալել միեւնոյն յանցանքով: Որքան որ կը յիշեմ, այդ նահանգին մէջ էր, որ ան խօսեցաւ իր նշանաւոր ձառը, ուր արին ու ատելութիւն կը տեսնէր դրօշակներուն վրայ: Այստեղ, եթէ յանցանք մը գործուեցաւ, Ղուկասի ականջը կտրուին է:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Անշուշտ, կրնային ձերբակալել նոյն նահանգին մէջ եւ նոյն օրը, եթէ երկրին մէջ խոռվութիւն յարուցանելու մտավախութիւնը չըլլար:

ՖՐԵՆՔ - Բայց չէ որ բան մը փոխուած չէ, եւ այսօր ալ կայ նոյն մտավախութիւնը:

ՃԵԶ - Եւ մտածել, որ հազարներով հաւատացողներ լեցուած են այս քաղաքին մէջ՝ տեսնելու Քրիստոսը, լսելու անոր քարոզը:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ճիշդ էք, այսօր այդ վտանգը աւելի մեծ է եւ, սակայն մտածուած է նաեւ այդ մասին:

ՖՐԵՆՔ - Այսինքն:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Այսինքն, երբ Քէփթընը ներս մտնէ անծանօթ երիտասարդի մը հետ, մեզ պահ մը առանձին ձգեցէք: Երկար ատեն է, որ իմ մօտիկ գործակից-

ները եղած էք: Գաղտնիք մը յայտնած չեմ ըլլար, երբ ըսեմ, որ Քրիստոսի ծերբակալութիւնը հետզիետէ անհրաժեշտութիւն դարձած է եւ այլեւս առիթ պիտի չտրուի, որ այս յաղթանակով ան մտնէ նաեւ որիշ քաղաքներ: Քրիստոսի ծերբակալութենէն յետոյ միայն սենաթօրը կրնայ մեկնիլ այս քաղաքէն: Ճիշդ գուշակեցիք, Ֆրէնք, ներքին աշխատանք կը տարուի այս երկիրն ալ պատերազմի մէջ հրելու: Նախ՝ կ'ուզեն այդ ճամբայեն վերցնել Քրիստոսը՝ վտանգաւոր գործակալի ծանր յանցանքով: (Լրբանցքէն կը լսուի թղթակից Ճոյի ճայնը:) Խնդրեմ, ոչ մէկ խօսք Ճոյին առջեւ: Այս օրերուն թղթակիցներն ալ իրենց քակարդը կրծող աղուէներ դարձած են:

Ներս կը մտնէ ճօն:

Ճ0 - Հէլօ, Զիֆ, հէլօ բոլորիդ: Օ՞հ, ինչ քազմութիւն... Հա, Զիֆ, իմացայ, որ որոշուած է ծերբակալել Քրիստոսը:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - (անակնկալի եկած): Ձեզ՝ թղթակիցներդ, պէտք է ականջներէն կախել:

Ճ0 - Ինչո՞ւ չէ, Ղուկասի ականջը կտրուելէն ի վեր, կարծես մարդոց ականջները աւելի անպէտ ցցուածքներ դարձեր են: Եւ ինձի այնպէս կը թուի, որ ականջները մարդոց վրայ էն տգեղ մասն են: Ոչինչ, Զիֆ, մի նեղանար. այդ լուրը ինձի համար ոչ մէկ օգուտ ունի, որովհետեւ, ինչպէս Ամերի-

կայի բոլոր թերթերը, նոյնպէս Սընը վաղուց դադրած է հետաքրքրուելք Քրիստոսով:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Բայց ո՞ր տեղէն այդ լուրը:

Ճ0 - Գիտե՞ք, թէ այն սրահին մէջ, ուր ժողով կար, պատին փակած ձանձ մը կար. Էդ ճանձն ըսաւ հովին, հովը ըսաւ մժեղին, մժեղն եկաւ իմ ականջին ճըզ-ճըզ... Մենք՝ թղթակիցներս, կը հասկնանք մժեղին ճայնը եւ այդ ճենով կը գիտնանք գաղտնի լուրերը: Ոչինչ, ոչինչ, ես եկած չեմ ճեր շատ կարեւոր ժողովի մասին տեղեկութիւններ ստանալու: Եկած եմ ճեր գործը դիրացնելու: Եկած եմ Հէմթըն ծովափի ոժիրին մասին տեղեկութիւններ ստանալու:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Դուք՝ թղթակիցներդ, յաձախ դժուարացուցած էք ոստիկանութեան գործը:

Ճ0 - Մի մոռնաք, Զիֆ, ու ճեր գաղտնի ոստականութեան գործը ես ինքս դիրացուցած եմ քանի մը ոճիրներու մէջ: (Յուզուած:) Զգիտեմ, ինչ կ'ուզէք, որ ընենք: Եթէ այսպէս երթայ, տեղական թղթակիցներս եկեղեցիի մուկ պիտի դառնանք: Թերթերը դարձած են վաճառատուններու յայտարարութիւններ: Եթէ փոքրիկ մաս մը կայ ընթերցանութեան համար, այն ալ պատերազմն է բռներ: Այսօր Քրիստոս քաղաք կը մտնէ: Փողոցներուն մէջ լեցուն է հսկայ քազմութիւն մը, որ այս քաղաքը երբեք տեսած է: Եւ Սընը ինչքան տեղ տայ, որ հաւիք: Կահկարասիններու յայտարարու-

թեան տակ կար չորստողնոց լուրջ միայն, այսինքն՝ «Ան մարդը, որ ինքզինք Աստուծոյ որդի կ'անուանէ եւ վտանգաւոր քարոզներ կը խօսի, այսօր քաղաք կը մտնէ. զինքը դիմաւորելու եկած է նիկրօններու բազմութիւն մը»: Երեւակայեցէք, Զիֆ, մօտ երկու ամիս առաջ, երբ երկորի բոլոր թերթերը լեցուած էին Քրիստոսով, ես սկսայ ահագին աշխատանքներ կատարել: Գրեթէ երեք ամբողջական քարոզներ ունիմ, մանաւանդ ագարակի ծամբու քարոզը, որ մինչեւ հիմա ոեւէ տեղ իրատարակուած չէ: Եւ ահա յանկարծ դադրեցան թերթերը Քրիստոսով զբաղելէ, երբ շարժումը հետզիետէ կը ծավալէր եւ ազդած էր Ուոլ Սթրիթի սակարանին վրայ:

ՖՐԵՆՔ - Ճօ, կը տեսնեմ, որ բաւական ջահիլ ես հասկնալու համար: Պատերազմէն եւ Քրիստոսէն աւելի այս առաւօտ շատ աւելի կարեւոր եւ մեծ տառերով խորագիր մը ունէր Սընը:

ՃՕ - Այն, այն, «Քաղաքապետի աղջկան շնիկը կորսուած»:

ՖՐԵՆՔ - Դեռ այդ ոչինչ: Թերթի չորրորդ տպագրութեան մէջ դրուած էր ուրիշ խորագիր մը նոյնքան խոշոր տառերով. «Քաղաքապետի աղջկան շնիկը գտնուած»: Այս առիթով թերթը դրած էր քաղաքապետի ընտանիքին նկարը գտնուած շնիկին հետ: Ծնիկն ալ, մուկի պէս բան մը, լեզուն դուրս ձգած: Այդ փոքրիկ շնիկը թերթին մէջ գրեթէ երկու սինակ կենսագրական գրաւած էր: Զգիտեմ, ով

գրած էր այդ կենսագրականը, բայց վստահ եմ, որ Շէյքսփիրն անգամ պիտի նախանձէր: Հաւատա, Ճօ, Էմփայր Սթէյթ շէնքի ծարտարապետը արժանացած չէր նման պատիի մը: Ինչ մեղքս պահել, ես անունն անգամ չգիտեմ Ուաշինգթոնն կամուրջը շինող ծարտարապետին, բայց լաւ գիտեմ քաղաքապետի աղջկան շնիկին անունը՝ Պլտի: Եւ աւելին. ես գիտեմ նաեւ, թէ ինչ գոյն եւ ծեւ ունի քաղաքապետի աղջկան լոգանքի հագուստը:

ՃՕ - Եհ, կը հասկնամ, պառաւ աղջկի է, առիթ է ժողովրդականութիւն շահելու եւ քիչ մըն ալ խոշոր քիթը պատիկցնելու:

ՖՐԵՆՔ - Ըսել կ'ուզեմ, Ճօ, եկեղեցիի մուկ չդառնալու համար, քաղաքապետի աղջկան շնիկով զբաղէ:

ՃՕ - Ճիշդ ես, Ֆրէնք, ճիշդ. այդ շատ դիւրին է: Ես կրնամ գողնալ շնիկը եւ յետոյ վերադարձնել. մէջտեղ կուգայ արդէն դիւցազներգութիւն մը:

ՖՐԵՆՔ - Ամերիկեան դիւցազներգութիւն:

ՃՕ - Ինչպէս կը տեսնեմ, ուրիշ ծեւ չ'կայ: Իրաւ, Զիֆ, եթէ ստոյգ է Քրիստոսի ձերբակալութիւնը, այն ատեն թերեւս կարենամ ծախել պատմութիւնը էն նշանաւոր պոռնիկին, որ այժմ Քրիստոսի աշակերտն է:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ըսել կ'ուզես Լորայի պատմութիւնը:

ՖՐԵՆՔ - Պիլ Քելլին կրնայ օգտակար ըլլալ քեզի:

ՃՕ - Գիտեմ, որ ան քանի մը անգամ

ձերքակալուած է, կրնայ շատ ծանօթ ըլլալ ոստիկանութեան: Ես նախ գացի այն գինետունը, ուր Լորան իր վերջին երեք տարիները անցուցեր էր: Յետոյ գտայ Լինքըն հրապարակի պառաւ թէրէզը, որուն հետ բնակած է ան: Էն կարեւորը Լորայի անցուցած կեանքն է Զօլօրատօյի մէջ, եւ թէ ինչպէս այս տեղէն երիտասարդ փերեզակ մը կը հետեւի անոր:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - (հետաքրքրուած, աշխատանքէ մը վեր վերցնելով իր գլուխը): Սպասէ, Ճօ, փերեզակը ըսիր: Մայքը, որ սիրահարուած է Լորային:

ՃՕ - Այո, այո, Չիֆ: Կը տեսնեմ, որ գիտէք այդ բոլորը: Կը տեսնեմ, որ այս իմ պատմութիւնով օգտակար պիտի ըլլամ ոստիկանության: Չըլլայ թէ ոստիկանութիւնը կը հետապնդէ նաև Լորան Գասպար Սմիթիին պէս: Իսկապէս Քրիստոսի երկու կարեւոր ուժերն են Գասպարն ու Լորան: Հա, Մայքը իր ձեռնասայլով կը միանայ Զօլօրատօ գնացող ուխտաւորներուն, յետոյ Լորային եւ Քրիստոսին: Այսպէս է, Չիֆ: Բանի որ կը հետքրքրուիս, ըսեմ, որ Լորան կը հասնի Զօլօրատօ, ուր, որպէս գեղեցիկ պոռնիկ, ուխտաւորներու քէմփիին մէջ կը գտնէ շատ մեծ ընդունելութիւն: Կը վարձուի քէմփիին գլխաւոր գինետան մէջ, որպէս երգիչ եւ պարուիի, եւ շատ կարծ ժամանակի մէջ այդ գինետունը կը դառնայ շատ նշանաւոր, որպէս բախտախաղի,

գինովութեան եւ կոուի վայր: Տեղոյն շէրիֆն իսկ կը դառնայ այդ գինետան յածախորդը եւ կը մասնակցի այդ բոլորին: Կարծ ժամանակի մէջ Լորան կը հարստանայ, մատներուն ու ականջներուն ադամանդներ ունենալու աստիճան: Գինետան մէջ յածախ կոիւ կ'ըլլայ Լորային համար: Օր մըն ալ Քրիստոս, իմանալով, որ գինետունը դարձեր է չարի բոյն, կը մտնէ հոն եւ կը խօսի գինետան իր նշանաւոր քարոզը: Քարոզի ընթացքին գինետան գինովներու մէջ կը սկսի իրարանցում: Շէրիֆը նոյնիսկ կ'ապտակէ Քրիստոսը: Լորան, Քրիստոսը տեսնելէ եւ անոր քարոզը լսելէ յետոյ, իր դրամները կը նետէ գինետան ամբոխին, եւ մինչ ամբոխը դրամներ հաւաքելով զբաղած կ'ըլլայ, դուրս կ'ելլէ, Քրիստոսի թեւէն մտած: Այն օրէն ի վեր Լորան Քրիստոսի հետն է:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Եդ լաւ, Ճօ, բայց դուք չըսիք, թէ Մայքը ե՞րբ միացաւ Լորային:

ՃՕ - Հա, կը նկատեմ, որ, Չիֆ, առանձնապէս Մայքով կը հետաքրքրուիք: Չըլլայ թէ Ղուկասի ականջը կտրողն ան ըլլայ: Բայց կ'ըսեն, թէ Գասպար Սմիթին է:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ոչինչ, Ճօ, բաւական իմացայ Լորայի մասին: Լորան կրնամ հասկնալ: Այժմ կ'ուզէի Մայքի մասին աւելի տեղեկութիւններ ստանալ: Ոստիկանութեան հետ կապուած չէ այդ հետաքրքրութիւնս:

ՃՕ - Մայքը, մէկ ամիս բանտը մնա-

լէ յետոյ, կ'արձակուի բանտէն եւ կը միանայ Քրիստոսի խումբին, հլընոյգ նահանգին մէջ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Մայքն, ուրեմն, բանտ ալ մնացեր է:

ՃՕ - Բանտ կը դրուի մէկ ամիսի չափ քէմփի գիննետան մէջ կռուի մասնակցած ըլլալուն համար, այլ խօսքով՝ շէրիֆը կը ձերբակալէ Մայքը՝ Լօրայի հետ աւելի ազատ ըլլալու համար:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Զեմ զարմանար, Ճօ, որ մինչեւ հիմա տեղ գտած չես հրատարակելու համար այդ հետաքրքիր պատմութիւնդ: Վստահ եմ, որ չպիտի ալ հրատարակուի, որովհետեւ շատ է նպաստաւոր Քրիստոսին համար, որովհետեւ Լօրան՝ այդ վտանգաւոր պոռնիկը, այժմ դարձած է մեծ մարդասէր մը: (Կը լսուի ոստիկանի վակոնի զանգին ձայնը:)

ՃՕ - (սրտնեղած): Զգիտեմ, չգիտեմ, ի՞նչ կ'ուզեն, որ հրատարակեն թերթերը, մամուլը: (Դրամապանակէն դուրս հանելով ձեռագիրը:) Այսքան աշխատանք, ուրեմն, ոչինչ տեղը ըրած եմ: Գործերը վատ կ'երթան, Չիֆ: Ծովափի ոճիրի մասին, ինչպէս կ'երեւի, ուրիշ մանրամասնութիւններ չկան, միակ լուրը, որ կարելի է հրատարակել խոշոր խորագրի տակ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ինչպէս չէ, Ֆրէնքը կրնայ տալ քեզ այդ ոճիրի վերջին մանրամասնութիւնները:

ՃՕ - (յափշտակուած): Ուրեմն, կան

մանրամասնութիւններ: (*Մօսենալով Ֆրէնքին:*)

ՖՐԷՆՔ - Գաղտնի ոստիկանութեան դրկուեցաւ այսօր: Աղջկան մէկ սրունքը գտնուած է արդէն: Ազարակապան մը հեռախօսեց, որ ագարակին շունը աղջկան մը սրունքը բերած է՝ գոլպան եւ կօշիկը վրան: Դրացիները յուզումի մէջ են: Հիմա կը մնայ գտնել հեռոսը՝ թերթերուն մէջ նկարագրելու համար անոր փողկապին գոյնը: (*Ոստիկանատան վակոնին ձայնը հետզհետէ աւելի կը մօտենայ:*) Այդ բոլորը այսօր կը կատարուի, եւ ես ուշ կ'իմանամ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Մօտ վեց ժամ առաջ: Գաղտնի ոստիկանութիւնը կ'աշխատի արդէն:

ՃՕ - Եթէ հասցէն տալու ըլլաք, շատ շնորհակալ կ'ըլլամ:

Ֆրէնքը կը գտնէ հասցէն եւ կուտայ ճային: Ճօ անմիջապէս գլխարկը կ'առնէ ու կը հեռանայ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ճիշդ ժամանակին ազատեցանք: Հիմա ուր են, ուր չեն՝ կուգան: Պտղավածառը այն Մայքն է, որ քիչ վերջը այստեղ պիտի գայ:

Ներս կը մտնէ ոստիկան մը:

ՈՍՏԻԿԱՆ - Իսկապէս, Չիֆ, շատ տարօրինակ ձերբակալութիւն մը ըրինք: Ձերբակալուածը հայ մըն է, որ վակոնին մէջ ցոյց տուավ իր եւ նախագահ Ուիլսընի նկարը՝ միասին հանուած:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Այդ ինչպէս:

ՈՍՏԻԿԱՆ - Ինչ ալ ըլլայ, Չիֆ, այն

յանցանքի մը համար ձերբակալուեցաւ: Ուսէն գորգ մը ձգած՝ հրմշտկելով կ'ուզէր բազմութիւնը ձեռքել՝ իր գորգը Քրիստոսի ոտքերուն առջեւ փոելու համար: Պատմեց, որ Քալիֆորնիայէն մինչեւ հոս եկած էր եւ ուշ էր մնացած՝ լաւ տեղ մը ապահովելու համար: Տեսանք, որ, աջ ու ձախ ժողովուրդին հետ կոի ընելով, ճամբան մտնել կ'ուզէր, առանց մտիկ ընելու նոյնիսկ ոստիկանութեան: Ձերբակալուելէ յետոյ, վակոնին մէջ պատմեց, որ այդ գորգի վրայէն անցած են Լոյտ Ճորճը, Քենանսօն, Ուիլսոնը, երբ Վերջին պատերազմէն յետոյ իրարու մօտ եկած են խաղաղութեան համար: Խսկապէս չգիտէի՝ ձերբակալել, թէ ոչ:

ՖՐԵՆՔ - Բայց այդ հայը երկու կարեւոր անձեր մոռցած է՝ կառավարիչը եւ մեր Քէփթընը:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Հա, իմացա՞ր, թէ ուր է հասած Քրիստոսը:

ՈՍՏԻԿԱՆ - Արդէն Մէն փողոցին մէջ մտած է իր աշակերտներով: Խսկ քարոզին համար որպէս յարմար վայր ընտրուած է այս մեր մօսի հանրային պարտէզը: Ինձ ըսին նաեւ, որ գիշերը ագարակի մը մէջ է անցուցեր:

Դուրսէն կը լսուի երաժշտութիւն պէնսի, կ'երգէ ժողովուրդը: Եղջերափողերու ձայները կը շատնան: Մէկը ոչխարի ովմակով, ոստիկանատան ցած պատուհանէն ներս կը փչէ եղջերափողը ու կ'անցնի: Կը լսուին ձայներ՝ «Ան է, ահա, Քրիստո-

սը»: Ոստիկանատան անցքին մէջ կը լսուի քաղաքապետին ձայնը՝ «Էս լաւ եղաւ Քէփթըն»: Ոստիկանապետը փողոցին նայող պատուհանին վարագոյրը վար կ'իջեցնէ:

ՖՐԵՆՔ - (Ճէքին): Ան է Քէփթընին հետ: (Ճէք եւ Ֆրէնք կ'ելլեն իրենց սեղաններէն: Ֆրէնք կը խօսի հոն կեցող ոստիկանին հետ:) Եկուր, խօսինք այդ տարօրինակ հայուն հետ: Խսկապէս այս հայերը տարօրինակ են, կարծես Հրատէն եկած են: Հայ մը կը ձանչնամ, որ մեր փողոցին նպարավածառն է եւ գիտէ լաւ բանաստեղծութիւններ գրել: Տեսնենք, այս հայը թերեւս թոյլ տայ, որ մենք ալ անցնինք այդ նշանաւոր գորգին վրայէն:

Կ'ելլեն դուրս: Ներս կը մտնեն քաղաքապետը, Քէփթընը եւ Մայքը:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Բարեւ, պարոն քաղաքապետ: Ինչպէս կը տեսնեմ, դուք ալ անհրաժեշտ տեսած էք ընկերանալ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ - (նստելով): Սենաթօրը ուզեց, որ ես ալ ընկերանամ Քէփթընին: Այս գիշեր անպայման պէտք է ոլլայ ձերբակալութիւնը: Սենաթօրը պիտի մեկնի վաղն առաւօտ: Յետոյ, այս մեր հայրենասէր երիտասարդը քիչ մը երկշոտ է դարձեր: Արդէն կարգադրուած է, որ իր հայրենասիրական արարտին համար այս երիտասարդին տրուի այնքան

դրամ, որ ամուսնանայ իր շատ սիրած աղջկան՝ Լօրային հետ եւ մանաւանդ ունենայ իր սեփական օթոմօպիլ:

ՄԱՅՔ - (յուզուած): Ես վատ մըն եմ, ես մատնիչ մըն եմ, ես կը հայատամ, որ Քրիստոս Աստուծոյ որդին է:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ուրեմն, եկած ես Աստուծոյ որդին մատնելու:

ՄԱՅՔ - Ճիշդ էք, բայց Լօրան աւելի կը սիրեմ: Ան կը սիրէր զիս, ինչքան ատեն որ միացած չէր Քրիստոսի խումբին: Այն օրէն ի վեր ան մոռցաւ զիս: Ես զգիտեմ, թէ ո՞ր եմ, ինչո՞ւ համար եկած եմ եւ, սակայն, գիտեմ, որ չեմ կրնար ապրիլ առանց Լօրային: Ես կը հայատամ, որ Լօրան պիտի դառնայ ինձի, երբ հեռանայ Քրիստոսին: Ես կրնամ մեծագոյն ոճիրը գործել Լօրային համար, միմիայն Լօրային համար: (*Երաժշտութիւնը աւելի կը մօտենայ:*) Կը վախնամ, որ Քրիստոս ներս մտնէ, այստեղ գայ: Երբ ես աշակերտներէն զատուեցայ գաղտուկ, ինձ կը թուէր, որ անոնց աչքերը կը հալածէին զիս: Ես կը վախնամ Գասպար Սմիթիէն: Այն, այն, ինձ այնպէս թուեցաւ, որ բազմութեան մէջ անոր աչքերը տեսայ, կարծես ան տեսաւ իմ այստեղ մտնելս:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Դուն տեսար Գասպար Սմիթիը:

ՔԵՓԹԸՆ - Չիֆ, ես արդէն վստահեցուցի այս երիտասարդը, որ այդ Գասպար Սմիթիը չի կրնար ըլլալ: Ան արդէն հեռացեր է քաղա-

քէն, Ղուկասի ականջը կտրելէն ի վեր:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Անշուշտ, անշուշտ, ան չի կրնար ըլլալ: Ան կը հետապնդոի արդէն ձերբակալուելու համար:

ՄԱՅՔ - Բայց ան երէկ գիշեր աշակերտներուն հետ էր: Ճաշեցինք միասին: Թիւով 24 հոգի էինք: Ան...

ՔԵՂԱԶԱՊԵՏ - Մի վախնար, տղաս, քեզի ոչ ոք կրնայ վնասել: Վստահ եղիր, որ ասկից յետոյ Լօրան՝ այդ գեղեցիկ աղջիկը, քուկդ պիտի ըլլայ, միմիայն քուկդ:

ՄԱՅՔ - Բայց արդէն կը վախնամ Լօրայէն: Եթէ իմանայ, եթէ իմանայ, կը վախնամ, որ պիտի ատէ զիս: Ես կը վախնամ անոր ատելութենէն:

ՔԵՂԱԶԱՊԵՏ - Ոչ ոք պիտի իմանայ, տղաս: Այս տեղէն ելլելէդ յետոյ նորէն կը միանաս աշակերտներուն:

ՔԵՓԹԸՆ - Դուն ան ըսէ, արդեօք զինուած են Քրիստոսի աշակերտները:

ՄԱՅՔ - Անոնց մօտ զէնք չկայ: Գասպար Սմիթիը միայն սուր մը ունի եւ գիտէ գործածել: Աշակերտներէն շատեր եղած են ծկնորս, շօֆեր, հանքագործ, բայց բոլորն ալ գիտեն լաւ կոռոիլ կամ կոփամարտիլ:

ՔԵՓԹԸՆ - Այլեւս չեմ հասկնար, Չիֆ, ինչո՞ւ այս մտավախութիւնը եւ ինչո՞ւ ի զուր տեղը կը նեղէք այս երկշոտ տղան: Ես կրնամ քանի մը ոստիկաններով ձերբա-

կալել Քրիստոսը այս գիշեր, ուր
ալ ըլլայ ան:

ԶԱՂԱՔԱՊԵՏ - Ծատ վտանգաւոր
խաղ է, Քէփթըն, որ կրնայ շատ
սուղի նստիլ: Սկսուած կոհի մը
կրնայ ընդհանրանալ եւ վերած-
ուիլ զարհութելի կիրքի: Քրիստո-
սի աշակերտներէն աւելի անոր
հետեւող բազմութիւնն է վտան-
գաւորը: Մենք կը գովենք ձեր քա-
ջութիւնը, Քէփթըն: Բայց կան
քաջութիւններ, որ վնասակար են
եւ սխալ: Մենք՝ քաղաքագետ-
ներս, աւելի լաւ կը հասկնանք
այդ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - (գլուխը դարձնե-
լով պատուհանէն եւ աննկատելի
հեզնանքով մը): Ճիշդ է, պարոն
քաղաքապետ: Քաղաքագետները
աւելի լաւ կը հասկնան այդ: Գաղ-
տուկ, զգոյշ, կատուի թաթերով:

ԶԱՂԱՔԱՊԵՏ - Ճիշդ է, շատ զգոյշ,
որ ժողովուրդն իսկ չիմանայ: Ժո-
ղովուրդ ըսածդ կարելի է հեծնել
ջորիի պէս եւ, սակայն, շատ
մտրակ զարնելու չի գար: Կը
տեսնես՝ կը կենայ փայտէ խա-
խուտ կամուրջին վրայ եւ կամ կը
գիծնայ ու քեզ վար կը նետէ
կոնակէն: Ինչ պէտք կայ վտան-
գաւոր կոռուի, երբ այս պատուա-
կան երիտասարդը պիտի օգնէ
Ձեզի: Չէ, Քէփթըն, բնաւ պէտք
չկայ: Ինչպէս ըսաւ այս պատուա-
կան երիտասարդը, Քրիստոս
շրջապատուած է Գասպար
Սմիթի նման թղթ աշակերտնե-
րով: Ինչ ըսիր, պարոն ոստիկա-
նապետ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - (դէմքը դարձնելով

պատուհանէն): Այդպէս է, պարոն
քաղաքապետ, այնպէս պիտի ըլ-
լայ, որ ձերբակալութեան մասին
աշակերտներն իսկ չիմանան:

ՔԷՓԹԸՆ - Բայց չէ՞ որ միշտ աշա-
կերտներով շրջապատուած է:

ԶԱՂԱՔԱՊԵՏ - Այդպէս է, Քէփթըն,
Քրիստոսը պէտք է ձերբակալուի
բոլորովին առանձինն վայրի մը
մէջ: Եւ այս երիտասարդը պիտի
առաջնորդէ ձեզի:

ՄԱՅՔ - Այն, այն: Ան ամէն առաւօտ
արեւը ծագելէ առաջ կը հեռանայ
բաց դաշտի մը մէջ եւ կամ բլորի
մը վրայ ու կը վերադառնայ արե-
տածագին: Ես զինքը լսած չեմ, եւ,
սակայն, կ'ըսեն, որ նա այդ պա-
հուն հաղորդակցութեան մէջ կը
մտնէ երկնքին հետ: Քանի մը ա-
շակերտներ նոյնիսկ լսած են ա-
նոր խօսիլը երկնքին հետ: Այնտեղ է, որ պիտի մօտենանք
Քրիստոսին:

ՔԷՓԹԸՆ - Ուրեմն, արեւը ծագելէ ա-
ռաջ: Բայց եթէ այս քաղաքին մէջ
քնանայ այս գիշեր, այդ նպար-
վածաղին տունը:

ԶԱՂԱՔԱՊԵՏ - Պարոն ոստիկան,
այդ պարագան կարելի է կար-
գագրել իհմա:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - (քիչ մը ուշ պա-
տասխանելով): Անշուշտ, ան-
շուշտ, արեւը ծագելէ առաջ:
Ոստիկանութիւնը լուր ունի ար-
դէն, որ ան այսօրուան քարոզէն
վերջ պիտի այցելէ որբեայրի
կնոջ տունը: Յետոյ աշակերտնե-
րուն հետ միասին պիտի ճաշէ
Անքօնի Սըլէրիի տան մէջ:

ՄԱՅՔ - Եւ ուշ ատեն նորէն պիտի

վերադառնայ հոն, ուր գիշերեց երէկ երեկոյ: Ան շատ սիրեց այդ ընտանիքը: Քրիստոս բնաւ քաղաքին մէջ չի մնար:

Դուրսի երաժշտութիւնը կը դադրի: Ուստիկանապետը, կարծես մոռցած իր գերը, կը կենայ այն պատուհանին առջեւ, ուրիշ կը լսուի Քրիստոսի քարոզը մեղմ ու մաքուր ձայնով:

ՔՐԻՍՏՈՍԻ ՁԱՅՆԸ - Իմ հայրը զիս որիկեց, որովհետեւ աշխարհի չարութիւնը մինչեւ երկնք բարձրացաւ, որովհետեւ այլանդակուեցաւ կերպարանքը իր ստեղծած մարդուն, որ իր պատկերին նմանութիւնն ունէր: Մարդիկ դարձան դիւահարներ ու չգիտցան չարը բարիէն զանազանել: Մարդը նմանեցաւ այն խոզին, որ ծնանելէ յետոյ ետեւ կը դառնայ ու իր ծագերը կ'ուտէ կամ անոնց վրայ կը պառկի: Ինչպէս մայրութիւնը խոզին մէջ, նոյնն է եղեր ծշմարտութիւնը մարդուն մէջ:

ԶԵՓԹԸՆ - Ուրեմն, պէտք է ծերբակալել ազարակին մէջ, երբ ան հեռանայ իր աշակերտներէն, երբ մինակ ըլլայ, արեւը ծագելէն առաջ: Այդ պարագային կարծեմ թէ մէկ ոստիկան կը բաւէ ինծի հետ: Ինչ կ'ըսես, Չիֆ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - (յափշտակուած Քրիստոսի քարոզով): Արեւը ծագելէ առաջ, արեւը ծագելէ առաջ, երբ ան մինակ է:

ՔՐԻՍՏՈՍԻ ՁԱՅՆԸ - ծշմարիտ, ծշմարիտ կ'ըսեմ ծեզի, չար մարդուն վրայ կարելի է կարեկցի

միայն, ինչպէս կը կարեկցիք հաշմանդամին եւ կամ կոյրին: Նախընտրեցէք մարմնով հաշմանդամ ըլլալ քան հոգիով: Հարուստ է եւ երջանիկ այն աղքատը, երբ բարի է: Խսկական երջանկութիւնը բարի զգալուն եւ մտածելուն մէջն է: Բարութիւնը արուեստներու մեծագոյնն է: Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ծեզի, երախային համար աղամանդին եւ ապակիին արժէքը միեւնոյնն է: Եղէք երախաններու պէս: Մարդիկ բարութիւնով միայն կրնան իմ հօրը նմանի եւ վերագտնել անոր կերպարանքը:

ԶԵՓԹԸՆ - Եթէ պատահեցաւ, որ այս գիշեր ուրիշ տեղ գիշերեց...

ԶԱՂԱՔԱՊԵՏ - Այն ատեն այս պատուական երիտասարդը կ'իմանայ եւ լուր կուտայ: Ան իրիկուան 11-ին կը հեռախօսե ինծի, եւ ես իմ կարգին կը հեռախօսեմ ոստիկանատուն: Կարծեմ, այդ աւելի լաւ կ'ըլլայ պարոն ոստիկանապետ: (Զաղաքապետի ծայնին մէջ դժգոհութիւն մը կայ, որովհետեւ ոստիկանապետը պէտք եղած ուշադրութիւնը չի տար:)

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - (գլուխը հեռացնելով պատուհանէն): Այնպէս թող ըլլայ, պարոն քաղաքապետ. Քէփթընը ծեռնհաս է այդ բոլորը կարգադրելու:

ԶԱՂԱՔԱՊԵՏ - (քիչ մը բարձրացնելով ծայնը): Հսել կ'ուզեմ, թէ ժամը 11-ին ես կը հեռախօսեմ ծեզի, եւ դուր կը սպասէք իմ հեռախօսին:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Անշուշտ, անշուշտ, Քէփթընը այստեղ պիտի ըլլայ արդէն: 11-ին աւելի որոշ կ'ըլլայ, թէ ո՞ւր պէտք է հանդիպի այս պատուական երիտասարդին:

ԶԱՂԱՔԱՊԵՏ - Ուրեմն, երթանք, տղաս, որ Քէփթընն ու ոստիկանապետը իրենց գործերուն ըլլան: Անհրաժեշտ է դուրսի ժողովուրդի խաղաղութեան հսկել, իսկ ես քեզ դուրս կը հանեմ ամայի փողոց մը, որ յետոյ միանաս Զրիստոսի խումբին: Մի վախնար, տղաս, ոչ ոք պիտի կասկածի:

Քէփթըն, քաղաքապետ եւ Մայք դուրս ելլելու կը պատրաստուին, երբ դրան վրայ յանկարծ կ'երեւի Գասպար Սմիթի՛ ծաճր դէմքով, խորի մազերով: Մայք յանկարծ կը շփորի եւ ես ես կ'երբայ:

ՄԱՅՔ - Օգնեցեք, օգնեցեք, անկրնայ սպաննել զիս:

ԳԱՍՊԱՐ - Եկած ես Տէրը մատնելու, դուն գարշելի սողուն:

Ոստիկանապետը զարմացած կը հեռանայ պատուհանէն ու կը մօտենայ:

ԶԷՓԹԸՆԸ - Դուք ո՞վ էք, պարոն, եւ ինչ համարձակութեամբ...

ՄԱՅՔ - (իրար անցած): Գասպար Սմիթին է, Գասպար Սմիթի՛:

ԳԱՍՊԱՐ ՍՄԻԹԸ - Ես եմ, Գասպար Սմիթի:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Գասպար Սմիթի:

ԳԱՍՊԱՐ - Ոստիկանութիւնը շատոնց էր, որ կը հետապնդէր զիս: Եկած եմ ինքզինքս ոստիկանու-

թեան յանձնելու, որովհետեւ առայժմ լրացաւ իմ աշխատանքը, եւ ես արդէն տեսայ Զրիստոսի յաղթանակը իմ քաղաքին մէջ:

ԶԷՓԹԸՆԸ - Դուք ձերբակալուած էք, Գասպար Սմիթի:

Քէփթընը երկարէ օղակը կը հանէ ու կ'օղակէ Սմիթի՛ ձեռքը, մինչ ան զարհուրելի աշքերով Մայքին կը նայի, որ կը հեռանայ քաղաքապետին հետ:

ԳԱՍՊԱՐ - Ճիշդ հիմա տեսայ, պարոններ, որ տակաւին գործս լրացուցած չեմ: Ես գործ ունիմ այդ գարշելի սողունին հետ:

ԶԱՂԱՔԱՊԵՏ - (հեռանալու պահուն): Մի վախնար, տղաս, անարդէն ձերբակալուած է:

Քէփթընը ցաւցնելու աստիճան կը դարձնէ երկարէ օղակը:

ԳԱՍՊԱՐ - Կամաց, Քէփթըն, կը տեսնես, որ ես իմ ոտքով եկած եմ:

Քէփթընը իրելով դուրս կը հանէ զայն, մինչ ոստիկանապետը անհամներ, պատուհանէն կը հետեւի Զրիստոսի ձայնին:

ՔՐԻՍՏՈՍԻ ԶԱՅՆԸ - Հաւատացէք, հաւատացէք, մարդիկ իրենց գլուխներուն մէջ կը ստեղծեն դժոխքի ահաւոր պատկերներ դեւերու նման, փշուր մը խաղաղութեան համար: Խաղաղութիւնը ամէն տեղ է եւ այնքան առատ, որքան երկնքի արեւը, եւ մարդիկ չեն տեսներ: Ատենօք ըսած եմ. «Բարի եղէք ձեր դրացին հան-

դէպ»: Այդ չհասկցուեցաւ ամբողջ 2000 տարի: Հիմա կ'ըսեմ. «Եղէք բարի դուք ձեզի հանդէպ»: Եթէ ըմբռնէք դուք ձեզ, պիտի կրնաք ըմբռնել ձեր դրացին ու ձեր ընկերը: Եթէ կ'ուզէք յարգել ձեզ, յարգեցէք ձեր նմանը: Եթէ սիրէք ձեզ, կը սիրէք ձեր նմանը, որովհետեւ այդ նմանը դուք ինքներդ էք եւ ունիք եղունգի միեւնոյն ցաւը: Նախ՝ յաղթեցէք դուք ձեզ ըմբռնելու դժուարութիւնը. այն ատեն յաղթած կ'ըլլաք չարին: Հեշտ է ամէն ինչ ձեզմով սկսիլ: Մի մոռնաք եղունգի ցաւը, որ հեշտ է բոլոր ցաւերէն: Նոյնն է նաեւ ընկերոջդ ցաւը: Երբ ճանչնաք դուք ձեզ, ճանչցած կ'ըլլաք նաեւ իմ հայրը եւ կ'ըլլաք կատարեալ, ինչպէս իմ հայրն է: Մարդոց ձգտումը պէտք է ըլլայ նմանիլ Աստծոյ, եւ այդ նմանութիւնը աւելի շատ հոգեկան է, որովհետեւ Աստուած հոգի է: Կատարեալ հոգին կատարեալ կը դարձնէ նաեւ կերպարանքը:

Ներս կմտնեն Շեք և Ֆրենք ու կը մօտենան նոյն պատուհանին, ուր ոստիկանապետն է:

ՃԷԶ - Ան է, ան, ձիշդ մօտը կեցողը Լորան է:

ՖՐԵՆՔ - Իսկապէս գեղեցիկ է Լորան:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Շատ աւելի գեղեցիկ է, երբ Քրիստոսի մօտ կեցած է:

ՔՐԻՍՏՈՍԻ ՁԱՅՆԸ - Ինչպէս կը

զգաք, ով իմ բարեկամներ, երբ խելագար մը իր կոնակը մտրակէ արինելու աստիճան: Դուք միայն կը գթաք անոր վրայ եւ կ'ուզէք օգնել: Մարդիկ այժմ իրենց կոնակները խարազանող խելագարներու պէս են: Սուրը միայն սպաննելու համար եղած է, թնդանօթը քանդելու համար: Ո՞ր խելագարն է, որ պիտի ուզէ թնդանօթով եկեղեցի մը եւ կամ կամուրջ մը կառուցանել: Ո՞ր երախան է, որ տնկուած ծառ մը կը կտրէ եւ յետոյ կ'ըսէ հօրը. «Հայր իմ, պարտէզին մէջ նոր ծառ մը տնկեցի»: Դուն աւելի կատարեալ չես, քան քու ընկերդ, ով անմիտ, կատարեալը միայն իմ հայրն է: Ինչպէս կը զգաս, ով մարդ, երբ եղունգդ կը ցախի: Դուն այն ատեն գիշերները չես քնանար: Մինչեռ դուն պատերազմ կը սարքես, դիակներ իրարու վրայ կը դիզես վառելու համար: Դուն զաւակները իրենց մօր հոգիներուն մէջ կը թաղես: Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. ինչպէս որ դուք կենդանիներու վրայ կը նայիք, այնպէս ալ երկնքի բնակիչները ձեզ վրայ կը նային:

Ներս կը մտնէ: Պիլ Ջելլիմ՝ կօշիկ-ներուն վրայ նայելով, կը ծոփ, քաշկիմակով կը պրէ կօշիկներու փոշին ու կը խօսի ինքնիրեն:

ՊԻԼ ՋԵԼԼԻՄ - Վերջապէս, կեանքիս մէջ լաւ կօշիկ մը կրցի ունենալ:

ԱՐԱՐՈՒԱԾ 4

Տեսարանն է Թօնիի հիրանոցը: Կիճը՝ տիկին Սրլեքի փողոցը նայող պատուհանին մօս նստած, լուրջա կը մաքրե՛: Տան ետեւի մուտքեն կուզայ տիկին Մարքինին ձայնը, որ «Սուզան» կը կանչէ:

ՏԻԿ. ՍԸԼԵՐԻ - Ներս եկուր, տիկին Մարթին:

Ներս կը մտնէ տիկին Մարքին:

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Սուզան, այսօր մեր տունը ո՞վ գայ, որ հաւանիս:

ՏԻԿ. ՍԸԼԵՐԻ - Նորին, ինչ ունի, տիկին Մարթին. կ'երեւի, եկած է իր մուշտակէ վերարկուն ցոյց տալու:

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Ճիշտ ալ վերարկուով եկաւ, չգիտեմ՝ այս տաք օրերուն ինչ պէտք ունէր մուշտակէ վերարկու հագնելու: (*Հորիայէն մաս մը ինք կ'առնէ մաքրելու համար:*)

ՏԻԿ. ՍԸԼԵՐԻ - Ի հարկէ, վերարկու ինչո՞ւ չունենայ: Հիմա մեր բոլոր յածախորդները սկսած են Տէնին երթալ: Չենք հասկնար, թե ինչ կ'ուզէ այս անպիտան մարդը: Երբ մեր գործը լաւ էր. գիշեր ցորեկ իրար խառնեց, որ Զալին մեր քովէն հանէ: Տիկին Մարթին, եթէ գործերնիս այսպէս երթայ, Թօնին ինքզինքն ալ պիտի կորսնցնէ: Հիմա հետը խօսիլ չ'ըլլար: Միայն քեզի է որ կ'ըսեմ, Թօնին հիմա գէշ կերպով սկսած է պոռուալ քունին մէջ: Ամէն անգամ գլուխը բռնելով կ'անցնի, երբ կը տեսնէ Մէյն փողոցի շէնքը կէս ձգուած:

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Հա, Սուզան, Տէնին կինը այդ շէնքին խօսքն ալ ըրաւ:

ՏԻԿ. ՍԸԼԵՐԻ - Կը տեսնես, տիկին Մարթին, ամէն բան կորսնցուցինք, նորին չենք ազատիր ատոնց ձեռքէն:

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Ես միայն ըսի, որ Թօնին հիմա Քրիստոսի դատով զրաղած է: Այդ է որ շէնքը կիսատ մնացած է:

ՏԻԿ. ՍԸԼԵՐԻ - Ինչպէս լրացնենք շէնքը, տիկին Մարթին. ունեցած չունեցածնիս այդ շէնքին մէջ դրինք, պանքան ալ այլեւս աւելի դրամ չի տար: Այդ շէնքը վաղուց լրացեր էր, եթէ չձերբակալուէր Քրիստոսը: Ձերբակալուելէն յետոյ, դուն ալ գիտես, որ մեր խանութին առեւտուրը ինկաւյանկարծ: Այդ շէնքը կորսուած է, տիկին Մարթին, կորսուած: Որպէս բարեկամի կը խօսիմ քեզի: Անցեալ օր եմման անգամ քիթը վերցնելով անցաւ քովէս: Արդէն երկար ատեն է, որ մեր խանութը չի գար: Տէնին առեւտուր կ'ընէ: Յածախորդներու տեղ մեր խանութը հիմա գաղտնի ոստիկաններ կը մտնեն կ'ելլեն: Անցեալ օրը, երեւակայէ, մէկը եկած էր Թօնիին կշիռը քննելու: Երկու անգամ ազդարարութիւն ստացաւ Թօնին. որպէս թէ լաւ ապրանք չի պահեր եւ խանութը աղտոտ կը ձգէ: Այդ բոլորը այդ անպիտան մարդուն՝ Տէնին մատնութիւններն

են: Երեւակայէ, տիկին Մարթին, փողոցի ոստիկանն անգամ հակառակ կ'երթայ Թօնիի: Այս բոլորը Քրիստոսի ձերբակալութենէն յետոյ կ'ըլլայ: Ինչքան ըսի Թօնիին, օգուտ չըրաւ: Ի՞նքն էր մնացեր Քրիստոսի դատը պաշտպանողը: Երեւակայէ, տիկին Մարթին, Քրիստոսին հետեւոյ երէկի բազմութինը չի կայ հիմա: Ձերբակալութենէն յետոյ, մէջտեղ մնացին Թօնին, աշակերտները եւ մուրացիկները: Ոստիկանութիւնը հիմա սկսած է աշակերտներն ալ հալածել: Ես ի՞նչ պիտի ընեմ, տիկին Մարթին, եթէ Թօնին ալ ձերբակալեն օր մը: (Զայնը արցունքին մէջ թույցնելով:) Այս առտուան Աղնին մէջ կար, որ Ծիբակոյի մէջ կառավարութիւնը տապալելու դաւադրութիւն մը երեւան հանուած է, եւ Քրիստոսի մատը կայ մէջը:

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Այդ դավադրութիւնը ի՞նչ կապ ունի Թօնիին հետ, Սուլան, եւ արդէն այսօր Քրիստոսի դատին վերջին օրն է:

ՏԻԿ. ՍԸԼԵՐԻ - Այն, այն, դատը լմնար, մենք ալ ազատէինք: Քանի շաբաթ է, Թօնին կանոնաւոր խանութ չի մնար, խանութին գործը ծգած է Զալիին վրայ: Եթէ խօսիմ, կոհի կ'ըլլայ տան մէջ: Հիմա Թօնին շատ է փոխւեր, տիկին Մարթին: Որ խօսիմ, կը սկսի պոռալ: 40 անգամ ըսի, մարդ, միս դիր խանութիդ մէջ. հիմա ժողովուրդը միս կը փնտոէ, ու խանութները չեն կրնար հասցնել:

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Բայց այս մէկը

պէտք է ըսես, Սուլան, որ հեռու կենայ մանաւանդ աշակերտներէն: Տէնին կինը բերանս փնտոեց, ուզեց հասկընալ, թէ աշակերտները նորէն հինին պէս կուգան կ'երթան ծեզի: Ըսի, որ քաղաքին մէջ աշակերտ չի մնացեր, բոլորն ալ հեռացեր են:

ՏԻԿ. ՍԸԼԵՐԻ - Ինչքան ըսեմ, օգուտ չ'ըներ: Տակաւին երկու օր առաջ աշակերտներէն երեքը մեր տունը գիշերեցին եւ առտուն շատ կանուխ ծամբայ ինկան՝ ոստիկանութեան աչքն հեռու մնալու համար: (Խոհանոցէն կը լսուի սառցարանին դրան ձայնը: Թօնին ձաշի եկած է: Սուլան ձայնը ցացցնելով:) Այս թող չիմանայ Թօնին:

ՏԻԿ. ՄԱՐԹԻՆ - Ես ալ երթամ՝ Զալիին ձաշը պատրաստեմ: (Մաքրուած լուրիաները տեղատրելով՝ ոսքի կ'ելլէ ու կը մեկնի առջեւի դոնէն:)

ՏԻԿ. ՍԸԼԵՐԻ - (կանչելով): Թօնի...
ԹՈՒԻ - (ձայնին մէջ աճապարանք): Ի՞նչ, բան չունի՞ս ուտելիք:

ՏԻԿ. ՍԸԼԵՐԻ - Հիմա լուրիա պիտի պատրաստեմ:

ԹՈՒԻ - Եթէ Աստուած կամենայ, երկու ժամէն կ'ըլլայ ձաշը: (Ներս կը մտնէ սէնտուիչ մը խածնելով ու կը մօտենայ րէտիոյին լուրեր առնելու համար:) Չէ, ես համբերանք չունիմ, Սուլան: Եթէ այսպէս երթայ, դատն ալ կորսուած էնք տունով տեղով: Դուն լուր չունի՞ս, թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ դուրսը: Մէկ կողմէն թերթ ծախող փոքրիկները Ծիբա-

կօյի դաւադրութիւնը կը պոռան, իսկ միևս կողմէն խոշոր բազմութիւն մը, դատարանին շուրջ հաւաքուած, Քրիստոսի դատապարտութիւնը կը պահանջէ: Ի հարկէ, քեզի համար տարբերութիւն չ'ըներ, ինչո՞ւ պիտի ընէ: (Ռէտիօն կուտայ ճէզի թեթեւ երաժշտութիւն մը:) Կը տեսնեմ, որ շատ ալ հոգդ չէ, երբ Մէն փողոցի շէնքը չլրացած՝ կը կորսնցնենք: Ծատ ալ հոգդ չէ, երբ պարտքերս դժուարութեամբ կրնամ վճարել:

ՏԻԿ. ՍՈՒՇԱՆ - Ինչ կ'ուզէիր, որ ընէի, Թօնի: Դուն հոգ կ'ընես, հերիք է: Անշուշտ, անշուշտ, եթէ այսպէս երթայ, ոստիկանութիւնը օր մըն ալ քեզի պիտի ձերբակալէ:

ԹՕՆԻ - (լուրջ): Այ կին, զիս ինչո՞ւ պիտի ձերբակալեն: Իմ ո՞ր յանցանքիս համար:

ՍՈՒՇԱՆ - Այն յանցանքիդ համար, որ Քրիստոսի դատին պաշտպանութեան ելած ես, երբ ամբողջ ժողովուրդ մը եւ կառավարութիւն մը անոր դատապարտութիւնը կը պահանջեն: Այն յանցանքիդ համար, որ Քրիստոսի աշակերտները քու տանդ մէջ կը պատսպարես:

ԹՕՆԻ - (աչքերը բանալով): Ձէնդ կնիկ, ձէնդ մինչեւ փողոց կը հասնի:

ՍՈՒՇԱՆ - Պիտի ըսեմ, պիտի խօսիմ: Ծէնքդ կորսնցուցիր. եթէ այսպէս երթայ, խանութդ ալ պիտի կորսնցնես: Որ տեղը գայ, Տէնը չես հաւնիր: Ինչքան ալ գէշ

մարդ ըլլայ, նորէն գիտէ իր գործը:

ԹՕՆԻ - (բարկացած): Ըսել է, Տէնը՝ էդ շան ձագը, գործը գիտցող մարդ եղաւ, հա՞: Այսօր դատը որ լրանայ, ես կը սորվեցնեմ, թէ ովէ է գործը գիտցողը: Այդ անհծուած աւազակը հիմա առիթը գտած է իմ կոկորդին չոքելու: Ես շատ լաւ գիտեմ, որ իմ դէմ ինչ որ կը կատարուի՝ այդ շան ձագին մատը կայ: Եւ այդ անհծուածը մարդ ես ըրեր, անունն ալ կուտաս:

ՍՈՒՇԱՆ - Ծատ գէշ մարդ կրնայ ըլլալ եւ, սակայն, լաւ ամուսին եւ հայր է: Մէկ տղան արդէն քոլէծ կը դոկէ, իսկ կնկան էնպէս սուլ մուշտակէ վերարկու մը առած է որ...

ԹՕՆԻ - (աւելի բարկացած կը գոցէ րէտիօն): Ինչպէս կը տեսնեմ, Տէնին կնկան վերարկուն գլխիդ մէջ մտեր՝ քեզ կը նեղէ: Մինչեւ հիմա երեք անգամ ըսիր արդէն. «Տէնը իր կնոջ էնպէս մուշտակէ վերարկու մը առած է որ»... (Այդ ըսած ատեն կ'աշխատի իր ձայնը կնոջ ձայնին նմանեցնել:) Ինչ շուտ մողցար քու վերարկուի, որուն մէկ անգամէն 100 տոլար վճարուեցաւ: «Տէնը իր կնոջ էնպէս սուլ վերարկու մը առած է որ»... (Թօնին բարկացած կ'երթայ՝ պահարանէն կնոջ վերարկուն կը բերէ ու կը նետէ սենեակին յատակը ու կը կոկնէ:) «Տէնը իր կնոջ էնպէս սուլ վերարկու մը առած է որ»... Ծատ շուտ մողցար՝ երբ գործս լաւ էր, երբ դրան վրայ յածախորդներու բազմութիւն մը

կարգի կը սպասէր: Ինչո՞ւ չէ, Թօնին շատ խելացի էր այն օրերուն, երբ տիկին Մարթինին տղան՝ Չալին, իր ձեռքին տակ պահեց, հակառակ Տէնի բոլոր աշխատանքներուն: (*Թէլէֆոնի զանգ:*) Այո, այն, մարդ հեղ մը չսայթաքի. այն ատեն ոչ միայն դրացիի ամուսինը, այլ նոյնիսկ թշնամին լաւ մարդ կ'ըլլայ կնոջ աչքին: (*Խոսելով դէպի թէլէֆոնը կը քալէ:*) Հէյօ, հէյօ, այն, այ եղայր, ո՞ր մնացիք: (*Չայնին մէջ բարութինն դնելով:*) Անշուշտ, անշուշտ, անմիջապէս կուգաք: Ո՞ւ ես հիմա, ո՞ւ են միւսները: Այսօր թող շատ չերեան քաղաքին մէջ, թող ագարակը մնան, տեսնենք, թէ ինչպէս կը վերջանայ դատը: Ինչ, արդէն քաղաքին մէջն են: Ինչ է պատահեր... Այո, այն, կը խօսինք երկար, երբ գաս... Այսօր ես ինքս ալ միտք չունիմ դուրսերը երեւնալու: Նայէ, որ ետենի դռնէն գաս: Դուռը բաց է միշտ: (*Կը գոցէ թէլէֆոնը:*)

ՍՈՒՇԱՆ - Նորեն, նորեն Քրիստոսի աշակերտները:

ԹՕՆԻ - Զէնդ, կնիկ, ձէնդ, թէ չէ...

ՍՈՒՇԱՆ - Գլխիդ փորձանք պիտի բերես: Չեմ ուզեր, Թօնի, չեմ ուզեր: Տէնին կինը մինչեւ տիկին Մարթինին քով եկած է՝ հասկնալու համար, թէ աշակերտները կուգան մեր տունը: Տիկին Մարթինը քիչ առաջ այստեղ կ'ըսէր, որ Թօնին թող զգուշանայ աշակերտներէն:

ԹՕՆԻ - Տիկին Մարթինին ալ, քեզի ալ: Անցեալ օրը տիկին Մարթինն

էր, որ խանութիս մէջ գանգատ կ'ընէր ուրիշ կնոջ մը, որ Չալին լաւ բժշկուած չէ, այսինքն՝ քալած ատեն ոտքը գետին կը քսէ եղեր: Ծատ շուտ մոռցաւ, որ Չալին հաշմանդամ ծնած, գլաններուն վրայ մեծցած է: Նոյն տիկին Մարթինն է, որ ինծի ըսաւ, թէ Տէնը աւելի կը վժարէ Չալին՝ եւ ես ստիպուեցայ աւելցնել Չալիի վժարումը: Այո, այն, զիս բաւական նեղը դրաւ, երբ գործս լաւ էր: Դժոխք դուն ալ, տիկին Մարթինն ալ... (*Աւելի խիստ, սակայն ցած ձայնով:*) Նայէ, Սուզան, քիչ յետոյ Քրիստոսի աշակերտներէն Միշըլը հոս պիտի գայ: Եթէ դժգոհութեան մէկ խօսք ընես, Թօնիին երեսը այլեւս չես տեսներ: Ծէնքը կորսնցուցի, առեւտուրը կորսուելու վրայ է, թող կորսուի նաեւ տունը:

ՍՈՒՇԱՆ - (*լալով աթոռին վրայ կը նստի, գոգնոցը աչքերուն:*) Թօնի, Թօնի, ես չսիրեցի այդ, չսիրեցի ըսելու ձեւի: Թօնի, իմ սիրելի Թօնի, ինչպէս համարձակեցար այդ ըսել:

ԹՕՆԻ - (*Սուզանի լալէն շուար, պահ մը կը մնայ. յետոյ կը մօտենայ, զգածուած ձայնով մը, ուսերը բռնելով, կ'ըսէ:*) Հանդարտէ, Սուզան: Ի հարկէ, այդ տեսակ բան չեմ կրնար ընել: (*Գրկելով վեր կը հանէ ու թեթեւ մը կը համբուրէ եռեսէն:*) Այ, էղպէս, իրաւ որ երախայ ես եղեր: Սուզան, այսօր դատավարութեան վերջին օրն է: Եթէ իսկապէս ան Աստուծոյ որդին է, ցոյց կուտայ իր հրաշքը:

Այն ատեն շէնքն ալ կը լրացնեմ, եւ կ'ունենաս մոլշտակէ վերարկու մը, որ քաղաքին մէջ ունէ կին հագած չէ: (*Սուզան կը հանդարտի եւ գոգնոցով արցունքները կը ցամքեցնէ:*) Ծիմա ուր է, ուր չէ կուգայ Միջըլը: Ըսաւ, որ բաւական մօս տեղէ թէլէֆոն կ'ընէ: (*Թօնին յատակէն կը վերցնէ վերարկուն:*)

ՍՈՒԶԱՆ - Թերեւս Միջըլը պիտի ուզ գէ ձաշել:

ԹՕՆԻ - Անշուշտ, անշուշտ:

ՍՈՒԶԱՆ - Ուրեմն սալաթ ալ պատրաստեմ, Միջըլը կը սիրէ սալաթ:

ԹՕՆԻ - Այդ լաւ կ'ընես, Սուզան: (*Սուզան կը մտնէ խոհանոց. Թօնին կը բանայ րէտիռն լուրերու համար:*)

ՐԵՏԻՌՈՒ - Nea, nea, said the little fox... Nea, nea, you can't catch me.

- Լուր Էսոշիէյթըս Փրէսէն:

ԳԵՐՄԱՆԻԱ - Լոնտոն բոցերու մէջ է, թափուած է 10.000.000 փառուն ռումբ:

ԹՈՒՐՔԻԱ - Երկրաշարժի մեծ ցնցում, մարդկային կորուստ՝ 60000:

ՖՐԱՆՍԱ - Մարդկային կորուստ կը հաշուուի մէկ ու կէս միլիոն: Տիկիններ, դուք շատ լսեցիք Մաժինո եւ Զիկֆրիտ գծերու մասին: Ձեր ձամբու ուղիղ գիծը կը տանի դէպի Աֆրոնիդ լօշընը: Հարցուցէք բոլոր դեղարաններուն: Աֆրոնիդ լօշընը ձեր ձեռքերը փափուկ կը պահէ, հոտաւետ է:

Գեղեցիկ փափուկ ձեռք մը սիրուն կ'երեւի ձեր պարի ընկերոջ ուսին:

ԱՆԳԼԻԱ - Պերլին բոցերու մէջ, Համայնք քարութանդ:

ՌՈՒՍԻԱ - Թիֆո հիանդութիւնը տարածուած է բանակի եւ քաղաքներուն մէջ: Զարհուրելի զոհեր կը խլէ:

ՇԻՔԱԿՈ - Ամերիկեան կառավարութիւնը տապալելու դաւադրութիւն մը երեւան հանուած. առ այժմ ձերբակալուածներու թիվը 15 է:

ՍՓՐԻՆԿՖԻԼՏ - Այս վերջին օրն է Քրիստոսի դատավարութեան: Դատարանին մէջ այդ տարօրինակ մարդը կը մերժէ պատասխանել իրեն տրուած հարցուներուն: Շիքակօյի դաւադրութեան լուրը աւելի խոշոր բազմութիւն հաւաքած է դատարանին եւ փողոցներուն շուրջ: Կը պահանջեն Քրիստոսի դատապարտութիւնը: Տիկիններ, փնտուեցէք Աֆրոնիդը, եթէ գործածէք, պիտի տեսնէք, որ ձեր ձեռքերը պիտի ժայտին ձեր շրթներուն նման:

ՆԻՒ ԵՈՐՔ - Շիքակօյի սպանդանոցներու արժեթղթերը սակարանին մէջ մեծ բարձրացում կ'ունենան: Պաշտօնեաները դժուարութեամբ կը հասնին դրամ առնելու: Երկրի չորս կողմերէն կառաշարներով Շիքակօ կը հասնին խոզ, գառնուկ, եզ, հորթ: (*Երածշտութիւն:*) Nea, Nea, said the little fox...

ՏԻԿԻՆ ՍՈՒԶԱՆ դրան վրայ կերելի բան մը ըսելու համար: Թօնին կը գոցէ բետիօն:

ԹՕՆԻ - Խոստացիր, Սուզան, որ այլեւս այդ անիծուած Տէնին խօսքը չպիտի ընես այս տունին մէջ:

ՍՈՒՅԱՆ - (մատը բերանին տանելով): Հըշ, Թօնի, Միջըլն է, սանդուխսն վեր կ'ելլէ:

ՄԻՉԸԼ - (սանդուխներէն վեր ելած ատեն): Բարեւ, քոյր Սուզան:

ՍՈՒՅԱՆ - Բարեւ, եղբայր Միջըլ, Թօնին ներսն է:

ՄԻՉԸԼ - (Ա. արարի ծեր վակապոնը ներս կը մտնէ՝ լայն գլխարկը հանելով: Ճակատին վրայ կապուած վէրք կայ: Յոգնած է): Բարեւ, եղբայր Անտոնիոս:

ԹՈՒԻ - (կ'օգնէ, որ նստի Միջըլ): Նստէ, եղբայր Միջըլ, ինչ պատահեցաւ ճակատիդ: Չըլլայթէ ճամբան ամբոխի հանդիպեցար:

ՄԻՉԸԼ - Կը պատմեմ, կը պատմեմ, իմ բարի Անտոնիոս: Այս քաղաքին մէջ չպատահեցաւ: Այն տեսակ փողոցներէ անցայ, որ չհանդիպեմ ամբոխին:

ԹՈՒԻ - Հանդարտէ, եղբայր Միջըլ, ես ալ քիչ առաջ դուրսէն եկայ: Ծանօթ ոստիկան մը ըսաւ, որ դուրսերը շատ չերելիմ: Այսօր Շիքակօյի լուրէն յետոյ, աւելի խոշոր բազմութիւն հաւաքուած է դատարանին շուրջ:

ՄԻՉԸԼ - Իսկ իհմա դուրսը դժոխք է դարձեր. փողոցներուն մէջ տեղ տեղ թափօր կազմակերպած են ու կը պահանջեն Քրիստոսի դատապարտութիւնը: Ինձ ըսուեցաւ, որ թափօր կազմակերպողները եղած են եկեղեցիներն ու վաճառատուները: Կը տեսնեմ, եղբայր Անտոնիոս, այս երկուքը որտեղ իրար կը գտնեն. վաճառականներն ու եկեղեցականները...

ԹՈՒԻ - Կորսուած ենք, եղբայր Միջըլ, Քրիստոս կը մերժէ հարցումներուն պատասխանել: Եթէ այսպէս երթայ, մենք կորսուած ենք: Երդուեալները այնպէս պիտի տպաւորուին, որ Քրիստոս յանցաւոր ըլլալուն համար չի պատասխաներ: Դատավարութեան վերջին օրը մէջտեղ եկաւ նաև սա Շիքակօյի լուրը...

ՄԻՉԸԼ - (հանդարտ ու ծանր): Մենք դատը շահած ենք, եղբայր Անտոնիոս, որովհետեւ Քրիստոս ինքն է ծշմարտութիւնն ու կեանքը: Ծշմարտութիւնը չի դատապարտուիր, ինչպէս արեւի լոյսը դժուար է տուփին մէջ պահել: Այսօր եկայ ըսելու, եղբայր Անտոնիոս, որ վաղը պիտի մեկնինք այստեղէն, որովհետեւ մեր դեմ եղած հալածանքները աւելի շատցան: Միայն թէ՝ կ'ուզենք այս գիշեր ծեր յարկին տակ պատսպարուիլ՝ առաւօտ կանուխ ճամբայ ելլելու համար:

ԹՈՒԻ - Անշուշտ, անշուշտ, եղբայր Միջըլ, իմ տունը բաց է ծեր առցեւ: Թիշ առաջ, կինս՝ Սուզանը, մտահոգուած էր ծեր մասին: Հարցուց, թէ՝ ո՞ւր են, չեն երեխիր: Ես լաւագոյնս կ'ընեմ, ծեզ ոստիկանութեան ծեռքը չեմ տար:

ՄԻՉԸԼ - Միայն եօթը հոգի մնացեր ենք, եղբայր Անտոնիոս: Լօրան, Ասկըրը, Էմմանուէլը եւ Պիլը իրենք զիրենք հազիւ կայարան ծգեցին՝ Քօլօրատօ վերադառնալու համար:

ԹՈՒԻ - Կը տեսնեմ, որ բան մը պատահած ըլլալու է, եղբայր Միջըլ:

ՄԻԶԸԼ - Այս առաւոտ Ծիբակօյի այսպէս կոչուած դաւադրութեան լուրը շատ արագ տարածուեցաւ ազգարակի բնակիչներուն մեջ: Նորէն X Boro-ի պատուելիի գլխաւորութեամբ, ամբոխի աղմուկ մը, շուներու հաջոցներով շատցավ մեր շուրջ: Հասկցանք, որ վտանգը մօտեցած է: Բարի քրիստոնեայ կին մը նախապէս լուր տուած էր եղբայր Թովմասին, որ զգոյշ ըլլանք, որովհետեւ X Boro-ի պատուելին իր ժողովուրդով աշակերտներուն վրայ կուգայ: Այդ որ իմացանք՝ դուրս թափուեցանք փրկելու համար նաեւ բարի Թովմասին տունը: Լուրը արդէն ուշ ստացած էինք, սիրելի Անտոնիոս: Վազգվելով ծամբաներուն ու անտառներուն մեջ ինկանք, մինչ ամբոխը մեր կրունկին ետեւն էր՝ զինուած քարով ու փայտով: Նետուած քարէ մը ստացայ սա ծակատիս վէրքը: Լորան, Ասկըրը, Էմմանուիլն եւ ես միասին էինք: Բարի քրիստոնեայ մը մեզ իր օրոմօպիլին մեջ առաւ՝ ազատելու համար բարկացած ամբոխէն: Երբ քաղաք մտանք, անոնք ուղղակի կայարան գացին, իսկ ես բաժնուեցայ՝ միւսներուն միանալու համար: Չէի կրնար հեռանալ, սիրելի Անտոնիոս: Կ'ուզէի դատավարութեան վերջին օրն ալ տեսնել մեր սիրելի վարդապետը: Առայժմ մէջտեղ չկան Լուին, Լոյտն ու Մարիօն: Անոնք հալածանքի ընթացքին անտառ մտան: Երէկ գիշեր երեւան

եկաւ Մայքը, որ կորսուած էր երկար ատեն:

ԹՈՒԻ - Մայքը, այդ ինչպէս: Կասկած կար, չէ, որ ան մատնած է տէրը: Գասպար Սմիթիր խօսած է բանտարկեալի մը, թէ ինչպէս տեսած է իր աչքով...

ՄԻԶԸԼ - Այո, այն, երէկ գիշեր ինքն այդ բոլորը խոստովանեցաւ, եւ քիչ մնաց, որ բարի Թովմասին տան մէջ կոհի ըլլար:

ԹՈՒԻ - Կոհի, աշակերտներո՞ւ մէջ:

ՄԻԶԸԼ - Տեսանք, որ ներս մտաւ Մայքը՝ վրան գլուխը պատուած ու անօթի. ամբողջ երկու շաբաթ անտառներուն մէջ ապրած էր: Կերակուր տուինք, կերաւ: Յետոյ, խոստովանեցաւ Լորային, արցունքուտ աչքերով: Տեսանք, որ Լորան, այդ բարի հրեշտակը, Մայքի վրայ յարձակեցաւ ազնուական վագրի մը պէս: Մայքը հազի ազատեցինք Լորայի զայրոյթէն, եւ Մայքը գիշերով դուրս ինկաւ: Յաջորդ օր Լորան կասկած յայտնեց, որ այդ առնէտը կրնայ մեզ ալ մատնած ըլլալ X Boro-ի պատուելիին:

Կը լսուի դրան զանգը: Սուզան դուրս կուգայ խոհանոցէն:

ՍՈՒԶԱՆ - Թօնի, դուռը անմիջապէս մի բանար: Կրնայ ըլլալ, որ ոստիկան է:

ՄԻԶԸԼ - (արտորանքով): Ուրեմն, ածապարեմ: (Ոտքի կ'ելլէ, Սուզան փողոցի պատուհանէն դուրս կը նայի:)

ՍՈՒԶԱՆ - Երկու մարդեր են քաղաքացիական տարազով:

ՄԻՉԸԼ - Ես պէտք է հեռանամ ետե-
լի դունէն: Ես պէտք է հեռանամ:

ԹՕՆԻ - Սուզանը քեզ համար ծաշ
պատրաստած է, եղբայր Միջը:

ՄԻՉԸԼ - Յետոյ, յետոյ, Ես պէտք է
հեռանամ, շնորհակալութիւն:

ԹՕՆԻ - (դուրս նայելով): Բայց ա-
նոնք ոստիկաններու չեն նմանիր:
(Նորէն զանգի ձայն): Նայէ, Մի-
չըլ, եթէ զիս ձերբակալեցին, տու-
նը այստեղ է...

ՄԻՉԸԼ - Միայն այս գիշեր, միայն
այս գիշեր: Դուրսը ունի տեղ ա-
պահով չէ մեզ համար: Այս տու-
նէն զատ ամէն մարդ թշնամի է
մեզի: Պիտի աշխատիմ տեսնել
վարդապետը դատապարտութե-
նէն վերջ:

ԹՕՆԻ - Միայն թէ, զգոյշ, չիետապն-
դուիք ճամբարներու մէջ: Ետելի
դուռը միշտ բաց պիտի գտնէք:

ՄԻՉԸԼ - (խոհանոցի դռնէն դուրս
ելլելով): Ուրեմն, ցտեսութիւն,
բարի Անտոնիոս եւ բարի Սու-
զան: (Նորէն զանգի ձայն):

ՍՈՒՇԱՆ - (վախցած): Թագնուէ,
թօնի, կրնայ ըլլալ, որ գաղտնի
ոստիկաններ են:

ԹՕՆԻ - Զէ, Սուզան, թող գան, բաց
դուռը, թօնին թագնուող չէ: Թագ-
նուիլը տղամարդու գործ չէ:

Կինը կ'երթայ դուռը բանալու,
մինչ թօնին չորս կողմ կը նայի
քազնուելու համար: Դժուարու-
թեամբ կը մտնէ սոֆային ետեւ: Սանդուխն կը լսուի ոտքերու
ձայներ: Կը խօսի օտարական-
ներէն մէկը:

ՕՏԱՐԱԿԱՆ - Անշուշտ, անշուշտ

ծանօթ ենք ամուսինիդ՝ Անթօնի
Սըլէրի:

ՍՈՒՇԱՆ - (թեթեւ ձայնով ներս
մտած պահուն): Օհ, թօնի...

Թօնին սոֆայի տակէն դուրս
կ'ելլէ այս երեսոյով, որ կարծես
բան մը կը շիներ այնտեղ: Ներս
մտնողները չտեսնալ ձեւացնե-
լով:

ԹՕՆԻ - Հա, Սուզան, սոֆայի այդ
ոտքը ճեղքուած էր:

ՍՈՒՇԱՆ - Թօնի, այս երկու պարոն-
ները Հոլիվուտէն եկած են, կ'ու-
զեն քեզ տեսնել:

ԹՕՆԻ - (աչքերը բաց, զարմացած):
Խնդրեմ, նստեցէք, պարոններ:
Հոլիվուտէն, թօնի Սըլէրիի
տոննը: Պարոններ, շատ քիչ ան-
գամ ձեզ նման հիւրեր մեզի այցե-
լելու պատիւը կ'ընեն:

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԵՆ ՄԵԿԸ - Բայց
դուք Քրիստոսը հիւրասիրեր էք
ծեր այս յարկին տակ:

ԹՕՆԻ - (կասկածելով): Ճիշդ էք,
Քրիստոսը... Բայց դուք ըսիք, որ
Հոլիվուտէն էք:

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԵՆ ՄԵԿԸ - Ան-
շուշտ, ճիշդ երէկ հասանք սա-
ւառնակով: Կասկածելու ինչ կայ:

ԹՕՆԻ - Ի հարկէ, ինչ կայ կասկա-
ծելու: Ուրեմն, ճիշդ եւ ճիշդ Հոլի-
վուտէն: Խնդրեմ, նստեցէք:

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԵՆ ՄԵԿԸ - (եր-
կուքն ալ նստելով): Ճիշդ ու ճիշդ
Հոլիվուտէն: Դուք ինչպէս էք,
պարոն Սըլէրի: (Միկար մը կ'եր-
կարէ:)

ԹՕՆԻ - (տակալին զարմացած): Ու-
րեմն, դուք անձամբ կը ծանչնաք

Քլարկ Կեյպըլը, Զարի Չէփլինը: (*Մտածելով:*) Սուզան, ինչ էր անոր անոնը, որ անցեալ օր մեզ շատ խնդացուց:

ՍՈՒՇԱՆ - (Վարագոյր, աթոռներ շտկելով զբաղած): Ճան Պէրի մօրը ըսել կ'ուզես:

ԹՕՆԻ - (գոհ սիկարը խածնելով): Այո, այո, ան ինչպէս է:

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԵՍ ՄԵԿԸ - Ան նորէն ամուսնացաւ իր առաջին կնոջ հետ:

ԹՕՆԻ - Իր առաջին կնոջ հետ:

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԵՍ ՄԵԿԸ - Այնքան մոռցած էր իր առաջին կինը, որ ան ծանօթացաւ որպէս նոր բարեկամի եւ ամուսնացաւ: (*Օտարականը կ'աշխատի թօնին լաւ տրամադրութեան մէջ դնել:*)

ԹՕՆԻՆ Եւ ՍՈՒՇԱՆԸ - (կը խնդան):

ԹՕՆԻ - Իրաւ, տարօրինակ է սա Հոլիվուտը:

ՍՈՒՇԱՆ - Ուրեմն, կը ձանչնաք նաեւ Կրէտա Կարպօն:

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԵՍ ՄԵԿԸ - Ի հարկէ, ան վերջին անգամ տայըթիշընի մը հետ տեսնուած է: Այս տարի տարօրինակ բան մը պատահեցաւ անոր...

ՍՈՒՇԱՆ - Ամուսնացաւ:

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԵՍ ՄԵԿԸ - Օհ, եթէ ամուսնանար, այլեւս ըսելիք, խօսելիք բան չէր ըլլար, եթէ անմիջապէս ամուսնալուծումի խօսք չըլլար:

ՍՈՒՇԱՆ - Ուրեմն, ինչ կարեւոր բան պատահեցաւ:

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԵՍ ՄԵԿԸ - Կարպօն խնդաց:

ԹՕՆԻ - Մի՞թէ ան բնաւ չի խնդար:

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԵՍ ՄԵԿԸ - Օհ, ոչ, այնքան լուրջ է, որքան հաւկիթի վրայ նստած հաւ մը:

ԹՕՆԻ - Հա, հա, իրաւ տարօրինակ է սա Հոլիվուտը:

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԵՍ ՄԵԿԸ - (ձայնը լրջացնելով): Պարոն Սըլէրի, մենք շատ կարեւոր գործի համար եկած ենք հոս: Մեզ վստահացուցին, որ միայն դուք կրնաք օգտակար ըլլալ: Իմ անոնը Fred Ward է, ներկայացուցիչ հինհվըրսըլ արտադրողական տան: Ընկերոս, Ռոպըրթ Ֆիշըրը, նոյն տան փաստաբանն է:

ԹՕՆԻ - Փաստաբան, բայց պարոններ, Քրիստոսի դատավարութեան համար ես յոգնեցայ փաստաբաններ փնտոելի:

ՖՐԵՏ - Պարոն Սըլէրի, պարոն Ֆիշըրը այն փաստաբաններէն է, որ քեզմէ դրամ չի պահանջեր, այլ, ընդհակառակը, ինք կը ծախսէ դրամը:

ԹՕՆԻ - Ուրեմն, սխալ բան մը կայ:

ՖԻՇԸՐ - Սխալ ոչինչ կայ, պարոն Սըլէրի:

ՖԻՇԸՐ - Մենք եկած ենք, որ օգնես մեզի: Օգնութեանդ համար միայն պիտի վարձատրուիս մեծ գումարով: (*Թօնին եւ կինը իրարու երես կը նային:*) Մենք եկած ենք սաւառնակով մինչեւ Քալիֆորնիային՝ յատկապէս տեսնելու համար Քրիստոսը: Մեզի ըսին, որ այս քաղաքին մէջ ան միայն ձեր յարկին տակ եղած է, եւ միայն դուք էք անոր մօտիկ բարեկամը:

ԹՕՆԻ - (ուրախ): Անշուշտ, անշուշտ, ան իմ հիւրն էր: Ան նախապէս

գիտեր իմ անունը: Ան երկար խօսեցաւ ինձի: Ցիշեց 2000 տարի առաջուան թեթանիացի սանդալ շինող Սիմոնը: Բայց Քրիստոս բանտարկեալ մըն է այսօր եւ կը դատուի:

ՖՐԵՏ - Այդ բոլորը գիտենք, պարոն Սըլէրի: Այս առաօտ կանուխ ուզեցինք տեսնել զինքը:

ԹՕՆԻ - Բանտին մէջ: Բայց ինձմէ զատ ունէ մէկին թոյլ չեն տար, որ տեսնուի Քրիստոսին հետ:

ՖՐԵՏ - Պարոն Սըլէրի, մենք գիտենք, թէ ինչայս պէտք է բանալ բանտին դրոները:

ԹՕՆԻ - Ուրեմն, դուք տեսաք Քրիստոսը:

ՖՐԵՏ - Մենք տեսանք Քրիստոսը եւ, սակայն, մեր բոլոր աշխատանքները ապարդին անցան: Ան մեզի հետ չխօսեցաւ՝ թերեւս կարծելով, որ մենք կասկածելի մարդիկ ենք: Իրեն հետ խօսեցայ ինիվըրսը արտադրողական տան կողմէ: Ինձ այնպէս նայեցաւ, որ կարծես թէ իմացած չէր այդ նշանաւոր ընկերութեան անունը: Ընկերութիւն մը, որուն տարեկան գործառնութիւնը հարիւր միլիոնի կը հասնի:

ԹՕՆԻ - Ըսի՞ք որ Հոլիվուտէն էք:

ՖԻՇԸՐ - Ես ինքս խօսեցայ, որ եկած ենք իր դատը պաշտպանելու, զինքը բանտէն ազատելու, եթէ ինիվըրսը ընկերութեան հետ ստորագրէ պայմանագրութիւն մը:

ԹՕՆԻ - Ինչպէս, ինչպէս, դուք պիտի կրնաք ազատել Քրիստոսը, երբ այսօր արդէն դատին վերջին օրն է:

ՖԻՇԸՐ - Ծատ հեշտ է, պարոն Սըլէրի: Այդ մեր՝ փաստաբաններուս գործն է, եթէ միայն Քրիստոս ուզէ ստորագրել 500.000 տոլարի պայմանագրութիւն մը:

ԹՕՆԻ - (զարմացած, աչքերը բաց): Հինգ հարիւր հազար տոլար:

ՖՐԵՏ Եւ ՖԻՇԸՐ - (միասին): Այո, այո, հինգ հարիւր հազար տոլար:

ՖԻՇԸՐ - Եւ ամերիկեան դրամ:

ՖՐԵՏ - Ալ կրնաս երեակայել, պարոն Սըլէրի, թէ ան ինչ տեսակ մէկը պիտի ըլլայ, որ մերժէ ստորագրել 500.000 տոլարի պայմանագրութիւն մը:

ՖԻՇԸՐ - Մենք արդէն իր դատը շահեցանք այն ատեն, երբ այդ մարդը բանտին մէջ մերժեց մտիկ ընել մէզ, նոյնիսկ 500.000 տոլարանոց պայմանագրութիւնը ներկայացնելէ յետոյ: Այլ խօսքով՝ այդ մարդը բնական մէկը չէ: Զգիտեմ, չգիտեմ, բան մը կայ պակաս պարոն Սըլէրի, այսինքն... (Զգուշութեամբ կ'ըսէ:) Կիսախելագար է:

ԹՕՆԻ - (թերեւ խստութեամբ): Չէ, պարոն փաստաբան, այդ անկարելի է: Թերեւս լաւ բացատրուած չէ, թերեւս հաւատացեր է, որ դուք կասկածելի մարդիկ էք: Խսկապէս ցոյց տուի՞ք պայմանագրութիւնը՝ ընկերութեան կողմէ ստորագրուած:

ՖՐԵՏ - (պայմանագրութիւնը դուրս հանելով թղթապանակէն): Անշուշտ, այնպէս, ինչպէս հիմա ծեզի ցոյց կուտամ: 500.000 տոլար՝ ստորագրուած ընկերութեան կողմէն: Մեզ լսելէ յետոյ, ան նոյ-

նիսկ չնայեցաւ թուղթին վրայ: Եւ ես կը կասկածիմ, որ ան մեր խօսածն իսկ չիմացաւ:

Թօւի - Այդ կրնայ ըլլալ: Այլապէս անկարելի է, պարոններ, 500.000 տոլար: Շատ հաւանական է, որ ան հասկցած չէ: Այն, այո, ինձ ըսին, որ ոստիկանները զինք շատ են չարչարեր: Անոնք երեկ գիշեր անքուն պահած են Քրիստոսը ու ծեծած են, պարոններ, ծեծած են խեղճ Քրիստոսը: Իրեն հետ եղած բանտարկեալ մը, որ գողութեան յանցանքով դատապարտուած է, ինձ պատմեց, որ Քրիստոսի մարմնոյն վրայ կապոյտ գծեր կան: Ես տեսայ զինքը բանտին մէջ. ան ոչինչ ըսաւ ինձի, չդգոհեցաւ: Ես ոոյնիսկ տեսայ կապտութիւնը անոր սիրուն, բարակ դէմքին վրայ: Ան միայն լացաւ, պարոններ, ու խօսեցաւ. «Անտոնիոս, ես միայն կը կարեկցիմ մարդոց վրայ, անոնք չգիտեն, թէ ինչ կ'ընեն. կը կարեկցիմ մանաւանդ անոնց, որոնք բանտարկեցին ու չարչարեցին զիս»: Ես այդ վիճակին մէջ տեսայ զինքը: Հիւանդ էր, հիւանդ, պարոններ: Թէ չէ՝ ինչպէս պիտի չուզէր ստորագրել կէս միլիոն տոլարի պայմանագրութիւն մը: Այդ անկարելի է, անկարելի: Պէտք է տեսնել, պէտք է խօսիլ եւ կարգադրել: Միայն թէ՝ անոր դատին վերջին օրն է այսօր:

ՖՐԵՏ - Ոչինչ, այդ կարեւորութիւն չունի մեզի համար, պարոն Սըլէրի: Ինչպէս կ'երեւի, կորսուած դատ է: Ան թող ստանայ վծիող,

յետոյ մենք կը դիմենք բարձրագոյն դատարանին: Այնտեղ է, որ պիտի արդարացնենք զինքը: Պիտի ազատենք բոլոր տեսակի ամբաստանութիւններէն եւ տէրը պիտի դարձնենք 500.000 տոլարի պայմանագրութեան: Նման դատեր շատ եմ ունեցեր, պարոն Սըլէրի: Այս առաօտ կարդացիր թերթերուն մէջ: Ինչպէս կ'երեւի, Քրիստոսի դէմ պիտի բերեն նաեւ Ծիբակօյի դաւադրութիւնը: Հա, կը տեսնէք, որ մենք յանձն կ'առնենք նաեւ այդ դատն ալ պաշտպանելու գործը:

Թօւի - Անշուշտ, անշուշտ, կը հասկնամ այդ բոլորը:

ՖՐԵՏ - Կը տեսնեմ, որ բաւական խելացի մէկը կ'երեւիս: Ի զոր չէ, պարոն Սըլէրի, որ այսօր քեզի եկած ենք շատ կարեւոր գործի մը համար, եւ դուն գործ ունիս Հոլիվուտի ամենահարուստ ընկերութեան հետ:

Թօւի - (հպարտանքով): Խելացի՞: Ի հարկէ, պարոններ. եթէ Քրիստոսի ձերբակալութիւնը չկատարուէր. Ես այսօր քաղաքի հարուստ առեւտրականներէն մէկն էի:

ՖՐԵՏ - Ահա թէ ինչու ձեզի եկանք, մանաւանդ հնարաւորութիւն չունէինք Քրիստոսի աշակերտներէն մէկն ու մէկը տեսնելու: Մեզ ըսունցաւ նաեւ, որ աշակերտները այս առաօտ յարձակումի ենթարկուած են ինչ որ պատուելիի մարդոց կողմէն:

Թօւի - Ճիշդ է, ճիշդ, քիչ առաջ աշակերտներէն մէկուն հետ տեսնուեցայ:

ՖՐԵՏ - Ուրեմն, դուն կը տեսնուի՞ս անոնց հետ: Գիտե՞ս, թէ ուր թագոնուած են:

Ֆրետ և Ֆիշըր իրարու կը նայիմ:

ԹՕՍԻ - Դուք շատ շիտակ տեղ եկած էք, պարոններ: Եթէ ես չկարգադրեմ, ոչ ոք պիտի կրնայ կարգադրել:

ՖՐԵՏ - Նայէ, պարոն Սրլէրի, եթէ այս գործը գլուխ հանես, ես հեղինակութիւն ունիմ քու անունին բաւական կարեւոր գումար մը, 5000 տոլարի չէք մը ստորագրելու: (*(Թօնիին աչքերը կը փայլատակին:)*) Ուրիշ գործ չունիս ընելիք: Կը բաւէ Քրիստոսի ստորագրութիւնը միայն այս պայմանագրութեան ներքեւ դնել: Այդքան, այդքան միայն:

ԹՕՍԻ - (*ուրախ:*) Տունը պատրաստուած լաւ գինի ունիմ, իտալական գինի: Հըմ, լաւ գինի է: (*(Տիկնոջը ձայն կուտայ:)*) Սուզան: Այդ ինծի ձգեցէք եւ շատ ապահով եղէք: (*(Թօնին ինք ներս կ'երթայ գինի բերելու:)*)

ՖՐԵՏ - Կարծեմ պիտի կրնանք յաջողիլ:

ՖԻՇԾՐ - (*կամաց:*) Ինձ կը թուի, որ կերպով մը պէտք է հասկնալ նաեւ աշակերտներուն տեղը եւ անոնց հետ ալ խօսիլ: Կ'ըսեն, որ առհասարակ աղքատ մարդիկ են:

ԹՕՍԻ - (*ներսէն իր կնոջը:*) Այն ատեն ես ցոյց կուտամ Տէնին իր տեղը: Էնակս ընեմ, որ ինքն ալ չզիտնայ, թէ ուրկից եկած է: Սուզան, այն ատեն կը լրանայ շէնքը:

Ես վաղն իսկ կը խօսիմ պանքային հետ:

Թօնի և Սուզան ներս կը նտնեն գինիի կազմածներով:

ՖՐԵՏ - Տիկին, ամուսինդ բախտաւոր մէկն է: Ան պիտի ստանայ շատ կարեւոր գումար մը եւ կամ, եթէ ուզէ, (*իսմելով գաւաթ մը գինին*) ան կրնայ Քրիստոսի հետ Հոլիվուտ երթալ եւ դեր ստանձնել այն խաղին մէջ, ուր Քրիստոս պիտի կատարէ գլխաւոր դերը: Հըմ, լաւ գինի է:

ՍՈՒԶԱՆ - (*հաճելի ժպիտով:*) Թօնին դերասան:

ԹՕՍԻ - Ի հարկէ, կատակ է որ կ'ըլլայ, ես առեւտրական եմ: Հաւատացէք, պարոններ, դերասանութիւնը իմ գործը չէ: Հա, սիրեցիք գինին: Ուրախ եմ, ես ինքս պատրաստեր եմ:

ՖՐԵՏ - Դերասան դառնալ դժուար բան չէ, պարոն Սրլէրի բաւական է, որ մարդ տայրէքթը ներու ըսածին պէս շարժի: Ի հարկէ, ընկերութիւնը կը հաւատայ, որ քանի մը միլիոններ պիտի շահի ժապաւէնի մը մէջ՝ Քրիստոսին տալով գլխաւոր դերը: Նոյնիսկ իմացայ, որ Քրիստոսին պիտի տան սիրահարի դեր: Յետոյ մեր ընկերութիւնն ունի նաեւ բազմաթիւ թատրոններ: Յիշուած է պայմանագրութեան մէջ, որ ան պիտի այցելէ թատրոնները:

ԹՕՍԻ - Ժողովուրդին քարոզելու համար անշուշտ:

ՖՐԵՏ - Օհ, նչ, ինչ հետաքրքրական է այդ, մանաւանդ որ վտանգաւոր

Են անոր քարոզները, եւ այսօր այդ քարոզներուն համար է, որ կը դատուի: Անոնք կը պատրաստեն վլոտվիլի համար՝ սորվեցնելով քանի մը երգեր...

ԹՕՍԻ - Բայց Քրիստոսին երգելը բնաւ լսած չեմ:

ՖՐԵՏ - (կարծես թեթեւ մը տաքցած գինիէն): Ինչպէս դատը փաստաբանին է, այդ գործն ալ տայրէքրը ըներունն է: Եթէ երգ չեղաւ, տեսնես նաւաստիի հագուստ կը հազցնեն ու պատմել կուտան քանի մը անէքքոտներ՝ խառնելով հետո քանի մը ոտարախ պարեր: Կը տեսնես, որ դժուար չէ անոր դերը: Ինչ դժուար է, օրինակ, անոր հազցնել նիկրօյի դիմակ եւ երգել տալ Ալ Ճանսընի Սընի Պոյլ: Ամէն օր իրարու վրայ թերեւս ժամ մը աշխատանք հազի ունենայ: Ժապաւինէն եւ վոտրվիլէն ան ոչ միայն պիտի առնէ կէս միլիոն, այլ ամբողջական մուտքէն պիտի առնէ տասանորդ: Այդ բոլորը յիշուած է պայմանագրութեան մէջ: Եւ պիտի տեսնես, պարոն Սըլէրի, որ կարծ ժամանակին մէջ Քրիստոս պիտի կրնայ մաքրել մէկ միլիոն զուտ շահ:

ԹՕՍԻ եւ ՍՈՒՇԱՆ - (զարմացած): Մէկ միլիոն...

ԹՕՍԻ - (խանդավառ): Այն, այն, ես անձամբ պիտի տեսնեմ Քրիստոսը եւ պիտի պատմեմ ամէն ինչ: Մէկ միլիոն, մէկ միլիոն: Ան ուրախութեամբ պիտի ուզէ ստորագրել: Էհ, յաջողութիւն: (Կը խմեն գինին՝ գաւաթները իրարու զար-

նելով:) Քրիստոս այն ատեն լաւ պիտի հասկնայ, որ ես եմ իր միակ բարեկամը: Խօսք տուէք, պարոններ, որ այս գործը ոլլայ միայն իմ միջոցով:

ՖՐԵՏ եւ **ՖԻԾԸՐ** - Անշուշտ, անշուշտ:

ՖԻԾԸՐ - Ճիշտ ատոր համար ալ եկած ենք իս: Անշուշտ, պարոն Սըլէրի, գինի խմելու համար չեկանք: Իրաւ, լաւ գինի ունիս:

ԹՕՍԻ - Ծատ հեշտ է պատրաստել այդքան լաւ գինի: Կ'առնես խաղողը...

ՖՐԵՏ - (կտրելով թօնիի խօսքը): Աշխարհի վրայ տակալին տեսնուած չէ այսքան բախստաւոր մէկը, որ մէկ անգամէն իրեն առաջարկուէր կէս միլիոնի պայմանագրութիւն մը: Երեւակայէ, պարոն Սըլէրի. Երէկ մեր իշեւանած հօթէլին մէջ հանդիպեցայ Պարնըմ Սըլքըսի ներկայացուցիչն: Ան ալ նոյն գործով եկած էր: Այսինքն՝ Սըլքըսի կողմէն բերած էր պայմանագրութիւն մը՝ Քրիստոսին ստորագրել տալու համար;

ԹՕՍԻ - (անհամբեր): Ան որքան կ'առաջարկէ:

ՖՐԵՏ - Ծիծաղելի է, երբ ըսեմ, որ եկած էր 6000 տոլարի պայմանագրութիւնով: (Թօնին կը սկսի խնդալ փորով, գինին թափելու աստիճան:) 6000 տոլար:

Կը խնդան եւ միւսները:

ՍՈՒՇԱՆ - Այդ նոյնիսկ վիրաւորական է Քրիստոսի պէտ մէկին համար:

Թօնիմ կը շարտնակէ խնդալ:

ՖՐԵՏ - Ինձ ցոյց տուալ պայմանագրութիւնը: Կատակ չէ, ես աչքովս տեսայ: Միայն թէ՝ չէր գիտեր, թէ ինչ պիտի ըլլայ Քրիստոսի դերը Սլորդուին մէջ: Կ'ենթադրեմ, թե շատ աւելի ծանր աշխատանք պիտի տան:

ՖԻԾԸՐ - (գինիի գաւառը ձեռքը, նոր խնդուք մը մէջտեղ ձգելով): Կը ո՞նայ ըլլալ, որ գետաձիի մը վրայ նստեցնեն:

Կը խնդան բոլորը:

ՖՐԵՏ - Կրնայ ըլլալ, որ տրապէզի վրայ ցատկել վարժեցնեն: Անշուշտ շատ վտանգաւոր աշխատանք է:

Կը խնդան:

ԹՕՆԻ - Եւ էս բոլորի համար՝ 6000 տոլար, հա՞ հա՞ հա՞:

ՖՐԵՏ - Կրնայ ըլլալ, որ քլաւուն դարձնեն եւ գլխարկէն հանել տան նապաստակ կամ առնէտ: Հա՞ հա՞ հա՞ երբ ես ցոյց տուի իմ կէս միլիոնի պայմանագրութիւնը, տեսայ, որ կամաց մը կծկուեցաւ Պարնըմի ներկայացուցիչը եւ անմիջապէս գնաց կայարան՝ մեկնելու համար:

Կը լսուի դրան զանգակը: Բոլորն ալ կը լրեն յանկարծ եւ կ'առնեն լուրջ երեւոյք, կարծես բնաւ գիճի խմած չըլլային:

ՍՈՒՇԱՆ - Կրնայ ըլլալ որ ոստիկան է:

ԹՕՆԻ - Անգամ մը նայէ, պատուհա-

նէն: Թերեւս աշակերտներն են որ սխալմամբ առջենի դռնէն կուգան:

ՖՐԵՏ եւ ՖԻԾԸՐ - Աշակերտները:

ԹՕՆԻ - (*հպարտանքով*): Այո, այն, պարոններ: Ահա թէ ինչո՞ւ հարիրին հարիր վստահ եմ, որ պիտի կրնամ յաջողցնել ձեր գործը, եւ դուք շատ շիտակ տեղն եկած էք:

ՖՐԵՏ - (*Ֆիշըրին*): Եհ, գործերնիս լաւ է, քանի որ աշակերտներուն հետ ալ գործ պիտի ունենանք:

ԹՕՆԻ - (*շատ լուրջ*): Բայց դուք, պարոններ, գործ չունիք աշակերտներուն հետ: Ես է որ պիտի յաջողցնեմ ձեր գործը. Ես է որ պիտի ստանամ իմ արդար բաժինը, միայն թէ կ'ուզեմ անոնց ալ բացատրել՝ ցոյց տալով 500.000-ի պայմանագրութիւնը:

ՖՐԵՏ եւ ՖԻԾԸՐ - Այդ հասկնալի է, պարոն Սըլէրի:

ՖՐԵՏ - Մենք թուղթ կը ստորագրենք, որ այս աշխատանքը պիտի ըլլայ միայն ձեր միջոցով:

ՍՈՒՇԱՆ - (*պատուհանէն նայելէ յետոյ*): Անձանօթ երիտասարդ մըն է:

ԹՕՆԻ - Գնայ, տես, թէ ինչ կ'ուզէ: Եթէ զիս հարցնելու ըլլայ, ըսէք, որ շատ է զբաղած: (*Կառնալով Ֆրէտին եւ Ֆիշըրին*): Ես կը հաւատամ ձեր խօսքերուն, պարոններ: Թիչ վերջ դուք կը տեսնուիք Քրիստոսի աշակերտներուն հետ:

ՍՈՒՇԱՆ - (*ձայնը վարէն կուգայ*): Բայց ան այս պահուս շատ է զբաղած: Կրնաք ուրիշ օր մը գալ: **ԱՆՁԱՆՕԹ** - (*արագ խօսելով վեր լ'ելլէ*): Բայց, տիկին, շատ պատ-

ւաւոր մէկը ինձ քու ամուսինիդ անունն ու հասցէն տուաւ: Ամուսինիդ անունը Անթօնի Սըլէրի է: Այո՞:

ՍՈՒՇԱՆ - Այո, այո՞:

ԱՆԾԱՆՈԹԸ - (կը խօսի արագ): Այո, այո՞ միշտ տեղը եկած եմ, կարեւոր, շատ կարեւոր գործի համար է: Ան պիտի ուզէր տեսնել զիս: Ես ներկայացուցիչն եմ Very Best ընկերութեան: Very Best-ը ամերիկեան առաջնակարգ ընկերութիւն մըն է: (Արագ խօսելով հետզհետէ կը մօտենայ:) Բարեւ, պարոններ: (Տեսնելով ճաղատները:) Հա, կը տեսնեմ, որ ուրիշներ ալ ինձի պէտք ունին: Բարեւ պարոններ, իմ անունը Սէմ Ճանսըն է, Very Best ընկերութեան ներկայացուցիչը: Ընկերութիւն մը, որ ամենավերջին գիտական մեթոսներով կը բուսցնէ գլխի մազեր: Անկարելի է, որ լսած չըլլաք Very Best-ը: Ան բէտիօյին վրայ որոշ ժամեր ունի. կը մասնակցին Ամերիկայի լաւագոյն արթիստները: (Ժամացոյցին նայելով:) Very Best-ի յայտագրին տակալին 2 ժամ 15 վայրկեան կայ: Չե, ներողութիւն, 17-ը: Կօնֆիկիոս կ'ըսէ. «Լաւագոյնէն օգտուիլ իմաստութիւն է»: Այս երկու պարոններն արդեօք լսած չեն Very Best-ը: (Ցոյց տալով Ֆիշըրի եւ Ֆրէտի ճաղատները ու գրպանէն խոշորացոյց մը հանելով՝ կը քննէ փաստաբանին ճաղատը, որ աւելի խոշոր է:) Այո, այո՞ ուշ չէ, պարոն, հաւատացէք, 10 շիշ գործածելով պիտի կրնաք ձեր

մազերը ետ ստանալ: Robert Taylor միշտ այս շիշէն գործածեր է: Մէկ շիշ որպէս նմոյշ կուտամ ձեզի: (Պայուսակը բանալով՝ կը հանէ շիշ մը ու տրցակ մը գրականութիւն եւ կը ցրուէ ներկաներուն՝ կարեւոր մէկ մասը դնելով սեղանին վրայ: Ներկաներուն մէջ անհանգստութիւն: Թօնին անհամբեր բան մը կ'ուզէ ըսել:) Հա, ներողութիւն, պարոններ, կարծեմ չխանգարեցի ձեզ: Կ'ուզեմ ըսել, որ Very Best-ը կարեւոր է, ըսել կ'ուզեմ, գլխի վրայ մազ ունենալը աւելի կարեւոր է, քան գլխի մէջ խելք:

ՖՐԵՏ - Այդ լաւ ըսիք, պարոն. կը տեսնեմ որ բաւական մազեր ունիք:

ՍԷՄ - Անշուշտ, անշուշտ, այդ կը պարտիմ Very Best-ին: Կրնայի պարոն Սըլէրիի ձեռքը սեղմելու պատիւն ունենալ:

ԹՈՒԻ - (բարկացած): Ինչ կ'ուզէք, պարոն, բաւական գլխի ցաւ պատճառեցիք: Կինս ըսաւ կարծեմ, որ զբաղած եմ:

ՍԷՄ - Հա, դուք էք, պարոն Սըլէրին: Այդպէս ալ կը կարծէի, իսկ եւ իսկ դուք: Ինձ կը թուի, որ տեսած եմ ձեզ ուրիշ անգամներ: Շատ ուրախ եմ ծանօթանալուս: (Ձեռքը ժիր սեղմելով:) Ես շատ կարեւոր գործով եկած եմ ձեզ տեսնելու, միայն ձեզ: Իմ անունը Սէմ Ճանսըն է, Very Best ընկերութեան ներկայացուցիչը, որ հեղինակութիւն ունի կարեւոր գործեր կատարելու: Ինձ ըսին, պարոն Սըլէրի, որ ձեր միջոցով կարելի է

Քրիստոսի հետ յարաբերութեան մէջ մտնել: Մեր ընկերութիւնը որոշած է Քրիստոսի առատ ու գեղեցիկ մազերով գլուխը որպէս նկար գործածել շիշերու վրայ: Այո, այո, ձիշդ այս շիշին պէս, որուն վրայ առհիծի մը բաշը կայ: Կ'ըսեն, որ Քրիստոս շատ գեղեցիկ մազեր ունի: Կ'ըսեն նաեւ, որ դժուար է անոր նկարն ունենալ: Իրաւ, զարմանալի է, պարոններ, չէք կարծեր: Ոչինչ, ոչինչ, նկարիչները կ'աշխատին անոր նկարը պատրաստել Very Best-ի շիշերուն համար: Անշուշտ, էն կարեւորը, կ'ուզեն նկարին տակ դնել Քրիստոսի բառերը թէ՝ «Մազերուս համար կը գործածեմ Very Best-ը»: Այդքան, այդքան միայն: Այդ նկարին եւ մէկ նախադասութեան համար կ'ուզեմ արտօնութիւն ստանալ Քրիստոսէն: Փաստաբաններով թուղթեր պատրաստել եւ վճարել լաւ գումար մը: Իրաւ, զարմանալի մէկն է այդ Քրիստոսը, չէք կարծեր: Քիչ մնաց, որ ես ինքս ալ հաւատայի, եթէ երկու օր առաջ, այս քաղաքը եկած ատենս չհանդիպէի Քրիստոսի հօրը, գինով վիճակի մէջ:

ՖԻԾԸՐ - (*հետաքրքրուած, յանկարծ*): Դուք ըսիք, որ Քրիստոսի գինով հօրը հանդիպեցաք:

ՍԵՄ - Այո, այո, ես ըսի, որ Քրիստոսի հօրը հանդիպեցայ:

ԹՕԾԻ - Ի՞նչ կը խօսիս, պարոն. գլխէդ վեր բաներ դուրս մի տար: Միթէ հայր ունի Քրիստոսը: Անոր հայրը Աստուած է: Հասկցա՞ր:

Ինչպէս կը տեսնեմ, you are nut: Անմիջապէս կը հեռանաք այս տեղէն:

ՖԻԾԸՐ - Համբերեցէք, պարոն Սըլէրի, այս պարագան շատ է հետաքրքիր մեր վաղուան դատին համար, մանաւանդ որ հայրը գինով եղած է: (*Դառնալով Սէմին, մեղմ ձայնով*) Ըսէ, երիտասարդ, ինչպէս հանդիպեցար Քրիստոսի գինով հօրը:

ՍԵՄ - (*տեղաւորուելով աթոռին վրայ*): Ինձ ըսաւ, որ անունը Փիթր է: Թերեւս ինքն ալ չի գիտեր մականունը: Երեք ամիս առաջ միայն կ'իմանայ, որ Քրիստոս իր զաւակն է եւ ձամբայ կ'իյնայ այս քաղաքը գալու համար: Պատահաբար վերցուցի ձամբայէն, երբ տեսայ, որ ծեր էր, յոգնած եւ մանաւանդ գինով:

ԹՕԾԻ - Ոչ, պարոններ, այս մարդը կը ստէ:

ՖԻԾԸՐ - Հանդարտէ, պարոն Սըլէրի, կ'ուզեմ, որ բարձրագոյն ատեանին առջեւ դատը մենք շահինք, այ՞ն: Կ'ուզեմ, որ ազատուի Քրիստոսը, այ՞ն:

ԹՕԾԻ - Անշուշտ, անշուշտ:

ՖԻԾԸՐ - (*խորհրդաւոր*): Ուրեմն, մտիկ ըրէ: Աւելի կարեւոր է մեր դատին համար, երբ ան գինովի մը զաւակն է: (*Դառնալով երիտասարդին*) Ծարունակէ, երիտասարդ:

ՍԵՄ - Ներեցէք, պարոն Սըլէրի, ես ծեզ բարկացնելու համար չեկայ այստեղ: Ես եկայ Very Best ընկերության կողմէ: Very Best-ը...

ՖԻԾԸՐ - Ծարունակէ, թէ ինչպէս

տեսար Քրիստոսի հայրը, եւ ո՞ւր է ան այժմ:

ՍԵՄ - Բայց ես չեմ ուզեր բարկացնել պարոն Սրբիքին: Ես Քրիստոսի հօրը խմիչք հասցնելու համար բաւական դրամ ծախսեցի՝ հաւատալով, որ պիտի կրնամ օգտագործել զայն իմ գործին համար: Ըսել կ'ուզեմ, թէ ան պիտի տեսնուիր իր զաւկին հետ եւ պիտի յաջողցնէր իմ գործը: Ինձ կը խոստանար այդ ամէն անգամ, որ կոկորդը ցամքէր: Իմացեր էի, պարոններ, որ Քրիստոսի հետ տեսնուիլը դժուար է, մանաւանդ բանտի եւ դատավարութեան ընթացքին:

ՖԻՇԾՐ - Դուք գիտէք, թէ ուր է հիմա անոր հայրը:

ՍԵՄ - Ան հիմա ինձի այլեւս օգտակար չէ. գինետուններէն դուրս չի գար: Ըսեմ, որ իմ մօտ դրամ ալ չմնաց: Յետոյ ստիպուեցայ ես ինքս միջոցներ փնտոել՝ Քրիստոսի հետ յարաբերութեան մէջ մտնելու համար: Եւ ահա այստեղ եմ: Կը յուսամ, թէ պարոն Սրբիքին պիտի ուզէ կատարել իմ այդ խնդրանքը:

ՖԻՇԾՐ - Իմ անունը Շոպըրթ Ֆիշըր է, փաստաբան: (Քարող տալով:) Իսկ ընկերս՝ Ֆրէտ Վարտ՝ Հոլիվուտէն է, ներկայացուցիչը հինիվերսը արտադրողական տան:

ՍԵՄ - (անակնկալի եկած): Հոլիվուտէն, եւ հինիվերսը արտադրողական տան կողմէն: Պարոններ, ինչքան բախտաւոր եմ, որ ձեզի այստեղ կը տեսնեմ: Իմ անունը Սէմ ձանսըն է, Very Best ընկերու-

թեան ներկայացուցիչը: Very Best-ը... Օ՛հ, ներողութիւն, կը տեսնեմ, որ չեմ կրնար ազատուիլ իմ վաճառորդի խօսքերէն եւ յածախ իմ երազները խանգարողները այս խօսքերն են, պարոններ: Ամէն օր շան պէս կը թափառիմ եւ լեզուս յոգնեցնելէն երեկոյ կ'ընեմ, մինչեւ որ կարենամ ապրուստ մը ծարել: Պարոններ, Very Best ընկերութիւնը զիս այս կողմերը ողկած է Քրիստոսը տեսնելու եւ նկարի արտօնութիւնը յաջողցնելու համար: Եւ ինչ կը կարծէք որ ինձ կը վճարէ, շարաթը միայն 40 տոլար: Եւ ես կը տեսնեմ, որ հազար ու մի դժուարութիւններ կան Քրիստոսի հետ տեսնուելու: Ենք մը որ տեսնեմ եւ կամ խօսիմ հետը՝ վստահ եմ, որ պիտի կրնամ յաջողցնել: Գիտեմ խօսիլ, մանաւանդ գիտեմ համոզել: Փողոցին մէջ կրնամ իմ շուրջ ահագին ժողովուրդ հաւաքել եւ խօսիլ Very Best-ի հրաշքներուն մասին: Պարոններ, կ'ուզեմ ձգել գործս եւ միշտ ալ ուզած եմ բախտ փորձել Հոլիվուտի մէջ եւ, սակայն, ոչ առիթն ունեցած եմ եւ ոչ ալ դրամը: Հասակս լաւ է, մազերս, ինչպէս կը տեսնէք, շատ շատ լաւ: Զիս յածախ Տիք Փավէլին հետ շփոթած են: Աղջկները կը սիրեն զիս: Նայեցէք: (Գրպանէն փոքրիկ տետրակ մը հանելով:) Ցանկիս մէջ առաջմ ունիմ 15 աղջկներու անուններն ու հասցէները եւ կը ջանամ բոլորին հետ պահել ժամադրութիւնս: Կրնամ պարել, կրնամ լողալ,

կրնամ ձի հեծնել, կրնամ երգել ամենավերջին երգերը: Նայէ այս մէկը: (Կը փորձէ երգել վերջին երգերէն մէկը:)

ՖԻՃԸՐ - (Միջամտելով ու կէս ծգելով ձայնը): Նայէ, թէ ինչ պիտի ըստ պարոն փաստաբանը: Յետոյ դժուար չէ քեզ փորձի ենթարկել Հոլիվուտին հետ:

ՍԵՄ - Ես պատրաստ եմ կատարելու ինչ որ ինձ հրամայէ պարոն փաստաբանը:

ՖԻՃԸՐ - Հա, այն պիտի ըստի, որ Քրիստոսին հայրը կը գտնես ու անմիջապէս այստեղ կը բերես:

ՍԵՄ - (Կը մեկնի ամէն բան ծգած): Անմիջապէս եւ թէքսիով: Երկու գինետուններէն մէկուն մէջ ըլլալու է: Այստեղ կ'ըլլանք շուտով:

ՖԻՃԸՐ - Այդ բոլորին ծախսերը կը վճարուին, երիտասարդ պարոն, մինչ ես թէլէֆոն կ'ընեմ տեղական օրաթերթ *Սընին*, որ անմիջապէս թղթակից մը ուղարկէ: (*Թօնիին*.) *Սընէն* ուեւ թիւ կայ այստեղ: Հա, գրքին մէջ ալ կարելի է գտնել:

Տիկին Սույզան խոհանոցէն կը քերէ «Սըն»ին մէկ թիւը, որուն խորագիրն է՝ «Քրիստոսի դատի վերջին օրը: Նոր յայտնութիւններ»: Փաստաբանը կը հարցնէ Թօնիին, թէ կարելի՞ է գործածել թէլէֆոնը:

ԹՕՍԻ - Ի հարկէ, պարոն Ֆիշըր, այդ ալ խօսք է:

ՖԻՃԸՐ - Արդէն պէտք է ընդհանրացնել մեր դատավարութեան հիմունքները եւ դարձնել ծշմարտութիւն: Եւ այս՝ գլխաւոր հի-

մունքներէն մէկն է: (Կը կանչէ թիւ:) Հէլօ: Այս Շոպըրթ Ֆիշըրն է, Հոլիվուտէն: Այո, ուրախ եմ, որ իմացեր էք: Կ'ուզեմ, որ անմիջապէս թղթակից մը ուղարկէք: Զգայացունց տեղեկութիւններ ունինք տալիք Քրիստոսի մասին: Անշուշտ կը հասկնամ, որ Հոլիվուտէն յետոյ, էն կարեւոր այս քաղաքն է դարձեր: Բայց այս մէկը շատ կարեւոր է, բոլորովին նորութիւն: Քրիստոսի հայրը երեւան եկած է: Այն, այն, իսկ եւ իսկ հայրը: Հա, կը տեսնէք, որ շատ է կարեւոր: Մէկն է, որ կեանքին մէջ միշտ գինով եղած է: Այն, այն, ծեր թղթակիցը հօրը հետ է որ պիտի խօսի: Անշուշտ, կարելի է առնել նաև լուսանկարը: Ուրեմն, այդպէս: (*Թօնիին հարցնելով՝ կուտայ տան հասցէն:*)

ԹՕՍԻ - Խնդրեմ, հարցուցէք, թէ դատը մինչեւ ուր հասաւ:

ՖԻՃԸՐ - Հէլօ: Հէլօ, հետաքրքիր է՝ դատը ինչ վիճակի մէջ է: Ուրեմն, պաշտպան փաստաբանը իր ծառը լրացնելու վրայ է: Անշուշտ, անշուշտ, կը հասկնամ, այս ձեռվ դատը կորսուած է: Ծնորհակալութիւն, Good by: (Անմիջապէս դառնալով Ֆրէտին, խանդակառուած:) Հա, պիտի տեսնէք, Ֆրէտ, թէ ինչքան ճիշդ պիտի հիմնաւորուին իմ նախապէս քեզի բացատրած տեսակէտներս:

ՖՐԷՏ - Ուրեմն, լրացած չէ դատը:

ԹՕՍԻ - Հսել է՝ պիտի կորսնցնենք դատը:

ՖԻՃԸՐ - Ոչինչ, պարոն *Սըլէրի*, կրնան դատապարտել եւ այդ,

բան մըն ալ ըսել չէ: Մեր վա-
ղուան դատը ապահովուած դատ
է: Դատապարտուելէ յետոյ ան-
միջապէս դիմումնագիր կը
ներկայացնենք երկրորդ դատա-
վարութեան մը համար: Արդէն
սկսանք մեր աշխատանքին:
Պէտք է ընդհանրացնել, որ Քրիս-
տոս հայր ունի, եւ, որ էն
կարեւորն է, հայրը գինով եղած է
իր կեանքին մէջ:

ԹօՍԻՒ - Բայց, պարոն փաստա-
բան...

ՖԻԾԸՐ - (*Խոսելով Ֆրէտին, ոգեւո-
րուած*): Հիմա, այսպէս է, գինով
հօր պարագան շատ պիտի ուժե-
ղացնէ մեր դատը: Եւ ես առիթով
մը պիտի աշխատիմ հայրը
նստեցնել վկայի աթոռին վրայ եւ
գինով վիճակին մէջ: Ընդունուած
է, որ գինովի մը զաւակը բնական
չէ եւ շատ անգամ խելագարի
նշաններ ցոյց կուտայ: Յետոյ,
տակալին չ'գիտենք, թէ ինչ
բաներ կան կապուած: Այդ ցոյց
պիտի տայ արինի եւ ուղեղային
քննութիւն մը:

ԹօՍԻՒ - (*յուզուած*): Բայց, պարոն
փաստաբան... (Կինը՝ *Սուզան,*
Թօնիին փէշը կը քաշէ, հանդար-
տեցնելու համար:) Բայց ան եր-
բեք խելագար չէ: Քրիստոս,
Աստուծոյ զաւակը, չի կրնար խե-
լագար ըլլալ: Երբեք, երբեք:

ՖԻԾԸՐ - Մի՛ յուզութիք, սիրելի Սըլէ-
րի, այդ արդէն բոլորովին գիտու-
թեան գործն է: Գիտութիւնը շատ
անգամ մեր բաղձանքին բոլորո-
վին հակառակը ցոյց կուտայ:
Մենք յաճախ կը խորհինք եւ կը

սիրենք հաւատալ, որ ունեցած-
նիս թեթեւ գլխու ցաւ է եւ էսկիրիին
կը գործածենք: Եւ, սակայն, լաւ
բժիշկ մը կուգայ ապացուցանե-
լու, որ ուղեղի ուռուցք ունինք, եւ
շատ է մահացու: Այդ պարագա-
յին իսկ չենք ուզեր հաւատալ
բժիշկին:

ՍՈՒՇԱՆ - Ճիշդ էք, պարոն փաս-
տաբան, անգամ մը Թօնին այն-
պէս կարծեց, որ Վարունգ կերաւ
եւ իրեն անմարսողութիւն տուալ:
Երբ բժիշկը եկաւ, անմիջապէս
հիւանդանոց փոխադրեց կոյրա-
դիքի գործողութեան համար:

ՖԻԾԸՐ - Այդպէս է, տիկին: (*Դառ-
նալով Ֆրէտին եւ Թօնին՝ ձայնին
ծառի շեշտ տալով:*) Երբ ես առա-
ջին անգամ տեսայ Քրիստոսը, իմ
տպաւորութիւնը այն էր, որ այս
մարդը կիսախելագար է եւ շատ
ալ պատասխանատու չէ իր ը-
րածներուն եւ ըսածներուն: Ես
պիտի ուզեմ աչք անցընել նաեւ
դատարանի արձանագրութիւն-
ները: Ինչ որ գիտենք, առայժմ,
թերթերու տեղեկագրութիւններն
են: Թերթերը կը գրեն, որ
Քրիստոս չի պատասխաներ դա-
տարանին մէջ: Ուրեմն, երդո-
ւալներուն վրայ այնպէս պիտի
տպաւորէ, որ յանցաւոր է: Չէ,
այդպէս չէ:

ԹօՍԻՒ - Անշուշտ, այդպէս չէ, ես
կրնամ աւելի յանցաւոր ըլլալ,
քան Քրիստոսը: Սարքեցին, պա-
րոն փաստաբան, սարքեցին...

ՖԻԾԸՐ - Պարոն Սըլէրի, ուեւ դա-
տաբան, երբ լսէ վկաները, կը
դատապարտէ ուեւ յանցանք, ո-

րովհետեւ դժուար է սարքուած ըլլալը ապացուցանել: Եւ, սակայն, խելագար մը ապացուցանել գիտութեան գործն է, եւ դժուար է հակառակը ապացուցանել: Քրիստոսի ունեցածը տեսակ մը մտային շփոթ վիճակ է, որ ոչ կրնայ խօսիլ եւ ոչ կրնայ պատասխանել: Անոր միտքը տկար է եւ ընդունակ է նման շփոթներու: Կ'ըսեն, որ ան կուլայ, երբ տեսնէ մարդկային թշուառութիւնը: Պարոն Սըլէրի, արդէն դուք ըսիթ, որ ան լացաւ, երբ քեզ տեսաւ բանտին մէջ ու ներեց զինք բանտարկողներուն:

ԹօՍԻ - (յուզուած): Քրիստոս խելագար, տկարամիտ: Երբեք, պարոն փաստաբան: (*Սուզան կը սեղմէ Թօնիի ուսը:*) Եթէ տկար է, հապա ինչպէս անոր քարոզները, մանաւանդ անոր բժշկութիւնը:

ՖԻԾԸՐ - Կը տեսնեմ, որ շատ կը յուզուիթ, սիրելի Սըլէրի: Հայտացէք, որ այդ ձեռով կը վնասէք դատին: Դուք կ'ուզէք, որ ազատի Քրիստոսը, այ՞ն, եւ մանաւանդ, սիրելի Սըլէրի, դուք կ'ուզէք որ ստորագրուի այս 500.000 տոլարի պայմանագրութիւնն եւ Քրիստոս Հոլիվուտ տարուի: Այ՞ն: Մենք եկած ենք շատ հարուստ ընկերութեան մը կողմէ քու սիրելի բարեկամ՝ Քրիստոսը ազատելու:

ՖՐԵՏ - Սիրելի Սըլէրի, դուք պիտի վնասէք անոր դատին, եթէ ըսէք, որ ան խելագար չէ: Մի մոռնաք, որ մենք եւ դուք շատ ենք մտահոգուած 500.000 տոլարի պայմանագրութեամբ:

ԹօՍԻ - Անշուշտ, անշուշտ, ես ինչպէս կրնամ վնասել անոր դատին: Դուք կը վիրատրէք զիս:

ՖԻԾԸՐ - Այ, հիմա խելօք կը խօսիք: Ուրեմն, կ'ընդունէք, որ Քրիստոս խելագար է:

ԹօՍԻ - (մտածելով եւ դժուարութեամբ ըսելով խօսքերը): Եհ, հասկացող մարդ էք, փաստաբան մարդ էք, մանաւանդ Հոլիվուտէն: Կը ներէք, որ կը յուզուիմ, պարոն փաստաբան: Մենք նպարավածառ ենք, մեր խելքը մինչեւ այդ տեղուանքը չի հասնիր: Խելապէս ես ինքս ալ զարմացայ, երբ ան լացաւ ու ներեց իր թշնամիներուն:

ՖԻԾԸՐ - Հա, հիմա աւելի լաւ հասկցաք: Կը տեսնեմ, որ բաւական հասկցող մարդ էք, եւ մենք ուրախ ենք, որ խելացի մէկու մը հետ գործ ունինք:

ՍՈՒԶԱՆ - Թօնի, սիրելիս, դուն օր մը պիտի ուզէիր ներել Տէնին:

ԹօՍԻ - (բարկութեամբ ոտքի ելլելով): Ներել Տէնին: Չէ, թօնին խելագար չէ: Ես պիտի հասկցնեմ անհիճեալյիմարին իմ նվ ըլլալը:

ՖԻԾԸՐ - (Ֆրէտին): Ինչպէս կը տեսնեմ, մեր բարեկամ թօնիի միտքը մէկ բան միայն կը շփոթէ, թէ ինչպէս ան կը բժշկէ եւ կը քարոզէ: (Ճառի շեշտով խօսելով թէ Թօնիին եւ թէ Ֆրէտին:) Անտարակոյս, Քրիստոս մեծ հանձար մըն է: (Թօնիին.) Ապացոյց, որ ընկերութիւնը այսօր եկած է 500.000 տոլարի պայմանագրութիւն մը ստորագրելու: (Ֆրէտին.)

Խելագարին եւ հանձարին միջեն կայ շատ կարծ գիծ մը, եւ այդ երկուքը կրնան յաճախ խառնուիլ իրար: (*Թօնիին.*) Երբ դուք ներկայ ըլլաք իմ պաշտպանողական ձառին, պիտի տեսնէք, որ իմ փաստերին էն շատը խօսած քարոզներէն վերցուցած եմ՝ մեծ մասով անհասկնալի եւ տկար մտքի գործ: Արդէն երեւան եկաւ, որ անոր հայրը գինովին մէկն է: Ի՞նչ պիտի ըսես, պարոն Սըլէրի, երբ օր մը տիկինդ ելլէ ըսէ, որ զակիդ հայրը դուն չես, այլ Աստուած է:

ԹՕՆԻ - (յուզուած): Ինչպէս թէ... Ինչպէս թէ...

ՖԻԾԸՐ - Ներողութիւն, իբր օրինակ միայն բերի, մի յուզուիք: Այդ տեսակ պարագայի մը, եթէ դուք ձեր կինը դատարան տանիք, դատարանը պիտի ըսէ, որ ձեր կինը խելագար մըն է:

ԹՕՆԻ - Ի հարկէ, ի հարկէ:

ՖԻԾԸՐ - Ուրիշ հարցում մըն ալ, պարոն Սըլէրի: Եթէ Ձեզի ապակի եւ ադամանդ հրամցնեն, ո՞ր կ'առնէք:

ԹՕՆԻ - (խնդալով): Բա, պարոն փաստարան, սկսաք զիս խճնթի տեղ դնել: Անշուշտ ադամանդը կ'առնեմ: Էնքան յիմար չեմ, որ ձեռքս ապակին երկարեմ: Իրան Քրիստոս ըսած է, թէ ինք կը նախընտրէ ապակին:

ՖԻԾԸՐ - Ճիշդ նոյն իմաստով արտայատուած է ծամբուն վրայ խօսած քարոզին մէջ: Նման օրինակներ շատ ունիմ, որ միայն խելագար մը կրնայ ըսել այդպի-

սի բան մը: Մեր ընկերութիւնը պատրաստ է 100.000 տոլար ծախսել Քրիստոսի դատին համար՝ պացուցանելու համար, որ ան պատասխանատու չէ իր ըրածներուն կամ ըսածներուն:

ՖՐԵՏ - Ի հարկէ, այդ բոլորը կ'ըլլան, եթէ միայն յաջողուի այս պայմանագրութիւնը ստորագրել տալ:

ԹՕՆԻ - (վժուական): Դուք այդ մասը ինձի գգեցէք: Վստահ եղէք, որ արդէն յաջողուած է: Աշակերտները կուգան հիմա, եւ ես առանձինն Միջըլին ալ կը խօսիմ: Ան ամենասիրելի աշակերտն է Քրիստոսին եւ իմ մտերիմ բարեկամը: Քիչ առաջ այստեղ էր: Երեւակայեցէք, որ նախկին վակապոն մը եղած է եւ նոյնիսկ գիշեր մը այս մեր Լինքըն հրապարակը քնացեր է: Վստահ եմ, որ ան շատ լաւ կը հասկնայ պայմանագրութեան արժէքը:

Դուքսէն զանգ կը լսուի:

ԵՐԵՋԸ ՄԻԱՍԻՆ - Եկան, կարծեմ:

ՍՈՒՇԱՆ - (պատուիանէն դուրս կը նայի): Երկու հոգի են:

ՖԻԾԸՐ - Սէմը եւ Քրիստոսի հայրն ըլլալու են:

ԹՕՆԻ - (դուրս նայելով): Զէ, չէ, ինչպէս կ'երեւի, թերթին կողմէն են:

Սուզան վարէն կը բանայ դուռը:

ՆԵՐՍ - կը մտնեն քրթակիցն ու պատկերահանը: Պատկերահանը աճապարանքով իրարու ետեւէ քանի մը պատկերմեր կը հանի՝ «այս կողմ», «Ժայռ», «Քաղաք», «Քանդարտ», ըսելով: Պատկեր-

**Յերք հանելին վերջ կը նայի սե-
նակին մէջ եղողմերուն:**

**ՊԱՏԿԵՐԱՀԱՆ-
ՔՆՎ:** Ձեզմէ ո՞րն է Քրիստոսի
հայրը:

ՖՐԵՏ - Քիչ մը համբերեցէք, հիմա
կուգայ: Նստեցէք, խնդրեմ:

ԹՕՆԻ - Նստեցէք, խնդրեմ:

ԹՂԹԱԿԻՑ ՃՕ - Կը յուսամ թէ չ'ու-
շանար: Այսօր մանաւանդ այն-
քան աշխատանք կայ: Իսկապէս
աշխատանքներն իրար են ան-
ցեր, եւ մենք հազի ժամանակ կը
ծարենք հասնելու: Նախընտրեցի
այստեղ գալ, թեթեւ ինձի ըսուն-
ցաւ, որ Թովմասի Ազարակը եր-
թամ:

ԹՕՆԻ - (անհամբեր): Ի՞նչ է պատա-
հեր Թովմասի Ազարակը:

ՃՕ - Այստեղ, անտառին մէջ աշա-
կերտներէն մէկուն դիակը
գտնուած է՝ ծառէն կախուած:

ԹՕՆԻ - Ի՞նչ ըսիք, պարոն թղթակից,
Քրիստոսի աշակերտներէն ո՞ր
մէկն է ծառէն կախուած:

ՃՕ - Մայքն է, Լօրայի սիրահարը:

ԹՕՆԻ - Կը ծանչնամ, կը ծանչնամ...

ՃՕ - Ի հարկէ, դուք լաւ կը ծանչնաք
ատոնք բոլորը, պարոն Սըլէրի:
Հինքըն հրապարակը բաւական
բաժին ունի էս Քրիստոսի շարժ-
ման մէջ:

ԹՕՆԻ - Ի՞նչ կը մտածեն այդ դիակի
մասին, պարոն թղթակից:

ՃՕ - Իրաւ, մանրամասնութիւններ
չեմ գիտեր, դիակը կէս ժամ ա-
ռաջ գտնուած է: Երէկ Քրիստոսի
աշակերտները այնտեղ եղած են:
Ազարակապան Թովմասը պատ-
մած է ոստիկանութեան, որ ուշ

ատեն Մայք տունէն ներս կը
մտնէ, կը խոստովանի աշա-
կերտներուն եւ Լօրային, թէ ինք
մատնած է Քրիստոսը: Այս որ կը
լսէ Լօրան՝ Մայքին վրայ կը յար-
ծակի: Էղքան, էղքան: Ատեն մը
վերջ ազարակապան Թովմաս իր
անտառէն անցած ատեն կը գտնէ
Մայքի դիակը: Նախ՝ այն կարծի-
քը կար, որ Լօրան կատարած է
այդ ոճիրը: Վերջէն դիազննութիւ-
նը ցոյց տուած է, որ եղածը ինք-
նասպանութիւն է:

ԹՕՆԻ - Անշուշտ, ինքնասպանու-
թիւն ըլլալու է: Կ'երեւի, մատնու-
թիւնը իր գլխուն զարկած է:

ՃՕ - (ԺԱՄԱԳԵՂՋՐ ՆԱՅԵԼՈՎ): Կը յու-
սամ, թէ երկար չպիտի սպասեմ,
որովհետեւ կ'ուզեմ հասնիլ Թով-
մասի Ազարակը՝ այդ կարեւոր
պատահարին մանրամասնու-
թիւնները տալու համար: Իսկա-
պէս այնքան աշխատանք կայ, որ
շնորհքով ճաշ մը ընելու իսկ ժա-
մանակ ունեցած չեմ: Կը տեսնէք,
որ Սընը կրկնակ ծաւալով հիմա
լոյս կը տեսնէ, եւ այնքան պա-
հանջ կայ, որ օրական 5 անգամ
տպագրութիւն կ'ունենայ: Եւ նոյ-
նիսկ ժամանակ չունեցայ ձեզի
հանդիպելու, պարոններ, թէեւ
հօթէլը հեռախոսեցի քանի մը
անգամ: Եթէ չեմ սխալիր, Ըոլի-
վուտէն, հինիվըրսըլ ընկերութեան
ներկայացուցիչներէն էք եւ եկած
էք մեծ գումարով մը պայմանագ-
րութիւն կնքելու Քրիստոսի հետ:
Ուրախ եմ ծանօթանալուս: (Կը
սեղմէ ծեռքերը:) Ձեր գալու լուրը
արդէն երեւցաւ մեր թերթին մէջ:

(Լուսանկարիչը նորէն քանի մը լուսանկարներ կը հանէ: Թղթակիցը, սեղանին վրայ տեսնելով պայմանագրութիւնը, կը վերցնէ:) Հա, կ'երեւի, այս է պայմանագրութիւնը: Բա, 500.000 տոլար... Իսկապէս հետաքրքիր է: Միայն խնդրանք մը: Կրնանք պայմանագրութիւնը գործածել մեր թերթին համար:

Թղթակիցը լայն կը քանայ պայմանագրութիւնը տեսնելով հետաքրքրութեամբ եւ առիթ կուտայ, որ պատկերահանը լուսանկարէ: Պատկերահանը այնքան արագ կ'ընէ, որ չի նկատուիր, որ լուսանկարուած է պայմանագրութիւնը:

ՖԻԾԸՐ - (յուզուած): Կը յուսամ չլուսանկարեցիք պայմանագրութիւնը:

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԸ - Օհ, ոչ, նկարը պիտի ըլլայ՝ «Սըն»ի թղթակիցը բռնած է պայմանագրութիւնը:

ՖԻԾԸՐ - Առաջմն կարիք չկայ պայմանագրութիւնը դնելով թերթին մէջ, մանաւանդ որ ստորագրուած չէ Քրիստոսի կողմէ: Այդ կարելի է ստորագրուելէ յետոյ միայն:

ԹՕԸՒ - Հա, իսկապէս Մայքի ինքնասպանութիւնը ուշացուց իմ հարցումը: Ինչպէս կ'երեւի, դուք ուղղակի դատարանէն կուգաք:

ՖԻԾԸՐ - Այո, այն, ինչպէս անցաւ դատավարութիւնը:

ՃՕ - Ճառերը լրացան, եւ դատը արդէն երդուեալներուն ձեռքն էր, երբ ես այստեղ դրկուեցայ հեռախօսով: Իմ եւ բոլորին տպաւորութիւնն այն էր, որ դատը կորսուած

է: Քրիստոսի պաշտպան փաստաբանը, որ կողմ դարձաւ, նպաստաւոր բան մը չկրցաւ մէջտեղ թերել: Իսկ դատարանը իր ձառին մէջ այնպէս ներկայացուց, որ այդ մարդը գաղթային օրէնքի հակառակ այս երկիրը մտած է, որ եկած է երկրի բարոյականը քանդելու պատերազմի դէմ. որ դրկուած է թշնամի պետութեան մը կողմէն. որ եկած է քայլքայելու նաև երկրի տնտեսութիւնը...

ԹՕԸՒ - Ես գիտէի, ես գիտէի, որ պաշտպան փաստարանը կարող մէկը չէր:

ՃՕ - Զուր տեղը, պարոն Սըլէրի, պարոն Պրաուն քաղաքի լաւ փաստարաններէն է, եւ, սակայն, աշխարհի լաւագոյն փաստարանն ալ ըլլար, աւելին չպիտի կրնար ընել:

ՖԻԾԸՐ - Հիմա որ հայրը գտնուած է, դատախազի խօսած ձառին կէս մասը այլեւս ջուրը կ'իյնայ: Դուք այն ըսէք, պարոն թղթակից, ուրիշ ինչ բանն էր, որ կորսնցուց դատը:

ՃՕ - Գլխաւոր թերին, ինքը Քրիստոսն էր, այլապէս դատախազին ձառը այդքան մեծ ազդեցութիւն չպիտի զգէր: Կարծեմ, այս Քրիստոս ըսուածը բաւական խելքէ պակաս մէկն է: (Ֆիշը եւ Ֆրէտ իրարու կը նային:) Ամբողջ դատի ընթացքին ոչ մէկ պատախան տուաւ իրեն տրուած հարցումներուն: Այն հարցումին, թէ՝ «Դո՞ւն ես այն Քրիստոսը, որ երկրորդ անգամ պիտի գար», պատախանեց, երկու բառով՝ «Դուք ը-

սիբ»: Այդ լուր մնալը, արդէն դատը դարձուց անհետաքրքիր: Կրնաք երեակայել, որ 50.000 ժողովուրդ հաւաքուի կոփամարտ մը տեսնելու եւ կոռուղներէն մէկը իյնայ առաջին րառնտին: Հա, երկրորդ անգամ ալ ծայն տուաւ, ան ալ ինքնիրեն, ուրիշներ չլսեցին: Եւ որովհետեւ որպէս թղթակից ես շատ մօտ էի, լսեցի: Ճիշտ այն պահուն, երբ իր պաշտպան փաստաբանը իր պաշտպանողական ծառը կը խօսէր, տեսայ որ այս Քրիստոսը աչքերը վեր վերցուց եւ ըսաւ. «Ներէ, Տէր, որովհետեւ զգիտեն, թէ ինչ կ'ընեն»: I think that man is a nut: (Ֆիշը այս անգամ թօնիին կը նայի:) Միայն թէ, պարոններ, ուրիշ շատ հետաքրքիր բան մը կը պատահէր: Ես մօտը ըլլալուս համար նկատեցի, որ այս մարդը հետզիետէ կը տժգունէր ու աւելի որոշ կ'ըլլային դէմքին եւ մանաւանդ փափուկ ծեռքերուն երակները: Այդ մարդը կամաց կամաց կը ցամքէր իր նստած տեղը: Անգամ մը նոյնիսկ նուաղեցաւ: Ես եւ ուրիշներ վրայ հասանք, վրայ հասաւ նաեւ բժիշկը: Զգացի, որ մարմինն ամբողջ կը դողար, աչքերը կարծես մեղրամոմէ շինուած ըլլային: Սրափելէ յետոյ, բժիշկը մնաց մօտը: Այո, այն, ան այն երեւոյթն առած էր, որ կարծես այդ մարդը այս աշխարհէն չէր: Ես ստիպուած էի ձգել դատարանը՝ այստեղ գալու համար: Ալ չզիտցայ, թէ ինչ պատահեցաւ վերջը: Երեակայեցէք, պարոն-

ներ, ան ոչինչ ըսաւ, երբ ամբաստանուեցաւ նոյնիսկ, թէ՝ դրամ առած է թշնամի երկիրներէ իր խաղաղասիրական քարոզներուն համար:

ԹՕՍԻ - (անհամբեր եւ մտահոգ): Հսէ, պարոն թղթակից, յետոյ լաւ կը զգար անշուշտ:

ՖԻՇԸՐ - Արդեօք նուաղում էր, թէ ընկնաւոր է արդէն: Ընկնաւորները, կ'ըսեն, նման երազանքներ կ'ունենան:

ՖՐԵՏ - Ինչպէս կ'երեւի, այս Քրիստոսը շատ ալ առողջ մէկը չէ:

ՃՕ - Երբ ես դատարանը ձգեցի, ան տակաւին աթոռին վրայ էր: Թերեւս մինչեւ իհմա հիւանդանոց փոխադրեցին: Զգիտեմ, թէ ինչպէս կ'ըլլայ ընկնաւորը: Իմացայ, որ ոստիկանութիւնը բաւական չարչարեր է այդ խեղճ մարդը:

Դռան զանգ:

ՍՈՒՇԱՆ - (պատուհանէն նայելով): Եկան:

Դռաք բանալու կ'իջնէ: Ներս կը մտնեն Սէմք եւ ծերունի մը՝ աղտոտ հագուած, գինով, գլխաբաց, խոի ու գրեթէ ճերմկած մազերով: Լուսանկարիչը անմիջապէս քանի մը նկարներ կը հան: ու կը հեռանայ: Ծերունին կը նստեցնեն արոտի մը վրայ: Թղթակիցը կը մօտենայ՝ իր հարցումներուն համար բուրք ու գրիչ ճեռքին:

ՃՕ - Ձեր անունը եւ տարիքը...

ՖԻՇԸՐ - (անմիջապէս վրայ հասնելով): Սպասէք, պարոն թղթակից, ես սկսիմ իմ հարցումներուն եւ դուք օգտուեցէք:

Ծերունին կը նստի ծաճը, Սէմի օգնութեամբ արդէն բաւական խմած:

ՖԻՇԼՐ - Դո՞ւք էք Քրիստոսի հայրը, այ՞ո՞ւ:

ԾԵՐՈՒՆԻՆ - Ես, ես իսկական հայրը չեմ... մայրը արդեն յդի էր, երբ ինծի հետ ամուսնացուցին:

Ներկաները իրարու երես կը նայիմ:

ՃՕ - Ուրեմն, մէկն է, որուն հայրը յայտնի չէ: Զգիտեմ, պարոններ, պիտի ուզէիք այս պատմութիւնը թերթին տալ: Ըսել կ'ուզեմ, մենք իսկական հօրը հետ չէ որ կը խօսինք:

ԹՕՍԻ - Ես գիտէի, որ սխալ բան մը կայ:

ՖԻՇԼՐ - (քիչ մը երկմտած): Ինչպէս կ'երեիի, ծերունին բաւական խմեր է: Համբերեցէք, մենք կ'իմանանք իսկական պատմութիւնը:

ԾԵՐՈՒՆԻՆ - Ոչ, պարոններ, միշ կարծէք, որ ես գինով եմ: Մայրը 20 տարեկան էր, երբ ինծի հետ ամուսնացուցին: Ազարակապանի մը աղջիկ էր, եւ ես միեւնոյն ազարակին մէջ կ'աշխատէի, որպէս գործատոր:

ՖԻՇԼՐ - Սպասէ, ծերուկ, այդ ազարակապանին առջիկը յո՞վ էր, երբ դուք սկսաք հոն աշխատիլ:

ԾԵՐՈՒՆԻՆ - Զգիտեմ, չգիտեմ, միայն թէ յով էր, երբ ինծ ամուսնացուցին:

Փաստաբան եւ բրբակից իրարու կը նային եղածը հասկնալու խելացի ձեւով:

ՖԻՇԼՐ - Իսկ դուք այն օրերուն ալ կը սիրէիք զինովնալ:

ԾԵՐՈՒՆԻՆ - Չեմ յիշեր, պարոններ, միայն թէ գաւաթ մը հուխսքի տուէք ինծի:

Ակն եւ բրբակիցը միեւնոյն ժամանակ իրենց ծեռքերը ետևի գրպանները կը տանին, մէջտեղ կը բերեն երկու շիշ հուխսքի: Ֆրետ իր այդ շարժումին մէջ ուշ կը մնայ: Ֆրետ իր շիշը չհանած՝ արդէն կը տեսնէ երկու շիշերը: Առաջին անգամ Սէմը կ'երկարէ իր շիշը: Ծերունին, հուխսքին խմելէ յետոյ, կը շարունակէ:

ԾԵՐՈՒՆԻՆ - Արիեստով ներկարար էի եւ, որովհետեւ գործ չունէի, գացի գործ գտայ ազարակին մէջ: Սիրուն, շատ սիրուն աղջիկ էր Տիանան եւ, սակայն, քիչ մը տարորինակ...

ՖԻՇԼՐ - Տարօրինակէ: Ըսել կ'ուզէք ոչ-բնական:

ԾԵՐՈՒՆԻՆ - Այո՞ւ, այո՞ւ, այդ է բառը՝ տարօրինակ, ոչ-բնական:

ՖԻՇԼՐ - Ինչպէս, ինչպէս, ծերունի... (Ղառնալով Ճօյն):) Կը հետեւիք, պարոն թղթակից:

ԾԵՐՈՒՆԻՆ - Այսինքն՝ կը սիրէր փօնիի մերկ կոնսակին վրայ կենծել: Կը սիրէր պարել անտառին մէջ, լուսնի լոյսով: (Ժեւով բերանը սրբելով:)

ՖԻՇԼՐ - Ծարունակէ, շարունակէ:

ԾԵՐՈՒՆԻՆ - Էդ աղջիկը ուրիշ տարօրինակ բաներ ալ ունէր: Անձրեւը երեք օր առաջ կը գուշակէր: Գուշակութիւններ կ'ընէր դրացիներուն եւ յածախ ծիշը կ'ելլար: Կը սիրէր ուսին վրայ սեւ կատու մը

պատշտցնել: Օր մըն ալ կիսամերկ, փօնիի կոնակին հեծած, անտառէն եկաւ եւ ըսաւ, թէ ինչպէս իրեն հրեշտակ մը երեւցած ու ըսած է. «Ա. Հոգիով պիտի յղանաս ու պիտի ունենաս զաւակ մը ու պիտի կատարուի Քրիստոսի երկրորդ գալուստը»: Մենք բոլորս ալ խնդացինք, դրացիները ծաղրեցին: Եւ, իրաւ, շատ չանցած, այդ տարօրինակ ու գեղեցիկ Տիանան յոի մնաց:

ՖԻՇԸՐ - Ըսէ, ծերուկ, դուն կը սիրէիր այդ աղջիկը:

ԾԵՐՈՒՆԻՆ - Չեմ հասկնար, չեմ հասկնար ինչ ըսել կ'ուզէք:

ՖԻՇԸՐ - Ըսել կ'ուզեմ, դուք խմած էիք, երբ անտառ գացիք ու տեսաք Տիանային մերկ պարը լուսնի լոյսով:

ԾԵՐՈՒՆԻՆ - Չեմ հասկնար, չեմ հասկնար:

ՖԻՇԸՐ - Ըսել կ'ուզեմ, դուք գինհվ էիք, երբ մօտեցաք անոր մարմնին:

ԾԵՐՈՒՆԻՆ - (յանկարծ տեղէն վեր ելլելով ու ձայնը բարձրացնելով): Ոչ, պարոններ, ոչ, ես չկրցի հասկցնել այն օրերուն, չեմ կրնար հասկցնել այս օրերուն այս անպիտան, անիծուած մարդոց: Թոյլ տուէք, որ ես երթամ, պարոններ...

ՖԻՇԸՐ, ՖՐԵՏ, ՍԵՄ, ԹՂԹԱԿԻՑ - (ուտքի ելլելով): Ոհ, ոչ, ծերուկ, ներողութիւն, նստեցէք...

ՍԵՄ - (հովիսքին երկարելով): Ոչինչ, ոչինչ, ան հիմա կը հանդարտի:

Ծերունին կը խմէ հովիսքին ու կը նատի նորէն՝ թեւով թերանը սրբելով:

ԾԵՐՈՒՆԻՆ - Այն, պարոններ, անոր անպիտան հայրն ալ իմ վրայ կասկածեցա, եւ ես կորսնցուցի իմ գործը: (Ֆիշը եւ թղթակից իրարու կը նային՝ հասկցնելու համար, որ ծիշը է եղածը:) Անցաւ երկու ամիս, տեսնեմ Տիանային հայրը եկաւ քաղաք զիս տեսնելու եւ նոյնիսկ ինծի սպառնաց՝ ըսելով. «Քեզ բանս կը ծգեմ, եթէ չ'ամուսնանաս Տիանային հետ»: Ինծի կիս մը պէտք էր, պարոններ: Աղջիկները ինծի հետ չէին ամուսնանար, որովհետեւ առանց դրամի խենօն բանուոր մըն էի: Տիանան թէեւ տարօրինակ, բայց գեղեցիկ էր, իմ տեսած բոլոր աղջիկներէն գեղեցիկ, եւ ես ամուսնացայ անոր հետ: Ամուսնանակ յետոյ, հայրը ինծի օգնեց, եւ ես ներկարարի փոքրիկ խանութ մը ունեցայ: Ես կը սիրէի Տիանան, պարոններ, եւ, սակայն, ան մեռաւ ծննդաբերութեան ժամանակ, ու ես սկսայ աւելի խմել: Եւ, որովհետեւ մայր չունէր երեխան, օր մըն ալ, զայն տարի եւ վանքի դրան առջեւ դրի:

ՃՕ - Ուրեմն, անկէ ի վեր, դուն չտեսա՞ր երեխան:

ԾԵՐՈՒՆԻՆ - Անշուշտ, տեսայ, տարին քանի մը անգամ վանք կ'երթայի եւ կը հետեւէի անոր ածումին: Եւ միակ վանահօր պատմած էի այս բոլորը: Վանքի հայրերը զարմանքով կը գովէին եւ կ'ըսէին, որ իրաշք է այս

տղան: Դեռ փոքր, կը խօսէր եւ կը վիճէր անոնց հետ: Այն տպաւորութիւնը ձգած էր, որ կարծես ուրիշ անգամ մըն ալ աշխարհ եկած էր: Կը հասկնար հին լեզուները, ինչպէս երրայերէն, լատիներէն: Եօթ տարի յետոյ, վանքն ալ չգիտցաւ, թէ ո՞ր կորսուեցաւ այս տղան: Էսքան, պարոններ, էսքան: Կ'ըսէին, որ Արիզոնայի անապատներուն մէջ տեսնուած է:

ՖԻԾԸՐ - Երբ տեսնելու ըլլաս, կը ճանչնան քրիստոսը:

ԾԵՐՈՒՏԻՆ - Անշուշտ, անշուշտ, փոքր ժամանակը, այ, էստեղ... (*Ականջին վարի մասը ցոյց տալով:*) Փոքրիկ խալ մը ունէր, մօրմէն ժառանգած էր: Միայն կ'ուզէի տեսնել հեղ մը: Իմացայ, որ դատը լրանալու վրայ է: Կ'ուզեմ կենալ ճամբուն վրայ, թերեւս տեսնեմ զինք, երբ դատարանէն դուրս հանեն՝ բանտ տանելու համար: (*Ոտքի կ'ելլէ եւ կ'ուզէ երթալ:*)

ՖԻԾԸՐ - Սէմ, տար այս ծերուկը եւ օգնէ, որ կենայ ճամբուն վրայ: Նայէ, որ լաւ հոգ տանիս: Ան յետոյ կը տեսնէ իր զաւակը: Անոր համար կը գտնես լաւ սենեակ, կը խմցնես հուիսքիներուն լաւը: Ինչպէս կ'երեւի, Ֆրէտ, ատեն մը պիտի մնանք այս քաղաքին մէջ:

ՖՐԵՏ - Հա, Սէմ, ան այս դրամը ծախսերուդ համար: Մեզ տեսնելու համար հօթէլ կը հանդիպիս: (*Կ'երկարէ տրցակով դրամ:*)

ՍԷՄ - Հատ լաւ, շատ լաւ, այդ ինձի ձգեցէք:

ՃՕ - (իր աշխատանքին մէջ, յանկարծ միտքը կ'իյնայ հարցնելու անունը): Ձեր անունը, ծերուկ:

ԾԵՐՈՒՏԻՆ - (մտածելով, շփոթ մը դէմքին վրայ): Իմ անունը, իմ անունը: Բա, բա, պարոն, շատ յանկարծ հարցուցիք:

ՖԻԾԸՐ - (ինքնիրեն): Ճիշդ եւ ճիշդ հօրը հիւանդութիւնն է, որ տղան ժառանգած է: (*Քիչ մը աւելի բարձր:*) Նոյն բանը պատահած է զակին, դատարանին մէջ:

ՍԷՄ - Փիթըր, Փիթըր...

ԾԵՐՈՒՏԻՆ - (դէմքին շփոթը քակելով): Այն, այն, Փիթըր Լազարօֆ: (*Դուրս կ'ելլեն:*)

ՖԻԾԸՐ - Կը տեսնեք, պարոններ, աղջկան հայրը այն օրերուն ճիշդ է կասկածէր: Թերեւս աղջկը խոստովաներ է ամէն բան: Ուրիշ մէկը չէր կրնար ըլլալ, երբ այդ երիտասարդն էր միայն ագարակին մէջ:

Նոյն պահուն Սուզան ետևի դրնէն ոտքի ճայներ կը լսէ եւ խոհանցին կողմը կ'երթայ: Թօնին ալ վստահ է, որ եկրտները քրիստոսի աշակերտներն են: Սուզան կը վերադառնայ հիւրանց եւ Թօնիի ականջին բաներ մը կը փափսայ՝ իմացնելու համար քրիստոսի աշակերտներուն զալլ: Թղրակիցը դեռ աշխատանքի մէջ է: Թօնին կամաց ձեւերով կը հասկցնէ Ֆրէտին եւ Ֆիշըրին, որ եկողները աշակերտներն են: Թղրակիցը կը լրացնէ իր աշխատանքը:

ՃՕ - Ծնորհակալութիւն, պարոններ, իսկապէս զգայացունց պատմու-

թիւն եղաւ: Դիտի աշխատիմ ժամը հինգին տպագրութեան հասցնել եւ մեծ խորագրով, ըսել կ'ուզեմ, դատարանին վճիռէն առաջ: Նախ, պէտք է հեռախօսեմ՝ տեղ ապահովելու համար: (Կ'ածապարէ հեռախօսին եւ կը կանչէ թիւը:) Հէլօ, պօս, շատ զգայցունց պատմութիւն եղաւ Քրիստոսի հօրը պատմութիւնը: Ծատ հետաքրքիր մանրամասնութիւններ ունիմ եւ նկարներով: Այս, այն, յաջորդ տպագրութեան համար: Խորագիրը կարելի է դնել այսպէս. «Յիսուսի հայրը երեաւն եկած»...

ՖԻԾԸՐ - Չէ, չեղաւ, «Յիսուսի հայրը գինով գտնուած»:

ՃՕ - Հէլօ, աւելի լաւ կ'ըլլայ ըսել «Յիսուսի հայրը գինով գտնուած»: Ի՞նչ, չէք կրնար: Բայց արդէն երկու ժամ կայ: Կ'երեւի, դատարանին վճիռը կ'ուզէք խորագիր դարձնել: Ի՞նչ, լաւ չհասկցայ: Դատարանի մէջ ինձի ընելիք չմնաց: Այստեղին Թովմասին ագարակը կ'ուզէի երթալ, սակայն ուշ մնացի... Դատարանին մէջ ինձի ընելիք գործ չմնաց: Ձեռագիրներս վաղուց հանձնած եմ... Ի՞նչ, for God's sake, դատարանին մէջ... (Ծուրջինները թէլէֆոնին մօտ կուգան. աւելի անհամբեր է թօնին:) Ի՞նչպէս, ինչպէս... Խորիդաւար կերպով: Այն, այն, կարծես գուշակեցի, որ կրնայ այդ տեսակ բան մը պատահիլ:

ՖՐԵՏ, ՖԻԾԸՐ, ԹՕԸՒ - Ի՞նչ է պատահեր, պարոն թղթակից:

ՃՕ - (Չարունակելով խօսակցութիւ-

նը): Այս, այն, անմիջապէս դատարան կը վազեմ: (Հեռախօսը գոցելով:) Պէտք է դատարան հասնիմ, պարոններ... Երդուեալներու վճիռէն առաջ, Քրիստոս մեռած է, յանկարծամահ եղած:

ԹՕԸՒ - ՄԵռած:

ՃՕ - Այս, այն, դատարանին մէջ, աթողին վրայ, եւ խորիդաւոր կերպով: (Թօնին կը թուլնայ ու ինքինք հազի կը տեղաւորէ աթողին վրայ:)

ՖՐԵՏ - (ապշած): Ուրեմն, մեր բոլոր աշխատանքները ի զուր անցան:

ՖԻԾԸՐ - Ես տեսակ բան...

ԹՕԸՒ - Չէ, պարոններ, այդ անկարելի է, Աստուած իմ, Աստուած իմ...

ՃՕ - Ես գիտէի, ես կը տեսնէի, որ բան մը կը կատարուէր: Կ'զգայի, որ այդ աթողին վրայ այդ մարդուն արինը հետզիետէ կը ցամքէր: Ինչպէս կ'երեւի, այդ մարդը, խորիդաւոր կերպով ինքնասպան եղած է: Թերեւս թունաւորում: Յտեսութիւն, պարոններ: (Կ'ածապարէ մեկնիլ:)

ԹՕԸՒ - Չէ, պարոններ, պարոն թղթակից, սխալ լուրեր մի տաք: Սպաննեցին, սպաննեցին Քրիստոսը, չարչարելով սպաննեցին մեր Տէրը, մեր փրկիչը, որդին Աստուծոյ: Ես կապոյտ գծեր տեսայ անոր մարմնին վրայ: Նյուիսկ ծեծեցին զայն, մեր Տէրը, մեր Քրիստոսը:

ՍՈՒԶԱՆ - Ի՞նչ եղած է, թօնի:

ԹՕԸՒ - Յիսուս մեռած է դատարանին մէջ: Սպաննեցին, պարոններ, մեր Տէրը, մեր Քրիստոսը:

Ֆիշըր եւ Ֆրետ իրարու կը նայի՞ն՝ միեւնոյն ատեն ժամը ճշդելով:

ՖԻՇԸՐ - Կարծեմ, գիշերուան ժամը 12-ի սաւառնակը առնենք:

ՖՐԵՏ - Իսկապէս սակարանին մէջ ունեցած մեծ կորուստներս այսքան չազդեցին վրաս: (Գրպանէն կը հանէ հոլիսքին եւ, խմելէ յետոյ, կուտայ ֆիշըրին:)

ԹՈՒԻ - Սպասեցէք, պարոններ, ստորգենք հեղ մը: Ճշմարիտ չի կրնար ըլլալ: (Այդ պահուն խոհանոցէն հատ հատ ներս կը մտնեն Քրիստոսի տղթգունած աշակերտները:)

ԱՃԱԿԵՐԸ ՓՈԼԸ - Ինչպէս եղած է, եղբայր Անտոնիոս:

ՄԻՉԸՐ - (Ճանր ձայնով): Այդպէս, այդպէս, կը պաշտեն սպաննելու համար եւ կամ կը սպաննեն պաշտելու համար: (Դուրսը կը լսուի ամրոխի ձայն:) Oh, մարդ շատ է վտանգաւոր: Ես մեծ չեմ Քրիստոսի չափ՝ ներելու համար:

Աղմուկը հետզհետէ կը շատնայ:

ԶԱՅՆԵՐ - Հոն են, թօնիի տան մէջ:

- Աշակերտները...
- Ես աչքովս տեսայ...
- Կը ծանչնամ անոնցմէ երկութը...
- Պէտք է դուրս հանել այդ սրիկաները:
- Դուրս, դուրս...
- Այն, այն, թօնիի տան մէջ են բոլորն ալ:

ՍՈՒՇԱՆ - Աստուած իմ, այդ մէկը Տէնին ձայնն է:

ԲՈԼՈՐԸ - Դուրս, դուրս...

- Պէտք է կոտրել դուռը:

ՖԻՇԸՐ - Մենք պէտք է ածապարենք:

ՖՐԵՏ - Արդէն ուշ ենք մնացեր, կրնայ ըլլալ, որ սխալմամբ ամբոխի զոհ ըլլանք, եթէ հիմա դուրս ելլենք:

ՍՈՒՇԱՆ - (զգուշութեամբ պատուհանէն դուրս կը նայի, եւ ահա կղմինտոյի կտոր մը պատուհանը կոտրելով ներս կ'իյնայ): Թօնի, Տէնն է, Տէնը՝ ամբոխին գլուխն անցած:

ԹՈՒԻ - Այդ առնէտը...

ՖԻՇԸՐ - Պէտք է հեռախօսով լուր տալ ոստիկանութեան, պարոններ: Թէ ոչ՝ դուռը կոտրելով ներս կը մտնեն:

ԹՈՒԻ - Բայց ոստիկանութիւնը կրնայ ծերբակալել աշակերտները:

ՄԻՉԸՐ - Ոչինչ, պարոններ, դուք ձեր ծարը նայեցէք, սիրելի Անտոնիոս, մենք պատրաստ ենք բանս երթալու:

ՄԻՒԽ ԱՃԱԿԵՐՏՆԵՐԸ - Այն, այն, թող գան, մենք պատրաստ ենք բանս երթալու:

Ամբոխը յանկարծ կը հանդարտի:

ՀԱՏ ՀԱՏ ԶԱՅՆԵՐ - Ներս են Քրիստոսի աշակերտները:

ՖՐԵՏ եւ ՖԻՇԸՐ - Ինչ պատահեցաւ յանկարծ:

ԹՈՒԻ - (կամաց դուրս նայելով. նայած պահուն ամրոխը կը խլուայ ու նորէն կը հանդարտի): Եհ, ծերբակալուած ենք, ոստիկանապետն է, պարոններ:

ՄԻՉԸՐ - Բաց դուռը, տիկին Սուլան:

Թ-Օ-Ն-Ի - Բաց դուռը, ուրիշ ելք չկայ:
Այլապէս ամբոխը պիտի վնասէ
մէզի:

Սուրան վար կ'իջնէ: Սանդուխէն
վեր կ'ելլէ ոստիկանապետը քա-
ռաքացիական տարագով: Վարը
ամբոխը նորէն կը հրիմայ:

ՄԻՉԸՆ - Բարի եկար, պարոն ոստի-
կանապետ, մենք ենք Քրիստոսի
աշակերտները:

ՖԻՃԸՆ - (*Խօսենալով*): Իմ անունը
Ռոպըրթ Ֆիշըր է, Հոլիվուտէն,
Խնիվերսըլ ընկերութեան փաս-
տաբանը: Իմ ընկերը, Ֆրէտ
Վարտ, գլխաւոր ներկայացուցիչն
է նոյն ընկերութեան: Առեւտրա-
կան գործով եկած ենք այստեղ,
կ'ուզենք, որ հսկես, պարոն ոս-
տիկանապետ, որ ապահով դուրս
գանք այս տունէն: Այս գիշեր ժա-
մը 12-ին կ'ուզենք սաւառնակ
առնել:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Ասկէ վերջ, ուրիշ
մը ինձի է որ պիտի հսկէ, պա-
րոններ: Ես ոչինչ կրնամ ընել՝
ամբոխը հանդարտեցնելու հա-
մար: Ես այժմ ոստիկանապետ
չեմ: Ես տեսայ, պարոններ, ես
տեսայ ամէն բան. Ես զգացի, որ
յարդով լեցուած խրտուլիակ մըն
եմ: Ես եկած եմ այժմ Քրիստոսի
աշակերտներուն միանալու: Ես
մէկն եմ անոնցմէ:

ՄԻՉԸՆ - Նորէն բարի եկար:

Կը լսուի ոստիկանական վակոնի
զանգ. հետզիետէ կը մօտենայ ու
կանգ կառնէ: Թօնիի դրան առջեւ
ամբոխի հրիմոցը կը դարձի: Ոս-
տիկաններու խիստ ձայներ. «Հե-

ռացեք, մաքրուեցեք», ամբոխը
հեռացնելու համար: Փողոցը կը
հանդարտի: Դրան զանգ: Սու-
րան վար կ'իջնէ դուռը բանալու
համար: Ոստիկաններ են, եկած
են աշակերտները ձերբականելու:
Սանդուխներէն վեր կ'ելլէն Քէփ-
քընը եւ քանի մը ոստիկաններ:
Անոնց մէջ են երկրորդ արարի
ոստիկաններն ու Պիլ Քէլին:
Պահ մը լուրին, երբ Քէփքընը
այնտեղ կը տեսնէ ոստիկանա-
պետը: Պիլ Քէլին, շխտակ կեցած,
կօշիկներուն վրայ կը նայի, յե-
տոյ գրապանէն լար մը առնելով
փոշին կը մաքրէ՝ միեւնոյն ժա-
մանակ ուշադրութիւն տալով իր
պարտականութեան:

ՔԷՓԸՆ - (*Ոստիկանապետին*):
Ինչպէս կը տեսնեմ, դուք ալ այս-
տեղ էք...

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Այո. Ես ալ այս-
տեղ եմ, Քէփքըն:

ՔԷՓԸՆ - Պարտաւոր եմ ձերբա-
կալել նաև Ձեզ:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ - Անշուշտ, ան-
շուշտ, եւ պէտք է որ ձերբակալէք:
(Խաչաձեն դրած բազուկները եր-
կարելով:) Խնդրեմ ձեր օղակնե-
րը:

Մինչ այդ պահուն բոլորն ալ ոտ-
քի կեցած են, կը լսուի ձայն մը
մռայլ ու խորհրդաւոր:

ԶԱՅՆԸՆ - Ինչ որ աշխարհինն էր,
աշխարհին ճգեցի: Երկնքէն բերի
սերմերը միայն, սերմերը ծշմար-
տութեան եւ բարութեան...

ՄԻՉԸՆ - (*Ուրախ արտայայտութիւ-
նով*): Ան է, որդին Աստուծոյ, Ա-
նոր ձայնն է, Ան մեր մէջ է:

ԱՇԱԿԵՐՏՄԵՐԸ.

- Ալէլուեա...
 Ան յախտենական է...
 Ինչպէս ծշմարտութիւնը...
 Ան մեռած չէ...
 Անոր ճայնն է...
 Ան աստուածային կերպարանքով...
ԹՕՍԻ - Հրաշք, պարոններ, անոր ճայնն է:

Աշակերտները ամմիջապէս ծունկի կուգան իրարու ետեւէ: Ֆրեւ եւ Ֆիշը քիչ մը կը յամառին ոտքի կենալ եւ, սակայն, խորհրդաւոր ճայնին տեղի կուտան եւ նոյնպէս ծունկի կուգան:

ՅԻՍՈՒՍԻ ԶԱՅՆԸ - Այժմ դուք պիտի ըլլաք այն հողին ժիր մշակները, ով իմ հաւատարիմ աշակերտներ: Մի վախնաք բանտէն ու չարչարանքէն, վասնզի գեղեցիկ բաները չարչարանքէն կը ստեղծուին: Իմ Հայրը ընտրեց ժամանակը զիս իրեն կանչելու, եւ ես Անոր է, որ կը վերադառնամ:

Ծունկի կուգայ ոստիկան մը: Սանրուխին վրայ կամաց կամաց կ'երեւին դէմքերը առաջին

արարուածին՝ ծերուկը, կօշկակարը, Էմնան, կօշիկ ներկող պատաճին, տիկին Ժողեֆը, Չալին: Քէփթընը, պահ մը շուարած, կը կասկածի, որ ճայնը կրնայ բէտիոյէն ըլլալ: Կը կտրէ հաղորդակցութեան թէլիքը, յետոյ կը նայի անկիւնները, ապա կը վերադառնայ դանդաղ, գլուխը կախ, համոզուած հրաշքին եւ ծունկի կուգայ: Ծունկի կուգան միս երեք ոստիկաններն եւս: Պիլ Քէլին կ'ընտրէ ծունկի զալու յարմար տեղ մը, որ կօշիկին բան մը չպատահի: Վարագոյրը կ'իջնէ շատ դանդաղ, մինչ կը լսուի այդ լուութեան մէջ Քրիստոսի ճայնը:

ՅԻՍՈՒՍԻ ԶԱՅՆԸ - Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ինչ որ չար է՝ մարդկային է, ինչ որ բարի է՝ աստուածային է: Խղճալով օգնեցէք մարդոց ձեր խօսքերով, երկինքի խօսքերով: Օգնեցէք զօրավարին, դատաւորին, յաղթողին ու պարտուողին, օգնեցէք իշխանին, օգնեցէք թագաւորին...

ՎԱՐԱԳՈՅՐ

Մարդարիտ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Բան. գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՌԴ ԳՎԼՈՒՏԸՆԸ

Համաստեղի «Քրիստոսի երկրորդ գալուստը»¹ դրամատիկական ստեղծագործության գործողությունները² ծավալվում են ամերիկյան միջավայրում: 1942 թ., երբ Համաստեղը գրում էր այս ստեղծագործությունը, իսկապես թվում էր՝ «Էս աշխարհը կը փլի»,³ ինչպես դիպուկ վերնագրել է Համաստեղը պատմվածքներից մեկը: «- Էս աշխարհը կը փլի», - կրկնում ես հերոսի խոսքերը, բայց Քրիստոսը սեր է, իսկ սերը չի կործանում, հույս է ներշնչում, որ աշխարհն ու մարդիկ դեռ կհասկանան կատարվածն ու կգտնեն փրկության ժամկան: Սա է այն ժամկան, որից չեն շեղվում գրողի՝ աշխատանքի և բարության «Անձրեւ»-ով⁴ ողողված «Գիտը»ի⁵ բնակիչները:

Գրողին հետաքրքրում է ոչ թե հերոսների ազգային պատկանելությունը, այլ աշխարհի ու մարդկանց նկատմամբ վերաբերմունքը: Բարոյականի ու ոչ բարոյականի հակադրության մեջ նա առավելությունը տալիս է երազով, հեքիաթով ապրող մարդկանց, որոնք հեռու են շահի ու հաշվենկատության համբնդիանուր վարակից: Համաստեղի հերոսները, ճիշտ է, հածախ չեն գիտակցում, բայց իրենց թույլ ուսերին են տանում աշխարհի և մարդու «մարդացման» ծանր բեռը: Պատմական ծակատագրի բերումով, այդ հերոսներից շատերը հայրենիք և հող կորցրած, բայց աշխատանքի ու հողի պաշտամունքն արյան մեջ կենդանի պահող հայեր են:

Գրական առաջին քայլերից սկսած՝ Համաստեղը քննում է մարդ-Աստված առնչությունները: Մանրապատումներին ու բանաստեղծություններին հաջորդեցին պատմվածքները, որոնց հերոսներն օտար ավերում շարունակում են ապրել պապերից ժառանգած արարման և հոգևոր օրենքներով, որոնց անհաղորդ են աշխարհն ու մարդկությունը: Նյութական բարեկեցության, շահի ու շահույթի օրենքներով ապրող, «վասն յիմարութեան միլիոնաւոր ծահիլ կեանքեր» խլող պատերազմի մեջ խրված աշխարհը, մարդիկ կտրվել են հոգևորից, և Քրիստոսը «նորէն եկած է մարդոց հոգիին մեջ երկինք մը ստեղծելու»:

Երկու հազար տարի առաջ Աստծո Որդին մարդացավ, շրջեց մարդկանց

մեջ, խոսեց նրանց հասկանալի լեզվով, հրաշքներ գործեց, բայց մարդիկ նրան խաչը հանել տվեցին՝ գերադասելով փրկել ավագակին:

Ինչ որ բան փոխվել է աշխարհում,- հարցնում է գրողը և մեզ՝ ընթերցողներիս ուղեկցում դժոխային այն ձանապարհով, որով երկրորդ անգամ պիտի անցնի մարդու Որդին:

Համաշխարհային երկրորդ պատերազմի թատերաբեմ դարձած երկրագունդը «խախտուած է իր տեղէն», ու «նորէն այս անիծեալ աշխարհը եկած է խսկական Քրիստոսը՝ փրկելու այս անիծեալ մարդկութինը»⁴, - սա Համաստեղի համոզումն է:- Եթե Աստված տեր չկանգնի իր ստեղծածին «անիծուած օրին», «Էս անիծուած աշխարհի գլխին դեռ կրնան շատ բաներ գալ»: Ամերիկյան քաղաքի բնակիչներից թափառաշրջիկներն են լսում ու հետևում սևամորթ քարոզչին, իսկ բանտից երեք ամիս առաջ դուրս եկած Գասպար Սմիթից դարձել է Քրիստոսի աշակերտը: Աստվածաշնչան ծշմատության ունկնդիրներից ամեն մեկն ունի իր ակնկալիքը. բոլորի աչքերի առաջ կատարված հրաշքները հույսեր են ներշնչում:

Այսպես՝ տիկին Մարթին հավատում է (ավելի ճիշտ՝ ուզում է հավատալ), որ Քրիստոսը կրուժի իր հաշմանդամ որդուն («Ով բժշկէ զաւակս, ան է իմ Քրիստոսը»):

Թափառաշրջիկ Միջըլը համոզված է, որ դեպի կատարյալը գնալու ձանապարհը մեկն է՝ «յարատեն ու յամառ աշխատանք» «բարի ըլլալու համար, որովհետեւ մարդուն մէջ դեւը, աշխարհայինը միշտ ուժեղ է»: Մարդկանց՝ «տեսակ մը ածխահանքեր» դարձած հոգիները մաքրելու նպատակին են ուղղված Քրիստոսի ու նրա հետևորդների ջանքերը. «Ես կ'երթամ մանանեխի հատի չափ ըմբռնելու Աստծոյ իմաստութիւնը: Ես կ'երթամ միհանալու անոր աշակերտներուն՝ տարածելու համար երկրի վրայ իմաստութիւնը երկնքին, ինչպէս ըրին առաքեալները»:

«Անօթի մնալէ» վախեցող մարդը երկչու է ու նյութականի ստրուկ, այլ խոսքով, անկատար: Այս մարդկանց պատկերն ամբողջացնում է Թօնին, որին ծերուկն ասում է. «Եւ որովհետեւ, Թօնի, խոզ ու հաւ ծախել գիտես, գործդ լաւ է, փորդ կուշտ է, չես հաւատար Անոր»: Նույնիսկ այն պահին, երբ ամբոխը կրանված լսում է սևամորթ քարոզչին, գողանում են կանանցից մեկի դրամապանակը:

Կրկնվում է ավետարանական հին պատմությունը. պաշտոնական եկեղեցին պայքարում է Քրիստոսի, նրա աշակերտների ու հետնորդների դեմ՝ նրան հայտարարելով «ավագակապետ մը, որուն կողքին պոռնիկներ կը քալն»:

Ճիշտ է, Քրիստոսն արդեն բուժել է Զալիին, Ճան Ուայթի կինը, հետևելով լած քարոզներին, հսկայական հարստություն է բաժանել մուրացկաններին,

բայց չկա, չի ստեղծվել համընդհանուր բարության մթնոլորտը: Ավելին, մսավաճառ Ուայքը կանխագուշակում է Քրիստոսի առաջացրած շարժման տիսուր հետևանքները, քանի որ «չքատրութիւնն ու նիկրօն փողոց իջած են»:

Ոստիկանությունը հիգևոր այդ շարժումը կանխելու, արգելելու փորձ է արել, ու կովի ժամանակ ոստիկան Ղուկասը կորցրել է... ականջը. Աստվածաշնչից շատ ծանոթ պատկեր է: Արյունահեղություն չի եղել, քանի որ Քրիստոսն իր աշակերտներին արգելել է զենքի դիմել: Այս նոր իրականության մեջ՝ իսկական քառոսի վերածված աշխարհում «փոքրիկ ականջ մը» կարող է դառնալ «պատմութեան ամենամեծ ողբերգութիւնը»:

Քրիստոսի քարոզած մարդասիրության սկզբունքները շատերին անհասկանալի են, բայց մարդիկ փորձում են, գուցե կյանքում առաջին անգամ, «հասկնալ, թէ ո՞րն է ծշմարտութիւն ըսուած անձանօթ թռչունը»: Երբ ամբոխը թևավորվում է այդ «անձանօթ թռչուն»-ի սլացքով, մի պահ կտրվում երկրից, իրաշքներ են կատարվում՝ համրջ ոչ միայն խոսում է, այլև հայիոյում է ոստիկանապետին, որը սարսափում է համրի խոսքից, մինչ խոսուն մարդիկ լրում են:

Կյանքն ընթանում է սովորական հունով. «Սըն» թերթում Քրիստոսի մասին չորս տողանոց հաղորդագրությունը ծվարել է հերթական «ամերիկեան դիցազներգութեան»՝ քաղաքապետի դստեր շան մասին պատմող նյութի ու նկարի կողքին:

Գլխիվայր շրջված իրականության մեջ վտանգված են նյութապաշտ աշխարհի հիմքերը, և մարդիկ կամաց-կամաց փոխվում են: Անգամ Հորան՝ «այդ վտանգաւոր պոռնիկը, այժմ դարձած է մեծ մարդասէր մը», և նրան սիրահարված Մայքը, որը պատրաստ է «մեծագոյն ոճիրը գործել Լորային համար, միայն Լորային համար», մատնում է Քրիստոսին: Նա օգնում է ոստիկանապետին՝ առանց «վտանգաւոր կոռուի» լուծել ժողովրդին հնազանդեցնելու խնդիրը:

Մինչ իշխանությունները, հիգևոր դասը պատրաստվում են վճռական հակահարվածի, Քրիստոսը Գասպարի ու Լորայի միջոցով տարածում է իր ուսմունքը:

Երկու հազարամյակ շարունակ քրիստոնեությունը քարոզել է մարդասիրության, բարության այս օրենքները, որոնք մարդիկ չեն հասկացել:

Այսօր Քրիստոսը կոչ է անում՝ «Եղէք բարի դուք ձեզի հանդէպ». քանզի «Բարի եղէք ձեր դրացիին հանդէպ» ավետարանական ծշմարտությունը մարդկությունը չհասկացավ ու չկիրառեց: Քրիստոսը խոսում է մարդու՝ ինքն իրեն ծանաչելու դժվարին, բայց ամենակարևոր նպատակի մասին. «Երբ ծանչնաք դուք ձեզ, ծանչցած կ'ըլլաք նաեւ իմ հայրը եւ կ'ըլլաք կատարեալ, ինչպէս իմ հայրն է: Մարդոց ծգտումը պէտք է ըլլայ նմանիլ Աստծոյ, եւ այդ

նմանութիւնը աւելի շատ հոգեկան է, որովհետո Աստուած հոգի է: Կատարեալ հոգին կատարեալ կը դարձնէ նաեւ կերպարանքը»:

Արարչից հեռացած մարդը գազան է, ու «Երկնքի բնակիչները» նրան նայում են ծիշտ այնպես, «ինչպէս որ դուք կենդանիներու վրայ կը նայիք»: Ապացույց՝ կովի դաշտում (և ոչ միայն կովի դաշտում) ամեն օր հեղվող մարդկային արյունը:

Կրկնվում է նաև ավետարանական պատմության ծանոթ վախճանը. Քրիստոսին դատում են, նրան «հետեւող երէկի բազմութիւնը չի կայ, իիմա ձերբակալութենէն յետոյ մէջտեղ մնացին Թոնին, աշակերտները եւ մուրացիկները»: Ամբոխը, որն օրեր առաջ լսում էր Քրիստոսին, դատարանի բակում հավաքված, պահանջում է դատել նրան...

Ողբերգական է հերոսներից Թօնիի վիճակը, որին կինը մեղադրում է անգործության ու անմտության համար, որ բանուգործ թողել է ու օրեր շարունակ հետևել քարոզչին: Անտոնիոս դարձած Թօնին կորցրել է ողջ հարստությունը, բայց չի հուսահատվում. համոզված է, որ իր նախնական հաշվարկը ծիշտ է: «Եթէ իսկապէս ան Աստծոյ որդին է, ցոյց կու տայ իր հրաշքը: Այն ատեն շէնքն ալ կը լրացնեմ, եւ դուն կ'ունենաս մուշտակէ վերարկու մը, որ քաղաքին մէջ ունէ կին հագած չէ», - ասում է նա կնոջը: Դեպքերի հետագա ընթացքն ապացուցում է, որ վաճառական Թոնին չի սխալվել. Անտոնիոսը ոչ պակաս հարստության տեր կարող է դառնալ, եթե նախկինի պես արագ կողմնորոշվի դեպքերի՝ առաջին հայացքից անկանխատեսելի ընթացքի ու ավարտի հարցում, հասցնի ժամանակին կերպարանափոխվել, հարկ եղած դեպքում՝ խոսել համընդիանուր բարօրությունից, տիեզերական ծշմարտությունից՝ միշտ աչքի առաջ ունենալով սեփական շահը: Ուրիշ ոչինչ:

Թօնին համոզված է՝ կեղծիքը բացահայտվելուց հետո ոչ ոք չի դատապարտի իրեն. չէ՞ որ ինքն անխախտ է պահել նյութապաշտ աշխարհի ամենակարևոր օրենքը՝ առևտի մեջ շահել է, ավելին, կարող է նախանձի ու կրկնօրինակման օրինակ դառնալ:

Ռադիոկայանները Քրիստոսի դատավարության մասին լուրերը հաղորդում են գովազդների շարքում, Հոլիվուդից հայտնվում են մի քանի կինոգործիչներ՝ կատարվածից հնարավորին չափ շատ շահույթ կորզելու նպատակով: Ու քանի որ Քրիստոսը մերժել է ստորագրել 500 000 դոլարանոց պայմանագիրը, պատրաստ է եզրակացությունը՝ «այդ մարդը բնական չէ», ավելին, «կիսախելագար է»:

Թոնին ավետարանական Պետրոսի օրինակով կարող է Քրիստոսի կենդանության ժամանակ երեք անգամ ուրանալ, բայց չի կարող հավատալ, որ Քրիստոսը կարող է հրաժարվել միլիոններ աշխատելու հնարավորությունից:

Նա կատարվածը փորձում է «արդարացնել»... սույ հիվանդությամբ: Թոնին պատրաստ է գործակցել անգամ Քրիստոսի նկարը շշերի վրա գովազդելու համար օգտագործել պատրաստվող ֆիրմայի հետ: Կինոգործիչները պատրաստ են Քրիստոսին թեմ բարձրացնել՝ վողսկիլային «քանի մը երգեր» երգելու կամ նավաստու հագուստով անեկորտներ պատմելու...»

Սա է հասարակական բարոյականության իսկական պատկերը:

Ամեն ինչ քննող ու բացատրել փորձող մարդիկ ավելի առաջ են գնում. նրանք Քրիստոսին մեղադրում են «Երկրի բարոյականը քանդելու», տնտեսությունը քայլայելու համար, պարզում են նրա ծննդյան «մանրամասները»:

Համաստեղը դրամատիկական այս պատկերում ավետարանական հայտնի դեպքերի շատ հետաքրքիր ավարտ է գտնում:

Մինչ մարդիկ քննում են լսածն ու կատարվածը, բացատրություններ փնտրում, Քրիստոսը հանկարծամահ է լինում՝ մարդկանց ազատելով իրեն կրկին սպանելու «անհրաժեշտությունից»:

Միջըն այսպես է ներկայացնում կատարվածը. «Այդպէս, այդպէս, կը պաշտեն սպաննելու համար եւ կամ կը սպաննեն պաշտելու համար: Օ՛հ, մարդը շատ է վտանգաւոր: Ես մեծ չեմ Քրիստոսի չափ՝ ներելու համար»:

Մի վերջին հրաշք էլ է կատարվում՝ ոստիկանապետը միանում է Քրիստոսի աշակերտներին, քանի որ չի ուզում այլս «յարդով լեցուն խրտուիլակ մը» լինել:

Համաստեղի եզրակացությունը մեկն է՝ բավական է երկրի վրա թափված մարդկային արյունը, որի միջոցով ոչ մի ծշմարտություն չի հայտնագործվել, արդարություն չի հաստատվել: Ժամանակն է վերադառնալու սկզբին, սկիզբ, որն Աստվածն է, իսկ նրա երկրային անաղարտ պատկերը՝ Մարդը: Ու քանի որ առայժմ այդ անաղարտ պատկերի օրինակը միակն է՝ Քրիստոս, գրողը իր ժամանակակիցներին ու հաջորդներին մտքի սլաքքով տանում է դեպի վաղնջական այն օրերը, երբ նրանց նախահայրերն էլ տեսան ու... չհավատացին: Եվ եթե ճիշտ է, որ պատմությունը կրկնվում է,- նախազգուշացնում է գրողը, - կատակերգության ժամանակներն անցել են, հերթը ողբերգությանն է...»

ՎԻԿՏՈՐ ԼԵԳԵՆՏՈՎ

ԷՊԻՍ ՊԻԱՖ*

*Պիես երկու գործողությամբ՝
ըստ Էդիլ Պիաֆի մասին մեմուարների*

Գործող անձինք

ԷՊԻՍ ՊԻԱՖ

ԼՈՒԻ ԼԵՊԼԵ

ՌԱՅՄՈՆ ԱՍՍՈ

ՄԱՐՍԵԼ ՄԵՐԴԱՆ

Էդիտի շրջիկ բատերախումբը

ԺԱՆԻՆ - կին, հյուրանոցի տիրուհի, տիկին սրճարանում

ԿԱՄԻԼ - 1-ին լրագրող, 1-ին ոստիկան, Լուի, Էդի Կոնս-
տանտին, Թեոն Սարան

ԺԱՆ - 2-րդ լրագրող, Գասսիոն, սրճարանի հաճախորդ,

Ազնավուր, 3-րդ ոստիկան

ԺԱԿ - 3-րդ լրագրող, տղամարդ, 2-րդ ոստիկան, Ալբեր,

Սաշա Գիտրի

ՍԱՍ ԱՌԱՋԻՆ

Քենում հայտնվում է դերասանուին: Մոտենում է սեղանին, վերցնում գրքերից մեկը, կարդում է. ԷՌԻՍ ՊԻԱՖ. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. «Ես կմեռեմ, և իմ մասին այնքան բաներ կասվեն, որ ի վերջո ոչ ոք այդպես էլ չի հասկանա, թե ինչպիսին եմ եղել ես իրականում...»

Դերասանուին մտքերի մեջ է սուզգում: Հետո մոտենում է մյուս սեղանիկին, վերցնում գիրքը, կարդում է: «Յունություն, Էղիտ...» Մարսել Բլիստեն:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

...Ենց նոր տեսա Էղիտին վերջին անգամ: Գունատ, փոքրիկ, անշարժ պառկած էր իր հսկա մահճակալին: Երկար նայեցի նրան՝ շփոթված, քարացած վշտից: Ըստրավո՞ր է արյոք, որ այս փխրուն էակը՝ փոքրիկ, տիկնիկի նման անկենդան դեմքով, այն ամենն է, ինչ մնացել է ամենամեծ ողբերգական էստրադային երգչուից: Ես նայում էի նուրբ գործվածքի մեջ թաղված այդ դեմքին ու մտածում. «Մի՞թե այլս երբեք չի հնչելու նրա զարմանահրաշ ձայնը»...

Հնչում է «Պատամ, պատամ»-ը: Եվ մենք արդեն լսում ենք ձայնը, դա Էղիտ Պիաֆի ձայնն է: Դե-

րասանուին արագ վերցնում է լրագիրն ու կարդում է:

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ - «Էտրանսեժան»

1936 թվական: «Փոքրիկ Պիաֆ՝ ժողովրդական պարահանդեսի թախծոտ, սանձարձակ հրեշտակ: Նրա մեջ արվարձանների շունչն է... Բացառությամբ՝ 1900 թվականի ոճը հիշեցնող հագուստի: Մեր առջև է հրաշքով վերածնված երգչուիի Կլոդինի սանրվածքը, ծալովի օճիքը, դպրոցական համագեստի նմանվող սև զգեստը»:

Ժան Կոկտո. Ֆրանսիական ակադեմիայի անդամ: «Նայեք այս փոքրիկ կնոջը, ում ծեռքերը մողեսներ են հիշեցնում: Նայեք նրա բոնապարտյան ձակատին, կոյուղի աչքերին, որոնք հանկարծ սկսել են տեսնել: Ինչպես է նա երգելու: Ինչպես է իր մտքերն արտահայտելու այդ ժամանակ: Ինչպես են դուրս պրծնելու նրա նեղիկ կրծքից գիշերվա հզր հառաչները»:

Թերթեր, ամսագրեր, գրքեր, հիշողություններ...

...Ես կմեռնեմ և իմ մասին այնքան բաներ կասվեն, որ ի վերջո ոչ ոք այդպես էլ չի հասկանա, թե ինչպիսին եմ եղել ես իրականում: Դա այնքան էլ կարևոր չէ,- կասեք դուք: Այս, իհարկե: Բայց այդ միտքն ինձ հանգիստ չի տալիս: Ահա ինչու, քանի դեռ ուշ չէ, ես ուզում եմ ինքս պատմել իմ մա-

սին, անգամ սկանդալ հարուցելու
ռիսկով: Իսկ գուցե իմ նկատմամբ
խղճահարությո՞նն առաջացնելու
ռիսկով:

Ինչ լինում է՝ թող լինի:

«Պադամ, պադամ»...

Այս մեղեղին, որն ինձ
հետապնդում է գիշեր ու զօր.
Այս մեղեղին այսօր չէ,
որ հայտնվել է:
Այն նույնքան հեռվից է, որքան ես,
Հազար-հազարների
կողմից հնչեցրած:
Այդ մեղեղին մի օր կիսենթացնի ինձ:
Հարյուր անգամ ուզում էի
հարցնել՝ ինչո՞ւ
Ըստ հնչում է միշտ ինձնից առաջ,
Եվ նրա ձայնը
Ստվերում էր ձայնը իմ...
Պադամ, պադամ, պադամ:
Ըստ վագում է՝ հալածելով ինձ:
Պադամ, պադամ, պադամ:
Այն կարծես պահանջում է՝ հիշիր:
Պադամ, պադամ, պադամ:
Այդ մեղեղին, որ մատով
ցուցանում է ինձ
Ու ես քարշ եմ տալիս նրան
իմ ետևից ինչպես մի հին սխալ,
Այդ մեղեղին, որ անգիր
գիտեն բոլորը.
Հապա լսեք, թե ինչ աղմուկ է
բարձրացնում այն,
Ասես իմ ողջ անցյալն է սահում իմ
կողքով,
Վիշտը թողնել է պետք, թողնել եկող
օրերին.

Ես ամբողջ մի թափոր վիշտ ունեմ
այս մեղեղու համար,
Որը բարախում է, բարախում ինչ-
պես փայտե սիրու:
Պառկած եմ հիվանդանոցային մահ-
ծակալին ու թելադրում եմ իմ
հիշողությունները, որոնք խումբ-
խումբ բարձրանում, պաշարում
են ու պարուրում են ինձ: Անցյալը
չի շարվել իմ կողքին օրինակելի
կարգով: Ես դեմքեր եմ տեսնում,
բազում դեմքեր, ինչ-որ մարդիկ
են իրար իրմշտում ու գոռում.
«Ինձ, ինձ սկզբում»: Աստված իմ,
ինչքան շատ են նրանք: Ինչ
բազմություն: Բայց նրանց մեջ ես
տեսնում եմ մարդկանց, որոնք
որպես հավերժական ուղեկիցներ
անցել են իմ ողջ կյանքով:

**Հայտնվում է ակրորդատի կոստ-
յումով մի մարդ. Կամիլ Ռիվոն է:**

ԿԱՄԻԼ - Ես Կամիլ Ռիվոն եմ: Հա-
վասարակշուություն մեծ մատ-
ների վրա, սեղանի եզրին: (Գլխի
շարժումով ցոյց է տալիս Էդի-
տին:) Այն ժամանակ նա տասն-
վեց տարեկան էր:

**Հայտնվում է աղջկը շրջիկ ար-
տիստուհու վառ զգեստով. Ժա-
մինն է:**

ԺԱՆԻՆ - Ողջոյն, Էդիտ: Եղ ես եմ՝
ժանինը: Բարև, ընկերուիհս: (Է-
դիտին ցոյց է տալիս դատարկ
գավաթը:) Հիշում ես:

Հայտնվում է Ժանը:

ԷՌԻՏ - Աստված իմ, Ժան:

**Ժանը սուլում է ու բազրիքի վրա-
յով սահելով իշնում:**

ԺԱՆ - (գոռում է):Ո՞նց են գործերդ,
Դիդու:

**ԺԱԿ - Էրկիլ-Ելուազյեն-Ֆրանսուա-
Մարի-Եմանուիլ-Սավինյի դե
ժակ:**

**ԷՌԻՏ - Բարեկամներս, ձեզ հետ եմ
սկսել իմ ուղին: Ձեզ հետ էլ ուզում
եմ գնալ մինչև վերջ:**

Երգերի փողոցը

Սա փողոցն է երգերի,
Սա փողոցն է խնդության,
Որտեղ ամեն մի տան մեջ
առանց պատճառի
Երգում են ամրոջ ձայնով,
Եվ վաղ առավոտից
բոլորն են երջանիկ.
Եվ կանչերում արվարձանների
Ամեն մեկը կապուտ
երկինք է տեսնում.
Այստեղ էլ կհանդիպն
դժբախտ սիրո՝
Սիրում են մեկմեկու, չեն սիրում,
համբուրվում են, անցնում
Երգելու համար, ահա և բոլորը:
Բոլոր հուսահատները, դուք,
որ լալիս եք առանց պատճառի,
Որպեսզի երգել սովորեք, եկեք
ապրելու փողոցում երգերի:

**ԷՌԻՏ - Ես ծնվել եմ 1915 թվականի
դեկտեմբերի 19-ին, Փարիզում,
Բելվիլ փողոցում: Հայրս՝ Լուի**

Գասսիոնը, շրջիկ ակրոբատ էր:

Ժանը կերպավորում է հորը:

Մայրս՝ Լին Մարսսան, երգում էր
սրճարանում, կատարելով այն
ժամանակ տարածված կենցա-
ղային երգեր:

Ժանինը կերպավորում է մորը:

Իմ ծննդից շատ չանցած նա լքեց
մեզ, ու ես հորս հետ սկսեցի թա-
փառել ձամփաներով:

**Հնչում է երաժշտություն: Կամին
ու Ժակը նվագում են մանդոլի-
նայի ու կիթառի վրա:**

ԳԱՍՍԻՈՆ -Կանգ առնենք այստեղ,
գուցե հաջողվի մի բան վաստա-
կել:

**ԷՌԻՏ - Հրապարակում, թիստրոյում
կամ զորանոցային ձաշարանում
փոելով հին գորգը՝ հայրս իր
մնջախաղն էր ցուցադրում:**

**Գասսիոնը մնջախաղ է ներկա-
յացնում:**

Իսկ ամեն ներկայացման վերջում,
ցոյց տալով ինձ, ասում էր.

ԳԱՍՍԻՈՆ -Իսկ իիմա աղջնակը
ափսեռվ կանցնի ձեր կողքով:
Հետո, ի նշան շնորհակալության,
նա վտանգավոր ցատկ կկատա-
րի:

ԷՌԻՏ -Ես ափսեռվ շրջում էի հան-
դիսականների մեջ, բայց ցատկ
երբեք չէի անում: Իհարկե, մի
անգամ, երբ շատ բողոքեցին,
հայրս ասաց...

ԳԱՍՍԻՌԸ - Դուք ուզում եք, որ աղջնակը ձեր հածովքի համար ջարդի՞ իր վիզը: Բայց քանի որ ես սխալվեցի ու սովորությանս համաձայն հայտարարեցի այդ համարը, պետք է ասեմ ձեզ, որ դա նրա համար խաղ ու պար է, պարզապես այսօր նա դեռ չի կազդուրվել գրիպից ու ձեզ համար կերգի...»

ԷԴԻՏ - Եվ իմ բարալիկ, չամրացած ճայնով ես երգեցի պարզունակ երգի մի քայլակը:

(Հնչում է ֆրանսիական հին վալսի մեղեդի:) Երկար ժամանակ կարծում էի, որ հայրիկ Գասսիոնը ինձ չի սիրում, բայց ես սխալվում էի: Մի անգամ Սանսում, որտեղ իշխանել էինք էժանագին հյուրանոցի մի համարում, դուռը բախեցին: Ես խաղում էի տիկնիկիս հետ, հայրս սափրում էր՝ ինձ վրա ուշադրություն չդարձնելով:

ԳԱՍՍԻՌԸ - Մտեք:

Ծեմին ամուսնական գույգ է հայտնվում, նրանց կերպավորում են ժանինն ու Ժակը:
Նրանք միջին տարիքի կին ու տղամարդ են:

ՏՂԱՄԱՐԴԸ - Բարի օր, մսյո:

ԳԱՍՍԻՌԸ - Ինչո՞ւ կարող եմ ծառայել:

ՏՂԱՄԱՐԴԸ - Հասկանո՞մ եք, պարոն Գասսիոն, եթե չեմ սխալվում... Սա բավականին արտասովոր այցելություն է: Կինս ու ես բավականություն ենք ունեցել

նախօրեին տեսնել ձեզ ձեր աղջկա հետ: Մենք նաև տեղյակ ենք, որ դուք միայնակ եք:

ԿԻՆ - Այսինքն՝ աղջիկը մայր չունի:
ԳԱՍՍԻՌԸ - Հետո՞ ինչ:

ՏՂԱՄԱՐԴԸ - Հասկանո՞մ եք, սա բավականին անսովոր գործ է, նոյնիսկ չգիտեմ, ինչից սկսեմ: (Կինը խիստ նայում է տղամարդուն:) Ահա հարյուր հազար ֆրանկի չեկ: Եթե ցանկանում եք, վաղն իսկ գումարը կփոխանցվի ձեզ:

ԿԻՆ - Անշուշտ, մի պայմանով:

ԳԱՍՍԻՌԸ - Ինչ պայմանով:

ԿԻՆ - Ձեր աղջկա դաստիարակությամբ զբաղվելու իրավունքի համար:

ԳԱՍՍԻՌԸ - Ահա թե ինչ: (Ծիծաղում է:) Լսո՞ւմ ես, Դիդու:

ԷԴԻՏ - Լսում եմ, հայրիկ:

ՏՂԱՄԱՐԴԸ - Մտածեք, մսյո:

ԿԻՆ - Մենք ունեոր մարդիկ ենք, լավ իին տոհմից: Աղջկա համար մեզ մոտ լավ կլինի:

ՏՂԱՄԱՐԴԸ - Բերտա, աղջիկը մայր չունի:

ԳԱՍՍԻՌԸ - Աղջիկս դրանից նոյնիսկ չափից ավելին ունի:

ՏՂԱՄԱՐԴԸ - Ձեզ չի բավարարում գումարը, մսյո: Բայց մեր ժամանակների համար դա մեծ փող է:

ԳԱՍՍԻՌԸ - Կորենք գրողի ծոցը ձեր փողերով: Իսկ եթե ուզում եք երեխաներ ունենալ, ինքներդ նրանց սարքեք: Չե՞ որ դա այնքան էլ դժվար բան չէ, պարոնայք:

**Էլեգանտ զույգը ետ-ետ զմալով
դեպի դուռը, անհետանում է:**

ԳԱՍՍԻՌՈ - Ինչպես նրանք համար-
ձակվեցին գալ այստեղ: Թող որ
չքավոր եմ, շրջիկ ակրոբատ,
բայց ես արժանապատիվ մարդ
եմ ու երեխաներ չեմ վաճառում:
(Գոռում է Էղիտի վրա:) Ինչ ես
նստել, երգերը սովորիր:

ԷԴԻՏ - Ես խեղճ, դժբախտ եմ: Ես
որբուկ եմ: (Լալիս է:)

ԳԱՍՍԻՌՈ - Զայնդ կտրիր: Մայրդ
քեզ լքել է, երբ երկու տարեկան էլ
չկայիր... գարշելի պոռնիկը:
Չհամարձակվեն զռոալ, լսո՞ւմ ես:
Դն: Դե, վերջ տուր, լսո՞ւմ ես...
(Ծոյում է Էղիտի գլուխը:) Երբեք
ոչ ոքի քեզ չեմ վաճառի:

ԷԴԻՏ - Քեզ լինի քո տիկնիկը...
(Տիկնիկը շպրտում է հատակին:) Այդ օրը հասկացա, որ հայրս սի-
րում է ինձ: Հայրիկ Գասսիոն, ես
հիշում եմ քո վերջին րոպեները:
Դու, միշտ ապրած այնպես, ասես
վաղվա օր չի լինելու, քո նիհա-
րած, սմբած դեմքը շրջեցիր դե-
պի ինձ ու թույլ ձայնով ասացիր...

ԳԱՍՍԻՌՈ - Հողակտոր գնիր, երիտ:
Երբ լավ ֆերմա կա, կարելի է
հանգիստ ապրել ու չվախենալ,
որ կսատկես աղքատության մեջ:

ԷԴԻՏ - Եվ, այնուամենայնիվ, ես թո-
ղեցի քեզ: Ես հեռացա, ձգտելով
լինել քեզ նման. լիովին ազատ:

«Էսպերանս» կյուրանոցի սրճա-
րանը: Հայտնվում է քափառաշր-

**Ջիկների խումբը: Հաճախորդները
նողկանքով մռայլվում են:**

ՄՐՃԱՐԱՆԱՏԵՐ - Ո՞վ ձեզ ներս թո-
ղեց... պարոնայք... Ես չեմ ուզում
ձեր պատճառով տհաճություններ
ունենալ: Գարսին... (Մատուցողը
արագ մոտենում է:) Սա ինչ բան
է: Հաճախորդները կդադարեն
այստեղ գալ: Նայեք դրանց դեմ-
քերին ու դա կհասկանաք:

ԿԱՄԻԼ - Իսկ ձեզ ինչն է խանգա-
րում լինել բարի սրճարանատեր:
ԺԱԿ - Ինչպես եք խոսում արտիստ-
ների հետ:

ՄՐՃԱՐԱՆԱՏԵՐ - Բահ, արտիստ-
ներ:

ԺԱԿ - Մեռնեմ, թե սուտ եմ ասում՝
մենք արտիստ ենք, մյո:

ԷԴԻՏ - Մի անհանգստացեք, մենք
շուտ կգնանք... Ահա մի թուղթ,
որը ձեզ կապահովագրի հնարա-
վոր տհաճություններից... Կար-
դացեք... արտիստներ, երեք
արտիստ... մեկ, երկու, երեք...

ՄՐՃԱՐԱՆԱՏԵՐ - Ծնորհակալութ-
յուն, եթե չկարողանայի հաշվել
միշև երեքը, իմ հաստատությունը
վարուց չէր լինի... Լավ... լավ, հա-
մենայնդեպս, աշխատեք որքան
հնարավոր է արագ կուլ տալ ձեր
ճաշը... Գարսին, սպասարկիր:

**ԺԱՆԻՆՐ և Ալբերը հայացքներ են
փոխանակում:**

ԺԱԿ - Դու ցնդել ես, մէմ: Ինչո՞ւ մեզ
քարշ տվեցիր այստեղ:

ԷԴԻՏ - Ես գիտեմ՝ ինչ եմ անում:

ԺԱՆ - Եվ ինչպես դուրս պրծնենք
այս պատմությունից:

ԵԴԻՏ - Ճաշից հետո կլինի լավ
տրամադրություն, լավ աշխա-
տանք ու լավ երեկո: Չէ՞ որ դեռ
չենք պառավել:

ԺԱՆԻՆ - Ինչ ես ասում:

ԵԴԻՏ - Ոչինչ:

ԺԱԿ - Ժանին, գնա տոնավաճառ ու
ակորդեոնիստին գտիր. նա երևի
արդեն հավաքել է փողերը:

**Մասուցողը սեղանին է դնում ու-
տելիք ու մի շիշ:**

ԵԴԻՏ - (Արձարանատիրոջը): Մսյո,
այստեղ եկեք:

Սրբարանատերն անվճական
մոտենում է խմբին, նրա նույնից՝
բռնելով դրամարկողը, մոտենում
է և տիրուիին:

ԵԴԻՏ - Խմեք մեզ հետ ի նշան հաշ-
տության: (Արձարանատիրոջը և
տիրուիուն բաժակ է տալիս:) Ձեր
առողջության կենացը, մսյո: (Բո-
լորը խոսում են:) Դուք, իհարկե,
հասկանում եք, որ հիանալի ճա-
շի համար վճարելու գրոշ անգամ
չունենք:

ՏԻՐՈՒԾԻ - Ինչպես թե...

ԵԴԻՏ - Բայց ոչինչ, մսյո, մենք ար-
տիստ ենք, իսկ մեր աշխատան-
քի համար միշտ էլ առատ են
վարձատրում: Ձեր հաշիվը վճար-
ված կլինի այսօր իսկ, օրվա երկ-
րորդ կեսին: Մենք ելույթ ունենք
գորանցում...

ՄՐՃԱՐԱՆԱՏԵՐ - Դժվար կացութ-

յան մեջ ինձ դրեցիք... Ինչ ա-
րած... Գնդապետն իմ հին բարե-
կամն է, ծայրահեղ դեպքում նա
չի թողնի, որ ինձ...

ՏԻՐՈՒԾԻ - Այսինքն... Ինչ ես ասում,
իման: «Ծայրահեղ դեպքում»:
Դու նայիր, թե ովքե՞ր են քո ա-
ռաջ: Ախր, ոչ մի զինվոր մի սու էլ
չի տա այս թափառաշրջիկներին:
Առաջին իսկ համարից հետո
սրանց գլուխները կխցկեն հասա-
րակական արտաքնոցը, իսկ հե-
տովքները կօգտագործեն ըստ
նշանակության: Հապա բարձ-
րացրու սրանց փեշերը, սրանք
իհմա էլ առանց վարտիք են...
Պոռնիկներ:

ԺԱԿ - Մադամ, կխնդրեի ձեզ...

ՏԻՐՈՒԾԻ - Վստահ եղիր, համերգից
հետո սրանց կտանեն կամ
շտապ օգնության, կամ ոստիկա-
նության կառքով:

ԵԴԻՏ - Ձեր կենացը, մսյո... Ժակ,
հարցրու այս տիկնոջը, որտե՞ղ է նա
ավարտել համալսարանը՝ Սորբո-
նովի, իսկ գուցե Փարիզի որովայնի
վաճառասեղանի ետևում:

Հյուրերը ծիծառում են:

ԺԱՆ - Մնաք բարով: Կսպասենք
ձեզ գորանցում, համերգին:

ԵԴԻՏ - Այդ օրերին տասնվեց տա-
րեկան էլ չկայի, երբ երևակայե-
ցի, այո, այո, մի զարմացեք, որ
տնօրենն եմ շրջիկ թատերախմ-
բի, որի ազդագրերին ոչ այնքան
գրագետ, անվստահ ձեռքով
գրված էր.

ԺԱԿ - (գոռում է): Զիզի:

ԺԱՆԻՆ - Զոգնտու:

ԺԱՆ - (գոռում է): Եվ Զուզոնի:

ԿԱՄԻԼ - Համերգի մեկ բաժին, որտեղ ինչ ասես՝ կար:

ԷԴԻՏ - Երգում է միսս Էդիտը: Ինչո՞ւ «միսս»: Պարզապես ինձ թվում էր, որ այդպես ավելի լավ է հնչում:

Փողոցային պարահանդես

**Պարահանդես է երբ փողոցում իմ...
Ոչ ոք չի տեսել այդքան խնդրոյուն
ամրոխ այդպիսի,**

Պարահանդես է երբ փողոցում իմ.

Փոքրիկ բիստրոների բեմերում,

Սիրահարներն են զուգերով

պտտվում

Ժպիտը շութերին ու աչքը՝ աչքին:

**Պարահանդես է այսօր երեկո
իմ հին փողոցում.**

**Մի քիչ հուզված են բոլորն
անխտիր...**

**Գուցե դա հենց քո
ժամադրությունն է՝**

Պարահանդեսը իմ փողոցում:

...

Պարահանդես է իմ փողոցում...

ԷԴԻՏ - Հինգ կիսաքաղց թափառաշրջիկներ մի կողմից և ավարաների փոքրաթիվ պատահական մի խումբ՝ մյուս. ահա այն ամենը, ինչ մենք ունեինք այն ժամանակ: Ցերեկը բուլվար, ֆուրգոն կամ գնացք, գիշերը՝ խղճուկ սենյակ կամ պարապուտ, ուր, թաքնվելով ոստիկանությունից, կարելի է

պառկել գունդուկծիկ եղած ու քնելոց առաջ երազել համեղ կերակուրի, տաք անկողնու, հեռավոր երկրների և գեղեցիկ քաղաքների մասին, իիացած հանդիսատեսի ծիչերի և պայթող ծիծաղի մասին, որոնք թրատում են լուսայունը, ինչպես կրակների ցոլանքը՝ Սենժանի տոնի ժամանակ: Եվ ահա հենց այդ ժամանակ էլ, իմ այդ անուրախ օրերին, հանդիպեցի իմ առաջին տղամարդուն, կապուտաչյա տղային մանկական ժամանակ: Նրան ասում էին փոքրիկ Լուի:

**Էդիտին մոտենում է փոքրիկ
Լուին, որին կերպավորում է ժանքը:**

ԼՈՒԻ - Ողջոյն, պստիկ:

ԷԴԻՏ - Ողջոյն, փոքրիկ:

ԼՈՒԻ - Ճանաչեցիր:

ԷԴԻՏ - Ճանաչեցի: Երբ ելույթ էինք ունենում հորս հետ, որու նետեցիր ծակ հինգ սուանոց:

ԼՈՒԻ - Հա, ես էի: Ո՞ր ես գնում:

ԷԴԻՏ - Տուն:

ԼՈՒԻ - Որտե՞ղ է քո տունը:

ԷԴԻՏ - Որտեղ պատահի:

ԼՈՒԻ - Դե, այդ դեպքում գնանք ինձ մոտ: Միասին կապրենք:

ԷԴԻՏ - Ոնց որ շատ հեշտ է քեզ համար ամեն բան:

ԼՈՒԻ - Իսկ ինչո՞ւ թարդացնել: Ես խանութում եմ ծառայում: Գնումներ եմ առաքում:

ԷԴԻՏ - Իսկ ի՞նչ եմ անելու ես:

ԼՈՒԻ - Երգելու ես ու գրաղվես տնային գործերով: Գնանք:

ԷԴԻՏ - Ո՞ր:

ԼՈՒԻ - Սենյակ կվարձենք Բելվիլում:

Իսկ ձաշ եփել կարելի է պահածոների տուփերի մեջ:

ԷԴԻՏ - (Ժիծաղում է): Զիլ է:

ԼՈՒԻ - Իսկ երեկոները կգնանք կինո, «Ալկազար»-ում չապիխյան ֆիլմեր դիտելու:

ԷԴԻՏ - Չապիխյան ֆիլմներ: Այսու, դրանք պաշտոն եմ: Դե գնանք, շուտ գնանք: (*Հնչում է չապիխյան երաժշտություն:*) Պայծառ, ժայռերես Փոքրիկն ինձ դուր եկավ առաջին հայցքից ու ես առանց մտածելու գնացի նրա ետևից: (*Եղիտը և Լուին պարում են:*) Իսկ հետո... ծնվեց իմ փոքրիկ Մարսելը... Մենք ապրում էինք «Լյավենիր» հյուրանոցում, Բելվիլ փողոցի վրա, թիվ 105:

ԼՈՒԻ - Ճաք տված պատերով սենյակում...

ԷԴԻՏ - Բակին նայող պատուհանի լայնքով, պարանի վրա կախված էին տակաշորերն ու մեր հագուստը...

ԼՈՒԻ - Իսկ մահճակալի տակ ճամպրուկներ էին, հնոտիք ու կեղտոտ սպիտակեղեն: Մի սուանգամ չունեինք:

Եղիտն ու Լուին օրորում են երեխային, հետո պարում են: Հայտնվում է տաճտիրուիին:

ՏԱՆՏԻՐՈՒԾԻ - Եթե վաղը չվճարեք փողը, մինչև վերջին սուն, որ ինձ պարտք եք երկու ամսվա համար ու չկորչեք էստեղից, իմացեք, դա

ձեր վերջին օրն է ազատության մեջ: (Գնում է:)

ԷԴԻՏ - Բայց մենք փող չունեինք: Լուիի վաստակածը իերիքում էր քաղցից չմեռնելու համար: Ու որպեսզի բնակարանի համար չվճարեինք, կոնսյերժի սենյակի կողքով չորեքթաթ ծլկեցինք:

ՀՆՉՈՒՄ Է «Պադամ, պադամ»:

ԷԴԻՏ - Բայց այդպես երկար չէր կարող շարունակվել: Ու մի օր իմ աղջիկը հիվանդացավ: Ես վազեցի փողոց, որպեսզի մի քիչ փող ծարեմ: Ամբողջ օրը թափառեցի փողոցներում՝ երգելով իմ քառյակները ընկերուիուս ակորդեոնի նվագակցությամբ, երբ հանկարծ հայտնվեց Լուին:

ԼՈՒԻ - Եղիտ, Մարսելը հիվանդանցում է... նա մեռնում է:

ԷԴԻՏ - Գժվել ես...

ԼՈՒԻ - Եթե ուզում ես հասցնել նրան տեսնել... վազենք:

ԷԴԻՏ - Մենք սլացանք հիվանդանց, բայց մեզ ներս չթողեցին: Մենինգիտ. կարծ ասաց բժիշկը: Ութ օր գնում էի այնտեղ՝ հրաշք հուսալով: Իններորդ օրվա նախօրեին՝ ուշ գիշերին, ինչ-որ նախազացումով առաջնորդվելով, ոտքով գնացի հիվանդանց: Իսկ իմ փոքրիկ Մարսելը արդեն մեռած էր:

ԼՈՒԻ - Ամեն ինչ վերջացած է, եղիտ:

ԷԴԻՏ - Այո, ամեն ինչ վերջացած է...

ԼՈՒԻ - Գնանք տուն:

ԷՌԻՏ - Ոչ, Լուի: Գնա մենակ... Գիտե՞ս, ինձ թվում է, որ միայն նա էր մեզ կապում իրար: Մնաս բարով, Լուի, ու մի բարկացիր... Ես չեի կարողանում ոչ խոսել, ոչ լաց լինել, ես ոչնչացած էի: Ես քայլում էի քաղաքով, որն ինձ օտար էր թվում, պաղ, անծանոթ: Քայլում էի՝ ինքս էլ չիմանալով, թե ուր:

Գիշերային Փարիզով քափառում է մոայլ Էդիտը:

ԷՌԻՏ - Մինչ այդ երեկո կարծում էի, թե Ֆրանսիայում իսկական տղամարդիկ դեռ չեն վերացել:

ՍԵՐԴԱՆ - Խոսեց վանական մուկը: Որքան արժե քո սերը, մէմ:

Անծանոթ քաղաք

Անծանոթ քաղաքում
Ոչինչ հածելի չէ ինձ,
Ես քայլում եմ փողոցներով,
Որոնք շատ հեռուն են տանում ինձ.
Ես քայլում եմ փողոցներով,
Անվերջանալի փողոցներով,
Գետափերով, փողոցներով,
Եվ բուլվարներով դատարկ...
Եվ լսում եմ դղրդյուն՝
Կամրջով անցնող գնացքի,
Որն ինչ-որ տեղ է սլանում...
Անծանոթ քաղաքում

առավոտյան ու երեկոյան
Ինչպես անտուն մի շուն,
Ես գնում, վերադառնում եմ...
Անցորդների եմ հանդիպում՝
Բոլորն ինչ-որ տեղ շտապող
Եվ որոնք ժամանակ չունեն

Ձեզ ժպտալու:
Անծանոթ քաղաքում,
Երբ իշնում է գիշերը,
Ես վախենում եմ
դատարկ պատերից,
Լրիկ մերկ ու գորշ պատերից...

ԷՌԻՏ - Տասը ֆրանկ:

ՍԵՐԴԱՆ - Դե ինչ... Գնանք:

ԷՌԻՏ - (որոշ ժամանակ քայլում են,
ապա Էդիտը կանգ է առնում
նստարանի մոտ, անսպասելի
ծանկում է տուփին ու դուրս թա-
փում փողերը): Ինչ է մտքովդ
անցնում. փողոցային եմ, կպառ-
կեմ տասը ֆրանկով: Ես դրանք
երեսիդ կշպոտեի, բայց պակա-
սում է հենց այդ տասը ֆրանկը,
հասկանո՞ւմ ես, տասը ֆրանկ,
որպեսզի թաղեմ աղջկաս՝ Մար-
սելին: (Բարձր լալիս է:)

ՍԵՐԴԱՆ - Լավ, վերջ տուր...
(Փնտրում է գրպաններում:) Վերցրու փողը... Ըհը, էլիս էլի:
Հա, կյանքը հանաք բան չէ:

ԷՌԻՏ - Էհ...

ՍԵՐԴԱՆ - Բարկանո՞ւմ ես:

ԷՌԻՏ - Իսկ դո՞ւ:

ՍԵՐԴԱՆ - Երբեմն պետք է բարի լի-
նել, ձստիկ: Ահա և վերջ: Ձեզ ո-
չինչ չի պահում իմ կողքին:

ԷՌԻՏ - Ծնորհակալ եմ, մայո, շնոր-
հակալ եմ...

Ես վախենում եմ պաղ
մահիծով հյուրանոցից,
Եվ դաժան առավոտից,
որն ինձ կարթնացնի,
Որովհետև ուզում եմ քնել:
Քնել անգամ ցերեկը...

ԷԴԻՏ - Ես տասնութ տարեկան էի:
Չգիտեի՛ ուր գնալ: Ինձ համար
մի հաշիվ էր: Ու հայտնվեցի
Պիգալ հրապարակի պարասրա-
հում. բարերի, սուտենյորների ու
ծախու կանանց շրջապատում:

Հնչում է մեղեդի՝ «Սիրեկաններ
մեկ օրով»:

ԷԴԻՏ - Իմ պարտականությունների
մեջ էր մտնում հատակ լվանալը,
բաժակներ փայլեցնելն ու երգելը:
ՀԱՄԵՐԳԱՎԱՐ - Իսկ այժմ՝ փոքրիկ
երիտ Գասսիո՞ն:

Ակորդեոնիստը

Անառակ աղջիկը կանգնած է մենակ
ինչ-որ տեղ՝ քառուում
ծանապարհների,
Եթե աղջիկը մոռյլ տեսք ունի,
Սա ոչ ոքի պետք չէ:
Եվ տղան նրա մոտ չի վերադառնա,
Եվ ջարդված են երազները բոլոր,
Ու ողջ կյանքն է ջարդված...

.....
Սա լսում է «Յավա» պարը,
Սա լսում է «Յավա» պարը.
.....
Եվ ճշալ է ուզում մեղեդու տակ,
Ու պտտվել, պտտվել, պտտվել,
պտտվել...

.....
Դադարեցնեք: Այդ մեղեդին...

ԷԴԻՏ - Ես թեք հարթությամբ գլոր-
վում էի ինչ-որ տեղ, և հայտնի չէ,

թե ինչ կլիներ ինձ հետ, եթե չի-
ներ պատահականությունը, որը
մեկընդմիշտ փոխեց իմ կյանքը:

Հնչում է «Պաղամ, պաղամ»:

ԷԴԻՏ - Այդ օրը՝ 1935 թվականի
մոայլ հոկտեմբերյան կեսօր, աշ-
խատում էի Տրուայոն փողոցի և
Մագ-Մագոնա ավենյուի անկյու-
նում: Ինձ նվագակցում էր ընկե-
րուիս՝ ակորդեոնով: Գունատ,
չսանրված, պատոված թևքերով
սվիտերը հագիս, ես երգում էի
ժան Լենուարի քայլակները:

Սա ծնվեց ծնծղուկի նման,
Սա ապրեց ինչպես ծնծղուկ,
Սա կմեռնի ինչպես մի ծնծղուկ:

Հայտնվում է բարձրահասակ,
լավ հագնված տղանարդ: Լուի
Լեալենն է:

ԼԵՊԼԵ - (գոռում է): Խելքդ գցել ես:
Դու ինչ ես անում:
ԷԴԻՏ - Ինչպես թե՝ ինչ: Երգում եմ:
ԼԵՊԼԵ - Երգո՞մ ես: Այդպես կարելի
է ծայնը կորցնել, փոքրիկ:

ԷԴԻՏ - Իհարկե, ես գիտեմ, ինչ է
նշանակում ծայն կորցնելը, բայց
դա էնքան էլ ինձ չի անհանգս-
տացնում. շատ ավելի կարևոր
հոգսեր կան:

ԼԵՊԼԵ - Դու լրիվ հիմար ես: Դու
պետք է որ հասկանաս...

ԷԴԻՏ - Բայց ինչ-որ բան պետք է ու-
տեմ:

ԼԵՊԼԵ - Իհարկե, փոքրիկ... Միայն
թե կարող էիր այլ կերպ աշխա-

տել: Ինչո՞ւ քո ձայնով չերգես կաբարեում:

ԷԴԻՏ - Պատոհած սվիտերով, էս ողորմելի փեշով ու ոտքիս մեծ կոշիկներով: Ինձ հետ դեռ պայմանագիր չեն կնքել: Իհարկե, եթե դուք կարողանայիք առաջարկել ինձ...

ԼԵՊԼԵ - Իսկ եթե որոշեմ բռնել քո խոսքից:

ԷԴԻՏ - Փորձեք, կտեսնեք:

ԼԵՊԼԵ - (հեգնոտ ժայռավով): Լավ, կփորձենք: Ուրիշ զգեստ չունես:

ԷԴԻՏ - Ունեմ սրանից ավելի լավ փեշ ու ինձ համար ցնցող սվիտեր եմ գործում: Բայց դեռ չեմ ավարտել:

ԼԵՊԼԵ - Մինչև ուրբաթ կավարտեն:

ԷԴԻՏ - Հավանաբար:

ԼԵՊԼԵ - Այն.... Ի՞նչ է անունդ:

ԷԴԻՏ - Էղիտ Գասսիոն:

ԼԵՊԼԵ - Այդպիսի անունը էստրադայի համար չէ:

ԷԴԻՏ - Ինձ նաև կոչում են Տանյա:

ԼԵՊԼԵ - Եթե ոռու լինեիր, դա վատ չէր լինի...

ԷԴԻՏ - Նաև Դենիս Ժեյ:

ԼԵՊԼԵ - Եվ վերջ:

ԷԴԻՏ - Ոչ, մեկ է՝ Յուգնետ Էլիա...
Ինձ էդպես հայտարարում են պարահանդեսներում:

ԼԵՊԼԵ - Եվ վերջօք: Շատ չէ: Դու ավելի շուտ վախվորած թռչնիկ ես՝ իսկական փարիզյան ճնձորուկ, և ամենաշատը քեզ կսազեր Մույանո անունը: Ցավոք, այն արդեն զբաղված է: Պետք է ուրիշը գտնել: Սպասիր: Փարիզյան ժար-

գոնով «Մույանո»-ն Պիաֆն է:
Ինչո՞ւ դու, փոքրիկ, չդառնաս
Պիաֆ:

ԷԴԻՏ - Պիաֆ:

ԼԵՊԼԵ - Իհարկե: ՎՃռված է: Այսու-
հետև դու էղիտ Պիաֆն ես:

ԷԴԻՏ - Պի-աֆ... Պիաֆ-աֆ-աֆ:
Հայ...

ԼԵՊԼԵ - Եվ այսպես, պստիկ Պիաֆ,
վաղը, ժամը չորսին կգաս փորձի:
Կերգես քո երգերը ու մենք
կմտածենք, թե ինչ կարելի է անել
քեզ հետ:

Լեպլեն հանում է այցեքարտը,
տասքանկանցը և պարզում Է-
ղիտին:

ԼԵՊԼԵ - Այստեղ իմ անունն է, հաս-
ցեն և...

ԷԴԻՏ - Իսկ սա՞ ինչի համար է:

ԼԵՊԼԵ - Իմ անունը Լուի Լեպլեն է,
ես «Ձերնիս» կաբարեի տնօրենն
եմ: Քառասուն ֆրանկ օրը՝ սկզբի
համար: Եվ այսպես, վաղը չոր-
սին: Խնդրում եմ, չուշանաս:
(Գնում է:)

ԷԴԻՏ - Այ քեզ հրաշք... (Երաժշ-
տություն է հնչում: Էղիտը մտած-
կուտ նայում է այցեքարտին:)
Էղիտ Պիաֆ... Էղիտ Պիաֆ...
Ինչպես տեսնում եք, իմ կարծ
կյանքի ընթացքում ինձ կնքել են
ոչ մեկ անգամ, բայց էս անգամ
կարծես թե՝ ընդմիշտ:

Հնչում է մեղեղի՝ «Պայամ, պա-
դամ»:

ԷԴԻՏ - Իսկ երեկոյան, երբ ընկե-
րուիուս հետ վերջապես տուն

վերադարձանք՝ մեր նեղլիկ, պահարան հիշեցնող սենյակը, ինձ հանկարծ այնպիսի անտանելիթախիծ պատեց, որ մահճակալին ընկնելով ասացի. «Չեմ գնա Էնտեղ: Ինձ հերիք են փորձությունները: Նորից ինչ-որ բան կձախողվի ու ես էլ չեմ դիմանա: Գրողի ծոցը գնան բոլորը: Չեմ գնա»:

ԺԱՆԻՆ - Ցնդել ես: Մտածիր, ինչ ես ասում: Իսկ եթե դա ծակատագիր է: Գուցե վերջապես բախտդ կրերի, մարդամեջ կմտնես ու հայտնի մարդ կդառնաս:

ԷԴԻՏ - Իսկ եթե՞: Իսկ գուցե՞: Միայն դա եմ լսում: Չէ, ժանին, էլ ոչնչի չեմ հավատում:

ԺԱՆԻՆ - Գիտես, երբ Ռուժե Մարսիանոյին, բոքսի նախկին չեմ-պիտոնին հարցրին, թե նրան ինչպես է հաջողվել խոյս տալ բոլոր թակարդներից, որոնք լարել են նրա դեմ, նա պատասխանել է. «Երևի երկնքում կա մեկը, ով ինձ շատ է սիրում»: Դե, գուցե քո բախտը գոնե այս անգամ բերի, հը...

ԷԴԻՏ - Հաջորդ օրը, կեսօրից հետո դեռ պառկած էի անկողնում: Ես հաստատ վճռել էի, որ չեմ գնալու, բայց երբ ժամացոյցի սլաքներն արդեն մոտենում էին երեքն անց կեսին, անսպասելի վեր թռա, արագ հագնվեցի ու հրապարակով վազեցի դեպի մետրո: Ինչո՞ւ փոխեցի իմ որոշումը, չգիտեմ: Բայց ժամը հինգին՝ մեկ

ժամ ուշացած, ես արդեն երգում էի Լեպլեի մոտ:

Մոտոցիկլիստը

Արծվի նկարով բաժկոն էր հագին, Սապոգներ՝ կարված սատանու կաշվից, Եվ մոտոցիկլը նրա պոկվում էր թնդանոթային արկի ողջ թափով՝ Սարսափ սփռելով շուրջքոլորը իր: Նա չէր սափրվում, մազերն անխնամ, Եղունգներն էին սևացած կեղտից. Կրծքին դաջված էր տառերով շատ մեծ. «Ժեմա, սիրում եմ, ես սիրում եմ քեզ»...

Գոռում էր բարձր, որ ամենից շատ Մոտոցիկլն է աշխարհում սիրում... Մի դեմք նման սուրում էր ձամփով, Սլանում միջով թափուտ անտառի, Դարուփուերով, անցումներով լի, Հատելով անգամ գնացքի ուղին... Ու սատանի պես՝ անվախ ու անդող. Անելով մի նոր թռիչք մահացու - Իր հզոր թափով առաջ մղվելով Բախվեց գնացքին դեպ

հարավ մեկնող...

ԷԴԻՏ - Հը, ո՞նց է:

ԼԵՊԼԵ - Ծատ լավ է: Դու փառքի կհասնես, համոզված եմ: Բայց պետք է աշխատել, ջանալ: Ուրբաթ օրը մեզ մոտ է լինելու ողջ Փարիզը: Եվ այսպես, ուրբաթ օրը կկայանա քո դեբյուտը:

Էդիտը կծկվում է մի ամելյունում: Լեպլեն դուրս է գալիս նախարեմ:

Հնչում է նվազախմբային հզոր ակկորդ:

ԼԵՊԼԵ - - Հարգարժան տիկնայք և պարոնայք: Մի քանի օր առաջ անցնում էի Տրուայոն փողոցով: Մայթին մի գունատ աղջիկ էր երգում՝ թախծոտ դեմքով: Նրա ձայնը հոգուս խորքերը թափանցեց: Նա հոգեց ինձ, ցնցեց: Հիմա ուզում եմ ծանոթացնել նրան ձեզ հետ. նա Փարիզի ամենախսկական զավակն է: Նա չոնին երեկոյան զգեստ, ու եթե չգիտի խոնարհում անել, ապա միայն այն պատճառով, որ ընդամենը երեկ եմ նրան սովորեցրել: Նա ձեր առաջ հանդես կօա այնահսին, ինչպիսին նրան տեսա փողոցում՝ առանց շպարի, առանց գուլպաների: Եվ այսպես, վուալյա, Էդիտ Պիաֆ:

ԷԴԻՏ - Վուալյա, Էդիտ Պիաֆ: Իսկ իմ սվիտերը: Մի թևքը չկա: Հետս բերել եմ ու իմա տենդահար գործում եմ՝ կրկնելով տեքստը: Բայց երկարաձգել, ինչպես երևում է, էլ չէր կարելի:

ԼԵՊԼԵ - (վազելով դեպի Էդիտը): Խելքդ թողրել ես: Թո հերթն է, գնացինք:

ԷԴԻՏ - Իմ սվիտերը...

ԼԵՊԼԵ - Տեսնում եմ, հագիր քո սվիտերը, այդպես էլ կերգես:

ԷԴԻՏ - Նա միայն մի թևք ունի:

ԼԵՊԼԵ - Կարծես թե կույր չեմ:

ԷԴԻՏ - Ու ես հնազանդ վրաս քաշեցի սվիտերը, բայց չգիտեի՝ հետո ինչ անել:

Լեպլեն գրպանից հանում է նորք, սպիտակ շարֆն ու գցում է Էդիտի ուսերին:

ԼԵՊԼԵ - (հանդիսավոր): Այ այսպես: Քեզ եմ նվիրում այս շարֆը, փոքրիկ: Եվ հաջողություն եմ մաղթում քեզ:

ԷԴԻՏ - (հիացմունքով): Ինչ շարֆ է... (Վազում է հայելու մոտ:)

ԼԵՊԼԵ - - Ձիչ շարժումներ արա ու ծեռքերդ էլ քիչ թափահարիր: Դե, պատրա՞ստ ես:

ԷԴԻՏ - Պատրաստ եմ:

ԼԵՊԼԵ - Գնացինք...

Լեպլեն քննում է Էդիտի ձեռքը և դուրս բերում քեզ:

ԼԵՊԼԵ - - Ներողություն եմ խնդրում, պարոնայք: Եվ այսպես, ձեր առջև է Էդիտ Պիաֆը:

Հնչում է նվազախմբային հզոր ակկորդ: Էդիտը կտրուկ ու անվարժ գլուխ է տալիս: Լոուրյուն:

ԷԴԻՏ - Ինձ դիմավորած հոգին սառեցնող լոուրյան բացատրությունը ես գտա միայն շատ տարիներ անց: Մարդիկ, որոնք եկել են կարարե զվարժանալու համար, այնքան էլ գոհ չեն, երբ նրանց հիշեցնում են, որ հենց նրանց կողքին ու ոչ թե յոթ սարից այն կողմ ապրում են ինձ նման աղջիկներ: Եսս մի վայրկյան՝ ու ես կիեռանայի քեմից, երբ հանկարծ ուժերս վերադարձան և ինչպես լինում է ինձ հետ այդպիսի րոպեներին, ես անզուսապ կերպով երգել ցանկացած:

Բրավո ծաղրածուին

Ես մի ծաղրածու ընկեր ունեմ.
Նա անչափ շատ է ծիծաղելի.
Նրա անոնք գրվում է խորագրային
վիրավորանքներով,
Նա շատ տգեղ է և տիխուր,
ինչպես զիխարկը:
Նա ըմպում է մարդկանց
ծիծաղը գինու տեղ
Եվ վրայից կոլ տալիս
«Բրավո»-յի ծիչերը:
Քո քթի համար, որ բռնկվում է
կրակով՝ բրավո,
Քո մազերի համար, որոնք
կարելի է պոկոտել՝ բրավո,
Դու շատ հաջող ես ապակի կոլ
տալիս՝ շատրվանին մագած
Եվ գունդուկծիկ լինում ծիծաղից ի
հածույս պարոնանց...
Քո անհավատարիմ կնոջ համար,
բրավո,
Եվ այն բանի համար, որ դու ես
ափսեները լվանում, բրավո,
Տղադրամ է քոցնում,
կինդ՝ եղջուրներ տնկում զիխիդ,
Իսկ դու քայլակներ
ես երգում և հիմար ծնանում:
Ես արքա եմ ու ես թագավորում եմ,
բրավո,
Կարծես արյունոտ վերք լինի քո ծի-
ծաղը...
Ծափահարեք ինձ, բղավեք.
Ես անակնկալ արեցի ձեզ համար -
Կրկեսի գմբեթի տակից հենց
Ես իմ կնոջը նետեցի ցած...
ԵԴԻՏ - Եվ հանկարծ, երգի վերջում,
մոռացած անավարտ սվիտերիս

մասին, չդիմացա և երկու ձեռ-
քերս վեր բարձրացրի: Եվ իմ
շարֆը, Լուի Լեպիեի նվիրած
սքանչելի, սպիտակ շարֆը սա-
հեց ուսերից ու ընկավ ոտքերիս
տակ: Հիմա ծիծաղ կբարձրանա
և ամեն բան հօդս կցնդի. մտածե-
ցի ես, բայց... ամեն կողմից ինձ
հասան ծափահարությունները:

ԼԵՊԼԵ - Դե, ամեն բան կարգին է,
դու նրանց հաղթեցիր: Եվ այս-
պես կլինի վաղն ու մյուս օրը, և
միշտ:

ԵԴԻՏ - Զգիտեմ... Ոնց որ լավը շատ
է: Երբ կյանքում միայն աքացի-
ներ ես ստանում, դառնում ես
կասկածամիտ: Իսկ գուցե նրանք
ծափահարում էին հենց էնպես...
դե... հենց էնպես...

ԼԵՊԼԵ - Ինչպես՝ էնպես:

ԵԴԻՏ - Դե, ծաղրում էին:

ԼԵՊԼԵ - (ազդված): Ոչ, պստիկ...
Նրանք ծափահարում էին ինչ-
պես պետքն է: Հիմարիկ, ինքո՞ւ էլ
չգիտես, թե ինչ ես անում:

ԵԴԻՏ - Ծնորհակալություն... Դուք
էնքան... էնքան... բարի եք: Դե,
ոնց որ հայրը:

ԼԵՊԼԵ - Այն... Դե ինչ... Կարող ես
ինձ «պապա» ասել: Ու երբեք,
լսո՞ւմ ես, երբեք չզիշես հանդի-
սատեսին: Մեծ գաղտնիքն այն է,
որ միշտ մնաս քեզ հավատարիմ:
Միշտ եղիր, ինչպիսին կաս:

Հնչում է երգ՝ «Երգող սրտեր»:

ԵԴԻՏ - «Ջերնիսը» մոդայիկ հաս-
տատություն էր ու ես՝ ելույթ ունե-

նալով էնտեղ կես տարի, հասցրի տեսնել գրեթե բոլոր ծանաչված մարդկանց. նախարարների, հարուստ արտասահմանցիների, փաստաբանների, արդյունաբերողների, ծիարշավների մշտական հաճախորդների և, իհարկե, թատրոնի, էստրադայի ու նոյնիսկ կինոյի արտիստների: Ումանց ես ցնցակաթվածի էի հասցնում: Այդ եղիտ Պիաֆը սարսափելի վուգար է: (Մեծամասնությանը դուր էի գալիս) - Բրավո, Եղիտ: Իսկ ոմանք սկսեցին հաճախնել «Զերնիս» միայն ինձ համար:

Սպասավորը Էղիտին է հաճանում ծաղիկներով զամբյուղը:

ՍՊԱՍԱՎՈՐ - Խնդրեմ, մադմուազել, սա՝ ծեզ... (Սառը խոնարհվում, գնում է:)

ԷՌԻՏ - Օ, շնորհակալ եմ... ինձ առաջին անգամ են ծաղիկներ նվիրում: (Կարդում է ծաղիկների մեջ դրված քարտը:) Ժան Մերմոզ... (Լեպեհն.) Ո՞վ է:

ԼԵՊԼԵ - Օդային ասս ու Փարիզի կոտոքը:

ԷՌԻՏ - Ասել էի, հա... Եվ, այնուամենայնիվ, որոշ հաճախորդներ շարունակում էին ինձ ընդունել, մեղմ ասած, դժկամորեն:

- Վերջապես Ե՞րբ սրան կվոնդեն:
- Դուք ոհսկի եք դիմում, Լեպլե: Շուտով կդադարեն ծեզ մոտ գալ հաճախորդները:

- Կամ ես, կամ Պիաֆը: Ընտրեք, Լեպլե:

ԼԵՊԼԵ - Պիաֆը:

ԷՌԻՏ - Բայց իմ հակառակորդները չեին հանդարտվում ու մի անգամ ծախողեցին ելույթս:

Լավում է ուժգնացող ծիծառ:

- Ինչ ծիծառելի է նա:

- Ուղղակի ծաղրուծանակ է:

- Լավ էլ համառն է...

ԷՌԻՏ - Պապա, լսում եք: Ինչ անեմ, նրանք ինձ ձեռ են առնում: Ես ինձ արտիստուիի երևակայեցի, իսկ ես...

ԼԵՊԼԵ - Ու շատ լավ արեցիր: Եթե դա զգացել ես, ամեն բան լավ կիխնի: Հիմա ես հանգիստ եմ. դու կհասնես քո ուզածին: Եվ ամենասքանչելին այն է, որ երբ փառքի հասնես, սրանցից շատերը կասեն. «Առանց մեր օգնության նա ոչչի չէր հասնի»: Մի վշտանա, կան մարդիկ, ովքեր հավատում են քեզ: Եվ որպես ապացոյց կարող եմ քեզ հայտնել, որ ստացել ես իրավեր ծայնագրելու քո «Օտարական»-ի ձայնասկավառակը և վաղը առաջին ելույթն ունենալու իրավունքը Ռադիո-Սիտեում:

ԷՌԻՏ - Պապա, դուք իմ բարի հրեշտակն եք...

ԼԵՊԼԵ - Դե... ուրեմն գնացինք ուստորան:

ԷՌԻՏ - Ռեստորան, ինձ հետ: Օ՛, Լեպլե:

Ամուր համբուրում է նրա այտը:

Հորդում է երաժշտություն: Է-
ղիսն ու Լեպլեն մտնում են ռես-
տորան, կանգնում են սեղանիկի
մոտ:

ԼԵՊԼԵ - (նրբակիրթ): Խնդրեմ:

ԷԴԻՏ - (իոնարհումով): Ծնորհակալ
եմ, մսյո: Ես էնքան երջանիկ եմ:
Մտքովս կանցներ, որ ես՝ Բելվիլ
շրջանից աղջիկը, կնստեն լավա-
գույն ռեստորանում Փարիզի ա-
մենահայտնի մարդկանցից մեկի
հետ:

ԼԵՊԼԵ - (ծիծաղում է): Օ, ձստիկ, սա
միայն սկիզբն է: Ես երազում եմ
քեզ լսել Կաննում, մրցույթին,
պարահանդեսում: Այնտեղ ամեն
տարի հավաքվում են լավագույն
երգիչները: Պատկերացնո՞ւմ ես.
Լազուր ափ, շլացուցիչ պարա-
հանդես ու փոքրիկ էդիտը:

ԷԴԻՏ - Գմվել կարելի է: Մ'թե երբսէ
կերգեմ պարահանդեսում:

ԼԵՊԼԵ - (մտախոհ): Հաջողության
պարահանդեսում... Խմենք դրա
համար:

Լեպլեն ու Էդիտը խփում են քա-
ժակները: Հնչում է «Պադամ,
պադամ»:

ԼԵՊԼԵ - Ես հավատում եմ քեզ,
փոքրիկ: Բայց, ցավոք սրտի,
նրանցից շատերի համար դու
դեռ ընդամենը փոքրիկ ֆենոմեն
ես, մարդկային ցեղի հետաքրքիր
տեսակ, հրավիրված միայն հյու-
րերին զվարժացնելու համար:
Իսկ ես ուզում եմ, որ դառնաս իս-

կական արտիստուիի: Ինչպես
կուզենայի օգնել քեզ...

ԷԴԻՏ - Ձեզ ինչ եղավ, պապա: Լավ
չեք զգում:

ԼԵՊԼԵ - Զէ, ոչինչ... Գիտե՞ս, երազ
եմ տեսել, ճատիկ: Մայրս էր եկել
ինձ մոտ: Լուի,- ասաց,- եկել է քո
ժամը: Պատրաստվիր, շուտով
կգամ քո ետևից:

ԷԴԻՏ - Պապա, ես սնահավատ եմ,
բայց ամեն երազի չէ, որ կարելի
է հավատալ:

ԼԵՊԼԵ - Գուց այդպես է, փոքրիկ,
բայց դա սովորական երազ չէր:
Ինձ միայն վշտացնում է, որ մե-
նակ կմնաս, իսկ դու դեռ իմ կա-
րիքն ունես, ձիշտ է:

ԷԴԻՏ - Պապա, սիրելիս... Էդպես
պատահում է: Առավոտյան
կհանգստանաք ու ձեր տխրութ-
յունը կցնուի: Մի մոռացեք, առա-
վոտյան մենք գնալու ենք
Բուլոնյան անտառ:

ԼԵՊԼԵ - Այո, իհարկե: Այդ մասին
չարծե խոսել: (Նշան է անում մա-
տուցողին:) Դու պետք է շուտ
պառկես քնելու, վաղը ելույթ ու-
նես: Առաջին անգամ երգելու ես
ուղիղոյնվ: Իսկ դա պատասխա-
նատու բան է, փոքրիկ: Դե, գնա-
ցինք:

ԷԴԻՏ - Մենք դուրս եկանք փողոց:

ԼԵՊԼԵ - Դե, ահա և քո տունը, փոք-
րիկ... Մնաս բարով, Դիդու...

ԷԴԻՏ - Առավոտյան ձեզ կզանգեմ,
պապա:

ԼԵՅԼԵ - Այո, իհարկե...

Էդիտը համբուրում է Լեպլեին,

նա մտասույզ շոյում է Էդիտի գլուխը, ապա կտրուկ շրջվում է ու գնում: Էդիտը նայում է նրա ետևից:

ԷԴԻՏ - Բայց առավոտյան, երբ զանգեցի Լեպիեին, ինչ-որ մեկը կարծու կտրուկ ասաց. «Անմիջապես եկեք» ու գցեց խոսափողը: Արագ հագնվեցի ու գնացի: Տոնը շրջապատված էր բազմությամբ, որին մի կերպ պահում էին ոստիկանները: Ինձ միանգանից ներս թողեցին, և հաղթահարելով մոհայլ կանխազգացումներս, տուն մտա: Էնտեղ տեսա Լորա Ժերնիին՝ «Ձերնիսի» մատուցողուհուն, որը հեկեկալով իմ կողմը նետվեց ու ասաց. «Լեպիեն սպանված է, Էդիտ, ինչ սարսափ է»: Ոչ մի բառ չասելով, իիանոսվածի սառած հայացքով ու լուսնոտի վիատ քայլքով մտա սենյակ ու տեսա Լեպիեին: Նա կիսապառկած էր անկողնում, գնդակն անցել էր քունքով, բայց դեմքը չէր այլանդակել: Հազիվ քարշ տալով ոտքերս, դուրս եկա փողոց, տաքսի կանգնեցրի, մի կերպ հասա տուն ու հեկեկալով ընկա մահձակալին: Իսկ առավոտյան...

Հնչում է մեղեմ՝ «Ամբոխ»:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Հայտնվում են լրագրավաճառները:

Առաջին լրագրավաճառ - Սպահություն Գրանդ-Արմե փողոցում...

Երկրորդ լրագրավաճառ - Մարդասպանին չեն գտել...

Երրորդ լրագրավաճառ - Կարդացեք, կարդացեք, կարդացեք...

Չորրորդ լրագրավաճառ - Մեղավոր է արդյոք մադամ Պիաֆը, «Ձերնիս» կաբարեի երգչուիին:

ԷԴԻՏ - Ինչ-որ ժամանակ երազում էի տեսնել իմ անոնը թերթերում: Հիմա հնարավորություն ունեի «հիանալ» դրանով: Գրեթե ամեն օր իմ մասին բղավում էին խաչմերուկներում, փողոցներում շրջվում էին իմ ետևից: Ես դարձա ասեկուսի առարկա բարեպաշտ փառիզեցիների շորթերին: Ասես դա քիչ էր, իմ մասին հիշեցին Պիգալ հրապարակի իմ հին ընկերները:

Հայտնվում են երկուսը, հետո՝ Ալբերը:

Առաջին - Ոնց որ շատ սիրալիր չես...

ԱԼԲԵՐ - Մի շտապիր, Դիդու...

ԷԴԻՏ - Հայ, դու ես, իմ հին ծանոթը...

Հոչակավոր Ալբերը Պիգալ հրապարակից: Քեզ ինչ է պետք:

ԱԼԲԵՐ - Նա մոռացել է, որ հանցավոր աշխարհը ոչ մեկին հեշտ բաց չի թողնում: Ջո հովանավորը մեռավ, առանց նրա դու զրո

ես: Հիմա այլ ձանապարհ չունես, բացի նրանից, որ մեր կողմ է բերում:

ԵԴԻՏ - Փողոց...

ԱԼԲԵՐ - Ինչ կա՞ որ: Հիմա դա շատ հետաքրքիր կլինի: Դու արդեն հանրածանաչ ես: Քեզանով կարելի է լավ վաստակել: Ոչ, դա պարտադիր չէ... առաքինությանդ վրա կարելի է ոտնձգություն չանել:

ԵՐԿՐՈՐԴ - Ջեզ համար ուրիշ աշխատանք կգտնենք:

ԵԴԻՏ - Ա՛, էն նո՞յնը: Լվանալ պարահրապարակները, որտեղ դամաներ են հաճախում՝ զարդարված թանկարժեք զարդերով: Նրանց մասին տեղեկություններ հավաքեմ: Դու դրանք կգրանցես գրքոյեկումդ ու շաբաթ երեկոյան, զուգված քո լավագույն կոստյումով, կզնաս իմ կողմից նշված հաստատություններից մեկն ու էնտեղ կգայթակղես պարերի սիրահար տիկնոջը, իսկ հետո, ձևանալով օրինավոր մարդ, նրան տուն կուղեկցես...

ԱԼԲԵՐ - Հերիք է:

ԵԴԻՏ - ...և Լա Մերայե փակուղին մտցնելով, կգրկես նրան կրքի պոռթկումով, կփակես բերանը ձախ ծեռքով, իսկ աջով հարվածներ կտեղաս...

ԱԼԲԵՐ - Դու չե՞ս լրելու:

ԵԴԻՏ - Հետո վրայից կպոկես թանկարժեք զարդերը...

ԱԼԲԵՐ - Ուրեմն, չե՞ս վերադառնա:

ԵԴԻՏ - Ո՞չ:

ԱԼԲԵՐ - Եդ դեպքում քեզ կսպանեմ: ԵԴԻՏ - Կրակիր, եթե տղամարդ ես: ԱԼԲԵՐ - Ստացիր:

Կրակոց:

ԱԼԲԵՐ - Գրո՞ղը տանի...

ԵԴԻՏ - Դատարկ բան է: Այրվածք: Ինձ կանչեցին ոստիկանություն. հաստատ ինչ-որ բանում կասկածում էին:

Առաջին տեսուչ - Իգոր եք լրում, դա ծեզ միայն կարող է վնասել:

Երկրորդ տեսուչ - Սա հարցաքննություն չէ, սա ընդամենը ցուցմունք տալ է:

Երրորդ տեսուչ - Բայց դուք կարող էիք մասնակից լինել այդ գործում: Այդ գործում... Այդ գործում... Այդ գործում...

ԵԴԻՏ - Միայն ուշ երեկոյան, երբ վերջապես պարզեցին, որ իսկապես մեղավոր չեմ, ինձ՝ կիսակենդան, բաց թողեցին տուն: Հանդիսատեսի հետաքրքրությունը բավարարելու համար և իմանալով, որ հատուկ պայմաններ ակնկալել չեմ կարող, շատ կարաբեների տնօրեններ ինձ հածոյքով հրավիրում էին իրենց մոտ: Ու ես երգում էի:

Հնչում է մեղեդի՝ «Ամբոխ»:

Բայց գալիս էին ոչ թե երգչուիուն լսելու, այլ տեսնելու Լեպլեի գործի հետ կապ ունեցող կնոջը: Եվ ահա, մի անգամ, ելույթներից մեկի ժամանակ սուր, խլացուցիչ սուլոց լսվեց:

Երաժշտությունը կտրվում է:
Հայտնվում է բարձրահասակ,
ճիհար, ճարդային, արտահայ-
տիչ դիմագծերով Ռայմոն Աս-
տոն:

ՌԱՅՄՈՆ - Ինչո՞ւ եք սովոր, պարոն:

ՀԱՃԱԽՈՐԴ - Այդ ինձ եք ասում:

ՌԱՅՄՈՆ - Ձեզ:

ՀԱՃԱԽՈՐԴ - Ինչ է, թերթ չեք
կարդում:

ՌԱՅՄՈՆ - Կարդում եմ:

ՀԱՃԱԽՈՐԴ - Իսկ դուք չգիտեք, որ
նա խիստ կասկածի տակ է
գտնվել: Նրան քառասունութ ժամ
պահել են ոստիկանությունում:

ՌԱՅՄՈՆ - Հետո՞ ինչ:

ՏԻԿԻՆ - Ինչպես թե՝ ինչ. չկա ծովին
առանց կրակի:

ՌԱՅՄՈՆ - Եթե դատում եք ձեր հայ-
րենակիցներին, որոնք ազա-
տության մեջ են, ուրեմն դրա
համար ինչ-որ հիմքեր ունեք: Ինչ
հիմքեր ունեք դուք:

ՏԻԿԻՆ - Դե ոչ, բայց...

ՌԱՅՄՈՆ - Այդպես... (Դիմում է մեկ
ուրիշի:) Դուք ունեք ինչ-որ հիմ-
քեր:

Հաճախորդը շրջվում է:

ՌԱՅՄՈՆ - Ներկաներից որևէ մեկը
ունի՞ ինչ-որ հիմքեր: Ուրեմն այս-
պես. Երկուսից մեկը՝ կամ երգչու-
իին, որին դուք լսեցիք, լավն է,
կամ վատն է: Եթե նա լավն է՝ ծա-
փահարեք, եթե ոչ՝ լուսաբանուն
պահպանեք: Կաբարեում չեն սու-
լում: Իսկ արտիստի անձնական
կյանքը ոչ ոքի չի վերաբերում:

Ներեցեք, մադմուազել, որ ստիպ-
ված եղա ընդհատել ձեր ելույթը:
Ծարունակեք:

ԵՂԻՍ - Իսկ ելույթից հետո նա ինձ
սպասում էր մուտքի մոտ: (Ռայ-
մոնը մոտենում է Էղիսին, կանգ-
նում քիչ հեռու:) Օ, մայո, ես
էնքան շնորհակալ եմ ձեզ:

ՌԱՅՄՈՆ - Դատարկ բան է: Իմ ա-
նունը Ռայմոն է: Ռայմոն Ասսոն:
Ես պոետ եմ: Լեպեն ձեզ տվել է
իմ հեռախոսահամարը: Ես ասել
էի, որ կարող եք զանգել ինձ,
բայց դուք չզանգեցիք: Ինչո՞ւ:

ԵՂԻՍ - Օ, մայո, երբ գտնվում ես էն
վիճակում, ինչ իմն է, շատ էլ հա-
ծելի չէ...

ՌԱՅՄՈՆ - Այս պահին սպասում էի
մի ամբողջ տարի, այն օրվանից,
երբ առաջին անգամ լսեցի ձեզ
«Ջերնիս» կաբարեում: Հենց հի-
մա գնանք ինձ մոտ: Մի գավաթ
սուրճ իմ բաղադրատոմսով՝ ու
դուք նորից կիավատաք ձեր ու-
ժերին:

ԵՂԻՍ - Օ, մայո, եթե միայն էդպես
լիներ: Բայց լրագրողների կար-
ծիքով, իմ տեղը վաղուց ձաղերի
ետևում է ու ոչ թե քաղաքակիրթ
փարիզցիների շրջապատու:

ՌԱՅՄՈՆ - Գրողի ծոցը գնան լրագ-
րողները, գրողի ծոցը կորչեն
քաղաքակիրթ փարիզցիները:
Գրողի ծոցը՝ կաբարեն: Իսկա-
կան երգչուիին իր տաղանդը կա-
րող է արտահայտել միայն մեծ
մյուզիք հոլի բեմի վրա: Եվ մենք
կիասնենք դրան, ինչ էլ դա նստի
մեզ վրա: Տաքսի:

ԷԴԻՏ - Օ, Սուրբ Թերեզա: Միթե նորից փրկված եմ:

Եղիստը և Ռայմոնդ մտնում են Ռայմոն Աստյակը:

ՌԱՅՄՈՆ - Իմ տունը:

Անտանիք է ու անկրակ իմ տունը,
Եվ առանց քեզ ու առանց

ինձ իմ տունը:

Չկա այնտեղ ծառա և
տանտերեր չկան,

Եվ գլխիկայր է այնտեղ լրիկ
ամեն բան,

Եվ քանդակներ չկան,
չկա ոչ վախ, ոչ պատ,

Չկան զենքեր, վտանգ և
զերիներ չկան,

Դու չես գտնի այնտեղ մասունք,
չկան կրոններ,

Ահա ինչու է տունն իմ
հրաշալի այդքան:

Եվ համարեք այսու,
որ նաև ձերն է այն...

ԷԴԻՏ - Օ, մայո...

ՌԱՅՄՈՆ - Եվ խնդրում եմ, ինձ չասեք մայո, ասա ինձ դու: Ինձ թվում է, որ մենք արդեն հազար տարվա ծանոթներ ենք: Քեզ դո՞ւր է գալիս այստեղ:

ԷԴԻՏ - Ծատ:

ՌԱՅՄՈՆ - Ուրեմն նստիր, սպասիր սուրճին ու լսիր:

Ռայմոնը վերցնում է սրճեփը,
սուրճ է պատրաստում, միաժամանակ բանաստեղծություններ ասելով:

Վերցրեք որպես հիմք
բառը ու կրակին դրեք բառը,
Իմաստություն վերցրեք մի
պտղունց, անմեղության
մի մեծ պատառ.

Մի բանի աստղ, պղպեղ մի քիչ,
թպրտացող սրտի կտոր,

Եվ օջախին վարպետության եփեք,

Էլի եփեք՝ շատ անգամներ:

Հիմա գրեք...

Բայց մինչև այդ՝ պոետ ծնվեք:

Ես ուշադիր հետևում էի քեզ, այն օրից, երբ առաջին անգամ քեզ լսեցի «Ձերնիս» կաբարեում: Ինձ ցնցեցիր այն ժամանակ ու նաև հասկացա, թե դեռ որքան բան է քեզ պակասում: Իսկ ամենակարևորը՝ երգացանկը: Քեզ երգեր են պետք, եղիտ, հասարակ ու անկենծ, ինչպես կյանքն է: Դրանցից պետք է հացի բույր գա ու ծխի հոտ, ինչպիսին Լա Վիլլետ թաղամասն է, որտեղ երեկոները հարևան բիստրոյից ուղղիոյի ծայնն է տարածվում: Դու անպայման պետք է սովորես:

Մարի Դյուբայի կամ Դամյայի նման դեմքերից: Ու երևի թե ամենակարևորը. դու պետք է պարտավորություն ստանձնես: Ինքդ քեզ պարտավորես, ինձ նման: Իմ պարտավորությունները հասարակ են. երբեք չգրել, երբ ասելու բան չունես: Գրել ինարավորինս պարզ: Ու եթե գրում ես, ապա ասես ծշմարիտ ու մարդկային բաներ, դրանց մեջ դնելով որքան հնարավոր է շատ

անկեղծություն ու մաքրություն: Ու ոչնչից մի վախեցիր: Քեզ զրպարտում են, վիրավորում են, կեղտ են լցնում վրադ: Ոչ առաջինն ես, որ էլ վերջինը: Պետք է կոփել կամքը, եղիտ, լարել մկաններն ու պայքարել: Ու մենք դեռ կոփվ կտանք, հարգելի եղիտ Պիհաֆ:

Հայտնվում են երեք տնօրեններ:

Առաջին տնօրեն - Դուք ինձ զզվեցրիք, Ասսո: Ինձ հանգիստ թողեք:

Երկրորդ տնօրեն - Ո՞չ, ոչ ու ոչ: Միայն ոչ եղիտ Պիհաֆ:

Երրորդ տնօրեն - Ինչ է, ուզում եք ինձ կատաղության հասցնել:

Երեքն էլ շրջվում են Ռայմոնից:

ՌԱՅՄՈՆ -

Ես բոունցըներով այգն եմ թրատել ու զլխատել եմ լեռները

Եվ մենությունն ի պատասխան հեկեկում ու նայում է նախատինքով,

Հորիզոնն եմ խառնշտորել,

խոլ անտառում

կախել եղյամ,

Ու վիրավոր կապոյտ երկնի

երակներից արյուն թռղել...

Իսկ մեր դարը անտարբեր չէ (բայց՝ երբեմն) առ պոեզիան,

Եվ սիրում է, բայց միայն երբ գրկում, անում է խեղյամահ...

Մեկ ամիս հետո դու կերգես:

Տնօրենների և Ասսոյի մնջախառը:

ԷԴԻՏ - Ռայմոն Ասսոն ինձ համար կոփվ էր տալիս էնպիսի կրքութությամբ, որ մյուզիք հոլլերի տնօրենները չգիտեին՝ ինչպես ազատվեն նրանից: Եվ ահա, վերջապես...

Առաջին տնօրեն - Դուք ինձ զզվեցրիք, Ասսո: Ես ստորագրում եմ:

Երկրորդ տնօրեն - Ես էլ եմ ստորագրում... Բայց որ էլ ծեզ չտեսնեմ իմ աշխատասենյակում: Ահա ծեր պայմանագիրը: Ու չքվեզ ծեր եղիտ Պիհաֆի հետ գրողի ծոցը:

ԷԴԻՏ - Ուստի... Աստված իմ, բայց ինչ եմ երգելու:

ՌԱՅՄՈՆ - Դու թերագնահատում ես քո ընկերներին: Ահա քո նոր երգերը:

Ռայմոնը վերցնում է իր գրքերից մեկը:

Պատկերացնում եմ, ինչպես դրանք կինչեն քո շուրթերից: Դու դուրս ես գալիս թեմ, ու սսկված դահլիճում, առաջին անգամ, ասես խորքից հնչում է մեղեղին... Եվ ահա ծայնը՝ ցածր, կրծքային ծայնն իր թավշյա ելսէջներով, հմայում է ծեզ: Նրա տաք ալիքները մոտենում են, պարուրում, թափանցում հոգին: Աչքի համար անտես սոխակի նման դու էլ ես դառնում անտեսանելի: Միայն քո հայացքը, քո գունատ ծեռքերը և մոմագոյն ծակատը, որին ուղղված են լուսի շողերը և ավելի ու ավելի բարձրացող ծայնը: Դու

քեզ գերազանցում ես, դու գերազանցում ես քո երգերին, նրանց մեղեդուն ու բառերին: Դու գերազանցում ես բոլորիս: Փողոցի ոգին թափանցում է քաղաքի բոլոր անկյունները: Եվ դա արդեն էդիտ Պիաֆը չի երգում, այլ անձրևն է թափվում, սուլում է քամին կամ լուսնի լոյսն է իր քողը փորում քաղաքի վրա:

ԷԴԻՏ - Օ, Ռայմոն, դու ոնց ասացի՞ր: Ինչ պատասխանեմ քեզ: Դու ինձ ամեն բան տվեցիր երգչուիհ դառնալու համար, դու ինձ վերափոխեցիր... Երեք տարվա համբերատար քնքշություն, որպեսզի ստիպես ինձ հասկանալ, որ կանան որիշ աշխարհ: Երեք տարի՝ ոչնչացնելու համար Պիգալ հրապարակի թույնը, երեք տարի՝ որպեսզի ինձանից կին և արտիստ ստացվի այն մեկի փոխարեն, ում ձայնը գալիս էին լսելու, ինչպես գալիս են նայելու տոնավաճառի արտասովոր կապիկներին: Մնաս բարով, Ռայմոն: Երեք, լսո՞ւմ ես, երբեք ես դա չեմ մոռանալ:

Էդիտին մոտենաւմ են շրջկի արտիստներ՝ կամաց նվազելով գործիքների վրա: Լավում է սապոգների դոփյուն:

ԷԴԻՏ - Մեզ բաժանեց պատերազմը, բայց դու միշտ ինձ հետ կմնաս, որովհետև միշտ ինձ հետ են քո երգերը, որոնք հուշում է մեզ կյանքը: Նման մի երգի համար սյուժեն դարձավ իմ պատ-

մությունը, որը կատարվեց 1943 թվականին, երբ Փարիզում գերմանական օկուպացիոն իշխանություններն առաջարկեցին մի քանի համերգ տալ Գերմանիայում, այդ թվում և՝ ֆրանսիացի ռազմագերիների ծամբարներից մեկում: Առաջին միտքս՝ անմիջապես հրաժարվել, երբ հանկարծ...

Հնչում է «Ես գիտեմ՝ ինչպես» երգը:

...մի վտանգավոր միտք ծագեց, ու ես համաձայնվեցի:

Ես գիտեմ, ինչպես քանդել երկարեցանկապատը, ես գիտեմ

Ինչպես փոշիացնել հսկա քարերով հսկա պատը այս:

Ես գիտեմ՝ ինչպես, ես գիտեմ՝ ինչպես, ինչպես դուրս պրծնել այս բանտից,

Որ ավելի խորն է, բան գերեզմանը: Դա 4-D ծամբարն էր, մահվան ծամ-

բարը, որի հետ ինձ կապեց ծակատագիրն այն տարիներին: Ես երգում էի, իսկ նրանք՝ բանտարկյալները, կանգնած էին իմ դիմաց, հսկիչներով շորջկալված, տանջահար, չսափրված, կտրված տնից, հայրենիքից, ընտանիքից: Նրանք կանգնած էին գլխահակ ու լսում էին իմ երգերը:

Ելույթից հետո թույլտվություն եմ խնդրում իիշատակի համար լուսանկարվել նրանց հետ: Պարետը թույլ է տալիս, ու ես ինձ հետ տանում եմ լուսանկարը:

Փարիզում լուսանկարն անմիջապես տալիս եմ մեծացնելու: Հետո դա կտրատում եմ 120 առանձին դեմքերի ու ընդհատակյա լուսանկարչատան միջոցով պատվիրում եմ 120 կեղծ փաստաթուղթ: Մնում է միայն դրանք տեղ հասցնել: Ու ես նորից խնդրում եմ ելույթ ունենալ նոյն ժամբարում: Եվ բաժանելով ինքնագրերը, աննկատ բաժանում եմ իմ բեռոյն 120 ռազմագերի դիմում է փախուստի:

120 մարդ ազատության մեջ է:

Իսկ մեկ տարի անց գաղտնի նամակ եմ ստանում. «Ամոանը, լուսաբացին ռազմագերիների 4-D ժամբարը ենթարկվել է դաժան ոմբակոծության, հիսուն մարդ սպանված է:» Դա նշանակում էր, որ հիսուն ընտանիք այլևս չեն տեսնի իրենց հարազատներին: Չեք կարող ինչ-որ բան անել նրանց համար, օգնել նրանց, հարցնում էին ինձ: Այդ հարցն ինձ ստիպեց մտորել, ես փնտրում էի, ելք էի փնտրում: Անսպասելի մտքից ոգևորված՝ արագ վերցրեցի խոսափողն ու զանգեցի Սաշա Գիտրիխն՝ հանրահայտ դերասանին ու գրողին:

ԳԻՏՌԻ - Լսում եմ:

ԵՌԻՏ - Մէտր, երկու րոպե առաջ ես շատ քաջն էի, իսկ հիմա չեմ համարձակվում ասել...

ԳԻՏՌԻ - Քանի դեռ ձեռք չեմ բերել տեսահեռախոս, ասեք, ինչ եք ուզում... Միայն ավելորդ չեր լինի ի-

մանալ, թե ո՞ւմ հետ պատիվ ունեմ...

ԵՌԻՏ - Ձեզ զանգել է երգչուիի Էդիտ Պիաֆը: Ու մի կերպ բացատրեցի գործի էությունը: Պատմեցի ծամբարի ռազմագերիների մասին: Յավոք սրտի, մենակ չեմ կարող հանդիսատես հավաքել: Իսկ պետք է փող, շատ փող: Ես վստահ եմ, ձեր անունով ազդագիրը դահլիճ կհավաքի: Հիմա ես երգում եմ «Բոյեռում»... Ահա և համարձակվեցի:

ԳԻՏՌԻ - Դուք գիտեք, որ երբեք ելույթ չեմ ունենում կարառեում:

Դա կլինի իմ դեբյուտը: Իսկ դեբյուտը պատասխանատու բան է:

ԵՌԻՏ - Մէտր, ուրեմն համաձայն եք:

ԳԻՏՌԻ - Իսկ դուք կասկածո՞ւմ էիք:

ԵՌԻՏ - Ես ականջներիս չէի հավատում, դա անհավանական մի բան էր:

ԳԻՏՌԻ - Որքան գումար եք ակնկալում:

ԵՌԻՏ - Ձեր անունով ազդագրով, մէտր, կարող ենք մուտքի տոմսը գնահատել 2000 ֆրանկ: «Բոյեռում» 200 տեղ կա:

ԳԻՏՌԻ - 400000... Քիչ է: Բայց մի բան կմտածենք: Համենայնդեպս, ես կկարդամ ջահել օրերին գրված պոեմներիցս մեկը, կամ հատված կիսադանք պիեսից: Մենք մի բան կհորինենք:

ԵՌԻՏ - Նա իրոք հորինեց... ածուրդ երեկոյի միջնարարում: «Լորից ածուրդ», - կասեք դուք: Այո, նո-

րից, բայց դա արտասովոր ա-
ճուրդ էր:

ԳԻՏՌԻ - Հարգարժան հասարա-
կություն, մենք վաճառելու ոչինչ
չունենք: Ո՞չ-մի-բան:

ԵԴԻՏ - Մի զարմացեք, Սաշա Գիտ-
րին ծիշտ էր հաշվարկել:

ԳԻՏՌԻ - Այս երեկոյթին եկել են
իմայիշ կանայք, ովքեր ամեն բան
ունեն. ամուսիններ, փեսացուներ,
եղբայրներ, հայրեր և, իհարկե,
դուք եկել եք այստեղ, որպեսզի
արտահայտեք ձեր համե-
րաշխությունն այլ կանանց հետ,
որոնք չեն տեսնի իրենց ամու-
սիններին, փեսացուներին, եղ-
բայրներին կամ հայրերին: Դուք
չեք հրաժարվի զոհաբերել ինչ-որ
բան ձեր զարդերից կամ մորթե-
ղենից հանուն այն բանի, որ օգ-
նենք նրանց: Եվ այսպես, մենք
կվաճառենք միայն այն, սիրելի
կանայք, ինչ դուք մեզ կնսիրեք:

ԵԴԻՏ - Հինգ րոպե անց ես մորթե-
ղենի կույտից վաճառքի համար
ընտրում էի առաջին ջրաքիսի
մորթուց մուշտակը: Դրան
հետևեց մյուսը, հետո՝ մանյակ,
ապա՝ թիկնոց... Ածուրդը շիկա-
ցավ... Երջանիկ ու ամեն վայրկ-
յան լաց լինելու պատրաստ,
կանգնել էի ես՝ թաշկինակս
կրծոտելով, երբ վերջապես
գործն ավարտվեց: Սաշա Գիտ-
րին թևանցուկ անելով ինձ՝ տա-
րավ բեմեզր:

ԳԻՏՌԻ - Մենք արեցինք, ինչ կարող
էինք, բայց դուք մեզ տվեցիք եր-

կու միլիոն: Բրավո և շնորհակա-
լություն:

ԵԴԻՏ - Երբեք չեմ մոռանա այդ երե-
կոն: Մինչև օրս նրանք գալիս են
ինձ մոտ, որպեսզի գրկեն ու
շնորհակալություն հայտնեն: Նրանց աչքերում արցունքներ են,
իհարկե, ես էլ զոհոցս չեմ պա-
հում: Իսկ հետո դուրս եմ գալիս
թեմ ու երգում եմ իմ նոր երգը:
Երգ երջանկության և սիրո մա-
սին:

ԽՍԻՔ, ԹՄԲՈՒԿՅԵՔ

ՀԱՌԻՄ ԵՔ, ԻՆՉՊԵՍ ԵՆ

ԵՐԳՈՒՄ ՃԵՎՈՐՆԵՐԸ.

Նրանք երգում են իին օրերից ի վեր,
Նրանք հնչում են նաև իմ գլխում
Փոխակերպվելով արձագանքների:
Օ, ոնց կուգեի, որ երգեին նրանք
Ընկերների համար իմ,
սիրահարների,
Եվ ով արժանի է իրավ այդ երգին...
Դե խսիեք, խսիեք, թմբուկներ.
Նրանց համար,

ՆՎՔԵՐ ԾՆՎՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ՕՐ,
ՆՐԱՆԳ, ՆՎՔԵՐ ԾԻԾԱՂՈՒՄ ԵՆ,

ԵՐԲ ՊԻԳԵՆ,

ՆՐԱՆԳ, ՆՎՔԵՐ ԲՋԿՄՎԱԾ

ԾԵՐՊՈՒՄԱՅՈՒՄ ԵՆ:

ԴԵ ԽՍԻՔ, ԽՍԻՔ, ԹՄԲՈՒԿՆԵՐ.

ՆՎԱԳԻՐ ՔՐ ԵՐԳԸ, ԱԿԿՈՐԴԵԿՆ,

ՈՐ ՎԵՐԱՆԱ ՎԻշտը, ԱՎԱՐՏՎԻ

ԱՊԱՏԵՐԱԳՄԸ,

ՈՐ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ լինի

ԱՉԽԱՐԻՈՒՄ համայն,

Ազատագրվել է իմ ֆրանսիան:

Եկավ երկար սպասված օրը: Ու ես
արդեն վստահ կարող եմ ասել,
որ դառնում եմ ավելի ու ավելի
ճանաչված: Իմ համբավն ածում
է: Ինձ հետ պայմանագրեր են
կնքում, ես նկարահանվում եմ
կինոյում և առաջին բեմելն ունե-
նում թատրոնում ժան Կոկտոյի
«Անտարբեր գեղեցկատես տղա-
մարդը» պիեսում:

Համերգային շրջագայություն Ամե-
րիկայում,

Շրջագայություն Հունաստանում,

Նորից Փարիզում...

Ես ծանոթանում եմ ժամանակի լա-
վագույն արտիստների հետ.
Չարլի Չապլին, Մաոլեն Դիտ-
րիխ: Ինձ բազմաթիվ ընկերներ
են շրջապատում: Ես մամուլի,
ուաղիոյի, լրագրողների ուշադ-
րության կենտրոնում եմ: Թվում
էր, բախտը ժպտում է ինձ, և ինձ
անմնացորդ նվիրեցի իմ հանոհ-
սատեսին:

**Հնչում է մեղեդի՝ «Պարահանդե-
սի ձայները»:**

Առաջին լրագրող - Փոքրիկ չեմ-
պիոն «աքաղաղի» թեթև քաշա-
յին կարգում էղիտ Պիաֆը
սարսափելի վատնող է:

Երկրորդ լրագրող - Նա չի տնտե-
սում իր ուժերն ու վաստակը:

Երրորդ լրագրող - Նա ուզում է ա-
մեն բան հասցնել, ամեն ինչ իրե-
նով անել:

ԷԴԻՑ - Հնարավոր է, որ էղպես էր:
Բայց այլ կերպ, երևի թե, չէ՞ կա-

ռող: Ես քամուն էի տալիս ահոե-
լի կարողություն, ընկերներիս
շլացուցիչ նվերներ էի անում: Ես
միլիոններ էի ցրիվ տալիս՝ դիմա-
ցը ոչինչ չպահանջելով: Կարծես
վրեժ էի լուծում իմ անցյալի հա-
մար: Վրեժ էի լուծում աղքատութ-
յան համար: Վրեժ էի լուծում, որ
երեխա՝ քնում էի մայթերին, որ
հայրս մահացավ առանց մի գրո-
շի, իսկ մայրս՝ քայթայված նար-
կոտիկներից: Վրեժխնդիր էի
լինում, որ ծնվել էի սոցիալական
սանդուղքի ամենացածր աստի-
ճանին, կեղտի մեջ, որտեղ ոչ մի
հոյս չի ծնվում: Թվում էր, ես
շատ զվարթ էի: Իմ հաղթական
երեկոներին քրքջում էի խելազա-
րի նման, բայց դժվար ինչ-որ
մեկն այն ժամանակ իմանար, որ
իրականում միայնակ էի: Ես ամ-
բողջ կյանքում սեր եմ փնտրել:
Բայց նա, չգիտես ինչու, գրեթե
միշտ խոյս էր տալիս ինձնից: Ա-
մեն անգամ, երբ թվում էր, որ
գտել եմ վերջապես նրան, ով
կլցնի իմ կյանքը՝ ամեն ինչ փով
էր գալիս, ու ես նորից մնում էի
մենակ: Միայն մեկ անգամ...

**Հնչում է «Սիրո մի գեղեցիկ
պատմությունը»:**

Նրան կոչում էին Մարսել Սերդան...

Հայտնվում է Մարսել Սերդանը,
դանդաղ զնում է աստիճաններով
դեպի բնմեզը:

Դու գալիս ես ինձ ընդառաջ,
Ու ես եմ դեպի քեզ գալիս.

Ես գնում եմ ընդառաջ անհայտին.
Գնում եմ՝ ինչպես գիշերում
Եվ ջանում եմ մոռանալ քեզ...
Բայց դա վեր է իմ ուժերից.
Ես ասես կտոր-կտոր եմ լինում.
Չ՞ որ ես միայն
քեզ եմ պատկանում...

ԷԴԻՏ - Իմ Մարսել: Ինչպես էի սիրում քեզ: Ոչ, ես պաշտոն էի քեզ, ինչպես Աստծուն: Ես ուզում եմ բղավել աշխարհով մեկ՝ Մարսել Սերդանը վերափոխեց իմ կյանքը: Մարսել Սերդանն ինձ երջանկացրեց:
Ինչն միայն չէին խոսում մեր մասին:

- Ինչպես կարող եք սիրել բոնցքամարտիկի: Ախր նա բոյ անասուն է, նա մարդ չէ: Եվ դա՝ Մարսել Սերդանի մասին... Ինչ գիտեիք դուք նրա մասին: Որքան վայրի էր նա ոինգում: Ինչ մոլեգին: Իսկ ես նրան լրիվ ուրիշ գիտեի:

Դա Փարիզում էր, մի քանի տարի առաջ: Ես հանդիպեցի նրան, երբ նա թևանցուկ տանում էր ընկերուջ՝ գրեթե կոյսր արարին: Բոլորը համարում էին, որ նա դատապարտված է, բայց Մարսելը ոչ ոքի չէր հավատում: Նրան Կասարլանկայից Փարիզ էր կանչել՝ վճարելով ուղևորության ծախսերը, և ամեն առավոտ ուղեկցում էր բժշկի: Բուժման բոլոր ծախսերը, բնական է, վճարեց ու հասավ իրաշքի: Երբ ընկերուջը ծանապարհում էր Աֆրիկա, նա առողջ էր:

Աշխարհի չեմայիոն, հարուստ, բոլորի կողմից սիրված, նա կարող էր մի քիչ էլ մտածել իր մասին, կարգավորել իր հանգիստը: Ո՞ր էր թե... Փոխարենը համաձայնություն տվեց մասնակցել Պրովանսի ցուցադրական խաղերի տուրնեին, իսկ վիոդը նվիրաբերեց մանկական տուրերկուլյոզի կենտրոնին:

- Ինչո՞ւ, Սերդան: Եթե պարտվես, շոնն անգամ քեզ չի հիշի:
- Մի բարկացիր, եղիտ: Ես տեսել եմ այդ երեխաներին: Եթե միայն կարողանայի, կտայի ավելին:

ՍԵՐԴԱՆ - Ալո՞:

ԷԴԻՏ - Ո՞վ է... ինչ Մարսել:

ՍԵՐԴԱՆ - Սերդան, բոնցքամարտիկ: Դուք պիտի հիշեք: Մեզ ծանոթացրել են Փարիզում, «Պիտի» ակումբում:

ԷԴԻՏ - Այո, այո... իհարկե...

ՍԵՐԴԱՆ - Ես զանգում եմ ներքսից, դռնապանի մոտից: Այստեղ, Նյու Յորքում այնքան տխուր է, որ սկսում ես կարոտել տանը: Եթե դեմ չեք, կարող ենք երկուսով ծաշել:

ՀԱՅՈՒՄ Է ԵՐԱԾՄԱՆՔՅՈՒՆ:

ԷԴԻՏ - Նա ինձ տարավ ինչ-որ պանդոկ, որտեղ մեզ մատուցեցին չափից շատ եփված չոր միս «պաստրամի» ու մեկական բաժակ էժան գինի:

Այն, - մտածեցի ես, - սրա նմանին սնանկացում չի սպառնում: (Սերդանին.) Իսկ ձեզ չի թվում, որ էնքան էլ շոայլ չեք:

**Սերդանը շփոթված նայում է Է-
ղիտին:**

ԷԴԻՏ - Նա էնքան շփոթված էր, որ
երկար ժամանակ չէր կարողա-
նում պատասխան գտնել:

ՍԵՐԴԱՆ - Ներեցեք ինձ: Բայց ես
միշտ այսպես եմ ծաշում:

ԷԴԻՏ - Միայն հետո իմացա, որ չէր
կամեցել աչքերիս թոզ փշել:
Դրանից հետո էլ չբաժանվեցինք:

ՍԵՐԴԱՆ - Գնանք, Դիդու:

ԷԴԻՏ - Գնանք:

Երաժշտություն է հնչում:

ՍԵՐԴԱՆ - Փարիզ:

ԷԴԻՏ - Մեծ բովարներ:

ՍԵՐԴԱՆ - Օոլի:

ԷԴԻՏ - Բովար Լանի:

ՍԵՐԴԱՆ - Փարիզ:

**Էղիտը քննող հայացքով նայում
է Սերդանին:**

ԷԴԻՏ - Աստված իմ, ախոր քեզ ան-
հրաժեշտ է հազցնել: Նայիր...
(*Ցույց է տալիս մանեկենները*)
Սա փարիզյան վերջին մոդան է:
Հագիր:

**Սերդանը շարժում է ամում, ասես
ցոյց տալով, որ նոր կոստյում է
հագել:**

ԷԴԻՏ - Ցնցո՞ն է: Կարող ես հավա-
տալ իմ ճաշակին: Միայն էս
կոստյումով կգնաս Նյու Յորքի քո
առաջնությանը:

**Սերդանը քափահարում է լայ-
նազր զլխարկը: Էղիտը ծունկի է
իջնում:**

ԷԴԻՏ - Օ, Սուրբ Թերեզա, ինձ
համար ոչինչ չեմ խնդրում: Հա-
կառակը, թող բոլոր դժբախտութ-
յուններն ու տառապանքներն իմ
զիսին թափվեն: Ես դրանց գուցե
արժանի եմ: Բայց նրան, ում գոր-
ծերն ու զոհողությունները դու գի-
տես, հաղթանակ տուր, աղաչում
եմ քեզ, հաղթանակ տոնիր:

**Սերդանին շրջապատում են
իմայրեսարիոն ու երկու մարզիչ:**

Առաջին - Դու նրան չպետք է տես-
նես, Մարտել:

Երկրորդ - Սիրուց թուլանում են ոտ-
քերը:

Երրորդ - Տասը ժամ քուն, ոեժիմ ու
ամենօրյա մարզումներ, ահա թե
ինչ է քեզ հիմա պետք:

ՍԵՐԴԱՆ - Գրողի ծոցը... Վաղը նա
Նյու Յորքում կլինի:

**Սերդանը և Էղիտը դանդաղ մո-
տենում են իրար:**

Առաջին - Խելագար:

Երկրորդ - Այս կովից քո ողջ
կյանքն է կախված:

Երրորդ - Դու լավ գիտես, թե ինչ է
սպորտի ֆեղերացիան:

Առաջին - Խեկ սպորտային մեկնա-
բանները: Նրանք այնպիսի
աղմուկ կբարձրացնեն, որ երկ-
նաքերերում ծվարած մեքենագ-
րուիիները հրծվանքից կծդրտան:

Սերդանը գրկում է Էղիտին:

Առաջին լրագրավածառ - Երկու ֆրանսիացիների հովվերգությունը և յու Յորբում:

Երկրորդ լրագրավածառ - Սերդանը կպարտվի:

Երրորդ լրագրավածառ - Միսս Էդիտն ու Մարսել Սերդանը հայտնի մրցամարտի նախօրեին:

ԷԴԻՏ - Լսո՞ւմ ես, Մարսել: Հիմա մենք ինչ անենք:

ՄԱՐՍԵԼ - Մի անհանգստացիր, Էդիտ, ես որոշել եմ խոսել նրանց հետ: Վաղը մամուլի ասուլիս է լինելու:

Սերդանը գալիս է նախարեմ:

ՄԱՐՍԵԼ - Հարգելի պարոնայք թղթակիցներ: Տիկնայք և պարոնայք: Ձեզ հետաքրքրում է՝ սիրո՞ւմ եմ արդյոք Էդիտ Պիաֆին: Այո՛, սիրո՞ւմ եմ: Եվ ոչ ոքից չեմ թաքցնում: Ինչ վերաբերում է իմ սպորտային վիճակին, դրանում կարող եք համոզվել, երբ ոինգ դուրս կօամ: Ահա այն ամենը, ինչ ուզում էի ասել ծեզ: Իսկ վաղը ես կիմանամ, իրո՞ք դուք ջենտլմեն եք:

ԷԴԻՏ - Հաջորդ օրը մամուլում մի տող անգամ չկար իմ ու Սերդանի մասին: Իսկ ես ստացա ծաղիկների հսկա զամբյուղ, բացիկին մակագրված էր. «Ջենտլմեններից կնոջը, ում հետ Սերն է»: Մի քանի օր անց Մարսել Սերդանը դարձավ բռնցքամարտի աշխարհի չեմափոն: Իմ Մարսել... դա քո կրկնակի հաղթանակն էր: Դու

թուար Փարիզ, ես ավարտում է համերգային շրջագայությունս: Ձեզ ձանապարհում էին հարյուրավոր մարդիկ: Հիպ-Հիպ, Սերդան, - բղավում էին նրանք: Երգեք, եղիս Պիաֆ: Ու ես երգեցի:

ՄԱՐՍԵԼ - Ինչ դու ես անում, Էդիտ, շատ ավելի լավն է իմ արածից: Դու նրանց սեր ու երջանկություն ես տալիս: Ցտեսություն, փոքրիկ, մինչ հանդիպում Փարիզում:

Սերդանը դանդաղ հեռանում է:
Էդիտը երկար նայում է նրա ետևից:

ԷԴԻՏ - Բայց հանդիպել մեզ էդպես ել չհաջողվեց: Լյու Յորք-Փարիզ ինքնաթիռը վթարի ենթարկվեց Ազորյան կղզիների մոտ: Մարսելն այդ ինքնաթիռում էր: Մարսել Սերդանը զոհվեց: Այդ երեկո ես երգում էի լյու Յորքի Վերսալ սրահում: Ինձ դուրս բերեցին պատգարակով ու կանգնեցրին ոյալի մոտ: Երբ վարագուրը բացվեց, ասացի. «Այսօր ես երգում եմ Մարսել Սերդանի հիշատակի համար: Ես երգելու եմ միայն նրա համար»:

Իմ Աստված, իմ Աստված,

իմ Աստված.

**Թող նրան ինձ՝ իմ սիրելիին
Մեկ օրով միայն,**

երկու օրով կամ ութ...

Թող նրան ինձ էլի մի քիչ, ինձ...

Իմ Աստված, իմ Աստված,

իմ Աստված.

Թող նրան ինձ մոտ էլի մի քիչ,
Վեց ամիս միայն, երեք ամիս, երկու,
Թող նրան ինձ մոտ՝ սիրելիիս միակ,
իմ Աստված, իմ Աստված,
իմ Աստված.

Եթե անգամ իրավացի չեմ ես,
Թող նրան ինձ մոտ մի քիչ էլ:
ԷՌԻՏ - Վեց ամիս քո մահից հետո,
Մարսել, ես պայքարում էի ինքս
ինձ հետ:

Վեց ամիս ես հաղթա-
հարում էի հուսահատությունը՝
բեմ բարձրանալով: Ես կորցնում
էի գիտակցությունս՝ հենվելով ոռ-
յալին և կառչելով միկրոֆոնից:
Եվ, այնուամենայնիվ, ես չդիմա-
ցա այն ժամանակ: Սկսվեց իմ
ցնցող անկումը: Երբեք չեմ մոռա-
նա այդ տարիները:

Առաջին լրագրավաճառ - Պիաֆը
վատ է զգացել բեմի վոա:

Երկրորդ լրագրավաճառ - Պիաֆի
կյանքը վտանգի տակ է:

Երրորդ լրագրավաճառ - Ուժերի
նոր անկում:

ԺԱՆԻՆ - Այտուցված դեմքով, դա-
տարկ, ոչինչ չարտահայտող
աչքերով, նա գալիս էր իր ար-
տիստական սենյակը, շպարվում
էր ասես քնի մեջ ու երերալով
դուրս էր գալիս բեմ: Քանի ան-
գամ է նրան շտապօգնության մե-
քենան տուն տարել: Քանի
անգամ չեմ իմացել՝ համերգից
հետո ողջ կտեսնեմ նրան...

ԻՄՊՐԵՍԱՐԻՈ - Ահա պայմանագ-
րերը, որոնք պետք է կատարվեն
այս տարի: Մենք մեծ ոխսկի ենք
գնում, մադամ Պիաֆ: Չափից

դուրս հածախ եք ձեզ վատ զգում:
ԷՌԻՏ - Գրողը տանի, ես գիտեմ,
ինչպես ինձ պահեմ:

ԶԱՅՆԵՐ - Ձեր մուտքն է, մադամ
Պիաֆ:

- Ձեր մուտքն է:

- Էղիտ:

- Բեմ դուրս եկեք:

ԷՌԻՏ - Հապա նայեք ինձ: Ախր, ես
անպետքություն եմ: Ոչ թե կին,
այլ թափառող ստվեր, որը մի
կերպ է կանգնած մնում ոտքերի
վրա: (Զննում է իրեն հայելու մեջ:)
Սա ընդամենը փոքրիկ պայաց է
զգուշավոր քայլվածքով, խան-
գարված շարժումներով, վաղա-
ժամ ծերացած դեմքով... Թողեք
ինձ:

Հնչում է «Պադամ, պադամ»-ը:
Հայտնվում է երիտասարդ՝
գնդակներ ձեռքին:

ԷՌԻՏ - Դուք ո՞վ եք:

ԹԵՌԻ - Ներեցեք, մադամ, բայց դու-
ռը փակ չէր, այդ պատճառով
զանգը չտվեցի: Ես դժվարանում
եմ բացատրել իմ հայտնվելը: Ես
վարսավիր թեռ Սարապոն եմ ու
նաև...

ԷՌԻՏ - Վարսավիր, բայց ես ոչ ոքի
չեմ կանչել:

ԹԵՌԻ - Դա էլ իմ վիճակի անհեթե-
թությունն է, բայց ես կուզենայի
բացատրել... Հասկանո՞ւմ եք,
հայրս պատմել է ինձ, որ պատե-
րազմի ժամանակ մի բացահայ-
տում է արել...

ԷՌԻՏ - Ե՞վ...

ԹԵՌ - Նա նկատել է, որ վիրավորների վիճակը թեթևանում է նրանց սափրելուց հետո:

ԷԴԻՏ - Բայց ես մորուք չունեմ:

ԹԵՌ - Ես կուզենայի ծեզ առաջարկել, մադամ, եթե կհամաձայնվեք, ամեն բեմ դուրս գալուց առաջ հարդարել ձեր մազերը:

ԷԴԻՏ - Ինչ տարօրինակ է...

ԹԵՌ - Ինձ պետք է ձեր համաձայնությունը:

Էդիտը քոնում է Թեոյի ձեռքը և նրան մոտեցնում հայելուն:

ԷԴԻՏ - Սայեք: Ճանաչում եք այս կնոջը:

Հնչում է «Պադամ, պադամ»:

ԹԵՌ - (կամաց): Հոչակավոր Էղիտ Պիաֆն է:

ԷԴԻՏ - Ոչ: Ընդամենը փոքրիկ կին է, որն իր վրա կրում է անխուսափելի խարանն այն մեկի, ով, ավաղ, միշտ առաջինն է գալիս ժամադրության:

ԹԵՌ - Ես սիրում եմ այդ կնոջն այն պահից, երբ առաջին անգամ, համերգին, լսեցի նրան: Ինձ թվաց, հողը փախչում է ոտքերիս տակից, թվաց, նրա ծայնը թափանցեց իմ մեջ ու դարձավ իմ մասնիկը: Քանի անգամ եմ տեսել, ինչպես եք բեմ բարձրանում՝ հոգնածությունից ուժասպառ, ծակատին կպած մազերով, անվտահ քայլվածքով: Բայց սկսում էիք երգել, և որքան էլ դահլիճը մեծ էր՝ լիներ դա Պլեյո-

լը, Ծայեն կամ Կարնեգի Հոլը, ձեր ձայնը լցոնում էր այն ու տիրում սրտերին: Դա կախարդանք էր, չընդհատվող մի հրաշք: Եվ բոլորն այդ պահին սիրում էին ծեզ, ինչպես ես, ու հավատում էին, որ այդպես լինելու է հավերժ:

ԷԴԻՏ - Աստված իմ, եթե կգտնվի գոյնե մի կին, թեկուզ երիտասարդ, թեկուզ փթթող առողջությամբ, ով կարող է դիմանալ նման հոչակագրի, ուրեմն ես ոչինչ չեմ հասկանում ոչ կյանքից, ոչ կանանցից, ոչ անգամ սիրուց: Երգելու անզուսապ ցանկությունը, հենց այդ պահին, համակեց ինձ: Երգել, նրանց համար, իմ բոլոր անձանոթ ընկերների, իմ ունկնդիրների համար, որոնք սկսում են ինձ ծափահարել ավելի շուտ, քան հասցնում եմ բեմ ելնել: Ու ես երգում էի, երգում էի՝ հաղթահարելով հուսահատությունը: Եվ երգերը փրկեցին ինձ, իմ երգերը: Ինչ ասեմ դրանց մասին: Չէ՞ որ դրանք՝ ես եմ. իմ մարմինը, իմ արյունը, իմ գլուխը, իմ հոգին, իմ սիրուց: Ինչպես արտահայտվեմ դրանց մասին... Ես ողջունում եմ երգը: Նրա հետ պոետները հրապարակ են դուրս գալիս, ծովական մարդկանց բազմությանը և դառնում դարի սիրելին: Որքան երգիչներ են ծնվում ամեն օր: Եվ հաճախ թվում է, թե նրանց երգերը չունեն ոչ հեղինակ, ոչ արմատներ, որ նրանք ստեղծվել են փողոցում, փոքրիկ, անշուր

բիստրոյում կամ բազմաքնակ թաղամասերում: Հսկում եք, ինչպես են Փարիզի վրա հնչում նրանց ձայները:

Հնչում են ֆրանսիական մյուլիք հոլիք նշանավոր երգիչների ձայնը:

Մարսելում, Տուլոնում, նավահանգիստներում, շինարարություններում, գավառներում, քաղաքներում, պոկվելով բարձրախոսներից, նրանք թափանցում են ամենահասարակ մարդկանց սրտերը և ընդմիշտ բնակվում այնտեղ: Ու ես երջանիկ եմ, որ նրանցից մեկն եմ, ով տվել է դրանց իր կյանքը: Ես երջանիկ եմ, որ կարողացել եմ շատերին օգնել ու ծանապարհ հարթել:

Հնչում է Իվ Մոնտանի ձայնը:

Հիշում ես, ինչպես շատ տհած բաներ ասացի, երբ առաջին անգամ լսեցի քեզ Մուլեն Ռուժում: Դուք բեմ դուրս եկար էքսցենտրիկ վանդակավոր պիշակով: Մարսելյան ակցենտ, շփոթ առողջանություն ու բացահայտ ամերիկանացված երգեր: Այն ժամանակ հազիվ զսպեցիր քեզ մինչև վերջ ինձ լսելու համար, իսկ հետո նետեցիր ատամների արանքից. «Կոլեգաների խորհուրդները միշտ արժեքավոր են, բայց հոչակավոր էդիտի խորհուրդներն անգին են»:

ԷՌԻՏ - Եվ, այնուամենայնիվ, ինձ հավատացիր: Դու դեն նետեցիր քո սարսափելի պիշակն ու հագար դարչնագույն վերնաշապիկ: Դու հրաժարվեցիր նախկին երգերից ու կտրուկ փոխեցիր երգացանկդ: Դու վտանգեցիր կորցնել ունկնդիրներիդ մի մասին, որոնք չեն ուզում վարժվել փոփոխություններին: Քանի անգամ ես այն ժամանակ կրկնել. «Էդիտ, դու իրավացի էիր, ոչ մի դեպքում ես չեմ հանձնվիել: Եվ դու աշխատում էիր գազանի պես՝ տասը ժամ անընդմեջ, ու դու հաղթեցիր:

Հնչում է Էդիտ Կոնստանտինի ձայնը:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ - Դու ամեն բան ես սովորեցրել, դու ինձ հավատ ես ներշնչել: Դու ստիպել ես ինձ պայքարել, երբ թվում էր՝ ուժ չկար: Քանի անգամ ես այն ժամանակ կրկնել.

ԷՌԻՏ - Էդիտ, դու որակ ունես, դու կերգես, դու կդառնաս աստղ, հիշիք դա:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ - Ես երբեք քեզ չեմ մոռանա, Էդիտ:

ԷՌԻՏ - Շառլ Ազնավորի:

Հնչում է Շառլ Ազնավորի ձայնը:

ԷՌԻՏ - Հիշում ես, Շառլ, ինչպես էիր երազում դեբյուտ ստանալ՝ գրապնումդ գրոշ չունենալով: Մեր պատուհանները դեմ դիմաց էին: Առավոտները երգում էիր ու ողյալի վրա նվազակցում ինքդ

քեզ: Էղամես էլ ծանոթացանք՝ պատուհաններից: Սիրելի Շառլ, ինչ երջանիկ էիր, երբ վերջապես, առաջին անգամ կարողացար ինձ ծաշի հրավիրել:

ԱԶԱՎՈՒՐ - Ես ուզում եմ, որ դու իմանաս, Էղիտ, որքան եմ քեզ պարտական: Դու իմ առաջին հաջողությունն ես: Ես քեզ եմ նվիրել իմ դեբյուտը:

ԷԴԻՏ - Էղիդի Կոնստանտին, Ֆելիքս Մորգան, Շառլ Դյումին, Շառլ Ազնավուր և շատ ուրիշներ... Եկեք, իմ բարեկամներ, եկեք երգի աշխարհը և երջանիկ եղեք: Ու եթե մահանամ ձեզանից շուտ, ապա հպարտ կլինեմ, որ մյուզիք հոլերի ճակատներին ցոլացող ձեր անուններում կա նաև իմ հոգու մասնիկը:

Սարսափելի է եղել իմ կյանքը և միաժամանակ զարմանահրաշ: Քանի անգամ է ինձ դարանել դժբախտությունը, քանի անգամ եմ հազիվ փրկվել մահից: Սովոր անտուն մանկություն, ընկերների կորուստ ու մահ, կորուստներ ու հիասթափություններ, աղջկաս մահը, Սերդանի մահը, հետո ալկոհոլ, նարկոտիկներ, ավտոմոբիլային վթարներ, վիրահատություններ ու հիվանդություններ: Բայց ամեն անգամ ես նորից բարձրացել եմ հատակից, նորից քեմ եմ բարձրացել: Ու եթե հարցնեն ինձ հիմա ափսոսն եմ, որ այդպես ապրեցի իմ կյանքը, ես կպատասխանեմ իմ վերջին երգերից մեկի բառերով.

Ոչ, ես չեմ ափսոսում ոչնչի համար, Ոչ, ոչնչի համար ես չեմ ափսոսում:

ՀԱՅՈՒՄ է «ՈՉՆՉԻ ՀԱՄԱՐ ԵՍ ՉԵՄ ԱՓՍՈՍՈՒՄ» երգը:

Ես պառկած եմ հիվանդանոցային մահճակալին ու թելադրում եմ իմ հիշողությունները, որոնք բարձրանում են խումբ-խումբ, թափվում ինձ վրա, շրջապատում ու պարուրում են ինձ: Ես դեմքեր եմ տեսնում, շատ դեմքեր. ձեզ՝ ծանոթներ և անծանոթներ, ձեզ՝ անցորդներ, որ ինձ իմ քայլվածքից եք ծանաչում: Հանուն ձեզ ես երգում եմ՝ հաճախ վերջին ուժերով ու հանուն ձեզ պատրաստ եմ մեռնել բեմի վրա: Սա իմ խոստվանությունն է: Եվ այն ամենը, ինչ ես եմ ուզում՝ որ ինձ լսողն ասի. «Նրան շատ բան կներվի, որովհետև նա շատ է սիրել»:

ԽԱՎԱՐՈՒՄ է, բենահարքակին մնում է միայն Մարտել Բլյանտն՝ ձեռքի տեսախցիկով. նա կարծես քաղման արարողության նկարահանումն է ավարտում:

ԲԼԻՍՏԵՆ - Կեսօր էր, երբ դու հեռացար ընդմիշտ... Բայց, Աստված իմ, Էղիտ, որքան հիասքանչ էր քո վերջին մուտքը: Որտեղից հայտնվեցին այս հազարավոր, տասնյակ, հարյուր հազարավոր մարդիկ: Նրանք շարքերով կանգնած են քո տնից մինչև Պեր Լաշեզ: Նրանք լուռ կանգնած են քո տան դիմաց. կարծես սպասում են քեզ արտիստական

մուտքի մոտ: Հայտնվեց հոգևորականը, բայց քեզ եկեղեցի չեն տանի: Նրանք այնուամենայնիվ դա քեզ մերժեցին: Բայց գուցե այդպես ավելի լավ է... Եվ սկսվեց քո հաղթական երթը, Էղիտ: Դա քո մեծարումն էր... Երկար, անվերջանալի թափորը շարժվեց, և Փարիզը, ողջ Փարիզը պատվո պահակ կանգնեց: Եվ դու անցար քո քաղաքի միջով, քո Փարիզով: Պիաֆն է... Պիաֆը հեռանում է... Այն պահին, երբ մտանք Պեր Լաշեզի դարպասով, քո առջևից, վշտակի տապանագրերի այդ քաղաքի միջով տարան եռագոյն

դրոշը: Իմ կողքին մի ծեր կին ջանում էր ավելի մոտենալ. «Ես պետք է ծանապարհեմ նրան, ես նրան դեռ աղջնակ եմ իհշում, այն ժամանակ նրան կանչում էին մօմ Պիաֆ»: Տեսնո՞ւմ ես, Էղիտ, անցել են տարիներ, դու դարձել ես երգի թագուհի, բայց հազարավոր մարդկանց համար դու մնացիր «մօմ Պիաֆ». Վողոցի փոքրիկ երգչուիի, ով կարողացավ գտնել նրանց սրտերը տանող ծանապարհը: Նրանք հավատացին քեզ: Եվ դու չխարեցիր նրանց:

ՈՒՍՏԵՐԵՆԻԾ ԹԱՐԳՄԱՆԵց ՆԱԽԵՆ

* Տարիներ առաջ ծանոթներից մեկի՝ ուժիւոր, այդ ժամանակ Թատերական ինստիտուտի փոխտնօրեն Ռաֆիկ Մուրադյանի խնդրանքով ուսւերենից թարգմանեցի Վիկոր Լեզենտովի «Էղիտ Պիաֆ» պիեսը: Ռաֆիկ Մուրադյանը որոշել էր բեմադրել այն, միջոցներ, հովանավորներ էր փորձում գտնել:

Բայց Ռաֆիկ Մուրադյանի հիվանդությունն անսպասելի վախճանն մեկընդմիշտ կասեցրին այդ ծրագրի հետագա ընթացքը: Եվ պիեսի թարգմանությունը մոռացվեց մի հեռու անկյունում:

Վերջերս միայն հանկարծ հիշեցի «Պիաֆի» մասին...

ՆԱԽԵՆ

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽԱՆԴԵԱ

ISSN 1829-0701

© «Դրամատուրգիա», 2019
Պետական աջակցությամբ

ԽՄԲԱԳԻՐ՝
ԿԱՐՀՆԵ ԽՈԴԻԿՅԱՆ

ԿԱԶՄԻ և ԷՇԱՋՐՈՒՄԻ՝
ՆԱՌԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:
Բնագրերը չեն վերադարձվում:

Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ
թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար
դիմեն անսիցական իրավատերերին՝ հեղինակներին:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԽԱՍՑԵՆ՝
Երևան, Օրբելի 18/6, հեռ. 22-76-08

Գրանցման վկայական՝ 01Մ 000089